



**GRECO - Ի ՓՈՐՁԸ ԵՎ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ**

**(ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ 2006թ.-Ի ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԱԾ ՄԻՋԱԶԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

**GRECO's EXPERIENCE AND CAPABILITIES IN
COMBATING CORRUPTION**

**(THE COLLECTION OF THE BASIC DOCUMENTS AND
MATERIALS ON INTERNATIONAL SEMINAR HELD IN
YEREVAN ON APRIL 10-th, 2006)**

2007





GRECO Ի ՓՈՐՁԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ 2006թ.-ի ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԻՋԱԶԳՎՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Գիրքը հրատարակվել է «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ի կողմից, Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ իրականացված «GRECO-Ի ՓՈՐՁԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ» միջազգային սեմինարի շրջանակներում:

Ժողովածուն ներառում է նետևյալ նյութերը.

1. Բանաձև (98) 7՝ Կոռուպցիայի դեպ պայքարող երկրների խմբի (ԳՐԵ-ԿՈ) ստեղծման մասնակի և ընդլայնված պայմանագրի սահմանման մասին: (Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին 102րդ նստաշրջանի ընթացքում):
2. Բանաձև (99) 5՝ Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբի (ԳՐԵ-ԿՈ) հիմնադրման մասին (ընդունված 1999 թվականի մայիսի 1-ին):
3. Բանաձև (99) 5-ի Լրացում՝ ԳՐԵԿՈ- ի Կանոնադրությունը:
4. ԳՐԵԿՈ (2005) 6E, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԵՐ:
5. Նախարարների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված R (2003) 4-րդ հանձնարարականը՝ քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման հարցում ընդունված հակակոռուպցիոն համընդհանուր կանոնների վերաբերյալ:
6. Նախագահների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկի վերաբերյալ Հանձնարարական No R (2000) 10:
7. Բանաձև (97) 24, Քսան հիմնական սկզբունքները կոռուպցիայի դեմ պայքարում:
8. ԳՐԵԿՈ, Հայաստանի զեկույցը:
9. Միջազգային սեմինարում Կ. Կլերոմոնտեի զեկույցը:

«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն և Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղը հայտնում են իրենց շնորհակալությունը ՀՀ Նախագահին և կից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովին, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ սեմինարի անկացման և գրքի պատրաստման աշխատանքներում խորհրդատվական աջակցություն ասպահովելու համար:

«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն և Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղը հայտնում են իրենց շնորհակալությունը ՀՀ Նախագահին և կից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովին, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ սեմինարի անկացման և գրքի պատրաստման աշխատանքներում խորհրդատվական աջակցություն ասպահովելու համար:

Հրատարակիչները շնորհակալություն են հայտնում «ԱՐՄԵԴԻԱ» տեղեկատվական, վերլուծական գործակալությանը տեղեկատվական աջակցության համար:



«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ



Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղ



GRECO's EXPERIENCE AND CAPABILITIES IN COMBATING CORRUPTION

(THE COLLECTION OF THE BASIC DOCUMENTS AND MATERIALS ON INTERNATIONAL SEMINAR HELD IN YEREVAN ON APRIL 10-th, 2006)

The book was published by the NGO "European integration" with the support the Friedrich-Ebert-Foundation Armenian Branch in frames of the international seminar „GRECO's EXPERIENCE AND CAPABILITIES IN COMBATING CORRUPTION“.

The collection includes the following materials.

1. Resolution (98) 7 authorizing the partial and enlarged agreement establishing the „Group of States against corruption - GRECO“ (Adopted by the Committee of Ministers on 5 May 1998, at its 102nd Session)
2. Resolution (99) 5 establishing the Group of States against corruption (GRECO) (adopted on 1st May 1999)
3. Statute of the GRECO. Appendix to Resolution (99) 5
4. GRECO (2005). Rules of procedure.(Adopted by GRECO at its 1`st plenary meeting)
5. Recommendation No. R (2003) 4 on common rules against corruption in the funding of political parties and electoral campaigns
6. Recommendation No. R (2000) 10 on codes of conduct for public officials and Model code of conduct for public officials (Appendix to the Recommendation)
7. Resolution (97) 24 on the twenty Guiding Principles for the fight against corruption
8. Evaluation Report on Armenia

Materials of the international seminar



The NGO "European integration" and Friedrich-Ebert-Foundation Armenian Branch express their profound gratitude to the Anti-Corruption Monitoring Commission by the President of the Republic of Armenia, to the Standing Committee on Foreign Relations of National Assembly of Republic of Armenia for counseling in carrying out of the seminar and in the book's preparational works.

Publishers express gratitude to "ARMEDIA" Information, Analytical Agency for information support



NGO "European Integration



Friedrich-Ebert-Foundation
Armenian Brankh



Ներածական խոսք



Preface

Կոռուպցիայի դեմ պայքարը մեր երկրի ներկան և ապագան կանխորոշող կարևորագույն խնդիրներից է: Հայաստանը 2004թ.-ի հունվարի 20-ին միացավ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբին՝ GRECO-ին: Սա կարելի է գնահատել որպես եվրոպական ինտեգրման ճանապարհին կատարված նշանակալից քայլ:

Այսօր, երբ Հայաստանը սկսել է «Ընդլայնված Եվրոպա - նոր հարևաններ» քաղաքականության շրջանակներում Գործողությունների ծրագրի իրականացումը, կոռուպցիայի դեմ պայքարը մտնում է մի նոր փուլ: Այս նոր փուլում առանձնակի կարևորությամբ է շեշտվում կոռուպցիայի դեմ պայքարի նշանակությունը երկրի ժողովրդավարեցման, կայուն տնտեսական և քաղաքական զարգացման գործում:

Ակնհայտ է, որ առանց համագործակցության և միջազգային փորձի լիարժեք յուրացման ու կիրառման ոչ մի երկիր չի կարող ընդունված չափանիշներին համապատասխան արդյունավետ պայքարել այնպիսի մեծագույն չարիքի դեմ ինչպիսին կոռուպցիան է: Այս տեսակետից ողջունում են «GRECO-ի փորձը և հնարավորությունները կոռուպցիայի դեմ պայքարում» գրքի հրատարակումը, որտեղ առաջին անգամ միասնական ձևով տեղ են գտել GRECO-ի հիմնարար փաստաթղթերը:

Հուսալով, որ նման կարևոր նախաձեռնությունները կունենան իրենց շարունակությունը՝ ցանկանում են իմ շնորհակալությունը հայտնել գրքի տպագրությունը կազմակերպողներին և մասնավորապես՝ ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի միջազգային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների, ինտեգրացիոն խնդիրների և միջազգային փորձի տեղայնացման հարցերով ենթահանձնաժողովին, որն իր նպաստը ներդրեց գրքի հրատարակման գործում:

*ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահ
Արմեն Ռուստամյան*

Dear reader

The fight against corruption constitutes a central challenge for many countries the three South Caucasian states - and thus also Armenia - not excluded.

The “Corruption Perception Index” of Transparency International for the year 2006 lists Armenia only on position 93 of 130 and puts it together with countries like Argentina, Syria or Tanzania.

The “Evaluation Report on Armenia” of the so-called “Group of States against Corruption”, GRECO, in March 2006 states that, “In the course of its transition to a market economy. Armenia has been faced with a number of serious economic and social problems, including the emergence of huge “grey” economy areas, high levels of tax evasion and illegal trafficking. In Armenia, both public authorities and civil society consider corruption is a major problem that affects many sectors...”

It is within this context, that Friedrich-Ebert-Stiftung would like to congratulate its partner, the Armenian non-governmental organization “European Integration” on holding a conference on GRECO and its objectives in early 2006 and now providing the Armenian public with basic documents and materials of the fight against corruption in the form of this publication.

Günther Fichtner
Friedrich-Ebert-Stiftung
Head of Co-ordination Office for the South Caucasus
Tbilisi/Georgia

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի եվրախնտեզրման ճանապարհին իր ուրույն տեղն ունի նաև երկրի անդամակցությունը կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբին, որն ավելի հայտնի է GRECO անվամբ:

Հույս ունենք, որ նշված կազմակերպության կողմից մշակված գործիքների և հարուստ փորձի կիրառումն իր դերը կունենան կոռուպցիայի դեմ պայքարում:

Սույն ժողովածուի միջոցով փորձ է արվում ընթերցողների լայն շրջանակների համար մատչելի դարձնել GRECO-ի հիմնարար փաստաթղթերը: Գրքում նաև տեղ են գտել 2006թ.-ի ապրիլի 10-ին Երևանում տեղի ունեցած «GRECO-ի փորձը և հնարավորությունները կոռուպցիայի դեմ պայքարում» միջազգային սեմինարի հիմնական զեկույցները:

Շնորհակալ կլինենք մեր բոլոր գործընկերներից՝ ժողովածուի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկները տրամադրելու համար:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նաև գրքի պատրաստման և հրատարակման գործում ցանկացած կերպով մեզ օժանդակած կազմակերպություններին և անձանց:

*«Եվրոպական ինտեգրացիա»
հասարակական կազմակերպություն*

ԲԱՆԱԶԵՎ (98) 7՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՄԲԻ (ԳՐԵԿՈ) ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

*(Ընդունվել է Նախարարների կոմիտեի
կողմից 1998 թվականի մայիսի 5-ին
102րդ նստաշրջանի ընթացքում)*

Ոչ պաշտոնական թարգմանություն

Եվրոպայի խորհուրդի Նախարարների կոմիտեն, ելնելով Եվրոպայի արդարադատության նախարարների XIX և XXI կոնֆերանսներին (Վալլետտա, 1994 և Պրահա, համապատասխանաբար՝ 1997) ընդունված հանձնարարություններից,

Ելնելով Նախարարների կոմիտեի կողմից 1996 թվականին ընդունված՝ Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրից,

Համաձայն Եվրոպայի խորհրդի՝ երկրների և կառավարությունների ղեկավարների երկրորդ գագաթաժողովի (որը կազմակերպվել էր Ստրասբուրգում 1997 թվականի հոկտեմբերի 10-ից 11-ը) ընթացքում ընդունված Վերջնական Հայտարարագրին և Գործողությունների Ծրագրին,

Հաշվի առնելով Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի նոյեմբերի 6-ին ընդունված՝ կոռուպցիայի դեմ պայքարի 20 առաջնային հիմնադրույթների մասին Բանաձև (97) 24-ը,

Չմոռանալով Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի (ԻԻԵԿ) և Հանցագործությունների խնդիրների եվրոպական կոմիտեի (ՀԽԵԿ) կողմից արտահայտած տեսակետները,

Ելնելով՝ մասնակի և ընդլայնված պայմանագրերի մասին իրավական ուժ ունեցող Բանաձև (93) 28-ից, ինչպես նաև՝ Եվրոպայի խորհրդի մասնակի և ընդլայնված պայմանագրերի չափանիշները սահմանող Բանաձև (96) 36-ից,

Սահմանում է «Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբ - ԳՐԵԿՈ»-ի հիմնադրման մասնակի և ընդլայնված պայմանագրի մասին բանաձևի նախագիծը (այսուհետև՝ «ԳՐԵԿՈ-ի հիմնադրման պայմանագիր»), որը հաստատվել է Կոռուպցիայի դեմ պայքարի միջգերատեսչական խմբի (ԿՄԽ) կողմից, ինչպես նշված է ՇՄ (98) 54-ի՝ 1998 թվականի ապրիլի 29-ին վերանայված տարբերակում,

ԻՐԱՎԱՋՈՐՈՒՄ Ե ԳՐԵԿՈ-ի հիմնադրման պայմանագրի ընդունումը՝ մասնակի և ընդլայնված պայմանագրի ձևով,

ՀՐԱՎԻՐՈՒՄ Ե անդամ երկրներին Գլխավոր քարտուղարին հայտնելու ԳՐԵԿՈ-ի հիմնադրման պայմանագրի ընդունման գործընթացին մասնակցելու՝ իրենց մտադրության մասին՝ սահմանելով, որ տվյալ պայմանագիրը կհամարվի ընդունված Գլխավոր քարտուղարի կողմից անդամ երկրների դրանում մասնակցություն ունենալու ցանկության մասին թվով 14-րդ հայտագրի ստացման անսաթվին հաջորդող անսվա առաջին օրը,

ՀՐԱՎԻՐՈՒՄ Ե ոչ անդամ երկրներին, որոնք մասնակցել են ԳՐԵԿՈ-ի հիմնադրման պայմանագրի նախապատրաստմանը, Գլխավոր քարտուղարին հայտնելու դրանում մասնակցություն ունենալու իրենց մտադրության մասին, ՀՈՒՅՍ Ե ՀԱՅՏՆՈՒՄ, որ շուտով Եվրոպային խորհրդի անդամ բոլոր երկրները և վերը նկատի ունեցված ոչ անդամ երկրները կմիանան ԳՐԵԿՈ-ի հիմնադրման պայմանագրին:

ԲԱՆԱՁԵՎ (99) 5 ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՄԲԻ (ԳՐԵԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(ընդունված 1999 թվականի մայիսի 1-ին)

Ոչ պաշտոնական թարգմանություն

Նախարարների կոմիտեում Բելգիայի, Բուլղարիայի, Կիպրոսի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իսլանդիայի, Իռլանդիայի, Լիտվայի, Լուքսեմբուրգի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Իսպանիայի, Շվեդիայի ներկայացուցիչները,

Համոզված լինելով, որ կոռուպցիան հանդիսանում է մեծագույն սպառնալիք օրենքի գերակայությանը, ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին, հավասար հնարավորություններին և սոցիալական արդարությանը, խոչընդոտում է տնտեսության զարգացումը և վտանգում ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը և հասարակության բարոյական հիմքերը,

Ընկալելով կոռուպցիայի, ներառյալ՝ կազմակերպված հանցագործության և փողի լվացման հետ ունեցած դրա կապերի, դեմ պայքարում երկրների միջև համագործակցության նպաստման անհրաժեշտությունը,

Մատնանշելով, որ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ ռազմավարությանն անհրաժեշտ է երկրների կողմից հաստատուն նվիրվածություն իրենց ջանքերը միավորելու, փորձը փոխանակելու և ընդհանուր գործողություններ կատարելու գործին,

Ընկալելով, որ հասարակական զգոնության բարձրացումը և էթիկ արժեքների առաջխաղացումը կոռուպցիան կանխարգելող արդյունավետ մեթոդներ են,

Ելնելով Եվրոպայի արդարադատության նախարարների 19-րդ համաժողովի (Մալթա, 1994 թվական) հանձնարարականներից,

Հաշվի առնելով Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագիրը՝ ընդունված Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի կողմից 1996 թվականին, և Կոռուպցիայի դեմ պայքարի միջգերատեսչային խմբի կողմից կատարված հետևողական աշխատանքը,

Հաշվի առնելով Անցումային շրջանում գտնվող երկրներում կոռուպցիայի ու կազմակերպված հանցագործության դեմ պայքարի Եվրոհանձնաժողովի (Ֆարե ծրագիրը) և Եվրոպայի խորհրդի միջև համատեղ ծրագրի արդյունքները (Օկտոպուս ծրագիրը),

Ելնելով կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության միջև կապերի վերաբերյալ N1 Բանաձևից՝ ընդունված Եվրոպայի արդարադատության նախարարների 21-րդ համաժողովին (Պրահա, 1997 թվական),

Ելնելով Եվրոպայի խորհրդի անդամների երկրների և կառավարությունների ղեկավարների երկրորդ գագաթաժողովին (Ստարսբուրգ, 1997 թվականի հոկտեմբերի 10-ից 11-ը) ընդունված Վերջնական հայտարարագրից, որով երկրների և կառավարությունների ղեկավարները որոշում ընդունեցին ընդհանուր հակահարված մշակել կոռուպցիայի և

կազմակերպված հանցագործության աճի մարտահրավերներին,

Համաձայն Եվրոպայի խորհրդի անդամների երկրների և կառավարությունների ղեկավարների երկրորդ գագաթաժողովին (Ստարսբուրգ, 1997 թվականի հոկտեմբերի 10-ից 11-ը) ընդունված Գործողությունների ծրագրին, որում երկրների և կառավարությունների ղեկավարները, նպատակ ունենալով նպաստելու կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցությանը՝ ներառյալ վերջինիս կապերը կազմակերպված հանցագործության և փողի լվացման հետ, հանձնարարել են Նախարարների կոմիտեին, ի թիվս այլոց, ընդունել ուղղորդող սկզբունքներ, որոնք պետք է գործածվեն երկրների ներգին օրենսդրությունը և արարողակարգը զարգացնելիս, և անհապաղ ստեղծել ուղղորդող սկզբունքների ու այլ միջազգային փաստաթղթերի կատարման մոնիթորինգի համապատասխան ու արդյունավետ մեխանիզմ, որը կընդունվի Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրի կատարման ժամանակ,

Ելնելով Կոռուպցիայի դեմ պայքարի 20 ուղղորդող սկզբունքներից, որոնք ընդունվել են Նախարարների կոմիտեի կողմից իր՝ 1997 թվականի մայիսի 6-ին կայացած 101-րդ հանդիպման ժամանակ (այսուհետ նշված որպես «Ուղղորդող սկզբունքներ»),

Համոզված լինելով, որ ԳՐԵԿՈ-ի հիմնադրումը, որին Եվրոպայի խորհուրդի անդամ և ոչ անդամ երկրները մասնակցում են հավասար իրավունքներով, մշանակալի ներդրում կկատարի կոռուպցիայի արդյունավետ կանխման և դրա դեմ պայքարի դինամիկ գործընթացին,

Հավատացած լինելով, որ երկկողմանի գնահատման և հավասարաչափ ճնշման միջոցով, ԳՐԵԿՈ-ն հնարավորություն կունենա ճկուն ու արդյունավետ կերպով վերահսկել կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Ուղղորդող սկզբունքներին և միջազգային փաստաթղթերին հետևելը,

Համոզված լինելով, որ ԳՐԵԿՈ-ի լիարժեք անդամություն պետք է տրվի այն երկրներին, որոնք առանց սահմանափակումների կմասնակցեն երկկողմանի գնահատման գործընթացներին և կհամաձայնեն գնահատման ենթարկվել նույն ընթացակարգով,

Ելնելով 1998 թվականի մայիսի 5-ին 102-րդ հանդիպման ժամանակ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված Բանաձև (98) 7-ից, որը թույլ է տալիս ներկայիս պայմանագրի ընդունումը,

ՍՈՒՅՆՈՎ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ստեղծել Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբ (ԳՐԵԿՈ)՝ ընդլայնված մասնակի պայմանագրի ձևով՝ ղեկավարվող լրացման մեջ ներկայացված կանոնակարգով,

ՀԱՄԱԶԱՅՆՈՒՄ ԵՆ, որ ԳՐԵԿՈ-ն հիմնադրվում է սկզբնական երեք

տարի ժամկետով,

ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ վերանայել ԳՐԵԿՈՒ-ի գործունեությունը սկզբնական երեք տարի ժամկետի ավարտին,

ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆ հույս, որ Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները մոտ ապագայում կդառնան ԳՐԵԿՈՒ-ի անդամներ:

ԲԱՆԱԶԵՎ (99) 5-Ի ԼՐԱՑՈՒՄ ԳՐԵԿՈՒ Ի
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ պաշտոնական թարգմանություն

Հոդված 1 - ԳՐԵԿՈՒ-ի նպատակը

ԳՐԵԿՈՒ-ի նպատակն է բարելավել իր անդամների ունակությունը կոռուպցիայի դեմ պայքարում՝ հետևելով այս ասպարեզում վերջիններիս պարտավորությունների իրականացմանը՝ երկկողմանի գնահատման և հավասար պահանջների դիմամիկ գործընթացի միջոցով:

Հոդված 2 - ԳՐԵԿՈՒ-ի գործառնությունները

Հոդված 1-ում նշված նպատակները իրականացնելու համար ԳՐԵԿՈՒ-ն պետք է.

- I. վերահսկի, որ պահպանվեն 1997 թ-ի նոյեմբերի 6-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված Կոռուպցիայի դեմ պայքարի Ղեկավար սկզբունքները,
- II. վերահսկի, որպեսզի միջազգային իրավական փաստաթղթերի կիրառումն ընդունվի համաձայն Կոռուպցիայի դեմ պայքարի գործողության ծրագրին ըստ այդ փաստաթղթերում պարունակվող դրույթների,

Հոդված 3 Նստավայրը

ԳՐԵԿՈՒ-ի նստավայրը պետք է լինի Ստրասբուրգում:

Հոդված 4 ԳՐԵԿՈՒ-ի անդամակցության գործընթացը

1. Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ երկիր, բացի ԳՐԵԿՈՒ-ի հիմնադրման Բանաձևում նշվածներից, կարող է միա նալ ԳՐԵԿՈՒ-ին ցանկացած պահին՝ դրա մասին ծանուցելով Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:
2. Մասնակցելով այս ընդլայնված մասնակի պայմանագրի [1] մշակմանը՝ յուրաքանչյուր ոչ անդամ երկիր ցանկացած պահին կարող է միանալ ԳՐԵԿՈՒ-ին՝ դրա մասին ծանուցելով Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին: Ծանուցմանը պետք է կցել հայտարարագիր այն մասին, որ ոչ անդամ երկիրը պարտավորվում է կիրառել 1997 թվականի նոյեմբերի 6-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված Կոռուպցիայի դեմ պայքարի Ղեկավար սկզբունքները:
3. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված միջազգային իրավական փաստաթղթերին միացած երկրները՝ համաձայն Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրի, որը բերում է ԳՐԵԿՈՒ-ին պարտադիր անդամակցության, պետք է դառնան ԳՐԵԿՈՒ-ի դե-ֆակտո անդամներ՝ համաձայն այդ փաստաթղթերում պարունակվող դրույթների:
4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, ներառելով միայն ընդլայնված մասնակի պայմանագրի մասնակից երկրների ներկայացուցիչներին և խորհրդակցելով վերջինիս մասնակից ոչ անդամ երկրների հետ, կարող է հրավիրել ոչ անդամ երկրների, բացառու-

թյամբ 2-րդ պարբերության մեջ նշվածներից, միանալու ԳՐԵԿՈՒ-ին: Ստանալով նման հրավեր՝ ոչ անդամ երկրները պետք է տեղեկացնեն ԳՐԵԿՈՒ-ին միանալու՝ իրենց ցանկության մասին Գլխավոր քարտուղարին՝ հայտարարագրելով նաև Կոռուպցիայի դեմ պայքարի Ղեկավար սկզբունքներին հետևելու պատրաստակամության մասին:

Հոդված 5 - Եվրոպական համայնքի մասնակցությունը

Նախարարների Կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպական համայնքին մասնակցել ԳՐԵԿՈՒ-ի աշխատանքներին: Վերջինիս մասնակցության կարգավիճակը կհստակեցվի հրավերի բանաձևի մեջ:

Հոդված 6 - ԳՐԵԿՈՒ-ի կառուցվածքը

1. Յուրաքանչյուր անդամ պետք է նշանակի ԳՐԵԿՈՒ-ի պատվիրակություն՝ բաղկացած ոչ ավելի քան երկու ներկայացուցիչից: Ներկայացուցիչներից մեկը պետք է նշանակվի պատվիրակության նախագահ:
2. Ընդլայնված մասնակի պայմանագրի բյուջեն պետք է ֆինանսավորի պատվիրակության ներկայացուցիչներից միայն մեկի ճանապարհածախսը և ապրուստի ծախսերը:
3. ԳՐԵԿՈՒ նշանակված ներկայացուցիչները պետք է օգտվեն Եվրոպայի խորհրդի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին ընդհանուր պայմանագրի արարողակարգի երկրորդ հոդվածում նշված արտոնություններից և անձեռնմխելիություններից:

Հոդված 7 - Այլ ներկայացուցիչներ

1. Իրավական համագործակցության Եվրոպական Կոմիտեն (ԻՅԵԿ) և Հանցագործությունների հետ կապված խնդիրների Եվրոպական կոմիտեն (ՀԽԵԿ) պետք է նշանակեն ԳՐԵԿՈՒ-ի մեկական ներկայացուցիչ:
2. Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի այլ մարմինների ԳՐԵԿՈՒ-ի ներկայացուցիչ նշանակելու՝ վերջինիս հետ խորհրդակցելուց հետո:
3. Ստորև նշված հոդված 18-ով ստեղծվող Օրենսդրական կոմիտեն պետք է ԳՐԵԿՈՒ-ի մեկ ներկայացուցիչ նշանակի:
4. Վերը նշված 1-ից 3-րդ պարբերություններով նշանակված ներկայացուցիչները պետք է մասնակցեն ԳՐԵԿՈՒ-ի պլենար հանդիպումներին՝ առանց քվեարկելու իրավունքի: Նրանց ճանապարհածախսը և ապրուստի ծախսերը չպետք է ֆինանսավորվեն ընդլայնված մասնակի պայմանագրի բյուջեով:

Հոդված 8 - ԳՐԵԿՈՒ-ի Գործունեությունը

- 1 GRECO-ն իր գործունեության համար պետք է կայացնի համապատասխան որոշումներ: Մասնավորապես, այն պետք է.

- i. ընդունի գնահատման զեկուցները՝ ըստ Յոդված 15-ի,
- ii. ընդունի իր՝ տարեկան գործունեության ծրագրի նախագիծը և, համաձայն Ֆինանսական կանոնների և նորմերի, առաջարկներ կներկայացնի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին՝ կապված տարեկան բյուջեի նախագծի նշակման հետ՝ նախքան դրա փոխանցումը ստորև նշված հոդված 18-ով ստեղծվող Օրենսդրական հանձնաժողովը:
- iii հաստատի իր գործունեության տարեկան զեկույցը, ներառելով տարեկան հաշվետվությունները՝ նախքան դրանց փոխանցումը Օրենսդրական հանձնաժողով և Նախարարների խորհուրդ:
2. ԳՐԵԿՈՒ-ն պետք է անցկացնի ամենաքիչը տարեկան երկու պլենար հանդիպում և կարող է, հարկ եղած դեպքում, և համաձայն իր Ընթացակարգի նորմերին, որոշում ընդունել ստեղծելու աշխատանքային խմբեր:
3. Ամեն տարի ԳՐԵԿՈՒ-ն պետք է հրատարակի իր գործունեության ամենամյա զեկույցը՝ ներառյալ իր տարեկան հաշիվները՝ Յոդված 18-ում նշված մարմինների կողմից վերջինների հաստատումից հետո:
4. ԳՐԵԿՈՒ-ն պետք է նախագծի իր սեփական ընթացակարգի նորմերը: Դառնալով ԳՐԵԿՈՒ-ի անդամ՝ յուրաքանչյուր երկիր կամ Եվրոպական համայնքը պետք է պարտավորվի ընդունել ԳՐԵԿՈՒ-ի Կանոնադրությունը և Ընթացակարգի նորմերը:
5. ԳՐԵԿՈՒ-ն պետք է անցկացնի իր միստերը դռնփակ:
6. Երկկողմանի գնահատմանը մասնակցող ԳՐԵԿՈՒ-ի անդամները պետք է ունենան քվեարկելու իրավունք: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա մեկ ձայնի իրավունք: Այնուամենայնիվ, եթե Օրենսդրական կոմիտեն այլ կերպ չորոշի, այն անդամը, որը երկու տարվա ժամանակաընթացքում չի վճարի ամբողջապես կամ մեծ մասով իր պարտադիր ավանդը ընդլայնված մասնակի պայմանագրի բյուջեին, հետագայում չի մասնակցի որոշումների կայացման գործընթացին:
7. ԳՐԵԿՈՒ-ի որոշումները պետք է կայացվեն քվեարկողների ձայների ընդհանուր թվի երկու-երրորդով և քվեարկելու իրավունք ունեցողների թվի մեծամասնությամբ: Այնուամենայնիվ, գործընթացային որոշումները պետք է ընդունվեն քվեարկողների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ:
8. ԳՐԵԿՈՒ-ն իր նախագահին և փոխնախագահին պետք է ընտրի քվեարկելու իրավունք ունեցող անդամներից:

Հոդված 9 - Բյուրո

1. Նախագահն ու փոխնախագահը, որոնց մասին խոսվում է վերը նշված 8-րդ Յոդվածի 8-րդ պարբերությունում, և հինգ այլ անդամները, որոնց ԳՐԵԿՈՒ-ն պետք է ընտրի քվեարկելու իրավունք ունեցող անդամների

ներկայացուցիչներից, որոնք համդիսանում են կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրով ստեղծված գոնե մեկ միջազգային իրավական փաստաթղթի մասնակից, պետք է կազմեն Բյուրո:

2. Բյուրոն պետք է կատարի հետևյալ գործողությունները.

- պատրաստել տարեկան գործողությունների ծրագրի և տարեկան գործողությունների զեկույցի նախագիծը:
- առաջարկներ ներկայացնել ԳՐԵԿՈՒ-ին՝ կապված բյուջեի նախագծի հետ:
- կազմակերպել գնահատողական այցեր տարբեր երկրներ՝ հիմնվելով ԳՐԵԿՈՒ-ի կողմից կայացրած որոշումների վրա:
- առաջարկություններ կատարել ԳՐԵԿՈՒ-ին՝ գնահատման հատուկ թիմեր կազմավորելու մասին:
- նախապատրաստել օրակարգ ԳՐԵԿՈՒ-ի հանդիպումների համար՝ ներառյալ այն հանդիպումները, որոնց ընթացքում կքննարկվեն գնահատման զեկույցները:
- առաջարկություններ կատարել ԳՐԵԿՈՒ-ին՝ կապված գնահատման գործընթացների դրույթների հետ՝ համաձայն Յոդված 10-ի 3-րդ պարբերության:
- առաջարկություններ կատարել ԳՐԵԿՈՒ-ին՝ կապված գիտական փորձագետների և խորհրդատուների նշանակման հետ:

3. Բյուրոն պետք է կատարի ԳՐԵԿՈՒ-ի կողմից հանձնարարված ցանկացած այլ գործողություն:

4. Բյուրոն պետք է իրականացնի իր գործունեությունը ԳՐԵԿՈՒ-ի ընդհանուր վերահսկողության ներքո:

Հոդված 10 - Գնահատման Գործընթացը

1. ԳՐԵԿՈՒ-ն պետք է իրականացնի գնահատման գործընթացը անդամ հանդիսացող յուրաքանչյուր երկրի նկատմամբ՝ համապատասխան Յոդված 2-ին:
2. Գնահատումը պետք է բաժանվի փուլերի: Գնահատման փուլը ԳՐԵԿՈՒ-ի կողմից սահմանված ժամանակահատված է, որի ընթացքում պետք է իրականացվի գնահատման գործընթաց պարզելու համար անդամների համապատասխանությունը Կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրով նախատեսված Ղեկավար սկզբունքներում և այլ միջազգային իրավական փաստաթղթերում սահմանված դրույթներին:
3. Յուրաքանչյուր փուլի սկզբում ԳՐԵԿՈՒ-ն պետք է ընտրի հատուկ դրույթներ, որոնց շուրջ կկատարվի գնահատման գործընթացը:

4. Յուրաքանչյուր անդամ պետք է նշանակի ամենաշատը 5 փորձագետ, որոնք ի վիճակի կլինեն իրականացնել 12-ից 14-րդ Յոդվածներով նախատեսված առաջադրանքները:
5. Յուրաքանչյուր անդամ պետք է երաշխավորի, որ իր իշխանությունները հնարավորին չափով համագործակցեն գնահատման գործընթացի ժամանակ՝ իրենց ազգային օրենսդրությունների սահմաններում:

Հոդված 11 Հարցաշարը

1. ԳՐԵԿՈՒ-Ն պետք է կազմի հարցաշար գնահատման յուրաքանչյուր փուլի համար, որը կտրվի գնահատման մեջ ներգրավված բոլոր անդամներին:
2. Հարցաշարերը պետք է լինեն գնահատման գործընթացի սահմաններում:
3. Անդամները պետք է իրենց պատասխաններն ուղղարկեն Քարտուղարությանը ԳՐԵԿՈՒ-ի կողմից սահմանված ժամանակահատվածում:

Հոդված 12 - Գնահատող թիմերը

1. 10-րդ Յոդվածի 4-րդ պարբերության մեջ նշված փորձագետներից ԳՐԵԿՈՒ-Ն պետք է նշանակի գնահատող թիմ (այսուհետ նշված որպես «թիմ»): Երբ գնահատումը վերաբերում է Կոռուպցիայի դեմ պայքարի Գործողությունների ծրագրի միջազգային իրավական փաստաթղթերի կատարմանը, ԳՐԵԿՈՒ-Ն պետք է նշանակի թիմեր՝ կազմված բացառապես այն փորձագետներից, որոնք նշանակվել են այդ փաստաթղթին միացած անդամի կողմից:
2. Թիմը պետք է վերլուծի հարցաշարի պատասխանները և կարող է, հարկ եղած դեպքում, պահանջել գնահատվող անդամի մասին հավելյալ տեղեկություններ, որոնք կարող են ներկայացվել բանավոր կամ գրավոր տեսքով:
3. Ընդլայնված և մասնակի պայմանագրի բյուջեն պետք է ներառի թիմերում ներգրավված փորձագետների ճանապարհածախսը և ապրուստի ծախսերը:

Հոդված 13 - Երկրներ կատարվելիք այցերը

1. ԳՐԵԿՈՒ-Ն կարող է հանձնարարել թիմին այցելել անդամ երկիրը՝ վերջինիս իրավականի դաշտի և գործունեության մասին հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք կնպաստեն գնահատմանը:
2. ԳՐԵԿՈՒ-Ն պետք է տեղեկացնի անդամին այց կատարելու ցանկության մասին ամենաքիչը երկու ամիս առաջ:
3. Այցը պետք է կատարվի անդամի կողմից պատրաստած ծրագրով՝ հաշվի առնելով թիմի կողմից արտահայտած ցանկությունները:
4. Թիմի կազմը պետք է օգտվի Եվրոպայի խորհրդի արտոնությունների

և անձեռնմխելիությունների մասին Ընդհանուր պայմանագրի արարողակարգի 2-րդ հոդվածում սահմանված արտոնություններից և անձեռնմխելիություններից:

5. Ընդլայնված մասնակի պայմանագրի բյուջեն պետք է հոգա երկրներ կատարվող այցերի ճանապարհածախսը և ապրուստի ծախսերը:

Հոդված 14 - Գնահատման զեկույցները

1. Հավաքված տեղեկությունների հիման վրա թիմը պետք է պատրաստի գնահատման զեկույցի նախագիծ՝ գնահատման փուլի համար ընտրված դրույթների հետ կապված օրենսդրության և դրա կիրառման իրավիճակի շուրջ:
2. Ձեկույցի նախագիծը պետք է փոխանցվի գնահատվող անդամին մեկնաբանություններ կատարելու համար: Թիմը պետք է հաշվի առնի այդ մեկնաբանությունները զեկույցի վերջնական նախագծի ընդունման ժամանակ:
3. Ձեկույցի նախագիծը պետք է ներկայացվի ԳՐԵԿՈՒ-ին:

Յոդված 15 - Ձեկույցների քննարկումն ու ընդունումը

1. Պլենար նիստի ժամանակ ԳՐԵԿՈՒ-Ն պետք է քննարկի թիմերի կողմից ներկայացված զեկույցների նախագծերը:
2. Գնահատվող անդամին պետք է ինավունք տրվի պլենար նիստի ժամանակ ներկայացնել իր նկատառումները բանավոր և/կամ գրավոր տեսքով:
3. Քննարկման ավարտին ԳՐԵԿՈՒ-Ն պետք է լրացունենքով կամ առանց դրանց ընդունի գնահատվող անդամի մասին զեկույցը:
4. Բոլոր անդամները պետք է իրավունք ունենան մասնակցելու Ղեկավար սկզբունքների կիրառման հետ կապված գնահատման զեկույցների ընդունման շուրջ քվեարկություններին: Կոռուպցիայի դեմ պայքարի Գործողությունների ծրագրի շրջանակներում ընդունված միջազգային իրավական փաստաթղթերին միացած անդամները միայն իրավունք ունեն քվեարկելու վերջը նշված փաստաթղթերի կատարման մասին գնահատման զեկույցների ընդունման ժամանակ:
5. Գնահատման զեկույցները պետք է լինեն զաղտնի: Եթե այլ կերպ չորոշվի, ապա այդ զեկույցներին ծանոթ լինելու իրավունք պետք է ունենան միայն գնահատող թիմի և ԳՐԵԿՈՒ-ի, Օրենսդրական կոմիտեի և այս մարմինների քարտուղարությունների անդամները:
6. ԳՐԵԿՈՒ-ի զեկույցը կարող է պարունակել առաջարկություններ՝ ուղղված գնահատվող անդամին՝ ներքին օրենսդրությունը և կոռուպցիան կախարգելելու փորձերը բարելավելու նպատակով: ԳՐԵԿՈՒ-Ն պետք է իրավիճակի այդ անդամին զեկույցելու այդ առաջարկություններին հետևելու համար կիրառվող միջոցների շուրջ:

Հոդված 16 Բաց հաշվետվությունները

1. Օրենսդրական կոմիտեն կարող է հրապարակել բաց հաշվետվություն, երբ վերջինս այն համոզմունքին է, որ անդամը պասիվ է մնում կամ անէական գործողություններ է ձեռնարկում՝ կապված Ղեկավար սկզբունքների կատարման շուրջ իրեն ուղղված առաջարկությունների հետ:
2. Օրենսդրական կոմիտեն, կազմված միայն քննարկվող փաստաթղթին միացած անդամներից, կարող է բաց հաշվետվություն հրապարակել, երբ վերջինս այն համոզմունքին է, որ անդամը պասիվ է մնում կամ անէական գործողություններ է ձեռնարկում կապված՝ Կոռուպցիայի դեմ պայքարի Գործողությունների ծրագրով նախատեսված փաստաթղթի դրույթների կատարման շուրջ իրեն ուղղված առաջարկների հետ:
3. Օրենսդրական կոմիտեն պետք է տեղեկացնի տվյալ անդամին և նրան հնարավորություն ընձեռնի հավելյալ մեկնաբանություններ ներկայացնել՝ նախքան վերը նշված պարբերություն 1 և/կամ 2-ում ներկայացվող բաց հաշվետվության հրապարակման մասին իր որոշման հաստատումը:

Հոդված 17 - ԳՐԵԿՈՒ-Ի ֆինանսավորման աղբյուրները

1. ԳՐԵԿՈՒ-ի բյուջեն պետք է ֆինանսավորվի իր անդամների պարտադիր տարեկան անդամավճարներից:
2. ԳՐԵԿՈՒ-ն կարող է իր անդամներից ստանալ հավելյալ կամավոր ներդրումներ:
3. ԳՐԵԿՈՒ-ն կարող է նաև ստանալ կամավոր ներդրումներ հետաքրքրված միջազգային կառույցներից:
4. Նախքան վերը նշած 3-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսավորման ընդունումը, այն պետք է լիազորվի Օրենսդրական կոմիտեի կողմից:
3. ԳՐԵԿՈՒ-ի սեփականությունը պետք է ձեռք բերվի և պահպանվի Եվրոպայի խորհրդի անունից և որպես այդպիսին՝ դրա վրա պետք է տարածվեն խորհրդի սեփականությանը վերաբերող գոյություն ունեցող միջազգային պայմանագրերով նախատեսված արտոնությունները և անձեռնմխելիությունները:

Հոդված 18 - Օրենսդրական կոմիտեն

1. Օրենսդրական կոմիտեն պետք է կազմված լինի Եվրոպայի խորհրդի անդամ երկրների, որոնք նաև հանդիսանում են ԳՐԵԿՈՒ-ի անդամ, նախարարների կոմիտեների կողմից և ԳՐԵԿՈՒ-ի մյուս անդամների կողմից նշանակված ներկայացուցիչներից:
2. Օրենսդրական կոմիտեն պետք է ամեն տարի որոշի անդամների՝

ԳՐԵԿՈՒ-ին կատարվելիք պարտադիր անդամավճարների չափը: Եվրոպայի խորհրդի ոչ անդամ երկրների անդամավճարի հաշվարկման սանդղակը պետք է համաձայնեցվի վերջիններիս հետ, որպես ընդհանուր կանոն, այդ սանդղակի չափանիշները պետք է համապատասխանեն Եվրոպայի խորհրդի ընդհանուր բյուջե կատարող անդամավճարների սանդղակի չափանիշներին:

3. Օրենսդրական կոմիտեն ամեն տարի պետք է ընդունի ԳՐԵԿՈՒ-ի բյուջեն՝ հաշվի առնելով գործողությունների ծրագրի կատարման հետ կապված և ընդհանուր քարտուղարության ծախսերը:
4. Օրենսդրական կոմիտեն ամեն տարի պետք է հաստատի ԳՐԵԿՈՒ-ի ամենամյա հաշվետվությունները, որոնք պետք է նախապատրաստվեն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Ֆինանսական օրենսդրությանը, և ներկայացվեն Օրենսդրական կոմիտեի՝ Հաշվետու գիշերի խորհրդի զեկույցին կից: Գլխավոր քարտուղարին տվյալ ֆինանսական տարվա վերահսկողության պարտականությունից ազատելու համար Օրենսդրական կոմիտեն իր կողմից հաստատված կամ որևէ մեկնաբանություններով լրացված տարեկան հաշվետվությունները և Հաշվետու գիշերի խորհրդի կողմից պատրաստած զեկույցը պետք է փոխանցի Նախարարների կոմիտեին:
5. Բյուջեի ընդունման և վերահսկման համար, անհրաժեշտ փոփոխություններով, պետք է կիրառվի Եվրոպայի խորհրդի Ֆինանսական օրենսդրությունը:

Հոդված 19 Քարտուղարությունը

1. ԳՐԵԿՈՒ-ն պետք է գործադրվի Քարտուղարության կողմից, որը պետք է նշանակի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը:
2. ԳՐԵԿՈՒ-ի Քարտուղարությունը պետք է նախագահի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից նշանակված Գործադիր քարտուղարը:

Հոդված 20 Լրացումները

1. ԳՐԵԿՈՒ-ն, կամ իր յուրաքանչյուր անդամ, կարող է Օրենսդրական կոմիտեին առաջարկել այս Օրենսդրության համար լրացումներ:
2. Այս Օրենսդրությունը կարող է լրացվել Օրենսդրական կոմիտեի միաձայն որոշմամբ: Եթե լրացումը առաջարկված չէ ԳՐԵԿՈՒ-ի կողմից, ապա Օրենսդրական կոմիտեն պետք է այն քննարկի վերջինիս հետ:

Հոդված 21 Հեռացումը

1. Համապատասխան վերը նշված 2-րդ Հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներին՝

յուրաքանչյուր անդամ կարող է հեռանալ ԳՐԵԿՈ-ից՝ Արտաքին Գործերի Նախարարի կամ այս գործընթացի համար հատուկ լիազորություն ստացած դիվանագիտական ներկայացուցչի կողմից Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով:

2. Գլխավոր քարտուղարը պետք է հաստատի հայտարարագրի ստացումը և տեղեկացնի տվյալ անդամին, որ այն կներկայացվի Օրենսդրական կոմիտեին:
3. Համապատասխան Եվրոպայի խորհրդի Օրենսդրության 7-րդ հոդվածի՝ հեռացումն ուժի մեջ պետք է մտնի.
 - հայտարարագրի ներկայացման ֆինանսական տարվա վերջում, եթե այն տրվել է ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների ընթացքում:
 - հաջորդ ֆինանսական տարվա վերջում, եթե հայտարարագիրը տրվել է ֆինանսական տարվա վերջին երեք ամիսների ընթացքում:
4. Եվրոպայի խորհրդի Ֆինանսական օրենսդրության 18-րդ Հոդվածի համաձայն՝ Օրենսդրական կոմիտեն պետք է հետազոտի հեռացման ֆինանսական հետևանքները և կատարի համապատասխան հաշվարկներ:
5. Գլխավոր քարտուղարը անհապաղ պետք է տեղեկացնի համապատասխան անդամին իր հեռացման հետևանքների մասին և տեղեկացնի Օրենսդրական կոմիտեին բանակցություններից ստացված արդյունքի մասին:

[1] Երկրները հետևյալն են. Բելուռուսիա (10), Կանադա (11), Վատիկան (10), Ճապոնիա (10), Սեբսիկա (10) և Ամերիկայի Միացյալ Նահանգներ(11): Բոսնիան և Հերցեգովինան երկու անգամ է մասնակցել հանդիպումներին:

[2] Ընդունված ծայների հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում միայն «կողմ» և «դեմ» ձայները (Փոխնախարարների ընթացակարգային նորմերի 10-րդ Հոդվածի 5-րդ պարբերություն):

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետի կողմից

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

*Ստրասբուրգ, 2005
 թվականի մարտի 18*

ԳՐԵԿՈ (2005) 6Ե

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետի կողմից

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԵՐ

Ընդունված է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 1-ին պլենար նիստին (Ստրասբուրգ, 1999 թվականի հոկտեմբերի 4-ից 6-ը), լրացված է 4-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ և 22-րդ պլենար նիստերին (Ստրասբուրգ, 2000 թվականի դեկտեմբերի 12-ից 15-ը, 2001 թվականի դեկտեմբերի 17-ից 20-ը, 2002 թվականի դեկտեմբերի 9-ից 13-ը, 2003 թվականի մարտի 24-ից 28-ը, 2003 թվականի հուլիսի 7-ից 11-ը, 2005 թվականի մարտի 14-ից 18-ը)

Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբը (այսուհետ նշված որպես «ԳՐԵԿՈ»),

Ելնելով «Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբ - ԳՐԵԿՈ»-ի հիմնադրման մասնակի և ընդլայնված պայմանագիրը համապատասխանաբար սահմանող և ընդունող Բանաձևեր (98) 7-ից և (99) 5-ից,

Ելնելով ԳՐԵԿՈ-ի Օրենսդրությունից,

Հետևելով ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 8-ի 4-րդ պարբերությունից,

Ընդունում է հետևյալ Ընթացակարգի նորմերը.

ԳԼՈՒԽ 1-ԻՆ ԳՐԵԿՈ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ենթագլուխ 1-ին ԳՐԵԿՈ-ի անդամները

Նորմ 1 *ԳՐԵԿՈ-ի անդամակցությունը*

1. ԳՐԵԿՈ-ին անդամակցությունը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր քարտուղարի կողմից ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 4-ի պարբերությունների 1-ի, 2-ի և 4-ի համապատասխան կազմված հայտարարագրի ընդունման հաջորդ օրը:
2. Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական օրենսգրքի մասին կոնվենցիան (ETS 173) կամ Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական օրենսգրքի մասին կոնվենցիան (ETS 174) վավերացնելու հետևանքով անդամակցությունը ԳՐԵԿՈ-ին պետք է ուժի մեջ մտնի երկրում այդ կոնվենցիաներից որևէ մեկի ուժի մեջ մտնելու օրը՝ համապատասխան ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 4-ի պարբերություն 3-ի:

Նորմ 2

Եվրոպական Համայնքի մասնակցությունը

1. Եվրոպական Համայնքը կարող է դառնալ ԳՐԵԿՈ-ի անդամ՝ համաձայն հետևյալ ընթացակարգին.

ա. Օրենսդրության Յոթերորդ 5-ին համաձայն՝ ԳՐԵԿՈ-ին մասնակցելու մասին Նախարարների կոմիտեի հրավերից հիման վրա,

բ. Եթե վերջինս՝ Նախարարների կոմիտեի հրավերից հիման վրա միանա Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական օրենսգրքի մասին կոնվենցիային՝ համաձայն այդ կոնվենցիայի Յոթերորդ 33-ին,

գ. Եթե վերջինս միանա Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական օրենսգրքի մասին կոնվենցիային՝ համաձայն այդ կոնվենցիայի Յոթերորդ 15-ին:

2. Եվրոպական Համայնքին՝ Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական օրենսգրքի մասին կոնվենցիային (ETS 173) միանալու, համաձայն այդ կոնվենցիայի Յոթերորդ 33-ին, մասին հրավերը պետք է սահմանի մասնակցության ձևաչափը՝ համապատասխան ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 5-ին: Այդպիսի հրավերը պետք է նաև դիտարկվի որպես ԳՐԵԿՈ-ին անդամակցելու հրավերը՝ համաձայն վերջինիս Օրենսդրության Յոթերորդ 5-ին:

3. Եվրոպական Համայնքի՝ ԳՐԵԿՈ-ի անդամակցության ձևաչափը պետք է սահմանվի Նախարարների խորհրդի և Եվրոպական Համայնքի միջև պայմանագրի միջոցով՝ ԳՐԵԿՈ-ի առաջարկության և Օրենսդրական կոմիտեի հավանության հիմքի վրա: Օրենսդրական կոմիտեի կողմից հավանության ստացումից հետո Նախարարների կոմիտեն պետք է կազմի հրավերը՝ համաձայն այս նորմի պարբերություն 1-ի ենթապարբերություններ ա և բ-ին:

Նորմ 3 *ԳՐԵԿՈ-ի կառուցվածքը*

1. Յուրաքանչյուր անդամ պետք է նշանակի իր պատվիրակությունը, համաձայն ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 6-ին, այս նորմերի ուժի մեջ մտնելուց երկու ամսվա ընթացքում: ԳՐԵԿՈ-ի յուրաքանչյուր նոր անդամ պետք է նշանակի իր պատվիրակությունը, համաձայն ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Յոթերորդ 6-ին, ԳՐԵԿՈ-ին անդամակցելու հայտարարագիրը ներկայացնելուց երկու ամսվա ընթացքում:

2. Վերը նշված պարբերություն 1-ին համաձայն պատվիրակություն նշանակելիս անդամը պետք է տեղեկացնի Քարտուղարությանը նշանակված ներկայացուցիչների անունների, հասցեների և աշխատանքային լեզ-

վի/լեզուների մասին և նշի այն անձին, որը գործելու է որպես պատվիրակության ղեկավար: Պատվիրակությունները պետք է նշանակվեն մշտական կարգավիճակով: Այնուամենայնիվ, անդամներն իրավունք ունեն նախատեսել ամեն մի ներկայացուցիչի համար մեկ փոխարինող:

3. Անդամները պետք է անհապաղ հայտնեն Գործադիր քարտուղարին իրենց պատվիրակություններում կատարված փոփոխությունների մասին:

Նորմ 4

Քվեարկելու իրավունք չունեցող մյուս անդամները

ԳՐԵԿՈՒ Օրենսդրության Հոդված 7-ին համաձայն նշանակված ներկայացուցիչները, նախագահի թույլատրությամբ, պետք է իրավունք ունենան քննարկության թեմայի շուրջ բանավոր կամ գրավոր հայտարարություն կատարել:

Ենթագլուխ 2-րդ

ԳՐԵԿՈՒ-ի նախագահությունը

Նորմ 5

Նախագահի և փոխնախագահի ընտրությունը

1. ԳՐԵԿՈՒ-ն պետք է ընտրի իր նախագահին և փոխնախագահին ընտրելու իրավունք ունեցող անդամների ներկայացուցիչներից: Նախագահ ընտրված ներկայացուցիչին նշանակած անդամը պետք է իրավունք ունենա նշանակել ԳՐԵԿՈՒ-ին պատվիրակ հավելյալ ևս մի ներկայացուցիչ:

2. Հաշվի առնելով նաև պարբերություն 3-ում նշված հանգամանքները՝ նախագահը և փոխնախագահը պետք է ընտրվեն երկու տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել միայն մեկ անգամ:

3. Եթե նախագահի կամ փոխնախագահի իրավասությունների ժամկետը լրանում է գնահատման փուլի ընթացքում, ապա այն պետք է երկարաձգվի մինչև այդ փուլի ավարտը: Այնուամենայնիվ, նախագահի կամ փոխնախագահի իրավասությունները պետք է անմիջապես կասեցվեն, եթե վերջինս այլևս չի հանդիսանում ԳՐԵԿՈՒ-ում ներկայացուցիչ:

4. Եթե նախագահը այլևս չի հանդիսանում ԳՐԵԿՈՒ-ում ներկայացուցիչ կամ նա հրաժարական է տալիս նախագահությունից մինչև իր իրավասությունների ժամկետի ավարտը, ապա փոխնախագահը պետք է անհապաղ ստանձնի նախագահի պաշտոնը մինչև վերջինիս իրավասությունների ժամկետի ավարտը: Բյուրոն պետք է նոր փոխնախագահ նշանակի իր ներկայացուցիչների միջից, որը կստանձնի այդ պաշտոնը մինչև իրավասությունների ժամկետի ավարտը: Վերջին ընտրությունների ժամանակ չընտրված թեքնածուների միջից ամենաշատ ձայները հավաքած անձը պետք է զբաղեցնի Բյուրոյում առաջացած թափուր մնացած տեղը:

5. Յուրաքանչյուր անդամ կարող է նախագահի և փոխնախագահի պաշտոնի համար ներկայացնել իր թեքնածուներից: Թեքնածուները պետք է ներկայացվեն գրավոր ձևով Գործադիր քարտուղարին ընտրությունների անցկացման ժողովից 48 ժամ առաջ կամ բանավոր ձևով այդ ժողովի ժամանակ:

6. Այս նորմի մեջ ներկայացված ընտրությունները պետք է անցկացվեն գնահատման շրջանին անմիջապես նախորդող ժամանակահատվաշում ժողովի ընթացքում: Ընտրությունները պետք է անցկացվեն գաղտնի քվեարկությամբ և մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

7. Եթե առաջին քվեարկության ընթացքում ոչ մի թեքնածու չի ընտրվել, ապա ամենաշատ ձայները հավաքած երկու թեքնածուների միջև պետք է անցկացվի երկրորդ քվեարկությունը: Եթե ստացվել են հավասար քանակությամբ ձայներ, ապա ԳՐԵԿՈՒ-ում ներկայացվածության ժամկետով ավելի երկար թեքնածուն պետք է համարվի ընտրված: Եթե թեքնածուները ԳՐԵԿՈՒ-ում ներկայացված են հավասար ժամանակահատվածում, ապա առաջնայնությունը պետք է տրվի տարիքով մեծ թեքնածուին: Վերընտրվող թեքնածուների միջև առաջնայնությունը պետք է տրվի համապատասխան իրենց նախորդ պաշտոնավարման ժամկետի երկարությամբ:

Նորմ 6

Նախագահի և փոխնախագահի գործունեությունը

1. Նախագահը պետք է նախագահի ԳՐԵԿՈՒ-ի պլենար նիստերը և Բյուրոյի նիստերը: Նա պետք է ուղղորդի ԳՐԵԿՈՒ-ի աշխատանքը և կատարի Օրենսդրությամբ, Ընթացակարգի նորմերով և ԳՐԵԿՈՒ-ի կողմից իր վրա դրված պարտականությունները:

2. Իր պարտականությունների կատարման ընթացքում նախագահը պետք է գործի ԳՐԵԿՈՒ-ի իշխանության ներքո և պետք է առաջնորդվի միայն ԳՐԵԿՈՒ-ի հետաքրքրություններով:

3. Նախագահը կարող է որոշ իր պարտավորություններ փոխանցել փոխնախագահին, Բյուրոյի մի կամ մի քանի անդամներին կամ Գործադիր քարտուղարին:

4. Նախագահը պետք է նշանակի ԳՐԵԿՈՒ-ի նիստերի ամսաթվերը՝ խորհրդակցելով Բյուրոյի և Գործադիր քարտուղարի հետ:

5. Նախագահը պետք է ներկայացնի ԳՐԵԿՈՒ-ն Օրենսդիր կոմիտեի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի և Եվրոպայի խորհրդի մյուս մարմինների առջև:

6. Փոխնախագահը պետք է ստանձնի նախագահի պաշտոնը, եթե վերջինս անկարող է կատարել իր պարտականությունները:

Նորմ 7

Նախագահի և փոխնախագահի փոխարինումը

Եթե նախագահը և փոխնախագահը միևնույն ժամանակ ի վիճակի չեն կատարել իրենց պարտականությունները կամ եթե նրանց պաշտոնները միևնույն ժամանակ թափուր են, ապա նախագահի պարտականությունները պետք է կատարի Բյուրոյի անդամ ներկայացուցիչ՝ համաձայն Նորմ 5 (7)-ի մեջ նշված ընթացակարգի: Վերջին ընտրությունների ժամանակ չընտրված թեքնածուների միջից ամենաշատ ձայները հավաքած անձը պետք է զբաղեցնի Բյուրոյում առաջացած թափուր մնացած տեղը:

Նորմ 8

Նախագահի իրավասությունների սահմանափակումը

Նախագահը, փոխնախագահը կամ նախագահի պարտականությունները կատարող ցանկացած այլ ներկայացուցիչ պետք է հանվի նախագահությունից ԳՐԵԿՈՒ-ին իրեն նշանակած անդամի գնահատման զեկույցի քննարկման և ընդունման ժամանակահատվածում:

Ենթագլուխ 3-րդ
Բյուրոն

Նորմ 9

Բյուրոյի կազմը և գործունեությունը

1. Բյուրոն պետք է կազմված լինի նախագահից, փոխնախագահից և թվով մինչև հինգ ներկայացուցիչից, որոնց ճշգրիտ քանակը պետք է որոշվի՝ համապատասխան ԳՐԵԿՈՒ-ի անդամների քանակին:

2. Նորմ 5-ի պարբերություններ 2, 3, 4 և 5-ում նշված դրույթները համապատասխան փոփոխություններով պետք է գործածվեն Բյուրոյի անդամության թեքնածուների ընդունման և ընտրման ժամանակ: Այնուամենայնիվ, նախագահի կամ փոխնախագահի պաշտոնին չընտրված թեքնածուները պետք է համարվեն Բյուրոյում անդամակցության ներկայացված թեքնածուներ:

3. Նորմ 5-ի պարբերություններ 6 և 7-ում ներկայացված դրույթները պետք է գործածվեն նաև Բյուրոյի թափուր տեղերի համար ընտրություններում: Այնուամենայնիվ, առաջին քվեարկության ժամանակ մասնակիցների ձայների մեծամասնությունը հավաքած թեքնածուները պետք է համարվի ընտրված, իսկ երկրորդ քվեարկության ժամանակ թափուր մնացած տեղերը պետք է լրացնեն ըստ ձայների նվազման տեղեր զբաղեցրած թեքնածուները:

4. Բյուրոն պետք է գործի համաձայն ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրության 3-րդ հոդվածի և կատարի այդ հոդվածում նշված գործողությունները:

5. Բյուրոյի նիստերը պետք է պարբերաբար գումարվեն նախագահի կարգադրությամբ Գործադիր քարտուղարի կողմից կամ երբ Գործադիր քարտուղարը գտնում է, որ այն անհրաժեշտ է ԳՐԵԿՈՒ-ի պատշաճ գործունեության համար:

Ենթագլուխ 4-րդ
ԳՐԵԿՈՒ-ի քարտուղարությունը

Նորմ 10

Քարտուղարության կազմը

1. Քարտուղարությունը պետք է կազմվի համաձայն ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրության 3-րդ հոդված 19-ին:

2. Գործադիր քարտուղարը պետք է նշանակվի Գլխավոր քարտուղարի կողմից և լինի Գլխավոր տնօրինություն 1-ի՝ Եվրոպայի խորհրդի Իրավական հարցերով խորհրդի պաշտոնյա: Գործադիր քարտուղարը պետք է կատարի ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրությամբ և ներկայիս Ընթացակարգի նորմերով իրեն սահմանված պարտականությունները:

3. Գործադիր քարտուղարը պետք է ունենա բավարար աշխատակազմ, որպեսզի ապահովվի ԳՐԵԿՈՒ-ի պատշաճ և արդյունավետ գործունեությունը: Աշխատակազմը պետք է նշանակվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից և կցվի Գլխավոր տնօրինություն 1՝ Եվրոպայի խորհրդի Իրավական հարցերով խորհրդին:

Ենթագլուխ 5-րդ
Այլ աղմինիստրատիվ դասակարգումներ

Նորմ 11

Նսիտերի գումարումը

1. ԳՐԵԿՈՒ-ի նիստերը պետք է գումարվեն նախագահի կարգադրությամբ Գործադիր քարտուղարի կողմից՝ պատվիրակությունների ղեկավարներին և ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրության 3-րդ հոդված 7-ին համաձայն նշանակված մյուս ներկայացուցիչներին ուղղված նամակի միջոցով:

2. Նիստի գումարման մասին նամակի օրինակ պետք է ուղղարկվի տեղակալներին, ինչպես նաև Օրենսդիր կոմիտեում յուրաքանչյուր անդամի ներկայացուցիչին:

Նորմ 12

Օրակարգը

Օրակարգը պետք է ընդունվի յուրաքանչյուր նիստի սկզբում՝ Գործադիր

քարտուղարի կողմից կազմած և նիստի գումարման մասին նամակներին կցած նախագծի հիման վրա:

Նորմ 13
Փաստաթղթերը

Քարտուղարությունը պետք է պատասխանատվություն կրի ԳՐԵԿՈՒ-ի կողմից քննարկվելիք բոլոր փաստաթղթերի պատրաստման և տարածման համար: Որպես ընդհանուր կանոն փաստաթղթերը պետք է նիստի գումարումից ամենաքիչը երկու շաբաթ առաջ փոխանցվեն պատվիրակությունների ղեկավարներին և ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրության 3-րդ կարգով 7-ին համաձայն նշանակված մյուս ներկայացուցիչներին:

Նորմ 14
Լեզուները

1. ԳՐԵԿՈՒ-ի աշխատանքային լեզուները պետք է լինեն անգլերենը և ֆրանսերենը:
2. Աշխատանքային լեզուներից տարբեր լեզվով ԳՐԵԿՈՒ-ի քննարկությանը ներկայացած ցանկացած փաստաթուղթ պետք է Քարտուղարությանը տրվի աշխատանքային լեզուներից մեկով թարգմանության հետ միասին:
3. Հարցաշարի պատասխանները և ցանկացած հարակից փաստաթուղթ պետք է ներկայացվի Գործադիր քարտուղարին աշխատանքային լեզուներից որևէ մեկով, որը պետք է համաձայնեցվի Քարտուղարության և գնահատվող երկրի միջև:
4. Երբ պատրաստվում է երկրի այց, գնահատման աշխատանքային լեզուն պետք է համաձայնեցվի Քարտուղարության և գնահատվող երկրի միջև: Հետագա գնահատման զեկույցը պետք է պատրաստվի և ընդունվի համաձայնեցված լեզվով:

Նորմ 15
Քվորումը

Քվորում է ապահովվում, երբ ներկա է անդամների մեծամասնությունը:

Նորմ 16
Քվեարկությունը

1. ԳՐԵԿՈՒ-ում քվեարկությունը պետք է անցկացվի համաձայն ԳՐԵԿՈՒ-ի Օրենսդրության 3-րդ կարգով 8-ի պարբերություններ 6 և 7-ին:
2. Երբ որոշում է ընդունվում որևէ հարցի շուրջ, այդ հարցը չպետք է վերա-

նայվի՝ բացառությամբ անդամի կողմից պահանջի առկայության դեպքին, երբ այն հաստատված է քվեարկածների թվի չորս հինգերորդի կողմից:

3. Քվեարկածների թվի հաշվարկի ժամանակ պետք է հաշվի առնվեն միայն «կողմ» և «դեմ» տրված քվեները:
4. Եվրոպայի խորհրդի Օրենսդրության, Նախարարների և փոխնախարարների կոմիտեների Ընթացակարգի նորմերի մեջ պարունակվող՝ քվեարկությունների նորմերը համապատասխան փոփոխություններով պետք է գործեն որպես ԳՐԵԿՈՒ-ի լրացուցիչ նորմեր:

Նորմ 17
Առաջարկների և լրացումների շուրջ քվեարկության հերթականությունը

1. Երբ նույն հարցի շուրջ կան մի քանի առաջարկներ, ապա դրանք պետք է դրվեն քվեարկության ըստ դրանց ստացման հերթականության: Երկնտության դեպքում որոշումը պետք է ընդունի մախագահը:
2. Երբ առաջարկն իրենից ներկայացնում է լրացում, ապա լրացումը պետք է առաջինը դրվի քվեարկության: Երբ նույն հարցի շուրջ ներկայացված են երկու կամ ավելի լրացումներ, ԳՐԵԿՈՒ-ն պետք է քվեարկի՝ թե դրանցից որն է ավելի առաջնային հարցի համար, և շարունակի նույն ընթացակարգով մինչև, որ բոլոր լրացումները դրվեն քվեարկության: Այնուամենայնիվ, եթե մի լրացման ընդունումն անհրաժեշտ կերպով բերում է մյուսի մերժմանը, ապա վերջինը չպետք է դրվի քվեարկության: Այդ դեպքում պետք է անցկացվի վերջնական քվեարկություն որոշելու համար, թե առաջարկը դառնում է լրացում կատարվում է, թե՛ ոչ: Հերթականության շուրջ երկնտության դեպքում որոշումը պետք է ընդունի մախագահը:
3. Առաջարկը կան լրացումը կարող է դրվել քվեարկության մաս առ մաս:
4. Երբ ներկայացված է ֆինանսավորում պահանջող առաջարկ, ապա ամենածախսատարը պետք է դրվի քվեարկության առաջինը:

Նորմ 18
Ընթացակարգի շուրջ առաջարկների հերթականությունը

Ընթացակարգի շուրջ առաջարկները պետք է ընդունվեն բոլոր կետերի շուրջ՝ բացառությամբ հերթականության մասին կետերի: Դրանք պետք է դրվեն քվեարկության հետևյալ հերթականությամբ.

- ա. նիստի ապագումարում,
- բ. նիստի հետաձգում,
- գ. քննարկվող հարցի շուրջ որոշում ընդունելու հետաձգում,
- դ. քննարկվող հարցի շուրջ որոշում ընդունելու կասեցում:

Ոչ պաշտոնական բարձրագույնություն

Գրառությունները բարձրագույնություն

Նորմ 19

Որոշումների և նիստերի շուրջ զեկույցները

1. Նիստի վերջում Գործադիր քարտուղարը պետք է ԳՐԵԿՈ-ի հաստատմանը ներկայացնի նիստի ընթացքում ընդունված որոշումների ցուցակը:
2. Գործադիր քարտուղարի թույլատրությամբ պետք է պատրաստվի յուրաքանչյուր նիստի ժամանակ ԳՐԵԿՈ-ի կողմից քննարկված հարցերի շուրջ զեկույց: Ձեկույցը պետք է հնարավորինս շուտ փոխանցվի ԳՐԵԿՈ նշանակված ներկայացուցիչներին:

Նորմ 20

Աշխատանքային խմբերը

1. Անհրաժեշտության դեպքում ԳՐԵԿՈ-ն կարող է կազմել յուրահատուկ հարցերով զբաղվող հատուկ աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբերում պետք է ներառվեն ամենաքիչը հինգ անդամի սահմանափակ քանակությամբ ներկայացուցիչներ:
2. Աշխատանքային խմբի նախագահողը պետք է նշանակվի Բյուրոյի կողմից: Այդպիսի աշխատանքային խմբերի իրավասությունների շրջանակները պետք է որոշվեն ԳՐԵԿՈ-ի կողմից:

Նորմ 21

Տեղեկություններ պարունակող հաղորդակցությունների փոխանցումը ԳՐԵԿՈ-ի քննարկությանը, և այլն

1. Գործադիր քարտուղարը պետք է ԳՐԵԿՈ-ին ներկայացնի ԳՐԵԿՈ-ի քննարկության համար փոխանցված՝ տեղեկություններ պարունակող հաղորդակցությունները, որոնք չեն գտնվում նրա իրավասությունների շրջանակներից դուրս:
2. Գործադիր քարտուղարը պետք է գրանցի ստացված բոլոր հաղորդակցությունները:
3. Իր իրավասությունների շրջանակներում ԳՐԵԿՈ-ն կարող է կատարել փորձաքննություններ Եվրոպայի խորհրդի մարմինների և տեղին գտնելու դեպքում նաև այլ մարմինների համար:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Նորմ 22

Ընդհանուր դրույթներ

1. Սույն գլխում ներառված նորմերը հետագայում պետք է հաշվի առն-

վեն ԳՐԵԿՈ-ի Օրենսդրության Հոդվածներ 10-ից 16-ը մշակելիս: Դրանք առանց առաջնայնության պետք է գործածվեն Հոդվածներում ներառված դրույթների հետ զուգահեռ:

2. Գնահատման ընթացակարգը պետք է հիմնված լինի երկկողմանի գնահատման և հավասար ազդեցության սկզբունքների վրա և պետք է նպաստի ԳՐԵԿՈ-ի նպատակներին հասնելուն՝ ինչպես ամրագրված է Օրենսդրության Հոդվածներ 1 և 2-ում:

Նորմ 23

Գնահատման շրջանները

1. ԳՐԵԿՈ-ն պետք է որոշի յուրաքանչյուր գնահատման շրջանի երկարությունը՝ համապատասխան ընտրված դրույթներին:
2. Գնահատման շրջանի համար դրույթների ընտրությունը կարող է ներառել հետևյալը.

ա. Բանաձև 97 (24)-ում ներկայացված Ղեկավար սկզբունքներից մեկը կամ մի քանիսը,

բ. Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական օրենսգրքի մասին կոնվենցիայում (ETS 173) ներառված դրույթներից մեկը կամ մի քանիսը,

գ. Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական օրենսգրքի մասին կոնվենցիայում (ETS 174) ներառված դրույթներից մեկը կամ մի քանիսը, և/կամ

դ. Կոռուպցիայի դեմ պայքարի Գործողությունների ծրագրով նախատեսված ցանկացած այլ միջազգային իրավական փաստաթղթում ներառված դրույթներից մեկը կամ մի քանիսը:

Նորմ 24

Հարցաշարը

1. Երկկողմանի գնահատման հարցաշարը պետք է ուղղարկվի գնահատում անցնող բոլոր անդամներին: Եթե ԳՐԵԿՈ-ն այլ կերպ չորոշի, հարցաշարի պատասխանները ԳՐԵԿՈ-ի կողմից սահմանած ժամանակահատվածում պետք է փոխանցվեն Գործադիր քարտուղարին:

2. Երկկողմանի գնահատման հարցաշարի պատասխանները պետք է լինեն մանրամասն, լրացնեն բոլոր հարցերը և պարունակեն անհրաժեշտ բոլոր լրացումները: Երկիր կատարվելիք այցի դեպքում այդ փաստաթղթերը պետք է Գործադիր քարտուղարին փոխանցվեն այցից ամենաքիչը երեք ամիս առաջ:

Նորմ 25

Փորձագետները

1. Սույն նորմերի, կամ համապատասխանորեն՝ անդամակցության մասին հայտարարագրի ընդունումից երեք ամիս ժամանակահատվածում յուրաքանչյուր անդամ պետք է Գործադիր քարտուղարին փոխանցի ամենաշատը հինգ փորձագետների անուններ պարունակող ցուցակ:
2. Անդամները պետք է իրավունք ունենան փոփոխություններ կատարել այդ ցուցակում: Անդամի կողմից փոփոխություններ կատարելու մասին հայտի բացակայության դեպքում նախնական ցուցակը պետք է համարվի ուժի մեջ:
3. Օրենսդրության Հոդված 6-ի պարբերություն 1-ին համաձայն ԳՐԵԿՈ-ում նշանակված ներկայացուցիչները նույնպես կարող են ներառվել վերը նշված պարբերություն 1-ում ներկայացված ցուցակում:

Նորմ 26

Գնահատող թիմը

1. Բյուրոն պետք է Օրենսդրության Հոդված 12-ի պարբերություն 1-ով նախատեսված գնահատող թիմի (այսուհետ նշված որպես «թիմ») կազմավորման մասին առաջարկ կատարի ԳՐԵԿՈ-ին:
2. Եթե ԳՐԵԿՈ-ն այլ կերպ չորոշի, ապա թիմը պետք է բաղկացած լինի տարբեր անդամների երեք փորձագետներից՝ ընտրված Օրենսդրության Հոդված 10-ի պարբերություն 4-ով նախատեսված ցուցակից, և Քարտուղարության մեկ անդամից: Բացառիկ դեպքերում թիմերը կարող են ներգրավել հավելյալ փորձագետներ, և անհրաժեշտության դեպքում՝ գիտական փորձագետներ:
3. Մինչև Բյուրոյի առաջարկի ԳՐԵԿՈ-յի կողմից ընդունումը փորձագետների ցուցակը պետք է փոխանցվի գնահատման ենթարկվող անդամին՝ վերջինիս կողմից իր տեսակետն արտահայտելու համար: ԳՐԵԿՈ-յի կողմից արդարացված համարված անհամաձայնության դեպքում Բյուրոն պետք է ներկայացնի այլընտրանքային առաջարկ:
4. Եթե թիմը, համաձայն Օրենսդրության Հոդված 12-ի պարբերություն 2-ին, պահանջի հավելյալ տեղեկություններ, անդամն անհապաղ պետք է կատարի պահանջը և բոլոր հարցերին ներկայացնի մանրամասն և լիարժեք պատասխաններ:

Նորմ 27

Երկրի այցերը

1. Երկրի այցերը պետք է իրականացվեն Օրենսդրության Հոդված 13-ին համաձայն: Այցի ամսաթվերը ընդունող երկրի հետ խորհրդակցություն-

ներից հետո պետք է նշանակի Գործադիր քարտուղարը և պետք է համապատասխանեն Բյուրոյի կողմից ընդունված այցի ծրագրին:

2. Երկրի այցը, որպես կանոն, չպետք է տեղի ունենա Գործադիր քարտուղարի կողմից հարցաշարի պատասխանի ստացումից 3 ամսից ավելի շուտ ընկած ժամանակահատվածում:
3. Հիմք ընդունելով գնահատման ենթարկվող անդամի կողմից Քարտուղարությանը ներկայացրած ծրագրի նախագիծը՝ թիմը պետք է հնարավորինս շուտ համաձայնի այդ ծրագրին կամ ոչ:
4. Մինչև երկրի այցի սկիզբը պետք է անցկացվի նախապատրաստական հանդիպում թիմում ներգրավված փորձագետների և Քարտուղարության միջև տեսակետների նախնական փոխանակման համար:
5. Երկրի այցը, որպես կանոն, չպետք է գերազանցի չորս օրվան և ունենա հիմնավորված ժամանակացույց: Հատուկ դեպքերում Բյուրոն կամ Գործադիր քարտուղարը կարող են երկարացնել այցի ժամկետը:

6. Հյուրընկալող անդամի իշխանությունների հետ տեղում պետք է անցկացվի վերջնական հանդիպում՝ գնահատմանը վերաբերող բոլոր յուրօրինակ հարցերը քննարկելու համար:

7. Երկրի այցի ավարտից հետո պետք է անցկացվի հանդիպում թիմում ներգրավված փորձագետների և Քարտուղարության միջև՝ գնահատման դրույթ(ներ)ի շուրջ երկրի այցի արդյունքների միասնական գնահատման մշակման համար: Հնչեցված հարցերը պետք է վերջում հավաքագրվեն Քարտուղարության կողմից:

Նորմ 28

Երկկողմանի գնահատման զեկույցների նախագծերի նախապատրաստումը

1. Երկկողմանի գնահատման զեկույցները պետք է բաղկացած լինեն նկարագրական մասից՝ հիմնված հարցաշարի պատասխանի և հավաքված այլ տեղեկությունների վրա, և վերլուծական մասից՝ պարունակող նկատառումները ու առաջարկությունները և դրանց պատճառաբանվածությունը:
2. Գնահատող թիմի աշխատանքը հեշտացնելու նպատակով Քարտուղարությունը պետք է պատրաստի նկարագրական մասի նախագիծ՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով գնահատման ենթարկվող անդամի հետ, և այն փոխանցի թիմի փորձագետներին երկրի այցից ամենաքիչը մեկ ամիս առաջ:
3. Թիմում ներգրավված փորձագետները պետք է ներկայացնեն իրենց սեփական գրավոր զեկույցները, որոնք կետրոնանուն են վերլուծական

մասին՝ ներառելով առաջարկությունների և նկատառումների նախագիծը: Այդ զեկույցները պետք է փոխանցվեն Քարտուղարությանը նկարագրական մասի նախագիծն ստանալուց 14 օրվա ընթացքում, իսկ եթե զնահատման շրջանը նախատեսում է երկրի այց, ապա՝ այցի ավարտից 14 օրվա ընթացքում:

4. Քարտուղարությունը պետք է հավելյալ 14 օրվա ընթացքում թիմում ներգրավված փորձագետներից ստացված զեկույցների հիման վրա պատրաստի երկկողմանի զնահատման զեկույցի նախագիծ (P1): Այդ նախագիծը պետք է փոխանցվի թիմում ներգրավված փորձագետներին մեկնաբանությունների համար:

5. Նախագծի շուրջ մեկնաբանությունները պետք է հասանելի դարձվեն Քարտուղարությանը և թիմում ներգրավված մյուս փորձագետներին 14 օրվա ընթացքում:

6. Կատարված մեկնաբանությունների հիման վրա Քարտուղարությունը պետք է պատրաստի նախագծի վերանայված տարբերակը (P2) և այն հասանելի դարձնի թիմում ներգրավված փորձագետներին համար: Դժվարությունների առկայության դեպքում Քարտուղարությունը կարող է գնահատման զեկույցի նախագծի վերջական տարբերակի պատրաստումից առաջ կազմակերպել համաձայնեցման հանդիպում թիմում ներգրավված փորձագետների և զնահատվող անդամի ներկայացուցիչների միջև:

7. Վերանայված նախագիծը (P2) գրավոր մեկնաբանությունների համար պետք է ուղղարկվի զնահատվող անդամին: Իր մեկնաբանությունները կատարելու համար անդամը պետք է ունենա ամենաքիչը 21 օր: Եթե անդամն ի վիճակի չէ ներկայացնել իր մեկնաբանություններն այդ ժամանակահատվածի ընթացքում, ապա հարցը պետք է քննարկվի Գլխավոր քարտուղարի հետ, որը կարող է հետաձգել վերջնաժամկետը:

8. Անդամների կողմից ներկայացված մեկնաբանությունները պետք է փոխանցվեն թիմում ներգրավված փորձագետներին՝ որոշելու համար, թե դրանցից որոնք են ընդունելի: Եթե հարցի շուրջ փորձագետների տեսակետները տարբերվում են, ապա Գործադիր քարտուղարը պետք է կազմակերպի բանակցություններ և բերի փոխհամաձայնության:

9. Ձեկույցի նախագծի վերջնական տարբերակը (P3) պետք է ուղղարկվի ԳՐԵԿՈՒ-ում բոլոր ներկայացուցիչներին Պլենար նիստից ամենաքիչը երկու շաբաթ առաջ, որի ժամանակ զեկույցի նախագիծը պետք է քննարկվի և ընդունվի:

10. Երբ Պլենար նիստին ներկայացնելուց առաջ կա վերջնական նախագիծում որոշ կետերի վերանայման անհրաժեշտություն, ապա Գործադիր քարտուղարը պետք է Պլենար նիստի նախօրեին կազմակերպի նա-

խապլենար նիստ՝ թիմում ներգրավված փորձագետների և զնահատվող անդամի ներկայացուցիչների միջև: Այդ նիստի վերջում կարող է կազմվել նախագծի լրացված վերջնական տարբերակը (P4):

Նորմ 29
Ձեկույցների նախագծերի քննումը, քննարկությունը և ընդունումը

1. Պլենար նիստի կողմից զնահատման զեկույցների քննումը, որպես կանոն, պետք է անցկացվի երկրի այցի ավարտից 6 ամսվա ժամանակահատվածում: Եթե հնարավոր չէ տեղավորվել այս ժամանակահատվածի մեջ, Քարտուղարությունը պետք է ԳՐԵԿՈՒ-ին հայտնի դրա պատճառների մասին:

2. Յուրաքանչյուր զնահատման զեկույցի նախագծի շուրջ քննարկումները պետք է սկսեն զնահատող թիմի բանավոր ներկայացմամբ, և դրան ի պատասխան, զնահատվող անդամի ներկայացուցիչները կարող են ընդհանուր հայտարարություն անել:

3. Գործադիր քարտուղարի առաջարկով Բյուրոն կարող է հրավիրել ԳՐԵԿՈՒ-ի ներկայացուցիչների միջից երկու անձանց՝ զնահատման զեկույցի նախագծի քննարկման ժամանակ հարցեր տալու համար: Այդ հարցերը պետք է գրավոր ձևով հասանելի դարձվեն ԳՐԵԿՈՒ-ում բոլոր ներկայացուցիչների համար նիստից առաջ: Հարցեր ներկայացնողները և զնահատողները չպետք է ներկայացնեն նույն անդամին:

4. Հետևաբար՝ ներկայացուցիչները և զնահատող թիմում ներգրավված փորձագետները պետք է իրավունք ունենան քննարկության ժամանակ հավելյալ բանավոր հարցեր բարձրացնել:

5. Երկկողմանի զնահատման զեկույցը քննարկության ավարտին պետք է ընդունվի Պլենար նիստի կողմից: Ձեկույցը կարող է ներառել զնահատվող անդամին ուղղված առաջարկություններ՝ համաձայն Օրենսդրության հոդված 15-ի պարբերություն 6-ին:

Նորմ 30
Առաջարկություններին հետևումը

1. ԳՐԵԿՈՒ-ի անդամները պետք է հետևեն զնահատման զեկույցում ներառված բոլոր առաջարկություններին և ԳՐԵԿՈՒ-ի կողմից նշանակված ժամանակահատվածում դրանք ամբողջովին ի կատար ածեն:

2. Համաձայն Օրենսդրության հոդված 15-ի պարբերություն 6-ին՝ անդամները պետք է ԳՐԵԿՈՒ-ին ներկայացնեն իրավիճակի մասին զեկույց (այսուհետ նշված որպես «ՈՍ-զեկույց»)՝ նշելով զնահատման զեկույցում առկա առաջարկությունների իրականացմանն ուղղված ձեռնարկվող միջոցները: ԳՐԵԿՈՒ-ն պետք է քննի այդ զեկույցները և որոշի, թե

արդյոք առաջարկությունները հետևվում են, թե՛ ոչ:

Նորմ 31

Կատարման ընթացակարգը

1. Բյուրոյի առաջարկության հիման վրա ԳՐԵԿՈ-ն պետք է ընտրի կատարման գեկույցի (այսուհետ նշված որպես «ՌՑ-գեկույց») պատրաստման համար պատասխանատու երկու անդամ՝ որոշելու համար, թե արդյոք անդամը ի կատար է ածում այդ անդամի զնահատման գեկույցում իրեն ուղղված առաջարկությունները: Ընտրությունը պետք է հիմնված լինի այնպիսի չափանիշների վրա, ինչպիսին են ներգրավվածությունն առաջին զնահատմանը (զնահատող կամ հարցատու անձի ներկայացում) և զնահատվող անդամի հետ իրավական համակարգերի մասնությունը կամ աշխարհագրական մոտիկությունը: Միայն պատվիրակությունների ղեկավարները կամ նրանց կողմից նշանակված անձինք (այսուհետ նշված որպես «գեկուցողներ») պետք է ներկայացնեն գեկույցը Պլենար նիստին: Միայն պատվիրակությունների անդամները կամ ԳՐԵԿՈ-ի զնահատողները կարող են նշանակվել գեկուցողներ:

2. Քարտուղարությունը պետք է աջակցի գեկուցողներին պատրաստել ՌՑ-գեկույցի նախագիծը (P1), որը պետք է արտացոլի գեկուցողների ընդհանուր տեսակետը (P2):

3. ՌՑ-գեկույցի նախագիծը (P2) մեկնաբանությունների համար պետք է ուղղարկվի զնահատվող անդամին: Մեկնաբանությունները պետք է փոխանցվեն Գործադիր քարտուղարին ՌՑ-գեկույցի նախագծի ստացումից 14 օրվա ընթացքում:

4. Քարտուղարությունը պետք է աջակցի գեկուցողներին վերանայել ՌՑ-գեկույցի նախագիծը՝ հաշվի առնելով անդամի կողմից ներկայացված մեկնաբանությունները:

5. ՌՑ-գեկույցի վերանայված նախագիծը (P3) պետք է ուղղարկվի ԳՐԵԿՈ-ի ներկայացուցիչներին իր քննարկման Պլենար նիստից անենաքիչը 14 օր առաջ:

6. ՌՑ-գեկույցի նախագիծը (P3), որպես կանոն, պետք է քննարկվի ԳՐԵԿՈ-ի կողմից ոչ ավելի ուշ, քան Քարտուղարության կողմից ՌՍ-գեկույցի ստացումից վեց ամիս հետո: Այն դեպքում, երբ հնարավոր չէ տեղավորվել այս ժամանակահատվածի մեջ, Քարտուղարությունը պետք է ԳՐԵԿՈ-ին հայտնի դրա պատճառների մասին:

7. ԳՐԵԿՈ-ն քննությունից և քննարկությունից հետո պետք է ընդունի ՌՑ-գեկույցը Պլենար նիստի ընթացքում: Կատարման ընթացակարգով ստուգվող անդամը պետք է ներկայացված լինի պատվիրակության ղեկա-

վարի կողմից, որին կարող են աջակցել երկրի մյուս ներկայացուցիչները կամ փորձագետները: Պատվիրակության ղեկավարի պահանջով ԳՐԵԿՈ-ն կարող է հետաձգել ՌՑ-գեկույցի ընդունումը, եթե համարի, որ անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ կամ փորձաքննության անցկացում:

8.1 ՌՑ-գեկույցը պետք է նշի, թե արդյոք ամեն մի առաջարկություն.

- I. ի կատար է ածվել բավարար կերպով կամ հաշվի է առնվել բավարար մակարդակով,
- II. իրագործվել է մասնակիորեն,
- III. ի կատար չի ածվել:

8.2 Վերը նշված II կամ III պատասխանն ունենալու դեպքում ՌՑ-գեկույցը պետք է նշի, թե արդյոք անդամից պահանջվել է ԳՐԵԿՈ-ի կողմից որոշված ժամանակահատվածում ներկայացնել դիտարկվող առաջարկության ի կատար ածման շուրջ հավելյալ տեղեկություններ:

8.3 ՌՑ-գեկույցը պետք է նաև ներառի առաջարկությունների ի կատար ածման մասին ընդհանուր եզրակացություն: Եթե նշված եզրակացությունն այն է, որ առաջարկությունների հաշվի առնումն ընդհանուր առմամբ անբավարար է, ապա ԳՐԵԿՈ-ն պետք է որոշում ընդունի դիմել Նորմ 32-ին:

9.1 Համաձայն սույն նորմի պարբերություն 8.2-ին անդամի կողմից ներկայացված հավելյալ տեղեկությունների հիման վրա, Քարտուղարությունը պետք է անցկացնի դիտարկվող առաջարկությունների իրագործման թեմայով կարճ փորձաքննություն, որի արդյունքները պետք է քննարկվի և ընդունվի ԳՐԵԿՈ-ի կողմից: Փորձաքննության արդյունքների ընդունումը պետք է հանդիսանա կատարման ընթացակարգի ավարտը, սակայն հավելյալ տեղեկությունների հստակորեն անբավարար լինելու դեպքում ԳՐԵԿՈ-ն պետք է պահանջի նոր տեղեկություններ: Փորձաքննության արդյունքները պետք է կցվեն համապատասխան ՌՑ-գեկույցին որպես լրացում:

Նորմ 32

Երկկողմանի զնահատման գեկույցում ներառված առաջարկությունների ի կատար ածման հարցում անբավարար զնահատական ստացած ԳՐԵԿՈ-ի անդամի հանդեպ ձեռնարկվող քայլերը

1. Անբավարար զնահատական ստացած անդամի հանդեպ ձեռնարկվող գործողությունները պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

- ԳՐԵԿՈ-ի անդամների հանդեպ հավասար հավասար վերաբերմունք,
- Անբավարար զնահատական ստացած անդամի հանդեպ գործողությունների աստիճանական մոտեցում,

- Ձեռնարկվելիք քայլերի հաստատումն Պլենար նիստի կողմից՝ թույլատրելով դրանց իրականացման մեջ որոշ ճկունություն:

2. Անբավարար գնահատական ստացած անդամի հանդեպ գործողությունների ընթացակարգը պետք է ներառի հետևյալ քայլերը.

(i) ԳՐԵԿՈՒ-ի կողմից պահանջ անբավարար գնահատական ստացած անդամի պատվիրակության ղեկավարին ֆիքսված ժամանակահատվածի ընթացքում ներկայացնել առաջարկությունների ի կատար ածման գործում առաջընթացի մասին զեկույց կամ պարբերական զեկույցներ,

(ii) ԳՐԵԿՈՒ-ի նախագահի կողմից ուղղարկված նամակ, որի պատճենը պետք է ուղղարկվի Օրենսդրական կոմիտեի նախագահին, համապատասխան պատվիրակության ղեկավարին՝ հրավիրելով իր ուշադրությունը համապատասխան առաջարկություններն ի կատար չածելու խնդրին,

(iii) ԳՐԵԿՈՒ-ից առաջարկ ուղղված Օրենսդրական կոմիտեի նախագահին ուղղարկել նամակ Եվրոպայի խորհրդում համապատասխան երկրի մշտական ներկայացուցիչին՝ հրավիրելով իր ուշադրությունը համապատասխան առաջարկություններն ի կատար չածելու խնդրին,

(iv) ԳՐԵԿՈՒ-ից առաջարկ ուղղված Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղարկել նամակ համապատասխան անդամ երկրի Արտաքին գործերի նախարարին՝ հրավիրելով իր ուշադրությունը համապատասխան առաջարկություններն ի կատար չածելու խնդրին,

(v) բարձրաստիճան պաշտոնյաների (ներառյալ ԳՐԵԿՈՒ-ի նախագահին և Գործադիր քարտուղարին, Իրավական հարցերով Գլխավոր տնօրենին և որոշ պատվիրակությունների ղեկավարներին) այց անբավարար գնահատական ստացած անդամին՝ վերը նշված նամակներն ավելի հնչելու դարձնելու համար,

(vi) Ելնելով Օրենսդրության 30-րդ 16-ից՝ հարցը բարձրացնել Օրենսդրական կոմիտեի առջև:

Նորմ 33 [1]
Բաց հայտարարությունը

1. ԳՐԵԿՈՒ-ի նախագահը պետք է Օրենսդրական կոմիտեին հայտնի Նորմ 32-ին համաձայն կատարված յուրաքանչյուր գործողության մասին, հատկապես, բարձրաստիճան պաշտոնյաների այցի արդյունքների և անդամի կողմից առաջարկություններն ի կատար ածելու մեթոման մասին:

2. Օրենսդրական կոմիտեն պետք է որոշում ընդունի Օրենսդրության 30-րդ 16-ի պարբերություններ 1 և 2-ին համաձայն բաց հայտարարություն կատարելու մասին՝ հիմնվելով ԳՐԵԿՈՒ-ի նախագահի կողմից ներկայացված զեկույցի վրա:

3. Որոշումն ուժի մեջ պետք է մտնի Օրենսդրական կոմիտեի հաջորդ նիստին վերահաստատվելուց հետո՝ համաձայն Օրենսդրության 30-րդ 16-ի պարբերություն 3-ին:

ԳԼՈՒԽ 3-ՐԴ
ԳԱՂՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորմ 34
Ընդհանուր դրույթները

1. ԳՐԵԿՈՒ-ի կողմից հավաքագրված տեղեկությունները, կապված գնահատման կամ կատարման ստուգման ընթացակարգի հետ, ներառելով հարցաշարի պատասխանները, երկրի այցի մասին զեկույցները, ՌՍ-զեկույցները և դրանց հետ կապված նամակագրությունը, պետք է լինեն գաղտնի: Նույն դրույթը պետք է գործի ԳՐԵԿՈՒ-ի նիստերի զեկույցների նկատմամբ:

2. Համաձայն Օրենսդրության 30-րդ 15-ի պարբերություն 5-ին՝ գնահատման զեկույցները պետք է լինեն գաղտնի: Նույնը պետք է վերաբերի ՌՑ-զեկույցներին: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈՒ-ն կարող է կազմել յուրաքանչյուր գնահատման կամ ՌՑ-զեկույցի ընդհանրականը և այն դարձնել հրապարակային: Բացի դրանից, ԳՐԵԿՈՒ-ն կարող է անդամի մեկնաբանություններով գնահատման ամբողջ զեկույցը կամ ՌՑ-զեկույցը դարձնել հրապարակային՝ այդ անդամի պահանջով:

3. Ոչ մի անձնական տեղեկություններ չպետք է տպագրվեն՝ առանց համապատասխան անձի հայտնած համաձայնության:

Նորմ 35
Ներկայացուցիչներին, փորձագետներին և ԳՐԵԿՈՒ-ի օժանդակ այլ անձանց, ներառյալ գիտական փորձագետներին և թարգմանիչներին, վերաբերող ընդհանուր կանոնները

1. ԳՐԵԿՈՒ-ում ներկայացուցիչները, նրանց փոխարինողները, գնահատող թիմերում ներգրավված փորձագետները, Քարտուղարությունը և ԳՐԵԿՈՒ-ի օժանդակ այլ անձինք պարտավոր են իրենց պարտականությունների կատարման և դրանից հետո ընկած ժամանակահատվածում պահպանել իրենց պարտականությունների կատարման ընթացքում տեղյակ դարձած փաստերի և տեղեկությունների գաղտնիությունը:

2. Վերը նշված դրույթը պետք է ներառվի ԳՐԵԿՈՒ-ի կողմից վարձվող գիտական փորձագետների և թարգմանիչների հետ կնքվող պայմանագրերում:

Ոչ պաշտոնական բաժնիկ

Գրականության բաժնիկ

Նորմ 36

ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ

1. Եթե կան լուրջ հիմքեր կասկածելու, որ ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ կարող է համապատասխան ներկայացուցիչին իր տեսակետը ներկայացնելու հնարավորություն ընձեռելուց հետո որոշում ընդունել Օրենսդրական կոմիտեին հարցի շուրջ տեղեկացնելու մասին:

2. Եթե կան լուրջ հիմքեր կասկածելու, որ ԳՐԵԿՈՒՄ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ կարող է համապատասխան անձին իր տեսակետը ներկայացնելու հնարավորություն ընձեռելուց հետո որոշում ընդունել ձեռնարկվելիք գործողությունների մասին՝ ներառյալ փորձագետի դուրս հանումը ցուցակից:

Նորմ 37

Քարտուղարության, գիտական փորձագետների և քարզմանիչների կողմից գաղտնիության խախտման հետևանքները

Եթե կան լուրջ հիմքեր կասկածելու, որ ԳՐԵԿՈՒՄ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ կարող է համապատասխան անձին իր տեսակետը ներկայացնելու հնարավորություն ընձեռելուց հետո որոշում ընդունել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հարցի շուրջ տեղեկացնելու մասին և պահանջել ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Նորմ 37ա
Դիտորդները

Նորմեր 35 և 37-ը պետք է նույնապես տարածվեն ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ:

ԳԼՈՒԽ 4-ՐԴ
ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ

Նորմ 38
Տարեկան զեկույցը

1. Համաձայն Օրենսդրության Հոդված 8-ի պարբերություններ 1(iii) և 3-

ի Գործադիր քարտուղարը պետք է ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ընդհանուր զեկույցի նախագիծ: ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ընդունվելուց հետո զեկույցը պետք է փոխանցվի Օրենսդրական կոմիտեին և Նախարարների կոմիտեին: Պահանջի դեպքում ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ կարող է համապատասխան ժամանակ ներկայացնել այդ զեկույցը: Որից հետո զեկույցը պետք է նաև փոխանցվի Խորհրդարանական վեհաժողովին և հրապարակվի:

2. Ի թիվս այլոց զեկույցը պետք է պարունակի տեղեկություններ ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ կառուցվածքի և ներքին աշխատանքային մեթոդների մասին տեղեկություններ, ինչպես նաև համապատասխան ժամանակահատվածում ընդունված գնահատման զեկույցների համաձայնեցված հրապարակային ընդհանրականները:

3. Ձեկույցը պետք է ընդունվի ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ և ներառի ամբողջ նախորդ օրացուցային տարին:

ԳԼՈՒԽ 5-ՐԴ
ՎԵՐՋԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Նորմ 39
Լրացումները

1. Ցանկացած անգամ, նախագահը կամ Գործադիր քարտուղարը կարող են ցանկացած պահին առաջարկել այս Նորմերին լրացումներ: Այդպիսի առաջարկությունը պետք է ներկայացվի Բյուրոյին գրավոր ձևով:

2. Եթե Բյուրոն որոշում է ընդունել ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ առաջարկությունը, ապա այն պարտադիր կերպով պետք է ներառվի ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ օրակարգ, եթե ցանկացած պահին ստանա ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ չորրորդի աջակցությունը:

3. Լրացումն համարվում է ընդունված, եթե հավաքի քվեարկածների ձայների երկու երրորդը:

Նորմ 40
Նորմերի ուժի մեջ մտնելը

Սույն նորմերն ուժի մեջ են մտել 1999 թվականի նոյեմբերի 1-ին: ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ 2000 և 2001 թվականներին ընդունված լրացումներն ուժի մեջ են մտել վավերացման հաջորդ օրը [2]: 2002 թվականի դեկտեմբերի 13-ին ԳՐԵԿՈՒՄ ԵՎ ԳՐԵԿՅԱԳՈՒՑԻԱՅԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ԵՎ ԲԱՐՏԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՐԾԱԳԵՏՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՈՒՄԻ ընդունված լրացումներն ուժի մեջ են մտել Գնահատման երկրորդ շրջանի առաջին օրը: 2003 թվականի մարտի 28-ին ընդունված լրացումներն ուժի մեջ են մտել նույն օրը:

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վավերացումներ

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վավերացումներ

- [1] ԳՐԵԿՈ-ի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա Օրենսդրական կոմիտեի կողմից իր 3-րդ նիստին ընդունված նորմ (Ստրասբուրգ, 1999 թվականի դեկտեմբերի 14-ին): Օրենսդրական կոմիտեն համաձայնել է ներառել այդ դրույթն Ընթացակարգի նորմերի մեջ:
- [2] 2000 թվականի դեկտեմբերի 16-ին և 2001 թվականի դեկտեմբերի 21-ին
- [3] 2003 թվականի հունվարի 1-ին

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված 4-րդ (2003) հանձնարարականը՝ քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման հարցում ընդունված հակակոռուպցիոն համընդհանուր կանոնների վերաբերյալ:

Ոչ պաշտոնական թարգմանություն

(Հաստատված Նախարարների կոմիտեի կողմից 2003թ. ապրիլի 8-ին փոխնախարարների 835-րդ ժողովի ժամանակ):

Համաձայն Եվրախորհրդի կանոնադրության 15.b հոդվածի սահմանման, նախարարների հանձնաժողովը?

Նկատի առնելով, որ Եվրախորհրդի նպատակն է կայուն միաբանություն ստեղծել իր անդամների միջև,

Նկատի առնելով, որ քաղաքական կուսակցությունները երկրների ժողովրդավարական համակարգերի հիմնական տարրերն են, և քաղաքացիների քաղաքական կեանքը թելադրելու հիմնական գործիքը,

Նկատի առնելով, որ բոլոր երկրներում քաղաքական կուսակցությունների ու ընտրարշավների ֆինանսավորումը պետք է իրականացվի չափանիշների համաձայն՝ կոռուպցիայի դեմ պայքարելու և այն կանխելու նպատակով,

Համոզված լինելով, որ կոռուպցիան լուրջ սպառնալիք է հանդիսանում օրենքի իշխանության, ժողովրդավարության, մարդու իրավունքների, հավասարության և հասարակական արդարադատության համար, խոչնդոտում է տնտեսության աճը, վտանգի տակ է դնում ժողովրդավարական հաստատությունների կայունությունը և քայքայում է հասարակության բարոյական հիմքերը,

Հաշվի առնելով 19-րդ և 20-րդ համագումարների ժամանակակից Եվրոպական արդարադատության նախարարների կողմից հաստատված հանձնարարականները (Վալետտայում 1994թ և Պրահայում 1997թ.),

Հաշվի առնելով նախարարների հանձնաժողովի կողմից 1996թ. ընդունած Կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագիրը,

Համաձայն 1997թ. հոկտեմբերի 10-ին և 11-ին Ստրազբուրգում կայացած իրենց երկրորդ զագաթնաժողովի ընթացքում Եվրախորհրդի անդամ երկրների և այդ կառավարությունների ղեկավարների կողմից հռչակած ղեկավարացիայի և նրանց կողմից հաստատված գործողությունների ծրագրի,

Հաշվի առնելով 1997թ. նոյեմբերի 6-ին Նախարարների կոմիտեի կողմից հաստատված կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ քսան հիմնական սկզբունքների (97) 24-րդ բանաձևը և հատկապես կոռուպցիայի չտարածման պայմաններում քաղաքական կուսակցությունների ու ընտրարշավների ֆինանսավորմանը նպաստող կանոնների 15-րդ դրույթը,

Հաշվի առնելով 2001թ. մայիսի 22-ին Եվրախորհրդի խորհրդարանական ժողովի կողմից հաստատված քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ 1516 (2001) հանձնարարականը,

1998թ. հոկտեմբերի 28-ից 30-ը Մադրիդում անցկացված Քաղաքական կուսակցությունների ազդեցության ոլորտի և ապօրինի ֆինանսավորման համար առևտուրը թեմայով Եվրոպական 3-րդ կոնֆերանսի եզրահանգումների լույսի ներքո,

Դրա հետ կապված վերհիշելով ոչ-անդամ երկրները մասնակցության

կարևորությունը Եվրախորհրդի կողմից կոռուպցիայի դեմ ծավալած գործունեությանը և ողջունելով կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագրին նրանց բարձր գնահատվող աջակցությունը,

Հաշվի առնելով Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբը (ԿԴՊԵՆ) կազմելու վերաբերյալ մասնակի և ընդարձակ պայմանագրին ուժ հաղորդող (98) 7 բանաձևը և կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբը (ԿԴՊԵՆ) կազմելու վերաբերյալ (99) 5 բանաձևը, ինչի նպատակն է բարելավել իր անդամների կարողությունները այս ոլորտում իրենց ձեռնարկած գործողություններում,

Համոզված լինելով, որ հրավիրելով հանրության ուշադրությունը կոռուպցիայի դեմ պայքարի և դրա կանխմանը նպաստող քայլերին ուղղված խնդրների վրա քաղաքական կուսակցությունները ֆինանսավորելու ոլորտում՝ կարևոր է ժողովրդավարական հաստատությունների արդյունավետ աշխատանքի համար:

Անդամ երկրների կառավարություններին հանձնարարում է իրենց ազգային իրավական համակարգերում ընդունել քաղաքական կուսակցություններն ու ընտրարշավները ֆինանսավորելու դեպքում կոռուպցիայի դեմ պայքարելու այնպիսի օրենքներ, որոնք կբխեն այս հանձնարարականի հավելվածում նշված օրենքներից, քանի որ այդ երկրները դեռևս չունեն այդ գործընթացների ու համակարգերի արդյունավետ ու լավ աշխատանքը ապահովող այլ տարրերակներ, և հանձնարարում է ԿԴՊԵՆ-ին(GREKO) ստանձնել այդ հանձնարարականների իրագործումը:

Հավելված

քաղաքական կուսակցություններն ու ընտրարշավները ֆինանսավորելու դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ընդհանուր օրենքներ:

I. Քաղաքական կուսակցությունները ֆինանսավորող արտաքին աղբյուրները.

Հոդված 1. Հասարակության և անհատի աջակցությունը քաղաքական կուսակցություններին.

Պետությունը և իր քաղաքացիները պետք է աջակցեն քաղաքական կուսակցություններին:

Պետությունը պետք է իր օժանդակությունը ցույց տա քաղաքական կուսակցություններին: Պետության օժանդակությունը չպետք է անցնի ընդունելի սահմանները: Պետության օժանդակությունը կարող է հանդես գալ ֆինանսավորման տեսքով:

Կառավարության օժանդակությունը պետք է լինի օբյեկտիվ, արդարացի և խելամիտ.

Պետությունները պետք է հավաստիացնեն, որ պետության/քաղաքացիների կողմից տրամադրված որևիցե օժանդակություն չի ենթադրում քաղաքական կուսակցության անկախության նկատմամբ ոտնձգություն:

Հոդված 2. Քաղաքական կուսակցության բնորոշումն ու նվիրատվությունը.

Քաղաքական կուսակցությանը տրամադրված յուրաքանչյուր տեսակի օժանդակություն՝ տնտեսական և այլն, կոչվում է նվիրատվություն:

Հոդված 3. Նվիրատվության հիմնական սկզբունքները.

- ա. Քաղաքական կուսակցություններին պետության կողմից տրամադրված յուրաքանչյուր նվիրատվություն, պետք է համապատասխանի որոշակի նորմերի: Ըստ այդմ.
 - Պետք է խուսափել շահերի բախումից,
 - պետք է ապահովել նվիրատվությունների թափանցիկությունը և խուսափել գաղտնի նվիրատվություններից,
 - հուսափել քաղաքական կուսակցություններին վնաս հասցնող գործողություններից:
 - Ապահովել քաղաքական կուսակցությունների անկախությունը:

բ. Պետությունները պետք է.

1. Հասարակությանը տեղյակ պահի քաղաքական կուսակցություններին տված նվիրաբերությունների վերաբերյալ, հատկապես եթե դրանք գերազանցում են սահմանված չափը:
2. Քաղաքական կուսակցություններին տրամադրվող նվիրատվությունները սահմանափակող օրենքներ մտցնի:
3. Միջոցներ ձեռնարկի, որպեսզի կանխի սահմանված մաքսիմում գումարներ գերազանցելուն ուղղված խորամանկությունները:՝

Հոդված 4. հարկերի կրճատումը նվիրաբերությունների ժամանակ.

Ֆինանսական օրենսդրությամբ հնարավոր է հարկերի կրճատում մտցվի քաղաքական կուսակցություններին նվիրաբերություններ հատկացնելու ժամանակ: Նման կրճատումները պետք է լինեն սահմանափակ:

Հոդված 5. Իրավական հաստատությունների կողմից կատարված նվիրաբերությունները.

ա. նվիրաբերություններ կատարելու ընդհանուր սկզբունքներից բացի, պետությունները պետք է ապահովեն, որ.

Իրավական հաստատությունների կողմից կատարված նվիրաբերությունները քաղաքական կուսակցություններին գրանցվեն իրավական հաստատությունների հաշվապահական գրքերում և հաշվետվություններում:

Իրավական հաստատության յուրաքանչյուր անհատ բաժնետեր տեղեկացվի այդ նվիրաբերության վերաբերյալ:

բ. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն որևիցե հասարակական վարչության համար ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող իրավական հաստատությունների նվիրատվությունները սահմանափակելու, արգելելու կամ խիստ կանոնակարգելու համար:

գ. Պետությունները պետք է արգելեն պետության կամ հասարակական իշխանությունների ղեկավարման տակ գտնվող իրավական հաստատու-

թյունների նվիրատվությունները քաղաքական կուսակցություններին:

Հոդված 6. Քաղաքական կուսակցությունների հետ կապված հաստատություններին տրամադրված նվիրատվություններ.

Քաղաքական կուսակցություններին նվիրաբերություններ անելու վերաբերյալ օրենքները, բացառությամբ 4-րդ հոդվածում նշված հարկերի կրճատման վերաբերյալ դեպքերի, պետք է համապատասխանաբար վերաբերեն քաղաքական կուսակցության հետ ուղղակի կամ անուղղակի կերպով կապ ունեցող կամ քաղաքական կուսակցության ղեկավարության տակ գտնվող բոլոր հաստատություններին:

Հոդված 7. Նվիրատվություններ արտասահմանյան նվիրատուների կողմից.

Պետությունները պետք է սահմանափակեն, արգելեն, կամ, այլ կերպ ասած կարգավորեն արտերկրյան նվիրատուների կատարած նվիրատվությունները:

II. Ընտրությունների համար առաջադրված թեկնածուներին կամ ընտրված պաշտոնյաներին ֆինանսավորելու աղբյուրները.

Հոդված 8. ընտրությունների համար առաջադրված թեկնածուներին կամ պաշտոնյաներին ֆինանսավորելու վերաբերյալ օրենքների կիրառումը.

Քաղաքական կուսակցություններին ֆինանսավորելու վերաբերյալ օրենքները պետք է կիրառվեն համապատասխան փոփոխություններ մտցնելով.

Ընտրության համար առաջադրված թեկնածուների քարոզարշավի ֆինանսավորման հարցում.

Ընտրված ներկայացուցիչների քաղաքական գործունեությունը ֆինանսավորելու հարցում:

III. Ընտրարշավի համար նախատեսված ծախսերը.

Հոդված 9. Սահմանափակումներ ծախսերում.

Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն քաղաքական կուսակցությունների ավելորդ ծախսերը կանխելու համար, օրինակ՝ սահմանափակելով ընտրարշավի համար անհրաժեշտ ծախսը:

Հոդված 10. Ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը.

Պետությունները պետք է պահանջեն կատարված ծախսերի վերաբերյալ հատուկ գրառումներ, ուղղակի ու անուղղակի, յուրաքանչյուր քաղաքական կուսակցության ընտրարշավի, թեկնածուների յուրաքանչյուր ցուցակի և յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ:

IV. Թափանցիկություն.

Հոդված 11. հաշվետվություններ.

Պետությունները պետք է ապահանջեն քաղաքական կուսակցություններից ու 6-րդ հոդվածում հիշատակված դրանց հետ կապված հաստատություններից պահել համապատասխան հաշվապահական գրքեր ու հաշվետվություններ: Քաղաքական կուսակցությունների հաշվետվություններում

պետք է համապատասխան ձևով տեղ գտնեն նաև 6-րդ հոդվածում հիշատակված հաստատությունների հաշվետվությունները:

Հոդված 12. Նվիրաբերությունների վերաբերյալ հաշվետվությունները.

ա. Պետությունները պետք է պահանջեն քաղաքական կուսակցության հաշվետվությունները, որպեսզի հատկորոշեն կուսակցության կողմից ստացված բոլոր նվիրատվությունները՝ յուրաքանչյուր նվիրատվության բնույթն ու չափը ներառյալ:

բ. Որոշակի գումար նվիրաբերելու դեպքում նվիրատուները պետք է գրանցվեն հաշվետվություններում:

Հոդված 13. Հաշվետվությունները ներկայացնելու և հասարակությանը դրանք ծանոթացնելու պարտականությունը.

ա. Պետությունը պետք է քաղաքական կուսակցություններից պահանջի պարբերաբար ներկայացնել 11-րդ հոդվածում հիշատակված հաշվետվությունները և տարեկան առնվազն մեկ անգամ այն ներկայացնի 14-րդ հոդվածում նշված անկախ մարմնին:

բ. Պետությունը պետք է քաղաքական կուսակցություններից պահանջի հասարակությանը ներկայացնել 11-րդ հոդվածում հիշատակված հաշվետվությունները կամ զոմե դրանց ամփոփումները՝ 10-րդ և 12-րդ հոդվածներում պահանջված տեղեկությունները ներառյալ:

V. Վերահսկողություն.

Հոդված 14 Անկախ մոնիտորինգ.

ա. Պետությունը պետք է ապահովի քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման և ընտրարշավի անկախ մոնիտորինգը:

բ. Անկախ մոնիտորինգը պետք է ներառի քաղաքական կուսակցությունների հաշվետվությունների ու ընտրարշավների ծախսերի վերահսկողությունը, ինչպես նաև դրանց ներկայացումն ու հրապարակումը:

Հոդված 15. Մասնագիտացված անձնակազմ.

Պետությունը պետք է նպաստի դատավորների, ոստիկանության կամ կուսակցությունների ու ընտրարշավների անօրինական ֆինանսավորման դեմ պայքարող այլ անձնակազմերի մասնագիտացմանը:

VI. Պատժամիջոցներ-sanctions

Պետությունները պետք է պահանջեն, որ քաղաքական կուսակցությունները և ընտրարշավները ֆինանսավորելու դեպքում համապատասխան օրենքները խախտողները ենթարկվեն արդյունավետ, համաչափ և տար-համոզող պատժամիջոցներ:

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

*Նախագահների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված
պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկի վերաբերյալ
Հանձնարարական
No. R (2000) 10:*

Ոչ պաշտոնական թարգմանություն

(Հաստատված Նախարարների կոմիտեի կողմից 2000թ. մայիսի 11-ին 106-րդ նստաշրջանի ժամանակ):

Համաձայն Եվրախորհրդի կանոնադրության 15.b հոդվածի սահմանման, նախարարների կոմիտեն,

Սկստի առնելով, որ Եվրախորհրդի նպատակն է կայուն միաբանություն ստեղծել իր անդամ երկրների միջև,

Սկստի առնելով, որ պետական կառավարումը կարևոր դերակատարում ունի ժողովրդավարական հասարակություններում, և որ դրանք պետք է իրենց տրամադրության տակ ունենան համապատասխան աշխատակազմ իրենց հանձնարարած առաջադրանքները ինչպես հարկն է կատարելու համար,

Սկստի առնելով, որ հասարակական պաշտոնյաները պետական կառավարման հիմնական տարրերն են, և որ նրանք ունեն կոնկրետ պարտավորություններ ու պարտականություններ, և որ իրենց առաջադրանքները արդյունավետ կատարելու համար պետք է ունենան անհրաժեշտ որոկավորում և համապատասխան իրավական հիմքեր և նյութական միջոցներ:

Համոզված լինելով, որ կորուստից լուրջ սպառնալիք է հանդիսանում օրենքի իշխանության, ժողովրդավարության, մարդու իրավունքների, հավասարության և հասարակական արդարադատության համար, խանգարում է տնտեսության աճին, վտանգի տակ է դնում ժողովրդավարական հաստատությունների կայունությունը և քայքայում է հասարակության բարոյական հիմքերը,

Հաշվի առնելով 19-րդ և 21-րդ համագումարների ժամանակակից Եվրոպական արդարադատության նախարարների կողմից հաստատված հանձնարարականները (Վալետտայում 1994թ. և Պրահայում 1997թ.),

Հաշվի առնելով նախարարների հանձնաժողովի կողմից 1996թ. ընդունած Կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագիրը,

Հաշվի առնելով Եվրախորհրդի նախարարների կոմիտեի No. R (81)

19 հանձնարարականը՝ հասարակական պաշտոնյաների ունեցած ինֆորմացիայից օգտվելու իրավունքի վերաբերյալ:

Հաշվի առնելով Եվրախորհրդի նախարարների կոմիտեի No. R (2000)

6 հանձնարարականը? Եվրոպայում հասարակական պաշտոնյաների ունեցած կարգավիճակի վերաբերյալ:

Համաձայն 1997թ. հոկտեմբերի 10-ին և 11-ին Ստրազբուրգում կայացած իրենց երկրորդ գագաթնաժողովի ընթացքում Եվրախորհրդի անդամ երկրների և այդ կառավարությունների ղեկավարների կողմից հռ-

չակած դեկլարացիայի և նրանց կողմից հաստատված գործողությունների ծրագրի,

Դրա հետ կապված վերհիշելով ոչ-անդամ երկրներ կառուցվածքային կարևորությունը Եվրախորհրդի կողմից կոռուպցիայի դեմ ծավալված գործունեությանը և ողջունելով կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագրին նրանց բարձր գնահատվող աջակցությունը:

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի մասին քսան հիմնական կզբունքների վերաբերյալ (97) 24-րդ բանաձևը:

Հաշվի առնելով Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբը (ԿԴՊԵՍ- GRECO) կազմելու վերաբերյալ մասնակի և ընդարձակ պայմանագրին ուժ հաղորդող (98) 7 և (99) 5 բանաձևերը, ինչի նպատակն է բարելավել իր անդամների կարողությունները այս ոլորտում նրանց ձեռնարկած գործողություններում,

Համոզված լինելով, որ հանրության իրազեկումը և հոգևոր արժեքների բարձրացումը անհրաժեշտ քայլեր են կոռուպցիայի դեմ պայքարում:

Հանձնարարում է ազգային օրենքներին ու պետական կառավարման օրենքներին ենթակա անդամ երկրներին նպաստել պաշտոնյաների վարքագծի նորմերի ընդունմանը, որը հիմնված է այս հանձնարարականին միկացված պաշտոնյաների նորմերի վերաբերյալ ձեռնարկի մոդելի վրա:

Հանձնարարում է ԿԴՊԵՍ-ին ստանձնել այդ հանձնարարականների իրագործումը:

Հավելված

Պետական պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկի մոդել:

Հանձնարարականի բացատրական հուշագիր:

Ներածություն:

1. Եվրախորհուրդը խիստ հետաքրքրված է կոռուպցիայի դեմ միջազգային պայքարով, քանի որ այն ակնհայտ սպառնալիք է ներկայացնում այս կազմակերպության հիմնական սկզբունքներին. օրենքի իշխանությանը, ժողովրդավարական հաստատությունների կայունությանը, մարդու իրավունքներին, հասարակական և տնտեսական առաջընթացին: Այս խնդիրը ստեղծում է միջազգային համագործակցության շրջանակ: Կոռուպցիան մի խդիր է, որը կիսում են անդամ երկրների մեծ մասը, եթե ոչ բոլորը: Ինչևէ, այս խնդրի վերաբերյալ Եվրախորհուրդը ունի չափազանց համակարգված մոտեցում, ինչը նշանակում է, որ այն կոռուպցիայի դեմ պայքարում է քրեական, քաղաքացիական և վարչական օրենքների սահմաններում:
2. 1994թ. Մալթայի կոնֆերանսի ժամանակ Եվրոպական արդարադատության նախարարներն ու Եվրախորհուրդը նախաձեռնեցին կոռուպ-

Ոչ պաշտոնական բաղձնատվություն

Ոչ պաշտոնական բաղձնատվություն

ցիայի դեմ պայքարը: Նախարարները համարում էին, որ կոռուպցիան լուրջ սպառնալիք է ներկայացնում ժողովրդավարության, օրենքի իշխանության և մարդու իրավունքների համար, և որ Եվրախորհուրդը, լինելով այս հիմնարար արժեքները պաշտպանող ամենահիմնական կառույցներից մեկը, պետք է դիմակայի այդ սպառնալիքին:

3. Հնարավոր ժամանակ ընդունված բանաձևը հաստատում էր խիստ համակարգված մոտեցման անհրաժեշտությունը և հանձնարարում էր ստեղծել Կոռուպցիայի դեմ խիստ համակարգված միջոցներով պայքարող մի խումբ (ԿԴՊԽ-GMC), որը իր առջև պետք է նպատակ դնի պարզել, թե ինչ միջոցներ կարելի է ներգրավել գործողությունների ծրագրի մեջ միջազգային մակարդակով, և խնդրի վերաբերյալ օրենքների կամ վարքականոցների մոդելներ ներկայացնելու հնարավորությունը՝ միջազգային պայմանագրերը ներառյալ: Հատուկ ուշադրություն դարձվեց նաև համապատասխան միջոցառումները ի կատար ածելու համար անհրաժեշտ մեխանիզմների կարևորությանը:
4. Այս հանձնարարականների լույսի ներքո Նախարարների կոմիտեն 1994թ. իր համաձայնությունը տվեց ստեղծել Կոռուպցիայի դեմ խիստ համակարգված միջոցներով պայքարող մի խումբ (ԿԴՊԽ) քրեական խնդիրներով զբաղվող եվրոպական հանձնաժողովի (ՔԽԵՀ) և իրավական համագործակցության եվրոպական հանձնաժողով (ԻՀԵՀ) վերահսկողության ներքո և նրան հանձնարարեց պարզել, թե գործողությունների ծրագրի համար միջազգային մակարդակով ինչ միջոցներ կարելի է ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար, հանդես գալ որոշակի առաջակներով առաջնային խնդիրների և գործող կառույցների վերաբերյալ, օրինակ վերցնել այլ միջազգային կազմակերպությունների աշխատանքից և կոնկրետ ոլորտներում քննել օրենքների կամ վարքագծի նորմերի ստեղծման հնարավորությունը? Ներառյալ այս թեմայի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների մշակումը և վերջիններիս իրագործմանը նպաստող մեխանիզմները: ԿԴՊԽ-ն սկսեց գործել 1995թ. մարտից:
5. 1995թ. ընթացքում ԿԴՊԽ-ի կողմից պատրաստված և 1996թ. նախարարների կոմիտեի կողմից հաստատված Կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագիրը (ԿԴԳԾ) հավակնոտ փաստաթուղթ է, որը փորձում է ներգրավել կոռուպցիայի դեմ միջազգային պայքարի բոլոր ասպեկտները: Վերջինս որոշում է այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ է գործողություններ ձեռնարկել և ներկայացնում է կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ մի շարք գլոբալ, խիստ համակարգված և համապարփակ մոտեցումներ: Նախարարների կոմիտեն ԿԴՊԽ-ին հանձնարարում է այս ծրագիրը իրականացնել մինչև 2000թ. վերջը:
6. Եվրոպայի արդարադատության նախարարների 21-րդ կոնֆերանսի ժամանակ (Պրահա, 1997թ.) ընդունվեց կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության միջև կապի No1 բանաձևը: Նախարար-

ները շեշտեցին, որ ահաբեկությունը մեծ սպառնալիք է ներկայացնում օրենքի իշխանության, ժողովրդավարության և մարդու իրավունքների, արդարության և սոցիալական արդարադատության համար, խոչնդոտում է տնտեսության զարգացմանը և վտանգի տակ է դնում հասարակության ժողովրդավարական ու բարոյական հաստատությունների կայունությունը: Այնուհետև նշվում է, որ ահաբեկության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարելու հաջող ռազմավարության հիմքում ընկած է անդամ երկրների միացյալ ջանքերով խիստ միջոցների կիրառումը? Իրենց փորձը այդ բնագավառում կիսելու և համատեղ քայլեր ձեռնարկելու միջոցով: Եվրոպական արդարադատության նախարարները հատկապես հանձնարարեցին արագացնել Կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագրի իրագործումը և հետամուտ լինեն պաշտոնյաների վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկի մշակմանը:

7. 1997թ. հոկտեմբերի 10-12-ը Ստրասբուրգում տեղի ունեցավ Եվրախորհրդի անդամ երկրների և այդ կառավարությունների ղեկավարների 2-րդ զագաթաժողովը: Ամբողջ Եվրոպային սպառնացող կոռուպցիայի մարտահարվերներին միասնական արձագանք տալու և Եվրախորհրդի անդամ երկրների միջև համագործակցությանը նպաստելու համար, երկրների և կառավարությունների ղեկավարները, իմիջիայն, հանձնարարեցին Նախարարների կոմիտեին արագ ավարտին հասցնել Եվրախորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրին համապատասխան գործող միջազգային իրավական մեխանիզմները:
8. 1997թ. Նոյեմբերի 6-ին տեղի ունեցած 101-րդ նիստի ժամանակ Նախարարների կոմիտեն ընդունեց Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական կետերի վերաբերյալ բանաձև (97) 24-ը: 10-րդ կետում հատուկ նշվում է, որ Պետությունները պետք է հավաստիանան, որ պաշտոնյաների իրավունքներին և պարտականություններին վերաբերող օրենքներում հաշվի են առնվում կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ պահանջները և ապահովվում են համապատասխան և խիստ համակարգված միջոցառումներով, ինչը կոնկրետ միջոցներով, օրինակ? վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկների կիրառմամբ, նպաստելու է պաշտոնյաներից ակնկալվող վարքի սահմանմանը:
9. Հետևաբար, հաշվի առնելով Կոռուպցիայի վերաբերյալ քրեական օրենքի կոնվենցիայի ընդունումը (Եվրոպական պայմանագրեր շարքից #173), Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբը (ԿԴՊԽ) ստեղծող և իրավասությամբ օժտող (98) 7 և (99) 5 բանաձևերը և Կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիական օրենքի կոնվենցիան (Եվրոպական պայմանագրեր շարքից #174), Եվրախորհուրդը ընդունեց մի հանձնարարական, որով իրավիքում էր անդամ երկրների կառավարություններին նպաստել և ենթարկվել ազգային օրենքին և պետական կառավարման սկզբունքներին, և հանձնարարականին կց-

Ոչ պաշտոնական բանաձևումներ

Դիվերսիվացված բանաձևումներ

ված պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկի մոդելի վրա հիմնված պաշտոնյաների վարքի վերաբերյալ ազգային օրենսգրքի ընդունմանը:

Նախապատրաստական աշխատանքներ

10. 1996թ. հունվարին փոխնախարարների 554-րդ հանդիպման ժամանակ նախարարների կոմիտեն պահանջեց ԿԴՊԽ-ից մշակել պաշտոնյաների վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկի օրինագիծը (եվրոպական):
11. Ինչևէ, տեքստի մշակման նախապատրաստական աշխատանքներում ԿԴՊԽ-ն համաձայնեց հանել եվրոպական բառը ձեռնարկի նմուշի վերնագրից, այսպիսով ընդունելով ոչ-անդամ երկրների ավանդը կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրի մշակման գործում և հաշվի առնելով այն փաստը, որ որոշ ոչ եվրոպական երկրներ կարող են օրինակ վերցնել այս ձեռնարկից:
12. Վարչական ու սահմանադրական օրենքնորոշող առաջնորդվող ԿԴՊԽ աշխատանքային խումբը 1997-ից 1999թթ. Ունեցավ 6 հանդիպում, որպեսզի քննարկի և վերջնական տեսքի բերի Նախարարների կոմիտեի հանձնարարականի օրինագիծը? հավելումն ու վարքագծի նորմերի ձեռնարկի նմուշը ներառյալ: ԿԴՊԽ-ն այս տեքստը ուսումնասիրեց 18-րդ հանդիպման ժամանակ (Ստրասբուրգ, 1999թ., սեպտեմբերի 8-ց 10-ը), հաստատեց այն երկրորդ ընթերցմամբ 19-րդ հանդիպման ժամանակ (Ստրասբուրգ, 1999, դեկտեմբերի 8-10-ը) և այն ներկայացրեց իրավական համագործակցության հիմունքներով գործող եվրոպական կոմիտեի (ԻՅԵԿ-CDCCJ) դատին: ԿԴՊԽ-ն հաշվի առավ ԻՅԵԿ-ի կարծիքը և հաստատեց հանձնարարականի օրինագիծը իր 20-րդ լիակազմ նիստի ժամանակ (Ստրասբուրգ, 2000, ապրիլի 11-13-ը): Եվրախորհրդի նախարարների կոմիտեն հանձնարարականը հաստատեց իր 106-րդ նիստի ժամանակ (Ստրասբուրգ, 2000, մայիսի 20) և լիազորեց բացատրական հաշվետվության տպագրումը:

Հասարակական ծառայության վարքագծի նորմերը ընդհանրապես կոնտեքստ.

13. Կոռուպցիայի դեմ պայքարի հաջող ռազմավարությունը պետք է լինի համընդհանուր և վայելի շահագրգռված կողմերի, հատկապես մեծ պատասխանատվություն կրողների աջակցությունը: Դրա հիմքում պետք է ընկած լինի կանխարգելում, կրթությունը և օրենքների պարտադիր կիրառումը: Այս տարրերից յուրաքանչյուրը էական է, հավասարապես կարևոր է և կոմպլիմենտար: Այս իմաստով վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկները դերակատարում ունեն բոլոր երեք տարրերում: Դրանց գլխավոր ավանդը կրթական է և կանխարգելիչ, բայց դրանք ունեն նաև հարկադրման ասպեկտ: Դրանք կարող

են արդյունավետ լինել և? հասարակական, և? մասնավոր սեկտորներում բարոյական մթնոլորտը փոխելու համար:

Ընդհանուր քննարկումներ.

14. Վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած կոռուպցիային վերաբերող քննարկումները և վարքագծի նորմերի ձեռնարկի հաստատումն ու կիրառումը չափազանց մեծ կարևորություն են ունեցել: Ինչևէ, այդ ձեռնարկի միջոցով վարքի կամավոր կարգավորումը չի կարող փոխարինել իրավական նորմերն ու արտաքին կառավարումը (իշխանությունների կամ բիզնես աուդիտորների կողմից): Փաստորեն կոռուպցիան կարող է տարածվել հաստատված վարքագծի նորմերին հակառակ: Հետևաբար, հասարակությունը երբեմն կասկածում է, որ կազմակերպությունները օգտագործում են չափազանց հասարակայնացված վարքականոմներ? որպես մարկետինգի միջոց: Հետևաբար չափազանց կարևոր է նման ձեռնարկների արդյունավետ կիրառումը:
15. Վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկները ունեն տարբեր անուններ ու նպատակներ: Օրինակ? դրանք կարող են անվանվել «բարոյական կանոններ», «բիզնես գործունեության վարքականոմներ», կամ էլ դրանք կարող են հանդես գալ վարչական կանոնների տեսքով: Սովորաբար նման ձեռնարկներում նկարագրվում է աշխատողների պարտավորությունները, մինչդեռ գործունեության վերաբերյալ վարքագծի նորմերի ձեռնարկները ավելի շատ վարքերում են հաճախորդներին, քան այն հաստատություններին, որոնց համար դրանք սահմանված են: Գործունեության վերաբերյալ ձեռնարկներում ավելի շուտ ներկայացվում են այն չափանիշները, որոնք հաճախորդը իրավունք ունի ակնկալել, քան այն չափանիշները, որոնք տվյալ մասնագիտությամբ աշխատողները պետք է պահեն:
16. Չնայած, որ այստեղ օգտագործվում է վարքագծի նորմերի ձեռնարկե ընդհանուր տերմինը, պետք է նշել, որ կախված այդ ձեռնարկի նպատակից, որոշ տարբերություններ պետք է դնել: Օրինակ? ճիշտ գործունեության վերաբերյալ ձեռնարկներում նախարարի ներկայացվում է, թե ինչպես պետք է վարվել աշխատանքի հետ կապված որոշակի իրավիճակներում: Այսպիսի ձեռնարկը իր բնույթով կարող է ամբողջովին տարբերվել վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկի սովորական ձևից:
17. Վարքագծի նորմերի ձեռնարկները կարող են ընդունվել տարբեր պատճառներով և հասարակության տարբեր դասի պատկանող անդամների համար, օրինակ՝ պաշտոնյաներ, դատավորներ, դատախազներ, գործարարներ, աուդիտորներ և այլ մասնագիտության տեր անձինք, ինչպես նաև ազգային և տեղական մակարդակով ընտրված կառավարության ներկայացուցիչներ ու անդամներ:

18. Կոռուպցիային վերաբերող վարքագծի նորմերի ձեռնարկները կարող են նեկայացված լինել շատ մանրակրկիտ: Օրինակ՝ անդամ պետություններից մեկի մոտ նման ձեռնարկով որոշվում է, թե արդյոք թույլատրելի է ծաղիկներ կամ շոկոլադի տուփ ընդունել, ինչպես նաև նվերի ընդունելի արժեքը:
19. Վարքագծի նորմերի ձեռնարկի ընդունման իրավական հիմքերը կարող են տարբերվել: Դրանց մի մասի ընդունման համար հիմք է ընդունվում օրենսդրությունը, մինչդեռ մյուսները ավելի կամայական բնույթ ունեն: Վարքագծի նորմերի վերաբերյալ որոշ ձեռնարկներ ունեն կիսահասարակական փաստաթղթի կարգավիճակ, չնայած որ մշակված են մասնավոր հաստատությունների կողմից: Նման դեպքի օրինակ կարելի է գտնել բանկային ոլորտում, որտեղ մշակվել է մանրակրկիտ ստուգման վերաբերյալ ձեռնարկ: Նման տիպի ուրիշ ձեռնարկներ են մշակվել հաշվապահների և դատապաշտպանների համար: Վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկների մեծ մասը մշակվել են կազմակերպության կամ տվյալ մասնագիտության մեջ շահերը պաշտպանելու համար, բայց մի մասն էլ կարող են մշակվել արդյունաբերության բոլոր սեկտորներում գործունեության հստակ շրջանակը ներկայացնելու նպատակով: Օրինակներ կարելի է գտնել, երբ կոնկրետ սեկտորի ամբողջ ձեռնարկատիրական կազմը կամ ավելի մեծ կազմակերպությունները ձեռնամուխ են լինում կոռուպցիայից հնարավորինս ազատվելու գործին:
20. Ինչ վերաբերում է պաշտոնյաներին ու գործարար հանրությանը, ապա վարքականոնը այստեղ հանդես է գալիս որպես աշխատանքի տեղավորման պայմանագիր և այսպիսի դեպքերում կարող է ստորագրվել ծառայողի կողմից: Վարքագծի նորմերի խախտումը կարող է դիտվել որպես աշխատանքի տեղավորման վերաբերյալ պայմանագրի խախտում: Մյուս կողմից այլ բնույթ կարող են ունենալ անկախ մասնագիտություններին, կառավարության ընտրված անդամներին կամ ներկայացուցիչներին վերաբերող վարքագծի նորմերը: Դրանց խախտումը հավասարազոր չի լինի պայմանագրի խախտմանը, այնուամենայնիվ ենթակա կլինի ուղղիչ գործողությունների:
21. Վարքագծի նորմերը կարող են միայն կիրառվեն ժամկետային ծառայությունների ժամանակ, որպես աշխատանքային պայմանագրի մի մաս, սակայն որոշ վարքագծի նորմերի վերաբերյալ որոշ ձեռնարկներով նախատեսվում են նախագուշակյալ միջոցնոր այն դեպքերի համար, երբ աշխատողը կամ ընտրված ներկայացուցիչը հեռացել է աշխատանքից կամ հրաժարվել է պաշտոնից: Այսպիսի ձեռնարկներով, օրինակ, նախատեսվում են նախագուշակյալ միջոցներ, որոնք հնարավորություն չեն տա մի աշխատավարյուն պաշտոն զբաղեցրած անձնավորությանը պաշտոն ստանալ մեկ այլ աշխատավարյունում, որի հետ նա նախկինում առնչվել է (pantouflage): Այսպիսի

նախագուշակյալ միջոցների կարելի է հանդիպել և? հասարակական պաշտոնյաներին, և? քաղաքական գործիչներին վերաբերող վարքագծի նորմերին վերաբերող ձեռնարկներում:

22. Անհնազանդության համար նախատեսված պատիժները նույնպես դասվում են վարչական պատիժների շարքին, ինչպես օրինակ աշխատանքից վտարում և կարգուկանոն հաստատող այլ միջոցառումներ: Որոշ ձեռնարկներով կարող է ոչ մի պատիժ չնախատեսվել, դրանցում պարզապես հիշատակվում է առկա քրեական օրենսգրքերով կոռուպցիայի համար նախատեսված պատժամիջոցները: Վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկների արդյունավետությունը հիմնականում կախված է դրանց խախտման համար նախատեսված պատժամիջոցներից: Անշուշտ համակարգված միջոցառումներ իրականացնելու շրջանակը ավելի լայն է, քան քրեական օրենսգրքով նախատեսված միջոցառումների շրջանակը: Անձանց որոշակի կատեգորիաների համար, օրինակ? խորհրդարանի կամ կառավարության անդամ, կիրառվում են պատժամիջոցների հատուկ տեսակներ: Այս ձեռնարկները կարող են օգտագործվել վարչական, քաղաքացիական կամ քրեական ոլորտների հետ կապված որոշումներ ընդունելու համար? որպես վկայակոչվող փաստաթուղթ, հատկապես, որպես գնահատանք, թե տվյալ իրավիճակում ինչը կարող է լինել արդար կամ համապատասխան:
 23. Որպեսզի վարքագծի նորմերի ձեռնարկները ընդունվեն և կատարվեն այն անձանց կողմից, որոնց համար դրանք նախատեսված են, խորհուրդ է տրվում դրանց պատրաստման ընթացքում դիմել խորհրդատվական աջակցության:
 24. Պաշտոնյաների համար նախատեսված վարքականոնի նմուշը շատ մեծ օգուտ կարող է բերել կոռուպցիայի դեմ պայքարում, հատկապես Կենտրոնական կամ Արևելյան եվրոպայում սկիզբ առնող ժողովրդավարությունների համար: Այլ կատեգորիայի մարդկանց, օրինակ? կառավարության կամ ընտրված ներկայացուցիչների համար նախատեսված ձեռնարկները, կարող են կարևոր դերակատարում ունենալ նվազագույն բարոյական չափանիշներ սահմանման համար:
- Պաշտոնիաներ.*
25. Հաշվի առնելով տարբեր ծագում ունեցող և ոչ միասնե հասարակական խմբերից կազմված անձնակազմ ունեցող ժամանակակից պետական կառավարման կողմից ստանձնած առաջադրանքների բազմազանությունը, այսօր վարքագծի նորմերը համակարգելու անհրաժեշտությունը ավելի մեծ է, քան անցյալում, երբ ավելի միասն անձնակազմ էր ծավալում միևնույ գործունեությունը և կիսում էր միևնույն արժեքները:
 26. Վարքագծի նորմերի ձեռնարկները քննարկելիս պատք է հաշվի առ-

նել քաղաքացիական ծառայության վերաբերյալ հատուկ կանոնադրությունները, հատկապես եթե այդ ձեռնարկները դիտվում են որպես կոռուպցիայի դեմ պայքարելու միջոց: Կոմունալ ծառայությունները իրականացնելու համար պաշտոնյաները պետք է գործեն միասնական: Որանք ոչ միայն ծառայում են կառավարությանը, այլ նաև պետք է կատարեն իրենց պարտականությունները հասարակության նկատմամբ: Այսպիսով պաշտոնյաների պարտականությունները որոշ չափով տարբերվում են մասնավոր սեկտորում աշխատող անձանց պարտականություններից:

- 27. Հատուկ ուշադրության են արժանի հասարակական ծառայության մեջ գտնվող ավագ պաշտոնյաները և կառավարության անդամները, որոք միևնույն ժամանակ կարող են լինել ընտրված ներկայացուցիչներ: Այս կատեգորիաները պետք է գործեն հատուկ կանոնադրությամբ:
- 28. Այնուամենայնիվ պետք է ինկատի ունենալ, որ վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկը չի կարող փոխարինել պաշտոնյաների կարգավիճակը սահմանող օրենսդրական ակտերին:

Ընտրված ներկայացուցիչներ.

29. Սովորաբար ընտրված ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում իրենց էլեկտորատի և/կամ կուսակցության առջև: Միևնույն ժամանակ հասարակության շահերից բխում է, որ նրանք լինեն հաշվետու իրենց քայլերի համար, գործեն միասնական և թափանցիկ: Ավանդույթները մեծ դերակատարում ունեն անդամ երկրներում իրադարձությունների զրգացման հարցում: Կոռուպցիայի դեմ պայքարելու համատեքստում հատուկ ուշադրության պետք է արժանացնել անձեռնմխելիության, կուսակցության հետ հարաբերությունների, պատժամիջոցների և շահերի բախումների վերաբերող հարցերին և առկա իրավիճակի փոփոխությունը ենթակա է մանրակրկիտ քննարկման:

Այլ անձինք

30. Վարքագծի նորմերի ձեռնարկները տարբերվում են, կախված, թե դրանք ինչ կատեգորիայի անձանց համար են սահմանված: Դատավորների և դատախազների համար սահմանված ձեռնարկները իրենց նպատակներով տարբերվում են աուդիտորների և մասնավոր գործով զբաղող գործարարների համար սահմանված ձեռնարկներից: Նպատակների և իրավական վիճակների փոփոխության հետ միասին տարբերվում են նաև դրանց համար կիրառվող պատժամիջոցները:

Նպատակ.

31. Վարքագծի նորմերի ձեռնարկները, որոնք համակարգում են տվյալ

կազմակերպության անդամների աշխատանքային ռեժիմը, պետք է շարադրված լինեն պարզ և հակիրճ:

- 32. Այսպիսով? հասարակական ծառայողների համար սահմանված վարքագծի նորմերի ձեռնարկը եռաշերտ է.
 - Այն հասարակական ծառայության ոլորտում գերակշռող բարոյական մթնոլորտի սահմանումն է:
 - Այն պարզաբանում է հասարակական ծառայության մեջ անհրաժեշտ բարոյական վարքի չափանիշները:
 - Այն հասարակությանը ծանոթացնում է, թե ինչպիսի վարք և վերաբերմունք պետք է ակնկալել հասարակության ծառայողներից նրանց հետ շփվելիս:
- 33. Այն և՛ հասարակական փաստաթուղթ է, և՛ հասարակությանը ծառայող յուրաքանչյուր անհատին ուղղված հանձնարարական: Չի կարելի ենթադրել, որ հասարակական ծառայողը կարող է իմանալ վարքագծի նորմերի մասին, առանց դրանց մասին տեղեկացված լինելու: Չգրված չափանիշների վրա հմնված գործընթացով առաջնորդվելը ներկայիս միջավայրում բավարար չէ և կարող է ծնունդ տալ պատահականությունների: Եթե հասարակության ծառայողը պետք է պատասխանատվության ենթարկվի իր արաքների համար, ապա, ենթադրվում է, որ նա նախօրոք պետք է տեղեկացված լինի, թե ինչ է իրենից ակնկալվում և կոնկրետ որ քայլերը չեն համապատասխանում համապատասխան սպասելիքներին: Հիմնական պահանջներից մեկն է աշխատանքային չափանիշների պարզ և հստակ գրավոր սահմանումը:

Առանձնահատկություններ.

34. Վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկի նմուշը պետք է ընդունելի լինեն պաշտոնյաների մեծ մասի համար? փոփոխություններով կամ առանց դրանց: Դրանց նախապատրաստական աշխատանքներում պետք է հաշվի առնվեն հիմնական սկզբունքները, միևնույն ժամանակ բավարարելով տվյալ իրավիճակին հարիր խորհրդատվական պահանջները: Որպես դիմումի ընդհանուր ձև, նրանում չպետք է մանրակրկիտ ներկայացվի այն կոնկրետ կատեգորիայի պաշտոնյաներին կամ աշխատողներին անհրաժեշտ խորհրդատվությունը, որոնց մասնագիտություններում կոնկրետ կանոններ են գործում:

Բովանդակություն.

35. Վարքագծի նորմերի ձեռնարկները չպետք է սահմանափակվեն զուտ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում: Ավելին, դրանք պետք է նպաստեն բարոյական բարձր չափանիշների զարգացմանը: Դրանք պետք է ներառեն օրինականությունը, աշխատասիրությունը, արդյու-

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

նավետությունն ու բարգավաճումը, թափանցիկությունն ու կոնֆիդենցիալությունը համադրող սկզբունքները, ինչպես նաև նպաստեն համակարգված ինֆորմացիայի կիրառմանը, անձնական պատասխանատվության և ինքնուրույն գնահատականի, արդար վարվելակերպի և միասնականության դրսևորմանը, արհեստավարժ թրեհինդ-գի անցկացմանը:

36. Վարքագծի նորմերի ժողովածուները կարող են բաժանվել երկու հիմնական մասի, որոնք կարող են վերաբերել անհատականության ինտեգրվածությանն ու վարչական պատասխանատվություններին, ինչը նպաստում է հասարակական ծառայության կամ ընկերության ամբողջականության պահպանմանը, ինչպես օրինակ կոնկրետ համակարգերի կամ գործողությունների ստեղծումն ու կիրառումը, հավաստիացնում է, որ ենթակայությունները տեղեկացված են և գիտեն իրենց պարտականությունների մասին, նպաստում է կառավարման և հաշվետվության համակարգերի կիրառմանը, հատուկ ընտրական գործընթացների անցկացմանը, ամրապնդում է վարքագծի նորմերը և հաստատում է կարգ ու կանոն:

Կիրառում.

37. Ում համար է նախատեսված վարքագծի նորմերի ձեռնարկը: Արդյո՞ք հասարակության ծառայության համար նախատեսված վարքագծի նորմերը պետք է նաև վերաբերեն կառավարության նախարարներին, դատավորներին կամ ընտրված ներկայացուցիչներին: Արդյո՞ք դրանք պետք է վերաբերեն կարճաժամկետ աշխատողներին (հավանաբար հասարակական սեկտորից ամեն երկրորդին), գործակալներին կամ անկախ խորհրդատվությամբ զբաղվողներին: Ի՞նչ չափով է այդ ձեռնարկը վերաբերում այն անձանց, որոնք այլևս այդ կազմակերպության անդամը չեն: Սրանք այն հարցերն են, որոնք չպետք է շրջանցել որևիցե կազմակերպության համար վարքագծի նորմերի ձեռնարկ կազմելիս:

38. Վարքագծի նորմերի ընդհանուր ձեռնարկը կարող է բավարար չլինել այն անձանց համար, որոնց աշխատանքը կապված է կոնկրետ մասնագիտության հետ: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինեն լրացուցիչ պայմաններ կամ նույնիսկ վարքագծի լրացուցիչ առանձին նորմեր: Ղեկավարության մասին վարքագծի նորմերի ձեռնարկը հասարակական ծառայության մեջ սահմանափակ մարդկանց վերաբերող հատուկ ձեռնարկի օրինակ է:

Նախապատրաստում և հրապարակում.

39. Նախապատրաստական շրջանում չափազանց կարևոր է խորհրդատվությունը այն անձանց հետ, որոնք պետք է իրենց պարտականությունները ստանձնեն վարքագծի նորմերի ձեռնարկի ցուցումների

համաձայն: այն պետք է լինեն պրագմատիկ և պրակտիկ, որպեսզի պաշտոնիաների կողմից իրենց պարտականությունները կատարելու պատրաստակամություն ստեղծի:

40. Ոչ միայն անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է ստանա իր օրինակը, այլև նրանցից ամեն մեկը պետք է գործնական ցուցումներ ստանա, թե ինչպես պետք է կատարվի տվյալ աշխատանքը: Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի իր պարտականությունները կատարելու կարևորությունը և դրանց չկատարման դեպքում հնարավոր հետևանքները:

Կատարում.

41. Ղեկավարության պարտականությունն է հավաստիանալ, որ կազմակերպության գործունեությունը համապատասխանում է վարքագծի նորմերին և չկան հակասություններ անձնակազմից պահանջվող չափանիշների և նրանց հետապնդած նպատակների միջև:

42. Յուրաքանչյուր մենեջեր և վերահսկիչ պարտավոր է հավաստիանալ, որ, այն անձինք, որոնց համար նրանք պատասխանատու են, տեղյակ են վարքականոցով հաստատված չափանիշներին և աշխատանքի մեջ գործում են դրանց համաձայն:

Ենչում.

43. Պահանջված չափանիշներին չհամապատասխանող վարքը ենթակա է համապատասխան ուղղիչ միջոցառումների: Որևէ ուղղիչ պատժամիջոցի դիմելիս ղեկավարությունը պետք է խորհի, թե արդյո՞ք տվյալ սխալը դիտավորյալ կերպով կատարված ինքնանպատակ է, թե բխում է այն թյուր համոզմունքից, որ նման քայլը կատարվում է ի նպաստ կազմակերպության:

Օրենքի հետ կապը.

44. Օրենսգրքի ձևավորման հիմքում ընկած է օրենքը, որը նպաստում է օրենսգրքի ճիշտ կիրառմանը, օրենսգիրքն իր հերթին ներկայացնում է այն աշխատողներին կյանքին վերաբերող վարքագծի նորմերը, որոնց այն ուղղված է: Վարքագծի նորմերին վերավերող ձեռնարկներում պետք է պահպանվեն խարդախությանն ու կոռուպցիային վերաբերող զոնե մվազագույն չափանիշները: Ավելին, այնտեղ միշտ պետք է կապը պահպանվի վարքագծի նորմերի ձեռնարկների, օրենքների և ուղղիչ կանոնների միջև:

Պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկին վերաբերյալ Նախարարների կոմիտեի հանձնարարականը.

Հանձնարարական.

45. Նախարարների կոմիտեի հնաձեռարարականի համաձայն, պաշտոնյաների համար նախատեսված վարքագծի նորմերի ձեռնարկի հաստատման հիմքում պետք է ընկած լինի ազգային իրավունքն ու պետական կառավարման ազգային նորմերը: հաստատելով, որ այս կանոնները պետք է հիմնված լինեն վարքագծի նորմերի ձեռնարկին կցված մոնիթինգի վրա, տվյալ հանձնարարականով նաև պարզ է դառնում, որ այդ մոնիթինգը պետք է համապատասխանի հասարակական ծառայության կոմիտեի պահանջներին:

46. Այս հանձնարարականով ԿԴՊԵԽ-ին առաջադրվում է հանձն առնել դրա իրագործումը:

Պաշտոնյաների համար նախատեսված վարքականոնի մոնիթինգը:

Կառուցվածք.

47. վարքականոնի մոնիթինգը այնպիսի կառուցվածք ունի, որ նրանում նախ շարադրվում են ամենահիմնական կանոնները նախքան բուն գործի վերաբերող կանոնների արժարժումը: Այն սկսվում է նրա կիրառման վերաբերյալ մեկնաբանությամբ ապա շարադրվում է օրենսգրքի նպատակը և սահմանվում են հիմնական օրենքները: Այնուհետև արժարժվում են հետևյալ կոմիտեի խնդիրները. օրենսգրքի խախտումների վերաբերյալ հաշվետվությունը, շահերի բախում, եկամուտների վերաբերյալ հայտարարություն, արտաքին անհամատեղելի եկամուտներ, քաղաքական և հասարակական գործունեություն, պաշտոնյաների անձնական կյանքի անձեռնմխելիության ապահովում, նվերներ, հակազդեցություն ոչ պատշաճ առաջարկներին, զգուշացումը արտաքին ազդեցությունից զերծ մնալու համար, պաշտոնական դիրքի չարաշահում, պաշտոնիաների ունեցած ինֆորմացիան, հասարակական և պաշտոնական ռեսուրսներ, ամբողջականության ստուգում, վերահսկիչ հաշվետվություն, հեռացում հասարակական ծառայությունից, հարաբերությունները նախկին պաշտոնիաների հետ և վերջապես օրենքների և պատժամիջոցների կատարում:

Ոճ.

48. վարքագծի նորմերի ձեռնարկը հետևողականություն է պահանջում: Այն ուղղված է պաշտոնյաներին ու հասարակության անդամներին: այն եթեմաբարում է հնարավորինս արագ ծանոթացում և ընթերցում: Այսպիսով այն չի մատուցվում օրենսդրության կամ կանոնադրության տեսքով: Այն ավելի շուտ անհրաժեշտ գիտելիքներ կամ իրավագիտական պատրաստվածություն չունեցող ընթերցողներին ուղղված գործուն առաջարկների և բացատրությունների համախումբ է: Այնուամենայնիվ այն պահանջում է պատասխանատու վերաբերմունք, քանի որ դրա պայմանների խախտում ենթադրում է անկարգություն:

Դրույթներ.

Վարքագծի նորմերի ձեռնարկում առաջադրված դրույթները ընդունելիս, պետությունը կարող է պահանջել, որ դրանք համապատասխանեն պետության հասարակական ծառայության վերաբերյալ կոմիտեի պահանջներին:

Մեկնաբանություն և հայտարարություն.

Հոդված 1.

49. Համաձայն այս հոդվածի, վարքագծի այս նորմերը վերաբերում են բոլոր պաշտոնիաներին, որտեղ պաշտոնիան բնորոշվում է որպես իշխանությունների կողմից աշխատանքի վերցված անձ:

50. պաշտոնիան տերմինը լայն իմաստ ունի: Ինչևէ, այս հոդվածի և վարքագծի նորմերի ձեռնարկի դրույթները չեն ներառում անհատական գործունեության և ծառայության դեպքերը, անկախ նրանից, թե դրանք իրականացվել են պաշտոնիայի կողմից, թե ոչ: Այսպիսով այստեղ չեն ընդգրկվում պետությունից վարձատրվող կապալառուները, սակայն այն չի շրջանցում պետական հիմք ունեցող հասարակական գործունեությունը, ինչպես օրինակ որոշ երկրներում նոտարները, պետական մատենավարները և այլն: Պետությունը ինքը պետք է որոշի, թե ինչքան ընդգրկում է պաշտոնիան տերմինը:

51. Համաձայն 4-րդ պարագրաֆի, վարքականոնի մոնիթինգի դրույթները չեն վերաբերում հասարակության ընտրովի ներկայացուցիչներին, կառավարության անդամներին և դատական կատարածուններին՝ ելնելով նրանց կատարած գործի սպեցիֆիկ բնույթից:

52. ԿԴՊԵԽ-ն հարկ համարեց հստակ առանձնացնել պետական կառավարման մեջ կամ հասարակական սեկտորում աշխատող պաշտոնյաներին այն նախարարներից և ընտրված ներկայացուցիչներից, որոնք, որպես քաղաքական գործիչներ, պատասխանատու են խորհրդարանի և ընտրողների առջև:

53. Նմանապես դատական կատարածունները նույնպես չեն ընդգրկվում վարքագծի նորմերի մեջ: Որոշ երկրներում, ելնելով իրենց կատարված գործի բնույթից, դատախազները նույնպես կարող են համարվել դատական կատարածուններ: Իրոք, դատական անկախության որոշ դրույթներ անհամատեղելի են վարքագծի մի շարք նորմերի հետ, ինչպես օրինակ՝ իրերարխիայի ամենաբարձր աստիճանին կանգնած ղեկավարի առջև հաշվետու լինելու անհրաժեշտությունը, 10-րդ հոդվածի համաձայն:

54. Չնայած որ անձանց այս կատեգորիաները ներառված չեն վարքագծի նորմերի ձեռնարկի դրույթներում, այնուամենայնիվ պետությունները կուզենային սահմանել բարոյական չափանիշներ այս անձանց

կողմից իրականացվող ֆունկցիաների համար՝ հիմնվելով ներկայիս վարքագծի նորմերի վրա:

55. Ավելին, պետությունները կարող են որոշում կայացնել մասամբ կամ ամբողջական ընդունել վարքագծի նորմերը 1-ին հոդվածում չնե-րառված անձանց կատեգորիաների համար:

Հոդված 2.

56. Պաշտոնիայի համար վարքագծի նորմերը կանոնը ուժի մեջ են մտ-նում սկսած այն պահից, երբ նա ծանոթացվում են դրանց հետ և հաստատում է իր տեղեկացված լինելու փաստը:

57. Դրույթի կիրառումը կհաստատվի կարիերայի համակարգի վրա հիմն-ված քաղաքացիական ծառայությունների դեպքում, որտեղ վարքագծի նորմերի ձեռնարկը կիրառության մեջ է կմտցվի իրավասու իշխանու-թյունների (պաշտոնյաների համար պատասխանատու)՝ օրինակ պե-տական կառավարման կամ արտաքին գործերի նախարարի կողմից, այսպիսով վարքագծի նորմերի ձեռնարկը վերածելով պաշտոնյանե-րին վերաբերող կանոնադրության անբաժանելի մասը:

Կանոնադրության նպատակը.

Հոդված 3.

58. Այս հոդվածը հաստատում է վարքագծի նորմերի ձեռնարկի նպատա-կը, այն է՝ հատկորոշում է գործունեության շրջանակում կիրառելի չափանիշները, օգնում է պաշտոնյաներին համապատասխանել այդ չափանիշներին, և հասարակությանը տեղեկացնում է, թե ինչ սպասե-լիքներ պետք է ունենալ պաշտոնյաներից:

59. Հաշվի առնելով, որ պետական կառավարումը էական դեր է խախում ժողովրդավարական հասարակություններում, որ պաշտոնիաները դրա հիմնական տարրն են կազմում, և քանի որ կոռուպցիան խաթա-րում է քաղաքացիների հավատը իրենց կառավարության նկատ-մամբ, ձեռնարկի նպատակն է վերացնել կառավարության չկողմնո-րոշված վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ և պարզորոշ բա-ցատրել թե այս կապակցությամբ ինչ է պահանջվում յուրաքանչյուր աշխատողից:

60. Վարքագծի նորմերի ձեռնարկը լրացնում է բացը՝ մի կողմից հա-ճախ վերացական կանոնադրությունների, օրինակ վարվելակերպի նորմերի վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ պաշտոնյաների ամենօրյա աշխատանքում ի հայտ եկող բազմաթիվ բարդ իրավիճակներում վե-րահսկողություն սահմանելու պահանջների: Այն նպատակ ունի վե-րացնել անօրոշյալությունը՝ առաջարկելով կա?մ համապատասխան իրահանգներ, թե ինչպես պետք է վարվել կրկնրետ իրավիճակում, կամ ցուցումներ, թե որտեղ և ինչպես կարելի է ստանալ այսպիսի

իրահանգներ: Հնարավոր է, որ վարքագծի նորմերի ձեռնարկում կոնկրետ ցուցումներ լինեն այնպիսի իրավիճակների համար, որտեղ պաշտոնիան կարող է գործ ունենալ շահերի բախման հետ:

61. Բայց այդ, վարքագծի նորմերի ձեռնարկը ավելի է հեշտացնում պե-տական կառավարման թափանցիկությունը, հասարակությանը իրա-զեկելով, թե վերջիններս ինչ ակնկալիքներ պետք է ունենան պաշ-տոնյաներից:

Ընդհանուր կանոններ.

Հոդվածներ 4-11.

62. Այս հոդվածներով շարադրվում են պաշտոնիաների օրինական, հնա-զանդ, բարոյական և օրնապահ կերպով գործելու հիմնական սկզ-բունքները: Պաշտոնիան պետք է լինի ազնիվ, անաչառ, բարեխիղճ և արդար, պետք է բռնի քաղաքական չեզոք դիրք և գործի հասարա-կության շահերից ելնելով:

63. Պաշտոնիան չպետք է թույլ տա, որ իր հասարակական դիրքը ծառայի իր անձնական շահերին, կամ նա չպետք է անպատեհ օգուտի իր պաշ-տոնական դիրքից: Անձնական շահերն տերմինը բացատրվում է 13-րդ հոդվածում: Պետությունները իրենք պետք է բնութագրեն ,անպատեհ չարաշահումն արտահայտությունը: Ինչևէ, դա պետք է հասկանալ ավելի լայն իմաստով, որպես մի արտահայտություն, որը ներառում է ոչ միայն պաշտոնիային առաջարկված կամ տրված հնարավորությու-նը, այլև նաև նրան հարկադրված բոլոր անբարենպաստ պայմաննե-րի կամ դժվարությունների նկատմամբ խուսափողական մոտեցումը: Անպատեհ չարաշահումը սովորաբար լինում է տնտեսական բնույթի, սակայն այն կարող է լինել նաև ոչ նյութային բնույթի:

64. 8-րդ հոդվածը իրականացնելու համար կարևոր է, որ պաշտոնիան կամ մի երրորդ անձ, օրինակ՝ ազգականը, չգրավի ավելի բարձր դիրք կամ չօգուտի այդ առավելությունից:

65. Պաշտոնիայի վարքը պետք է մեծացնի հասարակության վստահու-թյունը հասարակական ծառայության նկատմամբ և պաշտոնիան պետք է հաշվետու լինի իր վարքի համար: Այսպիսով, 6-րդ-ով հոդվա-ծով նրան արգելվում է գործել ինքնակամ? ի նպաստ կոնկրետ ինչ-որ մեկի կամ մի շարք անձանցից կազմված խմբի: Բնարկումների փու-լում ԿԴՊԻ-ն բարձրացրել էր այն հարցը, թե արդյոք այս հոդվածով պետք է արգելվի պաշտոնական դիրքի անպատեհ չարաշահումը հա-նուն ինչ-որ մեկի կամ մի շարք անձանցից բախկացած խմբի, երբ դա չի բխում պաշտոնիայի անձնական շահերից կամ դատական հե-տապնդումը երրորդ կողմի նկատմամբ կանխակալ վերաբերմունքի համար: Ինչևէ 5-րդ և 7-րդ հոդվածներում նշված անկողմնակաու-թյանը և անօրինությանը վերաբերող սկզբունքների համաձայն

ԿԴՊԽ-ն անհրաժեշտ չհամարեց նման արգելքներ կիրառել:

66. Պաշտոնիան պետք է իրավունք ունենա օգտվել համապատասխան ինֆորմացիայից՝ միաժամանակ պահելով այդ ինֆորմացիայի կոնֆիդենցիալությունը: Անհրաժեշտ կոնֆիդենցիալությունն արտահայտությունը շատ ճկուն իմաստ ունի, ինչը յուրաքանչյուր անդամ երկրին թույլ է տալիս այն ընդունել իր շրջանակներում՝ կոնֆիդենցիալ ինֆորմացիան օգտագործելուն վերաբերող իրավական նորմերի լուսի ներքո: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր տարր է հանդիսանում թափանցիկությունը: 11-րդ հոդվածում ներառված կանոնը նպատակ չի հետապնդում ավելորդ տեղը սահմանափակել պաշտոնական փաստաթղթերը օգտվելու հասարակության հնարավորությունը:

Հաշվետվություն.

Հոդված 12.

67. Այս հոդվածով պաշտոնիայից պահանջվում է օրենքի սահմաններում զեկուցել այն դեպքերի մասին, երբ նրանից պահանջում են գործել վարքագծի նորմերին անհամապատասխան:

68. Եթե օրենքի սահմաններում որևիցե դեպքի մասին զեկուցելով պաշտոնիան չի ստանում հարկ եղած արձագանքը, նա պետք է այդ խնդիրը գրավոր ներակայացնի հասարակության ծառայության ոլորտի ղեկավարից մեկին, այսինքն այն մարդուն, որը պատասխանատու է ողջ հասարակական ծառայության համար: Իհարկե տարբեր երկրներում այդ պաշտոնիաները կտարբերվեն իրենց ստանձնած պաշտոններով, օրինակ՝ պետական կառավարման կամ արտաքին գործերի նախարարը: Երբ խնդիրը ինչպես հարկն է հաշվի է առնվում, ապա, հոդվածի համաձայն, պաշտոնիան պետք է հաշվի նստի օրինական հրահանգների հետ:

69. Ավելին, 2-րդ հոդվածով պաշտոնյաներից պահանջվում է իրավագործ իշխանություններին տեղեկացնել մեկ այլ պաշտոնիայի կողմից վարքագծի նորմերից յուրաքանչյուրի խախտման մասին: ԿԴՊԽ-ը տեղյակ էր այն իրական հետևանքների մասին, որ կարող են հետևել նման դեպքերում, քանի որ դրանք կարող են լարվածություն ստեղծել պաշտոնիաների միջև: Ինչևէ, նա համարում է, որ նման խախտումների նկատմամբ պասիվ կամ տուրբանտ վերաբերմունքը շատ ավելի վնասակար կլինի պետական կառավարման և ընդհանրապես հասարակության համար:

70. Անօրեն կամ քրեական գործողությունների մասին պետք է զեկուցել համապատասխան մարմիններին: Որպես հետևանք՝ հետաքննություն կսկսվի իրավագործ մարմինների և ոչ թե պաշտոնիայի պատասխանատվության ներքո:

71. Իր հերթին պետական կառավարումը պետք է հավաստիանա, որ պաշտոնիայի զեկուցը հիմնված չէ կանխակալ կարծիքի վրա և ունի ողջամիտ հիմնադրում:

Շահերի բախում.

Հոդված 13.

72. Այս հոդվածով բացատրվում է, թե ինչ է անձնական շահը և թե ինչպիսի կոնֆլիկտներ կարող են ծագել պաշտոնիաների հասարակական պարտականությունների և նրա անձնական շահերի միջև: Պաշտոնիան պետք է տեղյակ լինի նման կոնֆլիկտների ատաճացման մասին, դրանցից խուսապելու քայլեր ձեռնարկի, առաջին իսկ հնարավորության դեպքում դրանց մասին հայտնի իր ղեկավարին և կատարի այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ հրահանգները: Այնուհետև նա պետք է հայտարարի, թե արդյոք կոնֆլիկտը լուծվում է, թե ոչ:

Եկամուտների վերաբերյալ հայտարարություն.

Հոդված 14.

73. Այս հոդվածով բացատրվում է, որ որոշ պաշտոնիաներից ժամանակ առ ժամանակ կարող են օրինական կերպով պահանջել հայտարարել իրենց անձնական եկամուտների մասին: Այս պարտականությունը կանխարգելիչ բնույթ ունի: Սովորաբար դա պարտադիր է բարձր պաշտոններ զբաղեցնող պաշտոնիաների համար: Ինչևէ, հիմնական չափանիշը պետք է լինի իրականացված գործունեության բնույթը և դրան վերաբերող պարտականությունները: Հնարավոր է, որ դա բերի նրան, որ պետությունները նման պարտավորություններ դնեն նույնիսկ այն պաշտոնիաների վրա, որոնք համեստ պաշտոններ են զբաղեցնում:

74. Եկամուտներին վերաբերող պարբերաբար կատարվող հայտարարությունները էական նշանակություն ունեն այս միջոցի արդյունավետության համար: Հաշվի առնելով այս ամենը, վարքագծի նորմերի ձեռնարկով նախատեսվում է, որ հայտարարությունը կատարվի ոչ միայն կոնկրետ նշանակմամբ, այլ դրան հաջորդող ազգային օրենսգրքով նախատեսված կանոնավոր ընդմիջումներով: Պաշտոնիայի եկամուտների վրա ազդել իրավիճակային յուրաքանչյուր փոփոխություն պաշտոնիային պարտավորեցնում է ներկայացնել նոր հայտարարություն:

75. Քանի որ այս պարտականությունը հանդիսանում է անձնական կյանքի միջամտություն, անհրաժեշտ է, որ այն միշտ լինի արդարացված: Պետական կառավարման պարտքն է ապահովել նման հայտարարությունների կոնֆիդենցիալությունը, ինչն իր հերթին երեշխավորվում է 17-րդ հոդվածով:

Ոչ պաշտոնական բաղձնատվություն

Ոչ պաշտոնական բաղձնատվություն

Արտաքին անհամատեղելի եկեմուտներ.

Հոդված 15.

76. Այս հոդվածով հաստատվում է, որ պաշտոնիաները չպետք է զբաղվեն իրենց պաշտոնական գործունեության հետ անհամատեղելի որևէ այլ գործունեությամբ: Կասկածների դեպքում նրանք պետք է դիմեն իրենց ղեկավարների խորհրդին:

77. Օրենքի համաձայն պաշտոնիան պետք է ստանա իր ղեկավարի հավանությունը հասարակական ծառայությունից դուրս երևէ գուժումներով կամ իրականացնելու կամ դիրք զբաղեցնելու համար: Այս պահանջը կարգավորվում է օրենքով, քանի որ որոշ երկրներն ունեն արտաքին կամ երկրորդ աշխատանքի հարցը կարգավորող կանոնադրություններ: Պետք է նշել, որ այս օրենքով պաշտոնիային չի արգելվում ունենալ երկրորդ աշխատանք հասարակական ծառայությունից դուրս:

78. Այս հոդվածով պաշտոնիայից նաև պահանջվում է հայտարարել այնպիսի կազմակերպությունների հետ անդամակցության մասին, որոնք կարող են խանգարել նրա կոնկրետ պարտականությունների կատարմանը որպես պաշտոնում:

Քաղաքակն և հասարակական գործունեություն.

Հոդված 17.

79. Այս հոդվածով պաշտոնիայից պահանջվում է զգույշ լինել, որպեսզի նախ և առաջ թույլ չտալ, որ իր քաղաքական գործունեությունը թուլացնի իր անաչառությունն ու լոյալությունը և երկրորդ? չօգտագործվի քաղաքական հավակնոտ նպատակներով: Պաշտոնիան պետք է հաշվի նստի իր պարտականություններից բխոխ իրավական հիմքեր ունեցող յուրաքանչյուր սահմանափակման հետ իր քաղաքական գործունեության ոլորտում:

Պաշտոնիայի անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանություն.

Հոդված 17.

80. Այլ քաղաքացիների նման պաշտոնիան անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք ունի և պարտավոր է հարգել մյուս պաշտոնիաների անձնական կյանքի անձեռնմխելիությունը: Այս հոդվածով պարզաբանվում է այդ հարցը և հատկապես պահանջվում է, որ պահպանվեն վարքագծերի նորմերի համաձայն կատարված հայտարարությունների կոնֆիդենցիալությունը, եթե միայն օրենքով չի պահանջվում հակառակը:

81. Անձնական կյանքը հարգելու կանոնը բացարձակ չէ: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի խախտել կամ սահմանափակել այս կանոնը կրկ-

րետ օրինական նպատակներով, ինչպես ասենք՝ ոճրագործությունը կանխելու կամ ուրիշների իրավունքները պաշտպանելու համար: հետևաբար այս հոդվածով հաստատված հայտարարությունների կոնֆիդենցիալությունը կարող է հաշվի չառնվել պաշտոնիային վերաբերող քրեական հետաքննությունների կամ ուղղիչ գործընթացների իրականացման ժամանակ:

Նվերներ.

Հոդված 18.

82. Համաձայն այս հոդվածի, պաշտոնիան չպետք է պահանջի և ընդունի իր պարտականությունների կատարման վրա ազդող որևէ ճանապարհ իր կամ որևէ մեկի համար: Պաշտոնիան երբեք չպետք է ընդունի իր իրականացրած որոշ գործողությունների համար իրական կամ ակնհայտ պարգև հանդիսացող նվերները, ոչ էլ զանցառություններ թույլ տա իր պարտականությունների կատարման հարցում: Կարևոր է պահպանել քաղաքացիների հավատը պետական կառավարման անկողմնակալության մեջ: Այս հավատը կարող է ի չիք լինել, եթե քաղաքացին նկատի, որ պաշտոնիան, որի աշխատավարձը վճարվում է հանրային բյուջեից, առանձին անհատներից փոխհատուցում է ստանում իր պարտականությունների կատարման համար:

83. Վարքագծի նորմերով կամ մի շարք բացառություններ նվերների մատուցման հարցում, օրնակ? եթե դրանք կազմում են ընդունելի հյուրասիրության մի մասը կամ շատ արժեքավոր չեն: Դրանք կարող են լինել ճաշի համեստ հրավերներ, օրացույցներ, ոչ թանկարժեք գրիչներ, գովազդի պարագաներ, փոքրիկ գրենական պիտույքներ...Յուրաքանչյուր երկիրը ինքը պետք է որոշի ընդունելի նվերների չափը և հստակ առանձնացնի ընդունելի և ազելված նվերների տեսակները: Համախոս նվերի կամ հրավերի գինը ունենում է իր չափանիշը, հասկանալի է դառնում, որ այն կարող է ընդունվել, եթե ցածր է սահմանված չափից: Ինչևէ, ցածր արժեքը միշտ չէ, որ կարող է ընդունվել որպես չափանիշ: Սակայն պաշտոնիան պետք է զգոն լինի, որ նույնիսկ ընդունված չափանիշներին համապատասխան օգուտը կոնկրետ իրավիճակներում ծնունդ չտա շահերի բախման: Այսպիսով, հաճախակի առաջարկվող նվերներն ու հրավերները, նույնիսկ եթե դրանք արժեքավոր չեն, կարող են նպաստել պաշտոնիայի կողմնակալ վերաբերմունքին իր պարտականությունների կատարման հարցում:

84. Քննարկումների ընթացքում ԿԴՊԽ-ն հնարավոր համարեց ներկայացնել բոլոր, նույնիսկ ոչ արժեքավոր նվերների ցուցակը, որից հետո հիերարխիկ ամենաբարձր աստիճանին կանգնած պաշտոնիան կամ ղեկավարության մյուս իրավազոր անդամները կորոշեն, թե պաշտոնիան ինչ նվերներ կարող է ընդունել: Ինչևէ, ԿԴՊԽ-ը գերադասեց այս ընդհանուր համակարգը ընդգրկել վարքագծի նորմերի

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

Գրությունները պարզաբանում են

վերաբերյալ ձեռնարկի նմուշի մեջ, քանի որ հասկանալի է, որ յուրաքանչյուր երկիր կարող է ընդունել ձեռնարկում ներկայացվածից առավել սահմանափակ պայմաններ:

- 85. Եթե սոցիալական պայմանները թույլ չեն տալիս հրաժարվել առաջարկից, պաշտոնիան պետք է անմիջապես իր անմիջական ղեկավարին զեկուցի նվերը ընդունելու փաստն ու պայմանները և հետևի դրա հետ կապված հետագա ցուցումներին:
- 86. Կասկածների դեպքում պաշտոնիան պետք է դիմի իր ղեկավարի խորհրդին:
- 87. Տարրական զգուշությունը պահանջում է, որ հարցումն ու խորհուրդը լինեն գրավոր տեսքով:

Անվայել առաջարկներին հետևող ռեակցիան.

Հոդված 19.

- 88. Պաշտոնիան պետք է իմանա, թե ինչպես պետք է արձագանքի, եթե նրան առաջարկվում է անվայել նվեր կամ ծառայություն: Հոդվածում ցուցումներ են տրվում, թե ինչպես պետք է պաշտոնիան վարվի նման դեպքերում:

Զգուշությունը ուրիշ ազդեցությունից զերծ մնալու համար.

Հոդված 20.

- 89. Պաշտոնիան կարող է դառնալ թիրախ փոխազդեցումներ կորզելու համար: Այս հոդվածը նպատակ է հետապնդում նրանց նախազգուշացնել այդ վտանգի մասին, տեղեկացնելով, որ նրանք չպետք իրենց պարտավորված համարեն մատուցված ծառայության համար, ոչ էլ անձնական և պաշտոնական կյանքում իրենց դրսևորեն այնպես, որ տպավորություն ստեղծվի, թե կողմնակի ազդեցության տակ են գտնվում:

Պաշտոնական դիրքի չարաշահում.

Հոդված 21.

- 90. Նախ և առաջ պաշտոնիային չի թույլատրվում առաջարկել որևիցե ծառայություն իր պաշտոնական դիրքի հետ կապված, եթե միայն նրան օրենքով չի թույլատրվում այդպես վարվել, և երկրորդ? նրան չի թույլատրվում իր պաշտոնական դիրքը չարաշահելով կամ իր ծառայությունները առաջարկելով ինչ-որ մեկին իր ազդեցության տակ զգել: Այս ծառայությունը կարող է առաջարկվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի կերպով:

Պաշտոնիաների ունեցած ինֆորմացիան.

Հոդված 22.

- 91. Համընդհանուր բարոյությունը ծառայելու ընթացքում հասա-

րակական ծառայութիան ոլորտում առաջանում է, ձեռք է բերում և պահվում է մեծ քանակությամբ տեղեկատվություն, որի արժեքն ու կարևորությունը միշտ չէ, որ ակնհայտ է: Պաշտոնիաների կողմից տեղեկատվության կիրառումը հաճախ կարող է խոչընդոտների հանդիպել: Այս հոդվածում ցուցումներ են տրվում չորս կոնկրետ դեպքերի ահմար:

- 92. Առաջին, պաշտոնիան տեղեկատվությունը կարող է ներկայացնել միայն համապատասխան օրենքների և պահանջներին համաձայն:
- 93. Երկրորդ, պաշտոնիան պետք է պահպանի ոչ միայն այն տեղեկատվության անվտանգությունն ու կոնֆիդենցիալությունը, որի համար նա պատասխանատու է, այլ նաև այն տեղեկատվությունը, որի մասին նա իրազեկված է:
- 94. Երրորդ, պաշտոնիան չպետք է փորձի իմանալ իր համար չնախատեսված տեղեկատվությունը, ոչ էլ պետք է անտեղին օգտագործի իր իրավասության տակ գտնվող տեղեկատվությունը:
- 95. Չորրորդ, պաշտոնիայի կաևորագույ պարտավորություններից մեկն է չթաքցնել այն տեղեկատվությունը, որը պետք է տարածել: Նա նաև չպետք է ներակայացնի սխալ կամ մոլորեցնող տեղեկատվություն:

Հասարակական և պաշտոնական միջոցներ.

Հոդված 23.

- 96. Այս հոդվածով պաշտոնիաներից պահանջվում է մի կողմից ղեկավարել անձնակազմը, մյուս կողմից արդյունավեր ու խնայողաբար օգտվել հասարակական սեփականությունից, ծառայություններից և ֆինանսական միջոցներից: Արգելվում է այդ միջոցները սեփական նպատակներին ծառայեցնելը: այդ միջոցներից օգտվելու իրավունքը սահմանվում է օրենքով: Այսպիսով, օրինակ? պաշտոնիան չպետք է առանց կոնկրետ իրավասության պաշտոնական նպատակների համար տրամադրված մեքենան կամ հեռախոսը ծառայեցնի անձնական շահերին, ոչ էլ պետք է խնդրի իր քարտուղարուհուն կատարել որևիցե գործ իր պարտականություններից դուրս:

- 97. Այս առումով ԿԴՊԽ-ը քննարկեց պաշտոնիաների գործին նվիրվածության ծրագրերի կիրառումը ավիաընկերությունների, հյուրանոցային ցանցերի և ծառայության մատուցման այլ ոլորտներում: Այսպիսով, օրինակ? Եթե պաշտոնիան պատասխանատու է պաշտոնական ճանապարհորդության դեպքում ավիաընկերություն ընտրելու համար, ապա այս հոդվածով պաշտոնիայից պահանջվում է ուշադիր լինել ընտրության հարցում, առանց առաջադրելու անձնական շահերի՝ ի վնաս հասարակական կառավարման տնտեսական շահերի:

Ոչ պաշտոնական բաղձնամտություն

Ոչ պաշտոնական բաղձնամտություն

Ամբողջականության ստուգում.

Հոդված 24.

98. Փորձը ցույց է տալիս, թե ինչքան կարևոր է անցկացնել ամբողջականության ստուգումներ և գործել դրանց համաձայն? հասարակական ծառայության մեջ ամբողջականության երկարաժամկետ խնդիրներից խուսափելու համար: Այսպիսով, այս հոդվածով հավաքագրման և նշանակման կամ առաջադրման համար պատասխանատու պաշտոնիայից պահանջվում է հավաստիանալ, որ ամբողջականության ստուգումներն անցկացվում են սահմանված օրեների համաձայն:

99. Կրկին պաշտոնիան պետք է հետևի համապատասխան խորհրդին, եթե ստուգումների արդյունքներից պարզ չի դառնում, թե ինչպես պետք է վարվել:

Ղեկավար կազմի պատասխանատվությունը.

Հոդված 25.

100. Այն միտքը, որ ղեկավար պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր անձ պետք է պատասխանատու և հաշվետու լինի այն մարդկանց վարքի համար, որոնք գտնվում են նրա անմիջական ղեկավարության տակ, շատ կարևոր նշանակություն ունի հասարակական ծառայության ամբողջականության համար:

101. Այս հոդվածով կրկնակի պատասխանատվություն է դրվում ղեկավարի և մեներջերի վրա: Նա պետք է ղեկավարի հասարակական ծառայությունների նորմերի և նպատակների համաձայն և պետք է պատասխան տա իր անձնակազմի անհաջողությունների համար, եթե նա դրանցից խուսափող կանխարգելիչ միջոցների չի դիմել:

102. Այս հոդվածով տրվում են մի շարք այլ ցուցումներ: Ղեկավարը կամ մեներջերը պետք է քայլեր ձեռնարկի կոռուպցիան կանխարգելելու համար՝ ամրապնդելով կանոնները, զարկ տալով կրթությանն ու թրեխինգների անցկացմանը, ուշադիր լինելով ֆինանսական կամ այլ կարգի դժվարությունների նկատմամբ և օրինակ ծառայելով իր անձնական վարքով:

Հեռացում հասարակական ծառայությունից.

Հոդված 26.

103. Եթե հասարակության շահերից բխում է, որ հասարակական ծառայությունում աշխատանքային փորձ ունեցող անձինք պետք է կարողանան պաշտոն ստանձնել հասարակական ծառայությունից դուրս, նմանապես կարևոր է նաև, որ այլ ոլորտում պաշտոն զբաղեցնելը կասկածներ չառաջացնի անճշտության վերաբերյալ: Վարը նշված ցուցումները նպատակ ունեն ցրել այն կասկածները, որ? պաշտոնիայի խորհուրդը, որոշումներն ու գործողությունները նպատակ են

հետապնդում աշխատանքի տեղավորել կոնկրետ աշխատողի, կամ, որ աշխատատուն անարդարացի է վարվել մրցույթի մասնակիցների հետ աշխատանքի վերցնելով մի պաշտոնիայի, որը, որպես ազդեցության լծակ կարող է օգտվել մրցակիցների կոմերցիոն գաղտնիքը համարվող տեղեկատվությունից կամ էլ կառավարության քաղաքականության մեջ նրանց կողմից առաջարկված գաղափարների օրագրերից:

104. Ուստի և պաշտոնիան չպետք է չարաշահի իր պաշտոնական դիրքը հասարակական ծառայությունից դուրս աշխատանք ստանալու համար: Նա պետք է խուսափի ապագա աշխատանքի հետ կապված շահերի բախումից: Կոնկրետ որոշակի ժամանակահատված նա պետք է խուսափի գործել կամ խորհուրդներ տալ այն ոլորտում, որտեղ պաշտոն է զբաղեցրել: Ոչ էլ նա պետք է օգտագործի կամ իրազեկի այն կոնֆիդենցիալ ինֆորմացիան, որ նա ունեցել է որպես պաշտոնիա: Վերջ ի վերջո հասարակական ծառայությունից դուրս նշանակում ստանալիս նա պետք է հաշվի նստի նման դեպքերի համար նախատեսված բոլոր նորմերի հետ:

Հարաբերությունները նախկին պաշտոնիաների հետ.

Հոդված 27.

105. Այս հոդվածով պաշտոնիաներին արգելվում է նախկին պաշտոնիաների նկատմամբ ցույց տալ արտոնյալ վերաբերմունք կամ տալ հասարակական ծառայություն մուտք գործելու հնարավորություն, քանի որ դա ամբողջովին հակասում է վարքագծի նորմերին, օրինակ? 5-րդ հոդված, 2.7 և 9 կետեր:

106. Այս կանոնները չեն վերաբերում այն դեպքերին, երբ ազգային օրենսդրությամբ նախկին պաշտոնիային որոշակ արտոնություններ են տրամադրվում, օրինակ? արձակուրտներին օգտվել պետության կողմից տրամադրված հանգստավայրերից, պետական կառավարման տրամադրված արտոնյալ կամ անվճար ուղևորություններից:

Վարքագծի նորմերի և պատիժների իրագործումը.

Հոդված 28.

107. Նախ և առաջ այս հոդվածով սահմանվում է վարքագծի նորմերի ձեռնարկի իրավասության շրջանակը, որը տարբեր երկրներում տարբեր արտահայտություն կարող է ունենալ, ըստ որի պաշտոնիային հիշեցվում է գործել միայն վարքագծի նորմերին համաձայն, այսպիսով ծանոթանալով և հավատարիմ մնալով դրա դրույթներին: Որևիցե խնդրի առկայության դեպքում նա պետք է խորհուրդ հարցնի:

108. Այնուհետև հոդվածում նշվում է, որ համաձայն 2-րդ հոդգածի 2-րդ կետի, վարքագծի նորմերի ձեռնարկում մասամբ հաստատվում է պաշտոնիայի ծառայության պայմանները, որոնց չենթարկվելու

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

դեպքում կարող են իրականացվեն ուղղիչ աշխատանքներ:

109. Այն պաշտոնիային, որը պատասխանատու է աշխատանքի գործարքային կողմի համար, հիշեցվում է իր պարտականությունների մեջ պետք է ընդգրկի նաև դրան վերաբերող ձեռնարկով հաստատված ներմերը:
110. Ղեկավարը կամ մենեջերը պարտավոր է հավաստիանա, որ իր ենթակաները գործում են վարքագծի նորմերին համաձայն, որպեսզի խախտումների դեպքում ուղղիչ աշխատանքներ ձեռնարկի:
111. Պետական կառավարումը պարտավոր է ժամանակա առ ժամանակ վերանայի վարքականոցի նորմերը, հավաստիանալու համար, որ դրանք դեռևս գործուն են կոնկրետ տվյալ պայմաններում:

ՔՍԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

*Բանաձև (97) 24 (Ընդունված 1997թ. նոյեմբերի 6-ին
Նախարարների կոմիտեի կողմից իրենց 101-րդ
նիստի ժամանակ).*

Ոչ պաշտոնական թարգմանություն

նախարարների կոմիտեն՝

Հաշվի առնելով 1997թ. սեպտեմբերի 10-ին և 11-ին Ստրասբուրգում տեղի ունեցած պետությունների ու կառավարությունների ղեկավարների երկրորդ գագաթաժողովի ժամանակ ընդունված հայտարարությունը և Գործողությունների ծրագրի նպատակը, հատկապես Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը անունը կրող III մասի 2-րդ պարագրաֆ.

Իրագեկված, որ ահաբեկչությունը լուրջ սպառնալիք է ներկայացնում Եվրախորհրդի հիմնական սկզբունքներին ու արժեքներին, խափանում է քաղաքացիների վստահությունը ժողովրդավարության նկատմամբ, քայքայում է իրավական նորմերը, ոտնահարում է մարդու իրավունքները և խոչնդոտում է հասարակական և տնտեսական զարգացումը.

Համոզված, որ կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի խիստ համակարգված, այս առումով հաշվի առնելով Կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագիրը, ինչպես նաև Վալետտայում և Պրագայում տեղի ունեցած արդարադատության նախարարների 19-րդ և 20-րդ կոնֆերանսներ ընթացքում ընդունված բանաձևը.

Ստանալով ԿԴՊԽ-ի կողմից մշակված կոռուպցիայի դեմ պայքարում քսան հիմնական սկզբունքների վերաբերյալ օրինագիծը.

Հաստատ որոշում կայացնելով կոռուպցիայի դեմ պայքարել մեր երկրների համատեղ ջանքերով,

Համաձայնվում է ընդունել վարը նշված քսան հիմնական սկզբունքները կոռուպցիայի դեմ պայքարում.

1. Ձեռնարկել կոռուպցիան կանխարգելող արդյունավետ միջոցառումներ. դրա հետ կապված մեծացնել հանրության իրազեկությունը և նպաստել բարոյական վարքին.
2. Ապահովել ազգային և միջազգային կոռուպցիայի համակարգված քրեականացումը:
3. Հավաստիանալ, որ այն անձինք, որոնք պատասխանատու են կոռուպցիայի կանխարգելման, հետաքննության, դատական կարգով հետապնդելու և դատապարտելու համար, ազատ և ինքնուրույն են իրենց գործողությունների մեջ, ենթակա չեն անվայել ազդեցության, ունեն արդյունավետ միջոցներ փաստեր հավաքելու համար, պաշտպանում են այն մարդկանց, որոնք օգնում են իշխանություններին պայքարել կոռուպցիայի դեմ և պահպանում են հետազոտությունների կոնֆիդենցիալությունը.
4. Ձեռնարկել համապատասխան միջոցներ կոռումպացված գոր-

ծողություններ խափանելու և կանխարգելելու համար.

5. Համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի կոռուպցիայի դեմ պայքարում իրավական անձինք որպես վահան չծառայեն.
6. Կոռումպացված գործընթացների հետաքննության, դատական կերպով հատապնդելու և դատապարտման անձեռնմխելիությունը սահմանափակել ժողովրդավարական հասարակության չափանիշներին համաձայն.
7. Նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում պատասխանատու անձանց կամ մարմինների արհեստավարությանը, և նրանց ապահովել այդ հանձնարարությունը իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով և թրեհինգներով:
8. Հավաստիանալ, որ ֆինանսական օրենսդրությունն ու դրա կատարման համար պատասխանատու անձինք արդյունավետ ու համակարգված միջոցներով մասնակցում են կոռուպցիայի դեմ պայքարին, հատկապես խափանելով հարկային պահումները, օրենքով կամ գործնականում, կաշառքների կամ կոռուպցիայի հետ առնչվող այլ ծախսերի համար:
9. Հավաստիանալ, որ կազմակերպությունները, պետական կառավարման աշխատանքների և որոշումներ կայացնելու գործընթացներում հաշվի են առնում կոռուպցիայի դեմ պայքարելու անհրաժեշտությունը և հատկապես ցանկալի արդյունավետությանը հասնելու համար անհրաժեշտ թափանցիկության ապահովումը:
10. Հավաստիանալ, որ պաշտոնիաների իրավունքներին և պարտականություններին վերաբերող կանոնները հաշվի են առնում կոռուպցիայի դեմ պայքարելու համար անհրաժեշտ պահանջները, ապահովում են ճիշտ և արդյունավետ կարգապահական միջոցառումներ, հատուկ միջոցներով, օրինակ՝ վարքագծի նորմերի վերաբերյալ ձեռնարկներով, նպաստում են պաշտոնիաների հետագա մասնագիտացմանը:
11. Հավաստիանալ, որ համապատասխան աուդիտային գործընթացներն են կիրառվում պետական կառավարման և պետական սեկտորի գործունեության մեջ:
12. Հաստատել այն դերը, որ աուդիտ գործընթացները կարող են ունենալ կոռուպցիան կանխարգելելու և հայտնաբերելու համար? պետական կառավարություններից դուրս:
13. Հավաստիանալ, որ հասարակության պատասխանատու և հաշվետու լինելու համակարգը հաշվի է առնում պաշտոնիաների կոռումպացված գործունեության հետևանքները:

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

14. Ինչպես հարկն է ապահովել արդար մրցակցությամբ նպաստող և կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող անձանց գործողությունների թափանցիկությունը:
15. Քաջալերել ընտրված ներկայացուցիչների կողմից վարքագծի նորմերի ձեռնարկների ընդունումը, և նպաստել կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման վերաբերյալ օրենքների ընդունմանը:
16. Հավաստիանալ, որ մամուլը ազատ կարող է ստանալ և հաղորդել կոռուպցիային վերաբերող ինֆորմացիան՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությանը բնորոշ սահմանափակումները:
17. Հավաստիանալ, որ քաղաքացիական իրավունքը հաշվի է առնում կոռուպցիայի դեմ պայքարելու անհրաժեշտությունը և մասնավորապես ապահովում է այն անձանց պաշտպանությունը, որոնց իրավունքներն ու շահերը ոտնահարված են կոռուպացված գործողություններով:
18. Քաջալերել կոռուպցիայի հայտնաբերմանը նպաստող հետաքննությունների անցկացումը:
19. Հավաստիանալ, որ կոռուպցիայի դեմ պայքարի յուրաքանչյուր ոլորտում հաշվի է առնվում կապը կազմակերպված հանցավորության և փողերի լվացման հետ:
20. Հնարավորինս զարգացնել միջազգային համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում:
 1. Որպեսզի նպաստի կոռուպցիայի դեմ պայքարելու դիմամիկ և արդյունավետ գործընթացը, նախարարների կոմիտեն.
 1. Ազգային իշխանություններին կոչ է անում այս սկզբունքները կիրառել նեքին օրենսդրության մեջ և գործնականում:
 2. ԿԴՊԽ-ին հանձնարարում է արագ ավարտին հասցնել Կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրին համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերի մշակումը:
 3. ԿԴՊԽ-ին հանձնարարում է անհապաղ ընդունել համապատասխան և արդյունավետ մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ օրինագծի տեքստը՝ Եվրախորհրդի հովանավորության ներքո, որպեսզի մոնիտորինգի ենթարկի այդ սկզբունքների կիրառումը և ընդունված միջազգային իրավական փաստաթղթերի իրագործումը:

GRECO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԸ

*10 մարտի 2006թ., Ստրասբուրգ
/ոչ պաշտոնական թարգմանություն/*

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանը միացավ GRECO-ին 2004 թ. հունվարի 20-ին, այսինքն՝ նահատման առաջին փուլից հետո: Հետևաբար, Հայաստանը ներկայացվեց գնահատման համատեղ ընթացակարգի մեջ՝ ընդգրկելով գնահատման առաջին և երկրորդ փուլերը (համեմատի՞ր ստորև, կետ 3): GRECO-ի գնահատման հանձնաժողովը (այսուհետ՝ Հ) ընդգրկվել են Լեհաստանի Արդարադատության նախարարության Միջազգային համագործակցության և եվրոպական օրենքի վարչության դատախազ պարոն Ցեզարի Միքայելյանը, Կոպենհագենի Տնտեսական ծանր հանցագործությունների գծով պետական դատախազ, փոխտնօրեն պարոն Ֆլեմինգ Դենկերը, Սոֆիայի (Բուլղարիա) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախկին անդամ, իրավաբանական հարցերով խորհրդական պարոն Դիմիտար Կունուրջիևը և Պրահայի (Չեխիայի Հանրապետություն) Արդարադատության նախարարության Ընդհանուր վերահսկողության դեպարտամենտի տնօրեն պարոն Ժան Վիդրման: Այս Հ-ը 2005 թ. մայիսի 30-ից հունիսի 3-ը եվրախորհուրդի քարտուղարության մեկ անդամի հետ միասին այցելեց Հայաստան: Մինչ այս այցելությունը հ-ին տրամադրել են գնահատման հարցաշարի պատասխանները (փաստաթղթեր՝ GRECO նահատում I-II (2004) ՅԵ նահատում I – մաս 1 և GRECO նահատում I-II (2004) ՅԵ նահատում I – մաս 2), համապատասխան օրենսդրությունների օրինակները և այլ փաստաթղթեր:
2. Հ-ն հանդիպել է Արտաքին գործերի, Ներքին գործերի, Արդարադատության և Ֆինանսների նախարարների, ինչպես նաև հետևյալ կառավարական կազմակերպությունների պաշտոնատար անձանց հետ՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերահսկիչ հանձնաժողովի, հակակոռուպցիոն հարցերով Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդակցական, Ազգային ժողովի Պետաիրավական հարցերով մշտական հանձնաժողովի, Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի, Արդարադատության նախարարության, Քաղաքացիական ծառայության խորհրդի, Կենտրոնական բանկի, լիսվոր դատախազության, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, Պետական հարկային տեսչության, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի, Պետական միջոցների գործակալություն, Պետական մաքսային ծառայության: Ավելին, Հ-ն հանդիպել է հետևյալ ոչ կառավարական հաստատությունների անդամների հետ՝ Հաշվապահների և աուդիտորների կազմակերպության, Առևտրի պալատի, Չեռներեցների միության, Միջազգային թափանցիկության հայկական ստորաբաժանման¹, Հայկական պետական քաղաքացիների միության, Սպառողների իրավունքների պաշտպանության միության, ՋԼՄ-ների:
3. Հիշարժան է, որ GRECO-ն, իր կանոնակարգի 10.3-րդ հոդվածին հա-

- մաձայն համաձայնել է, որ.
- Գնահատման առաջին փուլը պետք է արժարժի հետևյալ թեմաները.
- Կոռուպցիայի դեմ ուղղված պայքարի ու կանխարգելման գործընթացում ընդգրկված ազգային մարմինների համար մատչելի անկախություն, մասնագիտացում և միջոցներ: Ղեկավար 3-րդ սկզբունք (այսուհետ՝ «ՂՄ 3». կոռուպցիոն հանցագործությունները կանխարգելող, հետաքննող, հետապնդող և դատապարտող իշխանություններ, իրավական կարգավիճակ, իրավասություններ, ապացույցների հավաքման միջոցներ, անկախություն և ինքնավարություն): Ղեկավար 7-րդ սկզբունք (այսուհետ՝ «ՂՄ 7». կոռուպցիայի հարցերով զբաղվող մասնագիտացած անձինք կամ մարմիններ, նրանց տրամադրության տակ եղած միջոցներ),
- Անձեռնմխելիության չափն ու շրջանակները²: Ղեկավար 6-րդ սկզբունք (այսուհետ՝ «ՂՄ 6». անձեռնմխելիություն կոռուպցիայի հետաքննության, հետապնդման կամ դատապարտման դեմ), և Գնահատման երկրորդ փուլը պետք է արժարժի հետևյալ թեմաները.
- Կոռուպցիայից ստացված եկամուտ³: Ղեկավար 4-րդ սկզբունք (կոռուպցիայից ստացված եկամտի առգրավում) և 19-րդ սկզբունք (կոռուպցիայի և դրամի վաճառման/կազմակերպված հանցագործության միջև կապեր), ինչպես ամրագրված է Կոռուպցիայի վերաբերյալ քրեական օրենքի հոչակագիրը վավերացրած անդամների համար (ETS 173), հոչակագրի 19-րդ հոդվածի 3,13 և 23-րդ կետերում:
- Հանրային կառավարում և կոռուպցիա⁴: Ղեկավար 9-րդ սկզբունք (հանրային կառավարում) և 10-րդ սկզբունք (պետական ծառայողներ),
- Իրավաբանական անձինք և կոռուպցիա⁵: Ղեկավար 5-րդ սկզբունք (իրավաբանական անձինք) և 8-րդ սկզբունք (ֆինանսական օրենսդրություն), ինչպես ամրագրված է Կոռուպցիայի վերաբերյալ քրեական օրենքի հոչակագիրը վավերացրած անդամների համար (ETS 173), հոչակագրի 14, 18 և 19-րդ հոդվածների 2-րդ կետում:
Հայաստանը վավերացրել է Կոռուպցիայի վերաբերյալ քրեական օրենքի հոչակագիրը:
- 4. Սույն զեկույցը պատրաստվել է հարցաշարերի պատասխանների և այցելության ժամանակ տրամադրված տեղեկատվության հիման վրա: Ձեկույցի գլխավոր նպատակն է գնահատել հայաստանյան իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, որպեսզի դա համապատասխանեցվի 3-րդ կետում նշված

² Գնահատման առաջին փուլի III թեմաներ
³ Գնահատման երկրորդ փուլի I թեմա
⁴ Գնահատման երկրորդ փուլի II թեմա
⁵ Գնահատման երկրորդ փուլի III թեմա

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

¹ Գնահատման առաջին փուլի I և II թեմաներ

պայմաններից բխող պահանջներին: Յուրաքանչյուր թեմայի համար զեկույցը ներկայացնում է իրավիճակի նկարագրությունը՝ կցված քննադատական վերլուծությանը: Եզրակացություններն ընդգրկում են GRECO-ի կողմից ընդունված և Հայաստանին հասցեագրված հանձնարարականների ցանկ, որպեսզի բարելավվի դրանց համապատասխանության մակարդակը խնդրո առարկա պայմանների հետ:

I. Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության դիտարկում

ա. Իրավիճակի նկարագրություն

Կոռուպցիայի ծանաչում

5. Համաձայն 2002 թ. Հայկական միջազգային թափանցիկության ստորաբաժանման կողմից արված դիտարկումների արդյունքների՝ կոռուպցիան լայն առումով Հայաստանում ընկալվում է ընդհանուր առմամբ դիր: Հակակոռուպցիոն ռազմավարությունը, որն ընդունվել է 2003 թ. (տե՛ս կետ 9), նկարագրում է Հայաստանում կոռուպցիայի երկու տարբեր չափորոշիչներ. «վերին» կոռուպցիա, այսինքն՝ քաղաքական կամ պետական պաշտոնի չարաշահում, ինչը «տեղի է ունենում, երբ քաղաքական գործիչները կամ բարձրաստիճան պետական պաշտոնյաները՝ չարաշահում են իրենց վրա դրված քաղաքական պաշտոնը՝ քաղաքական որոշումները կայացնելով հոգուտ իրենց անձնական շահի», և «ստորին» կոռուպցիա, այսինքն՝ «վարչական կոռուպցիա, ինչը հատուկ է միջին և ցածր պետական պաշտոնյաներին, որոնք ամենօրյա շփման մեջ են գտնվում հասարակության լայն զանգվածների հետ»: Կոռուպցիայի վերջին տեսակը հաճախ մարմնավորվում է «ծառայությունների մատուցման դեմ գումար վճարելու» տեսքով: Կոռուպցիան ընկալում են իբրև մի երևույթ, որը լայնորեն տարածված է հետևյալ ոլորտներում՝ պետական գույքի սեփականաշնորհման, պետական ֆինանսների վարչության, մենաշնորհային ծառայությունների սեկտորի (ինչպիսիք են էներգետիկան, հեռահաղորդակցությունը, կենցաղային սպասարկման հիմնարկները և այլն), ինստիտուցիոնալ և այլ մենաշնորհային կազմակերպությունների (հատկապես ձեթի, հացահատիկի, ալյուրի և այլ հիմնական պարենատեսակների ներկրում) և օրինապահ գործակալությունների, որոնք չարաշահում են օրենքով իրենց վերագրված արտոնությունները:
6. Ցածր աշխատավարձը համարվում է կոռուպցիայի պատճառներից մեկը քաղաքացիական ծառայության ոլորտում: Հայկական իշխանությունները հայտնում են, որ հանրային կառավարման որոշ ոլորտներում

րում կոռուպցիոն ռիսկերը ավելի բարձր են, քան մյուսներում (այսինքն՝ այն հանրային ծառայությունները, որոնք հաճախակի շփումներ են ունենում հասարակության լայն զանգվածների հետ և այն ոլորտները, որտեղ տնտեսական բնույթի որոշ որոշումների վրա քաղաքացիների ազդեցությունը հարաբերականորեն մեծ է): Նրանք նաև ընդգծում են, որ հատուկ հակակոռուպցիոն քայլեր են պահանջվում հարկային և մաքսային, օրինապահ համակարգի, դատական համակարգի, ինչպես նաև կրթության և առողջապահության ոլորտներում: Ըստ հայկական իշխանությունների՝ հիմքեր կան հավատալու, որ կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության միջև առկա են անմիջական կապեր: Հայկական իշխանությունների կողմից տրամադրված վիճակագրությունը ցույց է տալիս, որ 274 կոռուպցիոն դեպքեր դատական կարգով հետապնդվել են 2001 թ., իսկ 463-ը՝ 2002 թ. (վերջերս կատարված հետազոտության տվյալներ չեն ներկայացվել): Համաձայն Միջազգային թափանցիկության ներկայացրած կոռուպցիայի զննահատման՝ Հայաստանը 2005 թ. կոռուպցիայի առումով 158 երկրների մեջ զբաղեցնում էր 88-րդ տեղը (10-ից 2.9 %):

Քրեական օրենք

7. Կոռուպցիան և դրան հարակից հանցագործությունները ստորակարգվում են Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՔՕ) տարբեր դրույթներում նախատեսված հանցագործությունների շարքում՝ «կոմերցիոն կաշառք» (200-րդ հոդված), «պրոֆեսիոնալ և կոմերցիոն սպորտային մրցույթների և շուկաների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառել» (201-րդ հոդված), «պաշտոնական դիրքի խախտում» (308-դ հոդված), «պաշտոնական դիրքի չարաշահում» (309-րդ հոդված), «ձեռնարկատիրական գործունեությամբ անօրինական զբաղվել» (310-րդ հոդված), «կաշառք վերցնել» (311-րդ հոդված), «կաշառք տալ» (312-րդ հոդված), «կաշառքի համար միջնորդ հանդիսանալը» (313-րդ հոդված), «պաշտոնական կեղծիք» (314-րդ հոդված), «դրամի անօրինական մսխում և հափշտակում» (179-րդ հոդված): Օտարերկրյա պետական պաշտոնյաներին, օտարերկրյա պետական վեհաժողովներին, միջազգային կազմակերպությունների պաշտոնյաներին, միջազգային խորհրդարանական վեհաժողովների անդամներին և միջազգային դատարանների պաշտոնյաներին ուղղակի կամ անուղղակի կերպով կաշառելը ենթարկվում է 311, 312 և 313-րդ հոդվածներով (308-րդ հոդված) ամրագրված քրեական պատասխանատվության: Հայաստանյան իշխանությունները հայտնել են իրենց ցանկությունը ապագայում ՔՕ-ի մեջ ներմուծել առանձին դրույթ ազդեցություն ունենալու վերաբերյալ:
8. Հայաստանը ստորագրել ու վավերացրել է կոռուպցիայի վերաբերյալ Եվրախորհրդի քաղաքացիական ու քրեական հռչակագրերը (ETS 174 և 173): Հայկական օրենքով քրեական հարցերում փոխադարձ

Նշ պաշտոնավարման բաղաձայնություն

Դիտարկումների քննարկումները

⁶ «Պետական պաշտոնյա» եզրաբան ընդգրկում է «քաղաքացիական ծառայության մասին օրենքով (տե՛ս 81-րդ կետ) և այն անձանց, ովքեր ծառայում են հանրային կառավարման ոլորտում, սակայն չունեն մշտական կարգավիճակ (այսինքն՝ համաձայն Քաղաքացիական ծառայության մասին օրենքի «քաղաքական պաշտոն» և «հայեցողական պաշտոն» (տե՛ս 81-րդ կետ))

իրավական օժանդակության տրամադրման համար միջազգային պայմանագիր է պահանջվում: Հայաստանը չի հանձնում իր սեփական քաղաքացիներին (ՔՕ-ի 16-րդ հոդվածի 1-ին կետ): Հայաստանի քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանում ժամանակավոր բնակություն հաստատած այն անձինք, ովքեր հանցագործություն են կատարում Հայաստանից դուրս, ենթարկվում են ՀՀ Քրեական օրենսգրքում ամրագրված քրեական պատասխանատվության, եթե գործած արարքը որակվում է որպես հանցագործություն այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է հանցագործությունը (ՔՕ-ի 15-րդ հոդվածի 1-ին կետ), բացի որոշ յուրահատուկ հանցագործություններից (ոչ կոռուպցիա)⁷ նախատեսված 1-ին կետում:

Կարևոր նախաձեռնումներ

9. 2003 թ. նոյեմբերի 6-ին Հայաստանը կառավարական մակարդակով ընդունեց Հակակոռուպցիոն ռազմավարություն և Իրականացման գործողությունների ծրագիր: Ռազմավարությունը ենթադրում է, որ «հասարակության համար կոռուպցիայի վտանգը չափազանց մեծ է» և, որ կոռուպցիան ներթափանցել է կյանքի ցանկացած ոլորտ: Այն կազմակերպչական և իրավական միջոցներ է ապահովում կանխարգելելու կոռուպցիայի առկայությունը հետևյալ ոլորտներում՝ բանկային գործ, հարկային, մաքսային, առողջապահական, կրթական, տարածաշրջանային, արտոնագրման, պետական միջոցների հայթայթման, հանրային կառավարման և դատական: Նախագահին կից հակակոռուպցիոն ռազմավարության խորհրդակցական հատուկ պաշտոն է բացվել, որը պետք է կազմակերպի հակակոռուպցիոն բոլոր գործողությունները և բարձր մակարդակով նախաձեռնի նոր գործողություններ: Ավելին, հետամուտ լինելով 2004 թ. հունիսի նախագահական հրամանագրին՝ հիմնադրվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որի հիմնական նպատակներն են համեմատել համապատասխան մարմինների գործողությունները կոռուպցիայի կանխարգելման քայլերի ձեռնարկման կատարելագործման ընթացքում, կյանքի կոչել քայլեր՝ նախատեսված հակակոռուպցիոն ռազմավարությանը և Հայաստանի կողմից ենթադրվող միջազգային պարտավորություններով և կոռուպցիայի դեմ պայքարելու գործընթացում պահպանել համագործակցություն տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների հետ⁷:

10. Նույն հրամանագրի առնչությամբ ստեղծվել է Վերահսկիչ հանձնաժողով⁸, որը կզննհատի հակակոռուպցիոն ռազմավարության

իրագործումը: Ըստ Հայաստանի միջազգային պատասխանատվության՝ հանձնաժողովը պարտավորվել է հետազոտել այդ իրագործումը, ի կատար ածել միջազգային կազմակերպությունների առաջարկությունները, վերահսկել հակակոռուպցիոն ռազմավարության և ստորաբաժանումների հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը, դիտարկել պետական իշխանությունների և միջազգային կազմակերպությունների հակակոռուպցիոն ոլորտում ունեցած փորձը և առաջարկություններ անել հակակոռուպցիոն մեխանիզմների բարելավման վերաբերյալ: Իր գործողությունները ծավալելու և օրենքով ամրագրված ընթացակարգերին համապատասխանելու համար հանձնաժողովը իրավասու է պահանջել և մուտք ունենալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվությանն ու փաստաթղթերին և ձևավորել մշտական ու ժամանակավոր աշխատանքային (փորձագիտական) խմբեր: Հանձնաժողովը խորհրդին՝ ակտիվորեն զեկույցներ է ներկայացնում: Վերահսկիչ հանձնաժողովի կառավարական բարձրաստիճան ներկայացուցիչները հայտնեցին Հ-ին, որ հանձնաժողովը մշակել է մի «շատ բազմակողմանի զարգացած համակարգ, ինչն ամբողջապես կվերանայի ռազմավարությունը և հատկապես օրենսդրական գործողությունները, որոնք հետևում են ռազմավարության ծրագրին»:

բ. Վերլուծություն

11. Շուկայական տնտեսության անցումային փուլում Հայաստանն ունեցել է մի շարք լուրջ տնտեսական ու սոցիալական խնդիրներ՝ ներառյալ վիթխարի «գորշ» տնտեսական տարածքների ի հայտ գալը, հարկերից խուսափելու մեծ չափերն ու անօրինական տրաֆիքինգը: Հայաստանում թե՛ պետական իշխանությունները, թե՛ քաղաքացիական հասարակությունը կոռուպցիան համարում են հանրային ծառայության շատ սեկտորների վրա ազդող զլխավոր խնդիր: Սովորաբար մշում են, որ անենաշատ կոռումպացված են դատարանը, ոստիկանական, մաքսային, հարկային տեսչության, կրթության, առողջապահության, արտոնագրային և սեփականաշնորհման ոլորտները: Կոռուպցիայի մակարդակի ըմբռնումը երկրում բարձր է (տես 6-րդ կետ):

12. Այս մարտահրավերային իրավիճակի ֆոնի վրա առկա չեն պաշտոնական ուսումնասիրություններ, որոնք կապահովեն երկրում կոռուպցիայի մակարդակի, տարածման ձևերի, դրա պատճառի և

⁷ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը բաղկացած է վարչապետից, Ազգային ժողովի փոխնախագահից, Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահից, գլխավոր դատախազից, ՀՀ նախագահի հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդակցանից, կառավարության աշխատակազմի ղեկավարից, արդարադատության նախարարից, կենտրոնական բանկի նախագահից, Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահից և ՀՀ նախագահի վերահսկողության ծառայությունից:

⁸ Վերահսկիչ հանձնաժողովը բաղկացած է 7 խորհրդարականներից (այցելության ժամանակ Հ-ն տեղեկացվել է, որ ընդդիմադիր կուսակցությունները թերացել են ներկայացնել իրենց ներկայացուցիչներին), գործադիր ճյուղերի ներկայացուցիչներից, 7 հասարակական եվրոխորհուրդը և ԵՆԳ-ն, 5 ներկայացուցիչներից:

⁹ Այցելության ժամանակ Հ-ն տեղեկացվել է, որ 2004 թ. վերջին զեկույցում Վերահսկիչ հանձնաժողովը ներկայացրել է ձեռք բերված նվաճումները և հատկապես 92 «առաջադրանքներից» (իրականացվող գործողություններ) 60-ը արդեն վերահսկվել են:

Նշված տեղեկությունները բաղկացած են հարցազրույցից:

Նշված տեղեկությունները բաղկացած են հարցազրույցից:

հիմնական ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն: Հ-ն նշում է, որ որոշ միջազգային, ինչպես նաև հասարակական կազմակերպություններ անցկացրել են ուսումնասիրություններ Հայաստանում կոռուպցիա երևույթի վերաբերյալ: Այնուամենայնիվ, Հ-ն այն կարծիքին է, որ պաշտոնական տեղեկատվության և/կամ այդ կազմակերպությունների հավաքած տվյալների հիման վրա կարելի է հասնել կոռուպցիայի դեմ պայքարի կամ կանխարգելման առավել արդյունավետ ու պատշաճ քաղաքականության: Այս ամենը շատ հրատապ է, քանի որ կոռուպցիան համարվում է երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը: Ուստի, Հ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները կատարեն անհրաժեշտ ուսումնասիրություններ խնդրի մեջ առավել մանրամասն խորանալու և նախաձեռնություններն ու ծրագրերը առավել արդյունավետ նպատակին հասցնելու համար:

13. նահատան այցելության ժամանակ հայաստանյան իշխանությունների տարբեր ներկայացուցիչներ անընդհատ պնդում էին, որ կոռուպցիայի դեմ պայքարը կառավարության ամենաառաջնային կետն է: Մյուս կողմից, Հ-ն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից լսում է, որ քաղաքացիները բավականին իրազեկված են կոռուպցիայի դեմ պայքարի կամ հակակոռուպցիոն տարածքում քայլեր ձեռնարկելու կառավարության քաղաքականության մասին: Հ-ն գտնում է, որ օգտակար կլինեք, եթե հայաստանյան իշխանություններն առավել անմիջականորեն ընդգրկվեին հակակոռուպցիոն քաղաքականության մեջ՝ անընդհատ տեղեկացնելով հանրությանն ու քաղաքացիական հասարակությանը հակակոռուպցիոն ձեռնարկումների և նվաճումների մասին: Այս գործընթացը պետք է զուգահեռաբար տարվի՝ կոռուպցիայի վտանգի, կիրառվող տուգանքների ու տույժերի և կոռուպցիան հետապնդող մարմինների հետ համագործակցելու, հատկապես կոռուպցիայի դեպքերի կասկածների հաղորդման վերաբերյալ հասարակության իրազեկությունը բարձրացնելուն զուգահեռ: Ուստի, Հ-ն առաջարկում է հայաստանյան իշխանություններին, որոնք ընդգրկված են հակակոռուպցիոն քաղաքականության/գործողությունների մեջ, անընդմեջ տեղեկացնել հանրությանը, քաղաքացիական հասարակությանը և ՁԼՄ-ներին ձեռնարկվող միջոցառումների և ձեռքբերումների մասին: Այն նաև առաջարկում է, որ հանրությանը տեղեկացվի կոռուպցիայի կասկածների վերաբերյալ պատկան մարմիններին հայտնելու ձևերի մասին:

II. Կոռուպցիայի դեմ ուղղված պայքարի ու կանխարգելման գործընթացում ընդգրկված ազգային մարմինների համար մատչելի անկախություն, մասնագիտացում և միջոցներ

ա. Իրավիճակի նկարագրություն

Ոստիկանություն

14. Ոստիկանությունը հետաքննող մարմիններից մեկն է և պատասխանատու է հասարակական կարգի պահպանման ու անվտանգության պահպանման, ինչպես նաև իրավական ու սոցիալական կարգի նկատմամբ հարգանք ապահովելու համար: Ոստիկանությունն ունի թե՛ կանխարգելման և թե՛ հետաքննչական պարտավորություններ քրեական ոլորտում՝ պատրաստելով քրեական գործեր դատավարության համար:
15. Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Հայաստանի ոստիկանության կառուցվածքը:

Ոստիկանության պետ կենտրոնական մարմիններ

պետի առաջին տեղակալ	պետի տեղակալ	պետի տեղակալ	պետի տեղակալ	ոստիկանական գործերի	
ոստիկանական աշխատակազմի ղեկավար	կադրերի բաժին	Հայաստանյան ինտերպոլ	պետական պաշտպանության բաժին	կազմակերպական բաժին	ոստիկանական գործերի շտաբ
շտաբ	իրավաբանական բաժին	ներքին անվտանգություն	ոստիկանության տրանսպորտային բաժին	մամուլի և հասարակայնության	ոստիկանական

				հետ կապերի բաժին	ակադեմիա
կազմակերպված հանցագործության ընդհանուր բաժին	օպերատիվ հետաքննությունների բաժին	հասարակական կարգապահության բաժին	կադրերի տեղեկատվական կենտրոն	հաղորդակցության ստորաբաժանում	ուսումնական կենտրոն
հետախուզական ընդհանուր բաժին	անձնագրերի ու վիզաների բաժին	ավտոտեսչության ոստիկանական բաժին	ֆինանսատնտեսական բաժին	բուժապաստիլման բաժին	
քրեական հետախուզության ընդհանուր բաժին	դատական բաժին				

Ոչ պաշտոնական բազմաձևություն

Ոչ պաշտոնական բազմաձևություն

Տարածքային մարմիններ

Երևան քաղաքի նստիկանության բաժին	Արարատի մարզի նստիկանության բաժին	Արմավիրի մարզի նստիկանության բաժին	Շիրակի մարզի նստիկանության բաժին	Այրումի մարզի նստիկանության բաժին	Գեղարքունիքի մարզի նստիկանության բաժին
Վայոց Ձորի նստիկանության բաժին	Լոռու մարզի նստիկանության բաժին	Արագածոտնի մարզի նստիկանության բաժին	Տավուշի մարզի նստիկանության բաժին	Կոտայքի մարզի նստիկանության բաժին	

16. 1991 թ. սեպտեմբերին նստիկանական համակարգում ստեղծվել է կազմակերպված հանցագործության դեմ պայքարի հատուկ բաժին: 2003թ. նստիկանության պետի կարգադրությամբ ստեղծվել է կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների հատուկ միություն՝ որպես վերոհիշյալ բաժնի ենթակառուցվածք: Միության միակ գործառույթն է պայքարել կոռուպցիայի և քաղաքացիական իրավունքների ոլորտում դիրքի չարաշահման, տնտեսության «գործ» սեկտորի շրջանառության, ֆինանսական և կրեդիտային համակարգերի, փողի լվացման, տնտեսական հանցագործության, դրամի և արժեթղթերի հափշտակման, թանկարժեք մետաղների անօրինական շրջանառության դեմ: Այցելության ընթացքում 3-ն տեղեկացվել է, որ միությունը համալրում են 42 նստիկանական սպա:
17. 2003 թ. հունվարին հիմնվել է ներքին անվտանգության բաժինը որպես նստիկանության ենթաբաժին, որի նպատակն է հետազոտել ներքին կոռուպցիոն դեպքերը: Բաժինը բաղկացած է հետաքննողների ծառայության ստորաբաժանումից, օպերատիվ անվտանգության ստորաբաժանումից, ինչպես նաև հաշվետվությունների ու վերլուծության ստորաբաժանումից: Դրան վերագրված իշխանության շրջանակներում բաժինը ղեկավարում է նստիկանական աշխատակազմի գործողությունները՝ ապահովելով օրինականություն նստիկանական ստորաբաժանումների գործողություններում, պաշտպանելով քաղաքացիների սահմանադրական իրավունքները, ինչպես նաև նստիկանության շրջանակներում դիտարկելով ու կանխելով պաշտոնի չարաշահման, կաշահակերության և այլ խախտումների դեպքերը:
18. Քրեական գործերի մարտավարության ընթացակարգը նույնն է բոլոր հանցագործությունների համար: Այս կապակցությամբ կոռուպցիոն գործերը բացառություն չեն:

Կոռուպցիայի քրեական հետաքննություն, հետաքննչական հատուկ միջոցներ և վկայի պաշտպանություն:

19. Քրեական գործերում հետաքննություն անցկացնելիս, ներառյալ

նաև կոռուպցիան, կարող է դիմել հատուկ հետաքննչական միջոցների (այսուհետ՝ ՀՀՄ): Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 239-241 հոդվածներով ապահովված է համապատասխան իրավական շրջանակ (թղթակցության, էլեկտրոնային փոստի, հեռագիրների և այլ միջոցների վերահսկում): Հայաստանյան իշխանությունները նշում են, որ հենց որ օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքը ուժի մեջ մտնի¹⁰, ՀՀՄ-ների հարցը հետագայում կկարգավորվի: Ոչ մի տեղեկատվություն չի տրվել այլ կարգի ՀՀՄ-ների մասին, սակայն թվում է, որ դրանց կիրառումը նախատեսված չէ հայաստանյան օրենսդրությամբ:

20. Այցելության ընթացքում քրեական գործերում վկաների ու տուժածների պաշտպանության վերաբերյալ ոչ մի հատուկ ծրագիր չի ներկայացվել:

Բանկային գաղտնիություն

21. Բանկային գաղտնիության դրույթով պաշտպանվող տեղեկատվության մատչելիությունը Հայաստանում հատուկ մտահոգության առիթ է, և բանկային գաղտնիությունը համարվում է իրավական խոչընդոտ կոռուպցիոն հանցագործությունների քրեական հետաքննության համար: 1996 թ. ընդունված ներկա օրենքը խոչընդոտում է ապացույցների հավաքման և զնահատման գործընթացին, քանի որ բանկային տեղեկատվություն մուտք գործելը արգելվում է հետաքննող մարմիններին բացի քրեական դեպքերից, երբ անձն անմիջականորեն մեղադրվում է (10-րդ հոդված): Բացի այդ, նման տեղեկատվության նկատմամբ մատչելիություն ունենալու կարգը սահմանված է 16-րդ հոդվածում, ըստ որի բանկը պարտավոր է մերժել բանկային գաղտնիությունը խախտելու վերաբերյալ պահանջները, եթե այդ պահանջները չեն համապատասխանում սույն օրենքով սահմանված պայմաններին: Հայաստանյան իշխանությունները հավատացած են, որ նշված թերությունների լուծումը բանկային գաղտնիության մասին օրենքում փոփոխություններ մտցնելն է, ինչը կներառի բանկային գաղտնիության հարցը՝ կապված ՔԴՕ-ի կարգավորման շրջանակներում քրեական գործերի հետաքննության և վճիռների հետ:

Դատախազություն

22. Դատախազության գլխավոր գործառույթները սահմանված են

¹⁰ Այցելության ընթացքում 3-ն տեղեկացվել է, որ այս օրինագիծը դրվել է խորհրդարանի քննարկմանը/ընդունմանը:

սահմանադրության 103-րդ հոդվածում. «ՀՀ լիազոր դատախազությունը ներկայացնում է մեկ միացյալ համակարգ, որը գլխավորում է գլխավոր դատախազը»: լիազոր դատախազությունը. 1) հարուցում է օրենքով սահմանված քրեական գործերի հետապնդում՝ օրենքում ամրագրված պայմաններին համապատասխան, 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, 3) գործը հանձնելում է դատարան լսումների համար, 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան, 5) բողոքարկում է դատարանների վճիռներն, դատավճիռները և որոշումները, 6) վերահսկում է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: լիազոր դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և գլխավոր դատախազության մասին օրենքի հիման վրա»:

23. Սահմանադրության 55.9-րդ հոդվածում նշված է. «Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին¹¹»: Տեղում կատարած այցելության ընթացքում Հ-ն տեղեկացվել է, որ գործնականում նախագահը «լիովին անկախ կերպով» կարող է նշանակել ու ազատել գլխավոր դատախազին: Սահմանադրության Մաս 6-ի շրջանակներում (Դատական իշխանություն) 95-րդ հոդվածը սահմանում է Արդարադատության խորհրդի հիմնական գործառույթները:¹² Դատավորների նշանակման հետ կապված 95.2-րդ հոդվածը նախատեսում է, որ Արդարադատության խորհուրդը «լիազոր դատախազի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատման է ներկայացնում դատախազների պաշտոնական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցւցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները» և 95.4-րդ հոդվածը նախատեսում է, որ Արդարադատության խորհուրդը «եզրակացություն է տալիս գլխավոր դատախազի կողմից ներկայացված գլխավոր դատախազի տեղակալների և դատախազության կառուցվածքային ստորաբա-

ժանունները գլխավորող դատախազների թեկնածությունների վերաբերյալ»¹³:

24. Ազգային քրեական համակարգը հիմնված է պարտադիր դատական հետապնդման սկզբունքի վրա¹⁴: Ըստ GRECO-ի հարցաշարին հայկական իշխանությունների տված պատասխաններից ստացած տեղեկատվության՝ Քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ միջոցներ է սահմանում այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումը չի կարող իրականացվել դատախազի որոշման հիման վրա, եթե նա համարում է դա անհիմն՝ կախված հետևյալ հանգամանքներից.

- «անձի գործողությունները չեն պատճառել մեծ վնաս,
- կատարված գործողությունը փոխհատուցվել է տուգանքով, իրավունքների լիակատար սահմանափակմամբ կամ այլ զրկանքներով, որին ենթարկվել է անձը՝ կատարած գործողության հետ կապված,
- ամբաստանյալի անբուժելի, լուրջ հիվանդության դեպքում»:

ՔԴՕ-ի 6-րդ հոդվածի 18-րդ կետ սահմանում է, որ «քրեական հետապնդման նախաձեռնությունը» հետապնդող մարմնի որոշումն է «մարդուն հետապնդել որպես մեղավոր, ձեռքալալել անձին կամ միջոցներ ձեռնարկել ապահովելու համար նրա ներկայությունը դատարանում»: Եթե դատախազը հրաժարվում է քրեական հետապնդումից, որոշումը կարող է բողոքարկման ուղարկվել ավելի բարձրաստիճան դատախազի կամ դատարանի կողմից: Երակա դատախազը նաև իրավասու է չեղյալ համարել դատախազի անհիմն որոշումը՝ իր իսկ նախաձեռնությամբ առանց քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախօրոք դիմում ստանալու:

25. Դատախազությունը կարգավորում և վերահսկում է հետաքննչական գործողությունները մինչդատական վարույթի ընթացքում: Այս առումով Դատախազության աշխատանքները գլխավորապես ներառում են հետևյալը.

1) հարուցում է քրեական գործ և իրականացնում է քրեական հետապնդում;

¹¹ Տեղում այցելություն կատարելուց հետո Սահմանադրությունը փոփոխվել է 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում: 55.9-րդ հոդվածը սահմանում է. «Հանրապետության նախագահը Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դատախազի թեկնածությունը (...)» և «գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին»:

¹² Արդարադատության խորհրդի կառուցվածքի ու գործառույթների մասին տես 6-րդ կետ:

¹³ Այս երկու դրույթները 2005 թ. նոյեմբերին կատարված փոփոխություններից հետո այլևս սահմանադրության մեջ ընդգրկված չեն:

¹⁴ «Անձնական» բնույթի դատական հետապնդման դեպքերը խստորեն սահմանափակված են չորս տեսակի հանցագործություններով՝ առողջությանը կանխամտածված վնաս հասցնելը, ծեծելը, անարգելն ու վիրավորելը:

- 2) անձամբ ուսումնասիրում է քրեական գործն իր ողջ ծավալով՝ կայացնում է անհրաժեշտ որոշումներ նախաքննության ընթացքում և իրականացնում է հետաքննչական ու այլ դատավարական գործողություններ;
 - 3) հանցագործության առկայության դեպքում հրահանգավորում է հետաքննող մարմնին և քննիչին պատրաստել քրեական գործ հարուցելու նյութերը;
 - 4) հրահանգավորում է հետաքննող մարմնին և հետաքննողին իրականացնել անհետաձգելի հետաքննչական միջոցառումներ, կամ անձամբ է իրականացնում դրանք:»
26. Համաձայն Դատախազության մասին Օրենքի 4-րդ հոդվածի և ՔԴՕ-ի 53-րդ հոդվածի՝ քրեական գործով դատաքննություն սկսելիս և նախաքննության ու հետաքննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս, դատախազներն ապահովում են համապատասխան իրավապահ մարմինների համագործակցությունը և համաձայնեցվածությունը: Եթե հարցը վերաբերում է կոռուպցիային առնչվող օրինախախտումների հարցերով դատաքննությանը, ապա, համաձայն հայկական մարմիններին, սա կարող է առաջարկվել ստեղծել հետաքննչական խմբեր, մշակել հետաքննչական և օպերատիվ միջոցառումների համար համատեղ պլաններ, պլանավորել համատեղ գործողությունների իրականացում, հետաքննչական և օպերատիվ տեղեկության փոխանակում և հետաքննող մարմինների կողմից դատախազների հանձնարարականների իրականացման վերահսկում: Նման գործողությունների արդյունքները քննարկվում և գնահատվում են դատախազների անցկացրած նիստերի ժամանակ:
27. 2004 թվականի ապրիլին լիավոր դատախազի հրամանով լիավոր դատախազությունում ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի վարչություն: Տեղում կատարած այցելության ժամանակ Վարչության աշխատակազմում կար ութ դատախազ: Վարչության գլխավոր նպատակն է կենտրոնացնել դատախազության համակարգի տարբեր օղակները կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բոլոր միջոցառումները: Կոռուպցիայի դեմ պայքարի վարչությունում աշխատող դատախազները լիազորված են ստանալ կոռուպցիային առնչվող գործերին վերաբերող ողջ տեղեկատվությունը բոլոր հայկական իրավապահ գործակալություններից, ինչպես նաև արտոնված են իրականացնել այս գործերի հետ կապված հետաքննություն: Վարչությունն իրականացնում է բազառապես Սահմանադրությամբ, Դատախազության մասին օրեն-

քով և այլ օրենքներով նախատեսված գործողություններ: Ոչ մի նոր, հատուկ գործառնական պատասխանատվություն կամ իրավասություն չի վերապահվում դրան: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար Դատախազության համակարգում աչ մի արտակարգ կառույց չի ստեղծվում:

28. Դատախազության մասին օրենքը և ՔԴՕ-ն պարունակում են դրույթներ՝ ուղղված դատախազների կողմից իրենց պարտականությունները կատարելու ընթացքում նրանց պաշտպանությանը: Սասնավորապես, ՔԴՕ-ի 52-րդ հոդվածը սահմանում է, որ «քրեական գործի հետ կապված իր պարտականություններն իրականացնելիս, դատախազն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին»: Ավագ դատախազն իրավունք ունի ավելի ցածր աստիճան ունեցող դատախազին ազատել որևէ գործ վարելուց, եթե այդ դատախազը խախտել է օրենքը գործը հետաքննելու ընթացքում: Դատախազները պարտավոր են կատարել ավագ դատախազի օրինական հրահանգները: Ինչևէ, եթե ստորադաս դատախազը համարում է, որ հրահանգներն անօրինական են, ապա նա այդ մասին տեղյակ է պահում ավագ դատախազին: Տեղում այցելություն կատարելու ընթացքում Հ-ին տեղեկացրին, որ եթե ստորադաս դատախազը չի համաձայնում որևէ կոնկրետ գործի առնչությամբ տրված հրահանգին, որը նա ստացել է վերադաս դատախազից, ապա նա կարող է կամ խնդրել, որ իրեն «ազատեն» այդ գործը վարելուց, կամ հրաժարվել այդ գործը վարելուց: Նման դեպքերում գործը հանձնարարվում է որևէ այլ դատախազի:
29. Կարգապահական միջոցառումների առնչությամբ: Դատախազության մասին օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է. «Դատախազների նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը (...)՝ նկատողություն և լիազորությունների դադարեցում»: Դատախազին պաշտոնանկ անելու գործընթացը նախաձեռնում է լիավոր դատախազը, որն այս առնչությամբ հարցապնդում է ուղարկում Արդարադատության խորհուրդ: Վերջինս ուսումնասիրում է լիավոր դատախազի առաջարկը և «եզրակացություն է ներկայացնում Հանրապետության Նախագահին» (29-րդ հոդվածի 4-րդ կետ)¹⁵: Դատախազի պաշտոնավարման ժամկետը դադարեցվում է նրա խնդրանքով, պաշտոնաթողության տարիքին (65 տարեկան) հասնելիս, եթե դատախազը մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործության մեջ, և երբ կամ նրա լիազո-

¹⁵ Տեղում այց կատարելուց հետո Հ-ին տեղեկացրին, որ Սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ Արդարադատության խորհուրդը լիազորություններ չունի Նախագահին եզրակացություններ ներկայացնել, ինչպես սահմանված էր նախկինում:

Ոչ պաշտոնական բաղաձայնություն

Ոչ պաշտոնական բաղաձայնություն

րությունների կատարման համար անհաղթահարելի խոչընդոտներ (ներառյալ կարգապահական վարույթին հաջորդած պաշտոնանկությունը և առողջական պատճառները):

30. Տեղում այցելություն կատարելուց հետո Գ-ին ներկայացվեց տեղեկություն կոռուպցիայի և կոռուպցիային առնչվող հարցերով դատախազների վերապատրաստման մասին: Մասնավորապես, լիավոր դատախազությունը կազմակերպել էր սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ռազմավարության կիրառման միջոցներին առնչվող նախագծի դրույթները», «Կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող միջազգային փաստաթղթերը և միջազգային պրակտիկան», «Հակակոռուպցիոն ռազմավարություն և ազգային օրենսդրություն», իսկ 2005 թվականի առաջին կեսի ընթացքում՝ «Տնտեսական և պաշտոնական հանցագործությունների հետաքննման մասնամասերը և մեթոդները» (որին մասնակցեցին դատախազության 28 աշխատակիցներ), «Հանցագործություններին առնչվող օրենսդրության հիմնական գծերը. հանցագործության յուրաքանչյուր գծերը և հետաքննության մեթոդները» (27 մասնակից), «Կոռուպցիայի իրավական սահմանումը, դրա դրսևորման հիմնական ուղիները և բացահայտման մեթոդները» (34 մասնակից):
31. Տեղում այցելություն կատարելու ժամանակ Գ-ին տեղեկացրին, որ ընդունվել է դատախազների վարքի կոդեքս:

Դատական մարմինների համակարգ

32. Հայաստանում քրեական հարցերով արդարադատություն իրականացնող դատարաններն են.
- առաջին ատյանի դատարանը. Արդարադատության համակարգի մասին օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է. «առաջին ատյանի դատարաններն այնպիսի դատարաններ են, որոնք քննում են քաղաքացիական, քրեական, զինվորական և վարչական իրավախախտումներին առնչվող բոլոր գործերը, ինչպես նաև լուծում է խնդիրներ, որոնք կապված են ազատագրկման, խուզարկություններ անցկացնելու թույլտվության հետ, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային գրույցների, փոստային, հեռագրային և հաղորդակցման այլ միջոցների գաղտնիության վերացման հետ՝ օրենքով սահմանված կարգով»: Գույություն ունեն առաջին ատյանի տասնյոթ դատարաններ, որոնցից յոթը գտնվում են Երևանում:
 - Վերաքննիչ դատարան. այն լսում է առաջին ատյանից եկած

բողոքարկումներ: ոյություն ունի մեկ Վերաքննիչ դատարան, որը գործ ունի քրեական և զինվորական դատական գործերի հետ:

- Վճռաբեկ դատարան. այն իրականացնում է բոլոր ստորադաս դատարանների որոշումների դատական վերանայում: Արդարադատության համակարգի մասին օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է. «Վճռաբեկման գանգատի դիմում ներկայացնելու համար հիմքերը պետք է լինեն՝ քաղաքացիական դատավարությանը մասնակցող անձի էական իրավունքի կամ դատավարական իրավունքի խախտումը, նոր հանգամանքների հայտ գալը»:
33. Դատարանների անկախությունը սահմանող հիմնական սկզբունքը տալիս է Սահմանադրությունը (97-րդ հոդվածի 1-ին կետ). «Արդարադատություն իրականացնելիս բոլոր դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին» և Դատավորների կարգավիճակի մասին օրենքը (5-րդ հոդված)՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթակա են միայն օրենքին: Արդարադատություն իրականացնելիս դատավորները հաշվետու չեն որևէ պետական մամնի կամ պաշտոնյայի: Դատավորների մասնագիտական պատասխանատվությունը սահմանող հիմքերը և գործընթացները նախատեսվում են օրենքով»:
34. Դատավոր նշանակվելու պահանջները տրված են Արդարադատության խորհրդի մասին օրենքի 13-րդ հոդվածում. 25 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթություն, առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ որպես իրավաբան: Դատավորները պաշտոնավորում են մինչև պաշտոնաթողության տարիքը, այսինքն՝ մինչև 65 տարին լրանալը և «նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությանը և օրենքին համապատասխան»: Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն «Հանրապետության Նախագահը նշանակում է (...) վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների դատավորներին (...), դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ (...)»¹⁶: Սահմանադրության

¹⁶ Դատավորների անձեռնմխելիության մասին հետագա մամրամասները տես 51-րդ կետում:

Ոչ պաշտոնական բարձրագույնություն

Ոչ պաշտոնական բարձրագույնություն

95-րդ հոդվածը նախատեսում է. «Արդարադատության խորհուրդը, Արդարատառության նախարարի առաջարկով, կազմում և Հանրապետության նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների պաշտոնական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները»¹⁷:

35. Դատավորների նկատմամբ կիրառվող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գլխավոր կանոնները սահմանված են Սահմանադրության 95-րդ հոդվածի 7-րդ կետում. «Արդարադատության խորհուրդը դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության: Դատավորին պատասխանատվության ենթարկելու հարվերը քննելիս արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը: Հանրապետության նախագահը, Արդարադատության նախարարը և լիավոր դատախազը այս նիստերին չեն մասնակցում»¹⁸: Դատավորների կարգավիճակի մասին օրենքը (31-րդ հոդված՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության հիմքեր, և 32-րդ հոդված՝ Կարգապահական պատասխանատվության տեսակները) պարունակում է հատուկ դրույթներ՝ կապված դատավարության հետ: Մասնավորապես, 31-րդ հոդվածը սահմանում է, որ «դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն սահմանվում է Արդարադատության խորհրդի կողմից», իսկ Արդարադատության նախարարն այն մարդն է, ով «իրավունք ունի հարուցելու կարգապահական պատասխանատվության ենթարկող գործընթաց դատա-

վորի դեմ»¹⁹: Դատավորի վարքագծային կողքսն ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 27-ին:

36. Դատարանի մասին օրենքը սահմանում է այս դատական մարմնի կառուցվածքն ու գործառույթները: Առաջին գլուխը վերաբերում է խորհրդի կազմին. Հանրապետության նախագահ (նախագահ), Արդարադատության նախարար և լիավոր դատախազ (փոխնախագահներ), տասնչորս այլ անդամներ (երկու իրավաբան-գիտնականներ, ինը դատավոր և Հանրապետության նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակված երեք դատախազ): Համաձայն օրենքի չորրորդ գլխի՝ խորհրդի իրականացրած գործառույթները, բացի այդ, ներառում են հտևայալը.
- կազմում և Հանրապետության նախագահին է ներկայացնում դատավորների (Արդարադատության նախարարի առաջարկով) և դատախազների (լիավոր դատախազի առաջարկով) ցուցակը նշանակումների և առաջխաղացման համար;
 - Հանրապետության նախագահին «առաջարկություններ է ներկայացնում»՝ կապված դատավորների և դատախազների ծառայողական առաջխաղացման հետ;
 - դատավորների և դատախազների ենթարկում է կարգապահական զպատասխանատվության ²⁰:

Ազգային անվտանգության ծառայություն

37. Կոռուպցիայի հետ կապված իրավախախտումները կարող են հետաքննվել նաև Ազգային անվտանգության ծառայության կողմից: 1999 թվականից ի վեր գործում է հատուկ Տնտեսական անվտանգության պահպանման բաժին, որը հիմնականում զբաղվում է կոռուպցիայի դեպքերով, մասնավորապես, տնտեսության կառավարման և սեփականաշնորհման բնագավառում կաշառակերությանը: Վարչության գործունեությունը կանոնակարգվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտերով:

¹⁷ 2005 թվականի նոյեմբերին փոփոխված Սահմանադրության 95-րդ հոդվածի 1, 2 և 3-րդ կետերը սահմանում են. «Օրենքով սահմանված կարգով Արդարադատության խորհուրդը. 1) կազմում և Հանրապետության նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները, 2) եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ, 3) առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները»:

¹⁸ Սահմանադրության այս դրույթը փոփոխվել է տեղում այց կատարելուց հետո: 95-րդ հոդվածի 5-րդ կետն ասում է հետևյալը. «Արդարադատության խորհուրդը (...) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա կատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին»: Բացի այդ 55-րդ հոդվածի 11-րդ կետն ասում է. «Հանրապետության նախագահը (...) Արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դատաբեկներին և նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին»:

¹⁹ Հիմքերն են. «Օրենքի խախտումը արդարադատություն իրականացնելիս, ծառայողական կարգապահության խախտումը, դատավորին անհարիր արարքը և տույն օրենքի 14 և 15-րդ հոդվածների պահանջների խախտումը» (դատավորների պարտականությունները):

²⁰ 2005 թվականի նոյեմբերի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրության մեջ ընդգրկվել են Արդարադատության խորհրդի կառուցվածքը և գործառույթները կարգավորող ընդհանուր դրույթներ: 94-րդ հոդվածի 1-ին կետն ասում է. «Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է Արդարադատության խորհուրդը: Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից զառույթի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Արդարադատության խորհրդի գործառույթների մասին տես 95-րդ հոդված (իդուններ թիվ 17 և 18):

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

բ. Վերլուծություն

Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու մարմիններ և ինստիտուտներ

38. Հայկական հակակոռուպցիոն համակարգի վերլուծությունը մատնանշում է, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար երաշխավորելուն ուղղված ինստիտուցիոնալ գործիքների մեծ մասն արդեն գործում է, իսկ մյուսներն էլ (ինչպես, օրինակ, փողերի վճարման դեմ ուղղված իրավական կարգը և կառույցը) շուտով կընդունվեն ու կսկսեն գործել: Այնուամենայնիվ, համակարգը դեռևս ունի բազմաթիվ թերություններ՝ կապված թե՛ օրենսդրության, թե՛ գոյություն ունեցող հակակոռուպցիոն միջոցառումների/օրենսդրության կիրառման, թե՛ արդարադատության համակարգի կազմակերպման հետ: Նախ և առաջ Հ-ը նշեց, որ գոյություն ունեցող կազմակերպչական դրույթների մի մասը գործադիրին հատկացնում են դատական ճյուղի հանդեպ գերագույն տեղ, ուստի վերջիններիս անկախությունը կարծես վտանգվում է: Ավելին, Հ-ն նշեց որոշ լուրջ խոչընդոտների գոյությունը, որոնք խանգարում են ապացույցներ հավաքելիս և կոռուպցիայի դեմ մեղադրվողների դեմ դատական գործ հարուցելիս: Այս վերջին երկու հիմնահարցերի առնչությամբ Հ-ի առանձնացրած պրոբլեմատիկ ոլորտները ներառում են բանկային գաղտնիության օրենսդրությունը, հատուկ հետախուզական միջոցառումները, իրավապահ գործակալությունների անդամների ուսուցումը, վկաների պաշտպանությունը, դատական իշխանությունների գույքի հայտարարագրման և փողերի վճարման դեմ ուղղված իրավակարգը:

39. Ինչպես մատնանշվել է սույն զեկույցի նկարագրական մասում, Արդարադատության խորհուրդը զգալի դեր է խաղում նշանակման ու լիազորությունների դադարեցնելու գործընթացներում, ինչպես նաև դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս: այնուամենայնիվ, Հ-ի տեսակետից չափազանց մեծ իշխանություն է տրված գործադիր մարմնի անդամներին՝ կապված դատավորների և դատախազների ընտրության, ծառայողական առաջխաղացման և լիազորությունների դադարեցման գործընթացների հետ: Ինչ վերաբերում է դատավորների թեկնածության առաջադրմանը, ապա խորհուրդը Նախագահին ներկայացնում է երեք թեկնածուների, իսկ Նախագահն է ընտրում այս երեքից: Նախագահն է նաև, որ համաձայնություն է տալիս դատավորին կալանավորելու վերաբերյալ, իսկ խորհուրդը միայն իր առաջարկությունն է ներկայացնում այդ հարցի վերաբերյալ: Դատախազների նշանակման առումով Նախագահը Ազգային ժո-

ղովին առաջարկում է գլխավոր դատախազի առաջարկով, ով հարցապնդումով դիմում է արդարադատության խորհուրդ: Այս հարցապնդման հիման վրա, արդարադատության խորհուրդը «եզրակացություն» էր ներկայացնում Հանրապետության Նախագահին, ով էլ կայացնում էր վերջնական որոշումը: Այցելությունից հետո Հայաստանի իշխանությունները տեղեկացրին Հ-ին, որ 2005 թ. նոյեմբերի Սահմանադրական բարեփոխման արդյունքում Արդարադատության խորհուրդը այլևս լիազորություն չունի իր եզրակացությունները ներկայացնելու Նախագահին դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ: Սա այնպիսի տպավորություն է ստեղծում, որ Դատական ճյուղի անդամների անկախությունն ու ինքնուրույնությունը լրիվ չի երաշխավորված և «նրանց գործառնություններին համապատասխան չէ», ինչպես որ պահանջում է կոռուպցիայի դեմ պայքարի թիվ 3 Ուղեցույց սկզբունքը: Այդ իսկ պատճառով Հ-ն խորհուրդ է տալիս, որ դատական համակարգի կազմակերպմանն առնչվող կանոնները վերանայվեն, որպեսզի ավահովվի գործադիր իշխանության համեմատ դատական ճյուղի լրիվ անկախությունը:

40. Դատավորները և դատախազները պարտավոր են պարբերաբար գույքի մասին հայտարարագրեր ներկայացնել հարկային մարմիններին: Վերջիններս հավաքում են հայտարարագրերը, սակայն չեն կարող ստուգել դրանց ճշտությունը և վստահելիությունը: Սրա պատճառն այն է, որ ոչ մի իրավական դրույթ չկա, որը նման լիազորություն կտար հարկային մարմիններին: Տեղում ուսումնասիրության ժամանակ Հ-ին ասվեց, որ հարկային ծառայություններն ունեն համապատասխան գործիքներ իրականացնելու համար նման պարտականություն, եթե իրենք օժտվեն այդ լիազորությամբ օրենքի կողմից: Քաղաքացիական ծառայողների (և դատական ճյուղի անդամների) գույքային հայտարարագրերը ստուգելու պատշաճ համակարգ ստեղծելու հիմնահարցին. ավելի մանրամասն անդրադառնում է 113-րդ կետը:

Ուսուցում

41. Հակառակ այն փաստին, որ տեղում զննումից հետո Հայաստանի իշխանությունները Հ-ին ներկայացրեցին կոռուպցիային և որոշ այլ հարակից հանցագործություններին վերաբերող լիակարգ դատախազության Դատազոտության և ուսուցողական կենտրոնի կազմակերպած միջոցառումների (գլխավորապես սեմինարների) մանրամասն ցուցակ, այն դատավորներն ու դատախազները, ում հետ հանդիպեցին այցի ընթացքում, բողոքեցին կոռուպցիայի և փողերի վճարման դեմ պայքարին նվիրված ուսուցման անհա-

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

մարտնչությունից: Պարզվում է, որ այս խմբերի մասնագետների (ներառյալ ոստիկանության աշտատակիցների) մասնագիտական ուսուցման բացակայությունը հայկական համակարգի իսկական թերությունն է և նպաստում է կոռուպցիայի և փողերի լվացման վերաբերյալ մասնագիտական ցածր մակարդակին, ինչպես նաև նման հանցագործությունների դեմ պայքարի անարդունավետությանը: Հ-ի կարծիքով իրերի այս վիճակը չի կարող համապատասխանել Ուղեցույց սկզբունքի 7-ում սահմանված (այսինքն՝ կոռուպցիայի դեմ պայքարում պատասխանատու անձանց մասնագիտացման և ուսուցման) պահանջներին: Հետևաբար Հ-ն խորհուրդ է տալիս ստեղծել ոստիկանության աշտատակիցների, դատախազների և դատավորների համակարգված ուսուցում՝ կապված է կոռուպցիային և փողերի լվացմանն առնչվող հիմնահարցերի հետ:

Կոռուպցիայի քրեական հետաքննություն, բանկային գաղտնիություն, հատուկ հետաքննչական միջոցներ և վկաների պաշտպանություն

42. Որպեսզի ապահովվի Ոստիկանության և լիսավոր դատախազության հետաքննչական միջոցառումների արդյունավետությունը և որակյալ լինելը, անհրաժեշտ է հստակորեն սահմանել երկրում գործող ոստիկանական ուժերի կառուցվածքը և, ամենից առաջ, հստակեցնել համապատասխանաբար ոստիկանության ու դատախազության դերը, գործառույթներն ու յուրահատուկ խնդիրները հետաքննության նախնական փուլում՝ կապված ցանկացած հանցագործության, հատկապես կոռուպցիայի հետ: Տեղեր այցելություն կատարելու ընթացքում Հ-ին բազմիցս ասվել է, թե քանի որ կոռուպցիայի հետ կատարված հանցագործությունները համեմատաբար նոր են «իրենց նոր ձևակերպման առումով»²¹, չկար «ոչ մի հստակ տարբերակում տարբեր իրավապահ գործակալությունների, մասնավորապես ոստիկանության և դատախազության խնդիրների միջև»: Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բոլոր միջոցները կենտրոնացնելու համար 2004 թ. ապրիլին ստեղծվեց հատուկ վարչություն դատախազության ներսում: Տեղում զենման ընթացքում այս վարչության աշտատակագնում կար ընդամենը ութ դատախազ: Հ-ին տեղեկացրին, որ սովորական ոստիկանությունն է սովորաբար իրկանացում և նախաքննչական քայլերը կոռուպցիայի դեպքերում: Հետո գործերը հանձնվում են կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ վարչությանը: Այդ

իսկ պատճառով Հ-ն խորհուրդ է տալիս, որ հայկական իշխանությունները վերակազմավորեն հակակոռուպցիոն հետաքննչական մարմինների աշխատանքը՝ հստակորեն սահմանելով դրանց պատասխանատվությունները, որպեսզի նախ և առաջ ապահովվի արդյունավետ համագործակցություն ոստիկանության ու դատախազների միջև կոռուպցիային առնչվող հետաքննության նախնական փուլի ընթացքում:

43. Համաձայն 1996 թ. բանկային գաղտնիության մասին օրենքի 10.13 և 16-րդ հոդվածների՝ բանկերին չի թույլատրվում օրինապահ իշխանություններին որևէ տեղեկություն տալ հաշվեհամար ունեցողի վերաբերյալ, ոչ էլ տեղեկություն տալ բանկային գործարք իրականացնող որևէ անձի վերաբերյալ, քանի դեռ չի ստացվել դատարանի կարգադրագիր, և միայն երբ հաշվեհամար ունեցողը պաշտոնապես մեղադրվել է իրավախախտման նեջ: Այս համատեքստում կարող է դժվար լինել կասկածյալին մեղադրել առանց նրա հաշվեհամարի և իրականացրած գործարքների մասին մանրամասն տեղեկություն ունենալու: Հետաքննության, ինչպես նաև քրեական դատավարության (հատկապես ապացույցներ խվաքելու նպատակով) հետագա փուլերի հաջողության համար խիստ կարևոր է, որ հետաքննող մարմիններին վերապահվի լրիվ, արդար մուտք ունենալու իրավունք դեպի նման տեղեկություն ու տվյալներ: Այս լիազորությունը անհրաժեշտ է համարվում փողի լվացման գործերի, նաև՝ կոռուպցիայի գործերի մեծ մասի դեպքում: Համապատասխան իրավական լուծումների բացակայությունը կարող է խոչընդոտել ոչ միայն ներքին, այլև միջազգային հետաքննություններին: Ուստի, Հ-ն խորհուրդ է տալիս փոխել բանկային գաղտնիության մասին օրենսդրությունը, որպեսզի հնարավորություն տրվի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան ձեռք բերել ամբողջ անհրաժեշտ տեղեկությունը հաշվեհամար ունեցողների և բանկային հաշվեհամարների հետ գործարքների մասին նույնիսկ նախքան պաշտոնական մեղադրանքների առաջ քաշելը:

44. Ավելին, նույնիսկ եթե դատարանի կարգադրագիր է տրվում բանկային տեղեկություն ստանալու մասին, օրինազանցներն, այնուամենայնիվ, կարող են հեշտորեն սողոսկել ցանցի միջով, օրինակ, ոչնչացնելով ապացույցները և/կամ օտարելով գույքը և ներդնելով դա երկրում կամ արտասահմանում: Սա այն պատճառով է կատարվում, որ բանկային գաղտնիության մասին օրենքի 11-րդ հոդվածի հիման վրա բանկերը պարտավոր են տեղեկացնել իրենց հաճախորդներին նրանց հաշվեհամարներին առնչվող տեղեկության ցանկացած դատական պահանջի մասին: Այս իրա-

²¹ Նոր Քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվի ապրիլի 18-ին:

վիճակը պահանջում է շտապ բարելավում, քանի որ կոռուպցիայի գործերում հաճախորդի շահերը չպետք է առաջնային լինեն արդարադատության շահերի նկատմամբ: Կասկած չկա, որ գործնականում 11-րդ հոդվածը խոչընդոտում է բոլոր հետաքննչական ջանքերին և անխոհեմորեն օժանդակում է իրավախախտողներին: Հետևաբար Հ-ն խորհուրդ է տալիս, որ բանկային անվտանգության մասին օրենքը փոխվի, որպեսզի թույլ չտրվի բանկերին հայտնել իրենց հաճախորդներին, տեղեկություն ստանալու դատական պահանջների մասին:

45. Տեղեր այցելության ընթացքում Հ-ն ուսումնասիրեց գոյություն ունեցող այն հատուկ հետաքննչական եղանակների (ՀՀԵ-եր) գործնական կիրառումը, ինչպիսիք սահմանվում էին քրեական օրենքի 239-241-րդ հոդվածներով, և մանրամասն քննարկումներ անցկացրեց հետաքննչական գործունեության մեջ ներգրավված բազմաթիվ մարմինների ներկայացուցիչների հետ: Հ-ն եզրակացրեց, որ հայկական օրենսդրությունը չի ընդգրկում ՀՀԵ-երի ժամանակակից գաղափարը, և գործնականում միայն անվտանգության ծառայություններն են կիրառում սահմանափակ թվով ՀՀԵ-եր, գլխավորապես՝ հեռախոսային գաղտնալսումներ: Ոչ մի օրենսդրական ակտ չի նախատեսում այլ ՀՀԵ-երի կիրառում, այսինքն՝ վերարահսկելի գույքի գնում, գաղտնի գործողություններ, գաղտնի գործակալներ, անանուն վկաներ և այլն: ՀՀԵ-երի ընդգրկումն օրենսդրական շրջանակի բացակայությունը չի հեշտացնում իրավապահ մարմինների աշխատանքը, երբ նրանք հետաքննություններ են վարում կոռուպցիային առնչվող իրավախախտումների վերաբերյալ, մասնավորապես քրեական դատաքննությունների նախնական փուլում: Իրերի այս վիճակը չի համապատասխանում 3-րդ Ղեկավար սկզբունքին, որը սահմանում է, թե կոռուպցիայի հարցերով իրավախախտումների հետաքննության համար պատասխանատուները «պետք է ունենան ապացույցներ հավաքելու արդյունավետ միջոցներ»: Ուստի, Հ-ն խորհուրդ է տալիս ընդունել օրենսդրական և այլ միջոցառումներ, որպեսզի ստեղծվի հատուկ հետաքննչական եղանակների արդյունավետ համակարգ և իրավասու գործակալությունները սանան համապատասխան միջոցառումներ և ուսուցում, որպեսզի այս համակարգը գործնականում աշխատի արդյունավետ ձևով:

46. Հայաստանում չկա վկաների պաշտպանության ծրագիր, նույնիսկ եթե օրենքը նախատեսում է, որ ոստիկանությունը, դատախազությունը և դատարանները պատասխանատու են հետաքննության և քրեական դատավարության (այսինքն՝ Քրեական դատ

տավարության օրենսգրքի 98 և 99-րդ հոդվածներով) խոցելի մասնակիցների պաշտպանության համար, ոչ մի մանրամասն կանոնակարգում չկա, թե ինչպես պետք է ապահովվել նման պաշտպանությունը համակարգված ձևով: Ոչ մի տեղ չի հիշատակվում բնակավայրի և ինքնության ժամանակավոր փոփոխության, հարազատների պաշտպանության, միջազգային համագործակցության, պաշտպանության ֆինանսական ասպեկտների և այլնի մասին: Համապատասխան օրենսդրական համակարգի բացակայությունը անհնար է դարձնում անհրաժեշտության դեպքում կիրառել վկաների և արդարադատության հետ համագործակցողների (և նրանց հարազատների) որևէ համակարգված և արդունավետ պաշտպանությունը: Հ-ը քաջատեղյակ է, որ վկաների պաշտպանության ծրագրի կիրառումը կպահանջեր զգալի ֆինանսական նախնական ներդրում, սակայն այն կարծիքն ունի, որ ծախսերը կարող են զգալիորեն կրճատվել, եթե ծրագրերը կիրառվեն միայն ամանալուրջ դեպքերում: Հետևաբար Հ-ն խորհուրդ է տալիս ընդունել օրենսդրական միջոցառումներ, որպեսզի ապահովվի համապատասխան վկաների պաշտպանության կիրառումը գործնականում:

III. Դատական կարգով հետապնդումից անձեռնմխելիությունների ծավալն ու շրջանակները

ա) Իրավիճակի նկարագրություն

47. «Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար» (Սահմանադրություն, 57-րդ հոդված), ինչը, համաձայն հայկական իշխանությունների, ընդգրկում է նաև կոռուպցիան: Նախագահի դեմ քրեական գործ հարուցելու համար պետք է սկսել պաշտոնանկ անելու գործընթաց, որի համար Ազգային ժողովը անդամների ձայների մեծամասնությամբ ընդունած որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա Ազգային ժողովը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով որոշում է կայացվում Նախագահին պաշտոնանկ անելու մասին:

48. Ազգային ժողովի անդամները իրենց լիազորությունների ժամկետում և դրանից հետո չեն կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իրենց կարգավիճակից բխող գործողությունների և Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այդ կարծիքները վիրավորանք կամ զրպարտություն չեն պարու-

Ոչ պաշտոնական բաղձնամուտություն

Ոչ պաշտոնական բաղձնամուտություն

նակում: Ազգային ժողովի անդամներին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց Ազգային ժողովի համաձայնության՝ համաձայն օրենքով սահմանված կարգի (Ասհմանադրության, 9-րդ հոդված, Ազգային ժողովի կանոնակարգի 9-րդ հոդված): Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուները կարող են կալանավորվել, կամ դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ (Ընտրական օրենսգիրք, 111-րդ հոդված):

49. Սամանադրական դատարանի անդամները չեն կարող կալանավորվել, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց Սահմանադրական դատարանի և առանց այդ անդամին նշանակած մարմնի համաձայնության, այսինքն՝ Ազգային ժողովի կամ նախագահի²² (Սահմանադրության 97-րդ հոդված և Սահմանադրական դատարանի մասին օրենքի 12-րդ հոդված):

50. Մարդու իրավունքների պաշտպանը (Օմբուդսմենը) իր պաշտոնավարման ողջ ընթացքում օժտված է անձնամխելիությամբ դատական կարգով քրեական պատասխանատվությունից իր պաշտոնավարման ողջ ընթացքում, անփոփոխ է և չի կարող կալանավորվել (Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի 19-րդ հոդված): Պաշտպանը և նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց Ազգային ժողովի համաձայնության: Անձնամխելիությունը տարածվում է նաև Պաշտպանի ուղեբեռի, նամակագրության, հաղորդակցման միջոցների և փաստաթղթերի վրա: Եթե Պաշտպանը բռնվել է հանցանք կատարելու պահին, ապա ձերբակալում իրականացնող պաշտոնյան պետք է անմիջապես տեղեկացնի Ազգային ժողովին, որպեսզի որոշում կայացվի համաձայնություն տալու մասին, որ իրականացվի ձերբակալում: Եթե 24 ժամվա ընթացքում նման համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Պաշտպանն ազատ է արձակվում: Պաշտպանն իրավունք ունի իրաժարվել որևէ քրեական կամ քաղաքացիական դատավարության ժամանակ որպես վկա հանդես գալուց այնպիսի հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իր պարտականություններն իրականացնելիս²³:

²² Նոր Քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվի ապրիլի 18-ին:

²³ 2005 թվի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ներմուծվել է 83.1-ին հոդվածը, որը, այլ բաների թվում, սահմանում է նաև, որ «Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ»:

51. Դատավորներին չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց երկրի նախագահի համաձայնության, որը հիմնված է Արդարադատության խորհրդի ներկայացրած առաջարկի վրա²⁴ (Սահմանադրության 55-րդ հոդվածի, 11-րդ կետ և 95-րդ հոդվածի 6-րդ կետ: Դատավորների կարգավիճակի մասին օրենքի 11-րդ հոդված): Որևէ դատավորի դեմ քրեական գործ հարուցելու և գործի քննության իրավականությունը վերահսկելու իրավասությունը պատկանում է բացառապես լիսավոր դատախազին: Նախագահը և Արդարադատության խորհուրդը պետք անմիջապես տեղեկացվեն որևէ դատավորի ձերբակալման, նրա անձի կամ տան խուզարկության մասին:

52. Դատախազների կամ քննիչների դեմ քրեական դատավարության գործընթացը պետք է վերահսկվի միայն լիսավոր դատախազի կողմից (Դատախազության մասին օրենքի 37-րդ հոդված): Դատախազի կողմից որևէ հանցանքի վերաբերյալ հայտարարությունների ու զեկույցների հետաքննությունը գտնվում է բացառապես լիսավոր դատախազության իրավասության շրջանակներում:

53. Կենտրոնական, ռեգիոնալ, տարածաշրջանային և տեղական ընտրական հանձնաժողովների անդամները չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության (Ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն): Միևնույն սկզբունքը ընտրությունների ընթացքում կիրառվում է նաև ընտրատարածքների և շրջկենտրոնների ընտրական հանձնաժողովների անդամների համար:

54. Ինքնակառավարող մարմինների թեկնածուները կարող են ձեռբակալվել բացառապես ընտրատարածքի ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:

55. Եթե հայ դիվանագետը կասկածվում է կաշառակերության մեջ այն պետության մեջ, որտեղ նա օգտվում է դիվանագիտական անձեռնմխելիության իրավունքից, Հայաստանի իշխանությունները կարող են նրան զրկել այդ անձեռնմխելիության իրավունքից:

բ. Վերլուծություն

56. Հ-ն անհանգստացած է անձեռնմխելիության իրավասության մեծ

²⁴ Սահմանադրական բարեփոխումների հետևանքում (տես տողատակ 17 և 18):

ըրջանակներով: Մարդկանց 10 կատեգորիա վայելում է ան-
ձեռնմխելիության իրավունքը: Այս կարգերը ընդգրկում են ոչ մի-
այն պետական պաշտոններ զբաղեցնող մարդկանց, որոնց հա-
մար թերևս արդարացի է սահմանել անձեռնմխելիություն: Ըստ
Ընտրական օրենսգրքի՝ պատգամավորական թեկնածուները,
կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, տարա-
ժաշրջանային և տեղական ընտրական հանձնաժողովների ան-
դամները, և նույնիսկ քաղաքապետի թեկնածուները և ավագանու
խորհրդի անդամները կարող են օգտվել անձեռնմխելիությունից:
Ըստ 3-ի՝ վերը նշված կարգերի համար սահմանված անձեռնմ-
խելիությունը չի համապատասխանում թիվ 6-րդ Ուղղորդող սկզ-
բունքին, քանզի այսպիսի անձեռնմխելիությունները սահմանում
են արտոնություն և չեն համապատասխանում զբաղեցրած պաշ-
տոնին և տվյալ անձանց աշխատանքին վերաբերող գործողու-
թյուններին: Հետևաբար, 3-ն հավանության արժանացրեց ան-
ձեռնմխելիությունից օգտվող մարդկանց թիվը սահմանափակե-
լու Հայաստանի իշխանությունների ցանկությունը և այսպիսով
առաջարկում է նվազեցնել անձեռնմխելիությունից օգտվող
մարդկանց կարգերը և վերացնել, հատկապես պատգամավորա-
կան թեկնածուներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի
անդամներին, տարածաշրջանային և տեղական ընտրական
հանձնաժողովների անդամներին, քաղաքապետի թեկնածուներին և
տեղական խորհրդի անդամներին տրվող անձեռնմխելիությունը:

57. 3-ն նաև անհանգստացած է անձեռնմխելիությունը վերացնող ըն-
թացակարգերի հետ առնչվող օրենքների բարդությամբ: Մասնա-
վորապես, լիավոր դատախազի կողմից դատավորի անձեռնմխե-
լիության վերացման առաջարկը չի կարող քննարկվել Արդարա-
դատության խորհրդի կողմից՝ առանց Հայաստանի հանրապե-
տության նախագահի (քաղաքական գործիչ)²⁶ համաձայնու-
թյամբ, ինչպես նաև խորհրդի նախագահի (Արդարադատության
խորհրդի մասին օրենքի 1-ին հոդված): Դատավորի կարգավիճա-
կի մասին օրենքի 11-րդ հոդված) համաձայնությամբ: Խորուրդը
կարող է միայն նախագահին առաջարկներ ներկայացնել դատա-
վորի պաշտոնակության կամ ձերբակալման և նրա դեմ քրեա-
կան գործ հարուցելու մասին: Որոշումներ կայացնելու արտոնու-
թյունը տրված է նախագահին, ով իր հերթին պարտավորված չէ
խորհրդից ստացված առաջարկով: 3-ի կարծիքով անձեռնմխելիու-
թյունից զրկելու գործընթացը բավականին բարդ է և տարբեր մար-
միններ է ներգրավում: Ինչևէ հանրապետության Նախագահը և
լիավոր դատախազը, վերջինիս նշանակումը/պաշտոնը կախված է

Նախագահի որոշումից, գերակշռող դեր են խաղում: 3-ն տեղեկաց-
վեց, որ միայն երկու դատավոր են ենթարկվել այս ընթացակար-
գին: Ի հակադրություն սրա դատախազի անձեռնմխելիության վե-
րացումը կարող է նախաձեռնվել և վերջնականապես որոշվել
լիավոր դատախազի կողմից՝ առանց արդարադատության
խորհրդի որևէ որոշման/առաջարկի: Հետևաբար, 3-ն առաջար-
կում է վերանայել դատախազների և դատավորների անձեռնմխե-
լիության վերացման ընթացակարգը՝ կրճատելով գերակշռող ան-
հատական որոշում կայացնողների ներգրավվածությունը (այ-
սինքն՝ Հանրապետության Նախագահ/ լիավոր դատախազ):

IV Կաշառակերության գործեր
ա. Իրադրության նկարագրություն

**Հանցագործության գործիքների և այլ միջոցների առգրավում և
բռնագանձում**

58. Հայկական իրավական համակարգում առգրավումը և բռնագան-
ձումը երկու հստակ մեխանիզմ են, որոնք գործածվում են հան-
ցանքի միջոցների և գործիքների վերացման համար: Բռնագրա-
վումը հավելյալ պատժամիջոց է, որի գործադրումը կախված է
օրինագանցի քրեական պատասխանատվությունից, և պահանջ-
վում է միայն համաձայն քրեական օրենսգրքի հատուկ մասի և
«շահադիտական նպատակներով կատարված լուրջ և հատկա-
պես լուրջ քրեական հանցանքի համար» (ՔՕ-ի 50(3) և 55 (3)-րդ
հոդվածներ)²⁶: Այն կարող է չտարածվել այն գույքի վրա, որն անհ-
րաժեշտ է հանցագործին կամ նրա խնամակալության տակ գտն-
վող անձանց՝ համաձայն օրենքով հաստատված ցանկի (ՔԴ-ի
55(4)-րդ հոդված ²⁷): Բռնագանձումը պարտադիր միջոց է, որը
գործածվում է՝ անկախ քրեական պատասխանատվությունը
(ՔԴՕ-ի 119-րդ հոդված), և դատարանի կոմից պահանջվում է, որ-
պեսզի օրինագանցը զրկվի այն ամենից ինչ նա օգտագործել է
զանցանքը կատարելու ժամանակ:

59. Ներկայումս գործող օրենսդրությունը չի սահմանում արժեքի

²⁶ Ծանր հանցանք է համարվում այն հանցանքը, որի համար օրինագանցը դատապարտվում է 10 տարին
չգերազանցող ազատազրկման, իսկ առավել ծանր հանցանքն այն է, որի դեպքում ազատազրկումը լի-
նում է 10 և ավելի տարի:
²⁷ 55-րդ հոդված: Սեփականության առգրավում.
1. Սեփականության առգրավումը սեփականության ստիպողաբար և անվերադարձ վերցված սեփականությունն է, որը այնու-
հետև համարվում է պետության սեփականություն
2. Բռնագրավման չափը սահմանվում է դատարանի կողմից՝ կախված հանցագործության պատճառով հասցված վնասի չափի-
ցից, ինչպես նաև անօրեն կերպով ձեռք բերված սեփականության չափից: Բռնագրավումը չի կարող գերազանցել անօրեն
կերպով ձեռք բերված սեփականության կամ եկամտի չափը:
3. Սեփականության բռնագրավում կարող է նշանակվել այս օրինագծի հատուկ մասից ելնելով և շահադիտական նպատակնե-
րով կատարված ծանր ու չափազանց ծանր դեպքերի համար:
4. Մեղադրյալին կամ նրա խնամակալության տակ գտնվողներին անհրաժեշտ գույքը ըստ օրենքով սահմանված ցուցակի, չի
գանձվում:

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետ

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետ

²⁵ Ըստ 2005թ. սահմանադրական բարեփոխումների՝ Հայաստանի հանրապետության նախագահն այլևս
Արդարադատության խորհրդի նախագահ չէ:

առգրավման դեպքեր: GRECO-ի հարցումների մեջ Հայաստանի իշխանությունները հենվում են 1953 թ. ԽՍՀՄ-ի երագույն դատարանի կողմից «Առգրավման²⁸ առնչվող դատավարության» վերաբերյալ կայացրած որոշման վրա, որը որոշակիորեն արգելում է փոխարինել առգրավման ենթակա իրը դրան հավասար գումարով²⁹: ՔՂՕ-ն սովորաբար չի տարբերակում գլխավոր և երկրորդական դատավարությունների միջև: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ սրանից կարելի է եզրակացնել, որ կոնֆիսկացիային վերաբերող իրավական կետերը կարող են գործածվել՝ անկախ դրանց առաջնային կամ երկրորդական լինելու:

60. Հանցագործության միջոցները, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք «ենթակա են շրջանառությունից դուրս գալու», պետք է իրավազրկվեն (ՔՂՕ-ի 119-րդ հոդված (1)):
61. Ո՛չ ՔՕ-ն, ո՛չ էլ ՔՂՕ-ն չեն ներառում որևէ կետ հանցագործությունից ստացված շահույթի կամ միջոցների կալանքի մասին ֆիզիկական անձանցից, եթե վերջիններս հանդես են գալիս որպես երրորդ կողմ: Այնուամենայնիվ, համաձայն Հայաստանի իշխանության՝ սեփականությունը, որը փոխանցված է երրորդ կողմին, կարող է կալանվել՝ համաձայն վերը նշված 1953 թ. «Առգրավման առնչվող դատավարության» որոշման, որը սահմանում է, որ եթե քրեական որոշումը ընդունվում է դատարանի կողմից, և եթե կալանքի ցանկի մեջ ներառված կեղծ գործարքների միջոցով ստացված սեփականությունը գրանցվել է որպես այլ անձանց պատկանող սեփականություն՝ հետապնդելով առգրավումն իրագործելու խախտման նպատակ, ապա այդ գործարքները համարվում են անվավեր³⁰:
62. Առգրավման դեպքում ապացույցի բեռը միշտ կրում է դատախազը և այն չի կարող չեղյալ համարվել:
63. Տուժածների կրած վնասների փոխհատուցումը սովորական դատական պրակտիկա է: Հատկապես, եթե դատարանի որոշումը ներառում է ունեցվածքի առգրավում, տուժածն ունի իրավունք նախ ստանալու կրած վնասների փոխհատուցումը, որից հետո կկատարվի մնացած ունեցվածքի առգրավում: Այն դեպքերում, երբ հայտնի չեն այն անձինք, ովքեր վնաս են կրել, գումարները

գնում են պետական բյուջե (ՔՂՕ-ի 119-րդ հոդվածի 4-րդ կետ): Հանցագործության արդյունքում ձեռք բերվածը սովորաբար օտարվում են Քաղաքացիական օրենսգրքում սահմանված մեխանիզմների համաձայն՝ գործարքները անվավեր համարելով:

Ժամանակավոր միջոցներ: Նյութական ապացույցի բռնագրավում և ու նեցվածքի «կալանք»

64. Եթե հարցը վերաբերում է ժամանակավոր միջոցների կիրարկմանը, հիմնական սկզբունքն այն է, որ բռնագրավումը հանդիսանում է նախապայման՝ ապահովելու համար հանցագործության միջոցների և ունեցվածքի հետագա կալանքը: Ընդունված օրինական մոտեցումը հետևյալն է. քանի որ հանցագործության միջոցները և ունեցվածքը որակավորվում են որպես նյութական ապացույց, և ըստ ՔՂՕ-ի 115-րդ հոդվածի, վերջիններս ենթակա են պարտադիր բռնագրավման: Կախված նրանց բնույթից և չափից՝ բռնագրավված իրերը պահվում են կամ «քրեական գործը վարող մարմնի» հսկողության տակ, կամ էլ սեփական ձեռնարկության, սեփականատիրոջ, կամ սեփականատիրության տնօրենի հսկողության տակ: Հետաքննության ընթացքում բռնագրավված թանկարժեք քարերը և մետաղները, տարադրամը, փողը, չեկերը և ապահովագրություններ, կարող են ուղարկվել «պետական բանկի ձեռնարկություններ՝ պահպանման նպատակով, մինչ իրերից ամեն մեկը կկորցնի իր ապացույցային արժեքը» (116-րդ հոդվածի 1, 2-րդ կետ, ՔՂՕ):
65. Ունեցվածքի կալանքը միջոց է, որը հատուկ սահմանվել է երաշխավորելու համար «քաղաքացիական դատավարություններ անցկացնելը, հնարավոր հափշտակման կանխումը և դատարանի ծախսերի հատուցումը» (ՔՂՕ 332-րդ հոդված): ՔՂՕ-ի 233-րդ հոդվածը սահմանում է. «ունեցվածքի կալանքը կարող է իրագործվել քրեական դատավարություն վարող մարմինների կողմից միայն այն դեպքում, երբ գործի համար համար ձեռք բերված նյութը կարողանում է ապահովել բավարար հիմքեր այն կասկածի համար, թե կասկածյալը, մեղադրյալը կամ այդ անձին տիրացող որևէ այլ ոք, կարող է թաքցնել, փչացնել կամ վաճառել այն սեփականությունը, որը կալանքի ենթակա է»: Սա իրականացվում է «հետաքննող մարմնի կողմից», և «պետք է նշվի կալանքի ենթակա ունեցվածքը, ունեցվածքի արժեքը, որի հիման վրա հնարավոր կլինի կատարել կալանք՝ ապահովելով քաղաքացիական հայցը և դատարանի ծախսերը»:
66. Քանի որ բռնագրավված ունեցվածքի պահպանումը բարդ է, բա-

Ոչ պաշտոնական բաղաձայնումներ

Ոչ պաշտոնական ցուցանիշներ

²⁸ Այցելությունից հետո Հայաստանի հանրապետության իշխանությունները Հ-ին տեղեկացրեցին, որ 2005թ. դեկտեմբերին վերացվել է այս որոշումը:

²⁹ Միևնույն ժամանակ Հայաստանի հանրապետության իշխանությունները նշեցին, որ որոշ առգրավող իրերի արժեքը կարող է հաշվարկվել այն դեպքերում, երբ այն ենթակա է ժամանակավոր պատժամիջոցների (օրինակ, սեփականության կալանք):

³⁰ Տես տողատակ թիվ 28:

ցառությամբ շարժական ունեցվածքի և մեծ չափ ունեցող իրերի, որպես կանոն, բռնագրավվում է «այլ ունեցվածքը» (ՔՕԴ-ի 238-րդ հոդվածի 1-ին կետ): Թանկարժեք մետաղները և քարերը, տարադրամը, ապահովագրությունները և ակնթարթային տոմսերը տրվում են գանձատուն՝ պահպանման, մինչդեռ այլ իրերի վրա դրվում է կնիք և պահպանվում են այն մարմինների հսկողության տակ, որոնք և կայացրել են կալանքի որոշումը կամ փոխանցվում են պահպանման պետական սեփականության վարչություն կամ տեղային ինքնակառավարման ներկայացուցիչներին (ՔԴՕ-ի 236-րդ հոդվածի 2-րդ կետ): Կնիք է դրվում այն ունեցվածքի վրա, որը չի բռնագրավվել և այն գտնվում է սեփականատիրոջ, տնօրենի կամ ընտանիքի չափահաս անդամներից մեկի մոտ, որոնք և պատասխանատու են ունեցվածքի մեկուսացման կամ վնասի համար (236 -րդ հոդվածի կետ 3-րդ):

Վիճակագրություն

67. Հայաստանի իշխանությունները ներկայացնում են հետևյալ տեղեկատվությունը/վիճակագրությունը (185-րդ հոդված).

	Կոռուպցիայի (և դրան հարող) դեպքերի դատաքննության նախաձեռնում ³¹	Բռնագրավումն ապահովելու նպատակով կալանք ունեցվածքի վրա	
		Դրամ	Եվրո
2000	213	152 399 400	284 585 81
2001	274	117 121 557	218 709 08
2002 ³²	463	1 759 471 864	3 285 581. 98

Փողերի լվացում

68. ՔՕ-ի 190-րդ հոդվածը փողերի լվացումը սահմանում է որպես հանցագործություն: «Այն ֆինանսական կամ այլ գործարքների նկատմամբ, որոնց ժամանակ օգտվում են ակնհայտորեն անօրինական ձևով ձեռք բերված ռեսուրսներից կամ այլ ունեցվածքից, և որոնք հետապնդում են այսպիսի միջոցների կամ ունեցվածքի

կիրառումը ձեռներեցության կամ այլ գործունեության նպատակով, որպեսզի թաքցվի կամ խեղաթյուրվի այդ ունեցվածքի ծագումը կամ որտեղից լինելը, կամ այն իրավունքները, որոնք վերաբերում են դրանց տեղակայմանը, տեղաշարժին կամ իրական ինքնությանը, սահմանվում է 300-500 նվազագույն աշխատավարձի չափով տույժ կամ մինչև 4 տարի ժամկետով ձերբակալում՝ 50 նվազագույն աշխատավարձի չափով տույժին զուգահեռ կամ առանց տույժի»: Հայաստանի իշխանությունները նշում են, որ կոռուպցիայի բոլոր դեպքերը փողի լվացման մեղադրանքներ են, նույնիսկ եթե նրանք կատարվել են Հայաստանի արդարադատության իրավասությունից դուրս (վերջիններս որակավորվում են որպես կրկնակի հանցանք):

69. «Ահաբեկչության ֆինանսավորման և հանցագործությունից ստացված շահույթի օրինականացման դեմ պայքարի մասին օրենքը» (այսուհետև ԱՖ/ՅՇՕ) ընդունվել է 2004 թ. դեկտեմբերի 14-ին: Համաձայն օրենքի՝ «Կենտրոնական Բանկը այն մարմինն է, որ կոչված է պայքարելու ԱՖ/ՅՇՕ դեմ»: 2005 թ. ապրիլին Կենտրոնական Բանկի շրջանակներում ստեղծվեց ֆինանսական վերահսկման կենտրոնը՝ մի առանձին ենթաճյուղ, որը պատասխանատու է փողերի լվացման դեմ ուղղված գործունեության կարգավորման համար: Կենտրոնը ազգային ֆինանսական հետաքննչական միավոր (ՖՀՄ) է: Ֆինանսական հետաքննչական միավորի նպատակները, գործառնությունները և կառուցվածքը սահմանված են դրա կանոնադրության մեջ.

- փողերի լվացման դեմ ուղղված /ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼՈւ/ԱՖ)մասին տվյալների մշակում և պահպանում,
- ՓԼՈւ/ԱՖ մասին տվյալների մշակում և վերլուծություն,
- տեղեկատվության փոխանակում և համագործակցություն Հայաստանի պետական մարմինների հետ՝ ներառած իրավապահպան մարմինները,
- տեղեկատվության փոխանակում և համագործակցություն միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ֆինանսական հետախուզական միությունների հետ,
- ՓԼՈւ/ԱՖ չափանիշների բարեփոխումներ,
- ՓԼՈւ/ԱՖ օրենքների պահանջների համապատասխանեցման ապահովում,
- ՓԼՈւ/ԱՖ հարցերի շուրջ խորհրդատվություն և ուսուցում:

Ոչ պաշտոնական բարձրագույնություն

Դրամ/արդարադրամ թափանցիկություն

31 Համաձայն Հայաստանի իշխանությունների «արանք հիմնականում պետական սեփականության յուրացման և պաշտոնական իրավախախտումներն են»:

32 Ինչ վերաբերում է 2003-2004 թվականների տվյալներին, ապա դրանք դեռևս պետք է ի մի բերվեն նոր մշակված չափորոշիչների հիման վրա և պետք է հավանության արժանանան համաձայն 2003 թվականի օգոստոսի 1-ին ընդունված Քրեական օրենսգրքի:

70. Տեղում այցելության ժամանակ, կենտրոնը գործուն դարձնելու նպատակով, Կենտրոնական Բանկի խորհուրդը ընդունել և հրապարակել է կենտրոնի 3 տարվա ռազմավարությունը և 2005 թ. գործունեության պլանը: 3 տարվա ռազմավարությունը ներառում է հետևյալ ցուցումները կենտրոնի գործունեության վերաբերյալ.

- կենտրոնի կառուցվածքային և գործառնության կարողության կազմակերպում
- ՓԼՈՒ/ԱՖ հարցերով հանրային տեղեկատվության ընդլայնում
- ՓԼՈՒ/ԱՖ-ի շուրջ ներքին համագործակցություն
- ՓԼՈՒ/ԱՖ-ի շուրջ միջազգային համագործակցություն
- ՓԼՈՒ/ԱՖ օրենսդրության պարտադիր պահանջների կիրառման ապահովում:

71. ԱՖ/ՅՇՕ օրենքի 3-րդ հոդվածի դ կետը և 5-րդ հոդվածի 1-ին կետը պարունակում են այն բոլոր հաստատությունների մանրամասն ցանկը, որոնք պարտավոր են լիազորված մարմնին զեկուցել «կասկածելի գործարքների մասին՝ կապված քրեական շահույթի և ահաբեկչության ֆինանսավորման օրինականացման հետ և այլ գործարքների մասին, որոնք ենթադրվում են այս օրենքով» (ՖՀՄ)³³: Տեղում կատարած այցի ժամանակ Գ-ին տեղեկացվեց, որ ՖՀՄ-ն պատրաստվում է հիմնել տվյալների բազա: Գ-ին նաև ասվեց, որ 2005 թ. առաջին 4 ամիսների ընթացքում ոչ մի գործարքի վերաբերյալ զեկույց չի ուղարկվել նորաստեղծ ՖՀՄ:

72. ԱՖ/ՅՇՕ օրենքի ընդունմանը հաջորդեց Բանկային գաղտնիության մասին օրենքի բարեփոխումը: Համաձայն բարեփոխմանը, եթե կենտրոնական բանկը, ԱՖ/ՅՇՕ օրենքի համաձայն՝ տվյալները քննարկելուց հետո, հայտնաբերի փողերի լվացման կամ ահաբեկչական գործողությունների ֆինանսավորման դեպքեր, այն պետք է այդ մասին հայտնի իրավասու հետաքննչական վար-

չություն: Սա նշանակում է, որ.

- բանկային գաղտնիության վերաբերյալ իրավական դրույթները չպետք է խոչընդոտ հանդիսանան բանկերի համար փողերի լվացման կամ ահաբեկչական ակտի ֆինանսավորման որևէ դեպքի մասին Կենտրոնական բանկին հայտնելուն,
- Կենտրոնական բանկը պետք է տեղեկացնի հետաքննող վարչությանը ցանկացած դեպքի մասին, որը, համաձայն ֆինանսային վերահսկման կենտրոնի հետազոտման, իրենից ներկայացնում է փողերի լվացման կամ ահաբեկչական գործողությունների ֆինանսավորում, նույնիսկ այն դեպքում, եթե այդ տեղեկությունը բանկային գաղտնիության ենթակա է:

Փոխադարձ իրավական աջակցում. պայմանագրային միջոցառումներ և առգրավում

73. Հայաստանի դատախազությունը և այլ իրավապահ մարմինները կարող են իրավականական աջակցության համար դիմել օտարերկրյա իրավապահ գործակալություններին ցանկացած հանցագործության դեպքի, այդ թվում նաև կաշառակերության, հետազոտման ժամանակ՝ համաձայն միջազգային պայմանագրերի և ԶՕԴ-ի գլուխ 54-ի դրույթների («Դատարանների, դատախազների և հետախուզական վարչությունների և օտար պետությունների համապատասխան վարչությունների և պաշտոնյաների միջև հարաբերությունները քրեական հանցագործությունների դեպքերում իրավական աջակցության շրջանակում»): Երբ Հայաստանը հանդես է գալիս որպես հայցող կողմ, հետաքննչական գործընթաց վարելու դիմումը (ներառած խուզարկումը) ուղարկվում է լիավոր դատախազի կողմից, իսկ պահանջը իրականացնելու ընթացակարգային գործողություններ՝ արդարադատության նախարարի կամ նրա տեղակալների կողմից (474-րդ հոդված): Երբ Հայաստանը այն պետությունն է, որին դիմում են, դատախազները կամ հետաքննողները կատարում են օտար պետության ցուցումները՝ համաձայն ԶՕԴ-ի (477-րդ հոդված): Հայցերը չեն կիրառվում, եթե «այդ անելը կարող է վնասել Հայաստանի անկախությանը կամ անվտանգությանը, կամ եթե այն հակասում է պետության օրենսդրությանը:

74. Ի լրումն վերը նշվածի, Դատարանի որոշումների հարկադիր կատարման օրենքը (ընդունված 1998 թ. մայիսի 5-ին) ապահովում է վճիռների և որոշումների հարկադիր իրականացումը օտարերկրյա և միջնորդ դատարանների կողմից՝ համաձայն միջազ-

Ոչ պաշտոնական բաղադրանքներ

Ոչ պաշտոնական բաղադրանքներ

³³ Բանկեր, կրեդիտային կազմակերպություններ, տարադրամի գործարքների գործակալներ, տարադրամի առևտրականներ, մարմիններ/անձինք, որոնք կատարում են դրամային փոխանցումներ, կազմակերպություններ, որոնք ներառված են վճարման միջոցների և թղթաբանության աշխատանքի բացահայտման մեջ, միավորներ, որոնք մասնագիտացած են ապահովագրության շուկայում, գրավատներ, իշխանություններ/մարմիններ, որոնք գրանցում են սեփականության իրավունքները, մարմիններ, որոնք կատարում են գործարքների վավերացում՝ համաձայն կանոնակարգի և օրենքով սահմանված դեպքերում; միավորներ, որոնք կազմակերպում են մրցանակային խաղեր և վիճակախաղեր; խաղատներ, վստահված տնօրեններ; միավորներ, որոնք ներգրավված են ապահովագրական գործարքների մեջ, միավորներ, որոնք ներգրավված են ներդրումների մեջ, ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք նվերներ են շնորհում (ինչպես նաև այն կազմակերպությունները, որոնք գրանտներ են տրամադրում), համաձայն ԳԳ օրենքի:

գային պայմանագրերի դրույթների:

75. Համաձայն Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված վիճակագրական տվյալների՝ 1999 թ. հունվարից մինչև 2004 թ. սեպտեմբերը լիավոր դատախազության կողմից օրինական աջակցության 607 օտարերկրյա հայցեր են ստացվել, որոնցից 45-ը կաշառակերության վերաբերող իրավախախտումներ են: Նույն ընթացքում 45 հայց, որոնցից ոչ մեկը չի ներառում կաշառակերության դեպքեր, ուղարկվել են օտար երկրների իրավապահ մարմիններին:

բ. Վերլուծություն

76. Տեղում կատարած այցի ժամանակ Հ-ի հետ հանդիպած տարբեր հետաքննչական մարմինների ներկայացուցիչներ հայտնեցին, որ, կախված հանցագործության տեսակից, ունեցվածքի նկատմամբ կալանքը տարբեր է լինում, և այն կարող է կիրառվել միայն մեղադրյալի ակտիվ ունեցվածքի նկատմամբ: Այն դեպքերում, երբ ունեցվածքի չափը չի կարող ճշգրիտ որոշվել, դատարանը կարող է կատարել կալանքի (առգրավման) ենթակա ունեցվածքի արժեքի հաշվառում՝ ըստ շուկայական գների՝ համաձայն ԶԾԳ-ի 234-րդ (1) հոդվածի: Հ-ն ընդունում է, որ ունեցվածքի դատական հաշվառումը հնարավոր է միայն արժեքի ճշգրիտ հաշվարկման դեպքում: Ավելին, «Առգրավմանն առնչվող դատական վարույթի» մասին որոշումը (ընդունված 1953 թ. ԽՍՀՄ երազույն Դատարանի կողմից, որը դեռևս գործում է՝ համաձայն Հայաստանի Կառավարության) պարզ ասում է, որ «երբ որպես հավելյալ պատիժ ընդունվում է ունեցվածքի առգրավում ներառող դատավճիռ, դատարանը պետք է ճշգրիտ ձևով ներկայացնի կալանքի չափը՝ խուսափելու համար կասկածներից և անորոշություններից»: Հատկապես դատարանը պետք է ներկայացնի կալանքի ենթակա ունեցվածքի ստույգ մասը (1/2, 1/3 և այլն) կամ ներկայացնի կալանքի ենթակա ունեցվածքի իրերի ցանկը, որոնց վերաբերյալ պետք է ընդունվի մասնակի կալանքի որոշում: Համաձայն նույն որոշման «կալանքի ենթակա ունեցվածքի փոխարինումը գումարով՝ նրա արժեքի հավասար չափով, արգելվում է»³⁴:

77. Բացի այդ, Հ-ն այն կարծիքին է, որ Հայաստանի օրենսդիր համակարգը ունի լուրջ սողանքներ, որոնք կարող են գործնականում խոչընդոտել կալանքի իրագործումը, երբ ունեցվածքը պատկանում է երրորդ կողմին: Հատկապես հետաքննորոգ/դատաքննող

մարմինները, որոնց հետ հանդիպել է Հ-ն տեղում կատարած այցի ժամանակ, չեն կարողացել ճշտել այն իրավական դրույթները, որոնք կիրառվում են երրորդ կողմին փոխանցված ունեցվածքի կալանքի ժամանակ: Մի քանի զրուցակիցներ նշեցին ԶԾԳ-ի 119-րդ հոդվածը, բայց միևնույն ժամանակ նաև նշեցին, որ այդ հոդվածը լիովին պարզ չէ: Մյուս կողմից, ի պատասխան GRECO-ի հարցման, ԶԾԳ-ի 232-րդ հոդվածը ներկայացվել էր որպես երրորդ կողմից փոխանցված ունեցվածքի կալանքի վերաբերյալ հիմնական կետ: Այնուամենայնիվ, Հ-ն նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը ոչ մի հատուկ անդրադարձ չի անում երրորդ կողմի վերաբերյալ, իսկ Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածը կապված է պայմանագրային միջոցառումների հետ (ավելի մանրամասն տես 65-րդ կետ): Ըստ Հ-ի՝ գոյություն ունեն մշանակալի անորոշություններ տվյալ հարցի հիմունքների վերաբերյալ, համաձայն որոնց որոշվում է կալանքի արժեքը, և այն թե արդյո՞ք հանցագործի ունեցվածքը և միջոցները կարող են կալանվել երրորդ կողմից: Տեղում կատարած այցի ժամանակ նաև պարզ նշվեց, որ ապացույցի բեռը միշտ դրվում է դատախազի վրա և ենթակա չէ քննարկման: Այսպիսով, Հ-ն առաջարկում է, որ իրավական կետերը ներկայացվեն՝ թույլ տալով 1. կաշառակերության հանցանքի դեպքում ունեցվածքին համապատասխան արժեքի կալանք, 2. երրորդ կողմին պատկանող ունեցվածքի արդյունավետ բռնագրավում:

78. Դատաքննության նախնական փուլերում խուզարկություն անցկացնելու նպատակով Ոստիկանությունը կամ դատախազը պետք է նախապես ստանան հրաման: Այս օրենքը բացառություն չունի նույնիսկ արտակարգ դեպքերում, երբ խուզարկությունը պետք է կատարվի ապացույց ստանալու համար կամ խուզարկումը չկատարելու դեպքում հնարավոր է ապացույցների կորուստ: Նման արտակարգ դեպքերում կարող են առաջանալ դժվարություններ դատական օրդեր կամ հրաման արագ ստանալու համար, ըստ Հ-ի՝ այս ընթացակարգը անխոս դանդաղեցնում է հետաքննությունը և կարող է պատճառ դառնալ փաստերի անվերադարձ կորստի: Վերը նշվածի վերաբերյալ Հ-ն առաջարկում է պարզեցնել (և արագացնել) արտակարգ դեպքերի ժամանակ խուզարկության լիազորություն շնորհելու համակարգը:

79. Ըստ Հ-ի՝ փողերի վլացման դեմ ուղղված համակարգը ընդհանուր առմամբ համապարփակ է և համապատասխանում է ընդունված միջազգային չափանիշներին (լավ սահմանված տեղեկացման չափանիշներ և պարտականություններ, մի շարք իրավական

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

³⁴ Տես սողանակ 28:

անձինք, որոնք պարտավոր են զեկուցել, ՖԻՍԻ կազմակերպություն և այլն): Այնուամենայնիվ, Հ-ն համարում է, որ նորաստեղծ համակարգի համար լիարժեք գործելը և արդյունավետ դառնալը գործնականում մարտահրավեր է: Հ-ն հանդիպեց Հայաստանի նորաստեղծ³⁵ ֆինանսների վերահսկման կենտրոնի 9 հոգուց բաղկացած անձնակազմի հետ, որը համագործակցում է Կենտրոնական Բանկի հետ: Ի միջի այլոց, տեղեկացվեց, որ Ֆինանսական հետաքննչական միությունը պատրաստվում է հիմնադրել իր տվյալների բազան և իր ներքին կանոնադրությունը՝ վերջինս գործում դարձնելու համար: Նաև նշվեց, որ Միության կողմից 2005 թ. առաջին չորս ամիսների ընթացքում ոչ մի հատուկ հայտարարություն չի ստացվել: Հ-ն համարում է, որ Ֆինանսական հետաքննչական միության պաշտոնյաները պետք է ապահովվեն այն բոլոր միջոցներով և գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են իրենց նրբանկատ և կարևոր գործառնությունները իրականացնելու համար՝ հնարավոր ամենաարդյունավետ ճանապարհով: Այսպիսով, Հ-ն առաջարկում է ապահովել, որ փողերի լվացման դեմ պայքարող նոր համակարգը ուժի մեջ մտնի որքան հնարավոր է արագ և այնպես արվի, որպեսզի ՖՎԿ-ի աշխատակազմի համար կազմակերպվեն դասընթացներ այն բանի վերաբերյալ, թե ինչպես կիրառել նոր օրենքները և կանոնները ամենաարդյունավետ ձևով՝ ներառյալ տեղեկությունները իրավասու միավորների համար, ովքեր պարտավոր են զեկուցել կասկածելի գործարքների մասին:

**V. Հանրային կառավարում և կոռուպցիա
ա. Իրավիճակի նկարագրություն.
Սահմանումներ և իրավական շրջանակներ.**

80. Հանրային կառավարում հասկացությունը ո՛չ իրավական և ո՛չ էլ սահմանադրական սահմանում չունի: Քաղաքացիական ծառայության մասին օրենքը, ընդունված 2001 թ. դեկտեմբերի 4-ին (այսուհետ՝ ՔԾՕ) ներկայացնում է, որ «Հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ծառայությունը պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև քաղաքացիական աշխատանքը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» (1-ին հոդվածի 1-ին կետ): Այնուհետև ՔԾՕ-ն առանձնանշում է, որ «պետական ծառայությունը մասնա-

գիտական գործունեություն է, որն ուղղված է պետական մարմիններին օրենքով վերապահված խնդիրների և գործառնությունների իրականացմանը», որը «ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը և հատուկ ծառայությունները, այսինքն՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի, հարկային և մաքսային հանրապետական գործադիր մարմինները» (1-ին հոդվածի 3-րդ կետ): ՔԾՕ-ն օրենքը նաև սահմանում է (4-րդ հոդվածի 1-ին կետ) այն անձանց (քաղաքացիական ծառայողներ), թե ովքեր են ենթակա իր դրույթներին:

Այս օրենքի գործառնությունը վերաբերում է այն անձանց, ովքեր պաշտոններ զբաղեցնում համաձայն քաղաքացիական ծառայության պաշտոնների ցուցակի

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը,
2. Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմը,
3. Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերը,
4. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (տարածքային ղեկավարների գրասենյակներ) և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը,
5. Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտական հանձնաժողովների աշխատակազմերը (ծառայություններ, խորհուրդներ, ներառյալ Քաղաքացիական ծառայության խորհուրդը)՝ բացառությամբ Կենտրոնական Բանկի:

Նույն հոդվածի 2-րդ կետը նշում է. «Անձինք, ովքեր զբաղեցնում են քաղաքական և հայեցողական պաշտոններ, ինչպես նաև անձինք, ովքեր ապահովում են տեխնիկական աջակցություն այն մարմիններին, որ նշված են սույն հոդվածի 1-ին կետում, չեն համարվում քաղաքացիական ծառայողներ»³⁶:

81. Հանրային կառավարման հիմնարար սկզբունքները ներառված են Սահմանադրության մեջ: 5-րդ հոդվածը ներառում է հետևյալը.

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

³⁵ Այդ ժամանակ մարմինը գործում էր արդեն մեկ ամիս:

³⁶ Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք են. Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Վարչապետը, նախարարները և համայնքապետերը: Հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք են. Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Կառավարության աշխատակազմի ղեկավարը, Կառավարության կից պետական վարչական մարմինների ղեկավարները, Երևան քաղաքի քաղաքապետը և նրա տեղակալները, Հանրապետության Նախագահի, Վարչապետի, նախարարների և Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդակցանքեր, մյուս քարտուղարները և ռեֆերենտները:

«Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ և այն օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա», և որ «պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»: Բացի Սահմանադրությունից՝ տարբեր օրենքներ կարգավորում են հանրային իշխանության իրավասությունը, կազմակերպումը և գործունեությունը: Դրանք ներառում են Հանրային կառավարման ինստիտուտների վերաբերյալ օրենքը, Հանրային կառավարման հիմնական սկզբունքների մասին օրենքը, Պետական ոչ-առևտրային կազմակերպությունների մասին օրենքը և որոշ այլ օրենքներ՝ ներառյալ վերը նշված Քաղաքացիական ծառայության մասին օրենքը:

Հակակոռուպցիոն քաղաքականություն

82. Ինչպես արդեն նշվել է (9 և 10-րդ կետեր), գլխավոր հակակոռուպցիոն փաստաթուղթը, որն ուղղված է հանրային կառավարմանը, ստորև բերված Հակակոռուպցիոն ռազմավարությունը և կիրառման պլանն է, որը Կառավարության կողմից ընդունվել է 2003 թ. նոյեմբերի 6-ին: Բացի այդ՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը՝ բաղկացած բարձրաստիճան պաշտոնատար անձանցից, մեծ դեր ունի ռազմավարության իրականացման մեջ: Իսկ Հատուկ վերահսկող կոմիտեն՝ հիմնադրված 2004 թ. հունիսի 1-ին, որը գլխավորում է նախագահի Հակակոռուպցիոն քաղաքականության գծով խորհրդականը, վերահսկում է Կառավարության և ստրատեգիայի կիրառման գործընթացում ներգրավված պետական գործակալությունների կողմից ստեղծված հակակոռուպցիոն ծրագրերի առաջընթացը:

83. Հանրային կառավարման ոլորտում քննարկվող միջոցներից են՝ վերահսկող իշխանությունների գործառույթների կարգավորումը, տարբեր մարմիններին վերապահված գործառույթների բաշխմանը և կարգավորմանը, նախարարությունների, տարածքային իշխանությունների և այլ հանրային կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ զեկույցների համակարգի մշակումը: Կիրառման նախագիծը ենթադրում է իրականացման 3 տարի՝ 2004-2006 թվականները:

Թափանցիկություն

84. 2003 թ. հոկտեմբերի 22-ին ընդունված Տեղեկատվության ազա-

տության վերաբերյալ օրենքը կարգավորում է մուտքը դեպի հանրային տեղեկատվություն: Համաձայն օրենքի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անձ ունի իրավունք տեղեկատվություն ստանալու և դիմելու այն մարմիններին կամ իրավասու անձանց, ովքեր ունեն և մշակում են տեղեկատվություն՝ համաձայն օրենքով նախատեսված կարգի: Տեղեկատվությունը կարելի է պահանջել թե՛ բանավոր և թե՛ գրավոր տեսքով: Բանավոր հարցման պատասխանը պետք է տրամադրվի անմիջապես կամ հնարավոր ամենակարճ ժամկետում: Իրավոր հարցման պատասխանը սովորաբար ներկայացվում է 5 օրվա ընթացքում կամ 30 օրվա ընթացքում, եթե տվյալ տեղեկատվության որևէ կետ պահանջում է հավելյալ աշխատանք: Բանավոր, ինտերնետային կապով ստացված և գրավոր հարցումների պատասխանները (որոնք չեն գերազանցում 10 տպագիր էջը) անվճար են: Բոլոր այլ դեպքերում կարող է գանձվել գումար այն պայմանով, որ վերջինս չի գերազանցում տվյալ կազմակերպության կողմից կատարված ծախսերը: Տեղեկատվության ներկայացման մեթոդները հնարավոր է միայն բացառիկ դեպքերում, եթե այդ տեղեկատվությունը՝ համաձայն օրենքի 10-րդ հոդվածի.

- պարունակում է պետական, ծառայողական, բանկային, կոմերցիոն գաղտնիք,
- խախտում է անձնական և ընտանեկան գաղտնիության իրավունքը, ինչպես նաև թղթակցության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրային և այլ հաղորդակցման միջոցների գաղտնիությունը,
- պարունակում է նաքննչական տվյալներ, որոնք չպետք է դառնան հանրային,
- բացահայտում է տեղեկատվություն, որը բացահայտման ենթակա չէ՝ կապված մասնագիտական բնույթ ունեցող գործունեության հետ (բժիշկների, նոտարների, դատապաշտպանների և այլն),
- խախտում է հեղինակային և/կամ նման իրավունքներ:

Ավելին, և՛ Քաղաքացիական կարգավիճակի ակտերի մասին օրենքը, և՛ Հանրային ծառայությունների մասին օրենքը, որոնք երկուսն էլ ընդունվել են 2005 թ., ներառում են հանրային կառավարման համակարգի թափանցիկությանն առնչվող օրենքներ:

85. Հաշվի առնելով հասարակական խրոհրդատվությունը, Իրավական ակտերի մասին օրենքը (27.1-րդ հոդված) նշում է, որ յուրաքանչյուր պետական կամ տեղական ինքնակառավարման մար-

մին, կամ պետական կամ համայնքային մարմին, որ նախագծում է իրավական ակտ, կարող է հրավիրել ներկայացուցիչներ ուսումնական/գիտական կազմակերպություններից, բաժնետիրական մարմիններից և կազմակերպություններից՝ մասնակցելու նախագծման գործընթացին: Օրենքների և որոշումների նախագծերը, որոնք ներկայացված են Ազգային ժողովի քննարկմանը, կարող են հրապարակվել մամուլում կամ այլ ՁԼՄ-ների միջոցով, ինչպես նաև կարող են դառնալ հասարակական քննարկման առարկա (29.1-րդ հոդված): Տեղական և տարածքային մակարդակներում քննարկումները նախորդում են տարածքային կամ տեղական կարևորության խնդիրների որոշումների ընդունմանը: Ի լրումն դրա, օրենսդրությունը նաև քննարկում է տեղական մակարդակով հանրաքվեների անցկացման հնարավորությունը: Սովորաբար հանրային իշխանության որոշումների ընդունման գործընթացը հասարակայնորեն է տեղի ունենում, և յուրաքանչյուր անձ, որը մտահոգված է տվյալ հարցով, կարող է ներկայացնել իր կարծիքը գրավոր կամ բանավոր տեսքով: Ընդհանուր առմամբ, կոլեգիալ մարմինների բոլոր նստաշրջանները բաց են հասարակության համար, մի քանի բացառությամբ:

86. Իրավական ակտերի վերաբերյալ հասարակության իրազեկությունը կարգավորվում է Պետական և իրավական ակտերի և գրանցումների կարգերի տեղեկացման ընդունման վերաբերյալ Կառավարության թիվ 1146 որոշմամբ: Համաձայն որոշմանը՝ հասարակությունը տեղեկացվում է իրավական ակտերից՝ պաշտոնական հայտարարությունների, կոնֆերանսների և տեղեկատվական մարմինների հանդիպումների, հարցազրույցների, հոդվածների հրապարակման և մամուլում այլ տեսակի տեղեկատվության, ինչպես նաև հեռուստառադիոհեռարձակումների միջոցով: Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, Կառավարության որոշումները, ինչպես նաև Նախագահի և վարչապետի հրամանները և հրամանագրերը հանրությանն են ներկայացվում պաշտոնական տեղեկագրի միջոցով՝ 10 օրվա ընթացքում համաձայն իրավական ակտերի մասին օրենքի 62-րդ հոդվածի:

87. Համաձայն Հայաստանի իշխանության՝ 2003 թ. կատարվել է ժամանակակից ինտերնետային հետազոտման տվյալների (պետական/կառավարական, պետական խորհուրդներ և հանձնաժողովներ, տեղական կառավարություններ և մունիցիպալ մարմիններ, օրենսդիր և գործադիր մարմիններ) վերլուծություն, որը ցույց է տվել, որ աղբյուրների 94%-ը տրամադրում են լիակատար հաղորդակցում, 90%-ը ներառում են online տվյալներ, 30%-ը ներկայացնում են «հարց-պատասխան» միջոցներ, 26%-ը՝ online ծառայություններ:

Տարածաշրջանային վեբ. կայքերը տեղադրվել են 10 մարզերից 6-ում և ներկայացնում են հասարակական կազմակերպությունների գործունեության մասին հիմնարար տեղեկատվություն: Դատական մարմինը հիմնել է հատուկ կապ, որը հնարավորություն է տալիս տեղեկանալու, թե ինչպես դիմել դատարանին և ապահովում է տեղեկատվություն ամեն տարածաշրջանի դատավորի մասին:

Հանրային կառավարման վերահսկում

88. Հանրային կառավարման որոշումները կարող են ներկայացվել վարչական կամ դատական կարգի միջոցով: Համաձայն քաղաքացու առաջարկությունների վերանայման մասին օրենքի 8-րդ հոդվածի՝ «այն քաղաքացին կամ իրավաբանական անձը, որը համաձայն չէ ի պատասխան իր առաջարկության, դիմումների և բողոքների ընդունված որոշմանը, իրավունք ունի դրանց դեմ բողոքարկելու վերադաս մարմին, որը վերանայում է դիմումը 15 օրվա ընթացքում»³⁷: Ավելին, յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ իրավունք ունի բողոքարկել դատարան, եթե հանդգնված է, որ իր իրավունքները և ազատությունները ոտնահարվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների անօրինական գործունեության արդյունքում (11-րդ հոդված): Դատարանի բողոքարկումների կարգը վերահսկվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն: 2005 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Կառավարման և վարչական կարգի հիմնական սկզբունքների մասին օրենքը: Այն ապահովում է վարչական ակտերի բողոքարկում այն վարչական մարմին, որն ընդունել է այդ ակտը կամ վերադաս մարմին՝ ակտի ընդունումից հետո 6 ամիս ժամկետում:

89. Հանրային կառավարման վերահսկումն իրականացնում է նաև Մարդու իրավունքների պաշտպանը (Օնբրոդսմեն)՝ համաձայն Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի, ընդունված 2003 թ. հոկտեմբերի 21-ին: Պաշտպանի կողմից կատարած հարցումները հիմնված են անձանց բողոքների վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ, ինչն ապահովվում է Սահմանադրության, օրենքների և այն միջազգային պայմանագրերի կողմից, որի անդամն է հանդիսանում Հայաստանը: Իր պարտականությունները կատարելիս պաշտպանը լիազորված է ունենալ անսահմանափակ մուտք ցանկացած պետական ինստիտուտ կամ կազմակերպություն, պահանջել և ստանալ

³⁷ Տեղում կատարված այցելությունից հետո Հայաստանի իշխանությունները տեղեկացրին Հ-ին, որ դիմումների և բողոքարկումների հետ կապված այս դրույթն այլևս ուժի մեջ չէ:

տեղեկատվություն և թղթաբանություն՝ հետազոտվող բողոքի վերաբերյալ, ցանկացած պետությունից և տեղական ինքնակառավարման մարմիններից կամ նրա պաշտոնյաներից: Հիմք ընդունելով հետազոտվող բողոքի տեղեկատվությունը՝ պաշտպանը կարող է առաջարկել իրավասու պետական մարմիններին կիրառել կարգապահական կամ վարչական պատիժ, կամ կարող է դատական գործ հարուցել այն պաշտոնյայի դեմ, ում կայացրած որոշումը և գործունեությունը ոտնահարել են մարդու իրավունքները և հիմնական ազատությունները: Նա նաև կարող է առաջարկել պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ պաշտոնյաներին, ում որոշումը կամ գործունեությունը որակավորվել է որպես մարդու իրավունքների և ազատությունների խախտում, փոխհատուցել կատարած խախտումները: Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության վերաբերյալ առաջին տարեկան զեկույցը լույս է տեսել 2005 թ. առաջին եռամսյակում: 2004 թ. մարտից մինչև դեկտեմբեր պաշտպանը ստացել է ավելի քան 1200 գրավոր բողոք: Պաշտպանի աշխատակազմը գտնվում է անմիջական հաղորդակցման մեջ ավելի քան 1300 քաղաքացիների հետ և պատասխանել է ավելի քան 2300 հեռախոսազանգի: Բողոքների մեծ մասը վերաբերել են քաղաքացիական իրավունքին. ունեցվածքի կառավարմանը (250) քրեական օրենքին (218) և հասարակական անվտանգությանը (189): 471 հետազոտված դեպքերին ի պատասխան պաշտպանը կատարել է 93 առաջարկություն և վերջնական լուծված դեպքերի թիվը կազմել է 85:

90. **Այլ կարգի ստուգումներ** են իրականացվում պետական իշխանությունների նկատմամբ: Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ֆինանսական վերահսկողության բաժինը, ինչպես նաև հանրային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներքին աուդիտի համակարգերը պատասխանատու են պետական կապիտալի կառավարումը վերահսկելու համար: Պատշաճ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ առնչվելով Միջազգային թափանցիկության Հայաստանի գրասենյակ կազմակերպությունը իր սեփական ծրագրերի ներդրմամբ նպաստում է հատկապես հանրային կառավարման քաղաքականության զարգացմանը:
91. **Վերահսկիչ պալատը** Սահմանադրության կողմից ճանաչված միակ մարմինն է, որը լիազորված է վերահսկելու «բյուջեի ռեսուրսների, ինչպես նաև պետական և հանրային սեփականության ճիշտ օգտագործումը»: Պալատը աուդիտների և օրենքի կողմից տրամադրվող այլ միջոցների, հատկապես հանրային

կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական հաշվետվությունների և այլ թղթավարության պահանջի, վերանայելու և վերլուծելու միջոցով, ֆինանսական և տնտեսական թղթավարության տեղում կատարված վերլուծության, հարկ եղած դեպքերում դրանց պատասխանելու միջոցով իրականացնում է վերահսկողություն: Այս վերահսկողական աշխատանքները հանգում են բացահայտված խախտումների և անօրինակամեթոդների մասին հաշվետվության, ինչպես նաև փոխհատուցման առաջարկների: Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հավանության արժանանալուց՝ հետո հաշվետվության մեկական օրինակ է ուղարկվում Ազգային ժողով, Կառավարություն և աուդիտի այլ հաստատություններ: Աուդիտի ենթարկված հաստատության հաշվետվության օրինակին կցվում է խնդրանք մեկ ամսվա ընթացքում տրամադրել տեղեկատվություն հայտնաբերված խախտումների և անօրինակամեթոդների վերացման մասին, պետությանը հասցված վնասը փոխհատուցելու, օրինախախտման համար մեղավոր պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու համար ձեռք առնված միջոցառումների մասին: Անհրաժեշտության դեպքում խախտումների մասին փաստերը հանձնվում են լախավոր դատախազություն՝ համաձայն օրենքով սահմանված կարգի:

92. Վերահսկիչ պալատի գործողությունների թափանցիկությունը ձեռք է բերվում, երբ տարեկան գործողությունների ծրագիրը և տարեկան զեկույցն արժանանում են պառլամենտի հավանությանը: Վերահսկիչ պալատի և մամուլի միջև հարաբերությունները կարգավորվում են Մամուլի և այլ լրատվամիջոց հանդիսացող կազմակերպությունների մասին օրենքի միջոցով, որը ապահովում է Վերահսկիչ պալատի գործողությունների հասարակական բնույթը:
93. **Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության բաժինը** զբաղվում է. ա) տեսչական ստուգումների միջոցով պետբյուջեի հատկացված գումարների, ինչպես նաև օտար երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամական փոխառությունների արդյունավետ և նպատակաուղղված գործածության բացահայտմամբ, բ) արտաբյուջետային դրամական միջոցների ապահովումով և գործածությամբ, գ) համապատասխան օրենսդրության պահանջների ճշգրիտ և օրինական պահպանությամբ:

Համալրում, առաջխաղացում և կանխարգելիչ միջոցներ

94. լիավոր և բարձրգույն քաղաքացիական ծառայության պաշտոն-

ների համար սահմանված մրցույթները անցկացվում են Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից, մինչդեռ համապատասխան պետական մարմինների կողմից անցկացված ընտրությունները ծառայում են ավելի ցածր և կրտսեր աշխատողների պաշտոնների նշանակման համար: 2002 թ. հոկտեմբերից մինչև 2004 թվի հոկտեմբեր ամիսը 1 534 մրցույթ է անցկացվել: Նշանակումները կատարվում են իրավասություն ունեցող պաշտոնյաների կողմից՝ հիմնվելով մրցույթի արդյունքների վրա, բացառությամբ քաղաքական պաշտոնների և Ոստիկանության, Ազգային անվտանգության, Սաքսային, Հարկային, Ջինվորական ծառայության և ուղղիչ մարմինների բոլոր պաշտոնյաների, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարության աշխատակիցների: Այս մարմիններում նշանակումները իրականացվում են Կառավարության կողմից հաստատված հանձնաժողովների կողմից անցկացված մրցույթների հիման վրա:

95. Որևէ հանցագործության համար երբևէ դատապարտված անձանց արգելվում է նշանակել քաղաքացիական ծառայության պաշտոնի: Ընտրության և համալրման գործընթացի ընթացքում, ըստ օրենքի, թույլատրվում է ստուգել անհատների քրեական անցյալը: Հանրային պաշտոնյաների ընտրության և համալրման ընթացակարգը (համալրում, առաջխաղացում և համապատասխան օրենսդրություն) հրապարակվում է Քաղաքացիական ծառայության խորհրդի պաշտոնական վեբ կայքում /www.csc.am/: Կայքը նաև ընդգրկում է տեղեկատվություն խորհրդի (կառուցվածքը, գործունեությունը, և այլն), օրենսդրության, թափուր պաշտոնների/մրցույթների, վերապատրաստման, Պետական կառավարման ակադեմիայի, շաբաթաթերթի և այլնի մասին:

Վերապատրաստում

96. Որպես կանոն բոլոր քաղաքացիական ծառայողները առնվազն երեք կամ հինգ տարին մեկ անգամ պետք է մասնակցեն վերապատրաստման դասընթացների՝ համաձայն օրենքով նախատեսված կարգի: Օրինակ՝ Քաղաքացիական ծառայության օրենքը (22-րդ հոդված) պարտադիր վերապատրաստում թ սահմանում բոլոր քաղծառայողների համար, առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Քաղծառայողների համար հատուկ վերապատրաստման դասընթացների ապահովումը կարգավորվում է 2002 թ. հունվարի 20-ի Քաղծառայողների համար վերապատրաստում անցկացնելու կարգի Քաղաքացիական ծառայության խորհրդի 21-րդ որոշման շրջանակներում: Առաջին դասընթացը կազմակերպվում է Պետական կառավարման ակադեմիայի կող-

մից մշակված ծրագրերի հիման վրա: Հետագա ծառայության ընթացքում վերապատրաստման համար Քաղաքացիական ծառայության խորհուրդը վավերացնում է կրթական ինստիտուտների ցանկը ուսումնական ծրագրերի հետ միասին: Քաղծառայողների վերապատրաստման դասընթացն ընդգրկում է երեք բնագավառ՝ Սահմանադրություն, Քաղաքացիական ծառայություն և Կառավարման հմտություններ: Այն նաև ներառում է էթիկայի դասընթաց: Հավելյալ ուսուցում կարող է տրամադրվել շահագրգռված քաղծառայողի կամ նրա ղեկավարի նախաձեռնությամբ:

Շահերի բախում

97. Քաղծառայողների մասին օրենքը որոշակի հենք է տրամադրում քաղաքացիական ծառայության մեջ մասնագիտական գործառնությունների միջև շահերի բախումը և անհամատեղելիությունը կանխելու համար: Համաձայն Քաղաքացիական ծառայության մասին օրենքի 24-րդ հոդվածի՝ քաղծառայողն իրավասու չէ.

- կատարել վճարովի աշխատանք: Բացառություն են կազմում գիտական, կրթական և ստեղծագործական նպատակների համար կատարված աշխատանքները;
- զբաղվել ազատ ձեռներեցությամբ;
- լինել երրորդ անձի կարգավիճակում այն մարմնի առջև, որտեղ նա աշխատում է, կամ որը անմիջապես գտնվում է նրա ենթակայության տակ;
- որպես պետության ներկայացուցիչ իրականացնել սեփականության հետ կապված գործարքներ մոտ բարեկամների հետ և/կամ;
- աշխատել մոտ բարեկամների հետ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր; ամուսնու ծնողներ, երեխա, եղբայր, քույր) ուղղակի ենթակայության կամ վերահսկողության դեպքում;

Քաղծառայողի նշանակմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում այն քաղծառայողը, որն ունի առևտրային կազմակերպության օրենքով սահմանված կապիտալի բաժնետոմսերի 10 կամ ավելի տոկոս, պարտավոր է հանձնել իր բաժնետոմսերը վստահված վարչությանը՝ ըստ օրենքով սահմանված կարգի (քաղծառայողն ինչևէ իրավասու է ստանալ եկամուտ փոխանցված սեփականության դիմաց):

98. Հանրային ծառայողների մի ստվար զանգված պարտավորված է հայտարարագրել իրենց սեփականությունը և եկամուտը Հայաս-

տանի հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների ակտիվների և եկամտոտի մասին օրենքի համաձայն: Օրենքի 2-րդ հոդվածը թվարկում է այն անձանց, ովքեր պարտավոր են ներկայացնել տարեկան հայտարարագրեր³⁸:

Սեփականության և եկամտի հայտարարագրման կարգի խախտումը կարող է հանգեցնել վարչական տուգանքի (8-րդ հոդված): Համաձայն որոշ օրենքների, մասնավորապես, համաձայն Քաղաքացիական ծառայության մասին օրենքի (33-րդ հոդված), Ոստիկանության ծառայության մասին օրենքի (45-րդ հոդված), Մաքսային ծառայության մասին օրենքի, Հարկային ծառայության մասին օրենքի (26-րդ հոդված) և Ուղղիչ ծառայության մասին օրենքի (41-րդ հոդված)՝ հայտարարագիր չներկայացնելը կարող է դառնալ աշխատանքից հեռացվելու պատճառ: Ավելին, Սեփականության և եկամտի հայտարարագրելու մասին օրենքի 8-րդ հոդվածը տրամադրում է վարչական պատասխանատվության ենթարկելու միջոցներ, հատկապես տուգանք, կարգը ուսումնասիրելու դեպքերի համար:

99. Քաղծառայությունը լքած ծառայողների նկատմամբ մեկ տարվա ընթացքում կիրառվում է արգելք այն դեպքերում, երբ նրանք ընդունում են աշխատանքի առաջարկ այն աշխատատեղից կամ կազմակերպությունից, որի հանդեպ իր պաշտոնավարման վերջին տարվա ընթացքում նա որոշակի իշխանություն ուներ: Հարկային ծառայողների դեպքում այս սահմանափակումը հասնում է 3 տարի ժամանակահատվածի ըստ Հարկային ծառայության օրենքի (13-րդ հոդված):

Ռոտացիա/ Հերաթագայություն

100. Հանրային կառավարման մարմինների անձնակազմի ռեզուլ-

³⁸ Հայաստանի հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, վարչապետը, նախարարները, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական ծառայության բարձրաստիճան պաշտոնյաները: Կենտրոնական բանկի նախագահը, տեղակալները, խորհրդի անդամները, խորհրդի աշխատակազմի ղեկավարը և ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր գրասենյակի և տարածաշրջանային ստորաբաժանումների ղեկավարները: Սահմանադրական դատարանի նախագահը, անդամները և հիմնական անձնակազմը, դատավորները: Գլխավոր դատախազը, նրա տեղակալները, լիավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ ղեկավարները, լիավոր դատախազը: Գործադիր, Հարկային և Մաքսային մարմինների պաշտոնյաները, Ոստիկանության աշխատակիցները: Պաշտպանության, Ազգային անվտանգության, Արտաքին գործերի և Արտակարգ իրավիճակների պետական գործադիր մարմինների ստորաբաժանումների ղեկավարները: Հասարակական անվտանգության հիմնադրամի նախագահը, տեղակալները, կառուցվածքային և տարածաշրջանային ստորաբաժանումների ղեկավարները: Վերահսկիչ պալատի նախագահը: Մշտական հանձնաժողովների (ծառայությունների և խորհուրդների) նախագահները, տեղակալները և անդամները: Վերոհիշյալ պաշտոնյաների հետ առնչվող անձինք (ամուսինը, ծնողներ կամ չափափաս և միակ երեխաները, նրանց հետ բնակվող ընտանիքի և եղբայրներ):

յար, պարբերական ռոտացիայի սկզբունքը համարվում է կառավարությունը կանխելու միջոցներից մեկը: Ռոտացիան առնչվում է հարկային պաշտոնյաներին՝ համաձայն Հարկային ծառայության մասին օրենքի (7-րդ հոդված):

Նվերներ

101. ՄԾՕ-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ քաղծառայողներին արգելվում է ընդունել նվերներ, գումար կամ ծառայություն այլ անձանցից իրենց պարտականությունները կատարելու համար՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Հանրային կառավարման պաշտոնյաների կողմից նվերների կամ այլ շահի ընդունման առկայությունը կարգավորվում է 1993 թ. փետրվար ամսին Կառավարության կողմից ընդունված թիվ 48 Որոշմամբ՝ Ծառայության դիմաց ստացված նվերները պետությանը հանձնելու մասին: Որոշումը վերապահում է, որ հանրային պաշտոնյաների կողմից իրենց ծառայության կամ դիրքի շնորհիվ ձեռքբերված նվերները պետք է հանձնվեն պետությանը, եթե այդ նվերների արժեքը հինգ անգամ գերազանցում է աշխատողի ամսեկան աշխատավարձը³⁹: Նվերի արժեքը որոշվում է շուկայում դրա միջին արժեքից ելնելով: Վարչական խախտումների մասին օրենսգրքի համաձայն՝ այն քաղծառայողները, ովքեր կիրառված պետությանը հանձնել թանկարժեք նվերը օրենքով սահմանված կարգով, կենթարկվեն տույժի, որը հավասար է մեկ նվազագույն աշխատավարձին, իսկ նվերը բռնագրավվում է: Եթե նվերը չհայտնաբերվում, ապա սահմանվում է 4 տույժ նվազագույն աշխատավարձի չափով:

102. Համաձայն Ոստիկանությունում ծառայելու մասին օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի՝ այլ անձանց կողմից նվերների, փողի կամ այլ ծառայությունների ընդունման դեպքում անհատը հեռացվում է ոստիկանությունից: Այն դեպքերում, երբ նվերի արժեքը երեք անգամ գերազանցում է նվազագույն ամսեկան աշխատավարձը, ոստիկանը ոչ միայն կորցնում է աշխատանքը, այլև ենթարկվում է քրեական պատասխանատվության՝ համաձայն Քրեական օրենսգրքի համապատասխան կետերի, որոնք պահանջում են նվազագույն ամսեկան աշխատավարձի 300-ից 500-ապատիկ տույժ⁴⁰, կամ առավելագույնը 5 տարվա ազատազր-

³⁹ Հայաստանի հանրապետության իշխանությունների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ամսեկան միջին աշխատավարձը 85 եվրո է:
⁴⁰ Հայաստանի հանրապետության իշխանությունները հայտնել են, որ մինիմալ ամսեկան աշխատավարձը այս տուժերի համար սահմանվում է 1000դր (մոտավորապես 2 եվրո):

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

կում, ինչպես նաև նվազագույնը 3 տարվա արգելք աշխատելու կամ ներգրավվելու որևէ հատուկ գործունեության մեջ:

Էթիկայի կանոններ

- 103. Քաղժառանգողների համար ոչ մի հատուկ էթիկայի կանոն չի մշակվել: Տեղում կատարած այցի ժամանակ այսպիսի օրենքի նախագծումը դիտարկվում էր հարցին առնչվող գործող օրենքների գնահատման տեսակետից: Քաղժառանգողների խորհրդի 2002 թ. մայիսի 31 ընդունված հրամանագրի համաձայն՝ քաղժառանգողների համար էթիկայի կանոններին համապատասխան քաղժառանգող պետք է լինի արդար, անկողմնակալ, շրջահայաց, օրինակելի և համեստ: Դրանք նաև ներառում և քաջալերում են այնպիսի հիմնական արժեքներ ինչպիսիք են բարությունը, աշխատասիրությունը և հակահովանավորչությունը: Ըստ ՔԾՕ-ի 23-րդ հոդվածի՝ բոլոր քաղժառանգողները պարտավոր են հարգել էթիկայի կանոնները: Օրենքը չի հստակեցնում այն դեպքերը, երբ քաղժառանգող կարող է պատժվել օրենքը ոտնահարելու համար: Պատժի վավերացումը գործում է համաձայն ՔԾՕ-ի 32-րդ հոդվածի:
- 104. ոլորություն ունեն հարկային պաշտոնյաների վարքին և կարգապահությանը վերաբերող օրենքներ, որոնք հիմնված են հարկային պաշտոնյայի վարքը և հարաբերությունները կարգավորող համաշխարհային սկզբունքների վրա: Այս օրենքները համապատասխանում են հարկերի վերահսկման կարգերին և Հարկային ծառայության մասին օրենքին: Հարկային ծառայության մասին օրենքը վերահսկում է, որ հարկային պաշտոնյանի կողմից օրենքների ոտնահարման դեպքում իրականացվեն կարգապահական պատժամիջոցներ՝ ընդհուպ մինչև պաշտոնանկություն:
- 105. Ավելին, Ոստիկանության պաշտոնյաների համար ՀՀ ոստիկանության պետի կողմից 2001 թ. դեկտեմբերին հրապարակվել են էթիկայի առանձին կանոններ, որոնք սկսած 2005 թ. ապրիլ ամսից վերահսկվում են Ոստիկանության կարգապահության օրենսգրքի կողմից: Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի իրագործումը նախատեսում է օրինապահ մարմինների համար 2004-2005 թթ. վարքի կանոնների օրենքի նախագծում:
- 106. Էթիկայի կանոնների օրենսգրքի խախտումների և դրանց համար պատժամիջոցների տրամադրման մասին տեղեկատվություն հավաքագրելու համար լիազորված հատուկ մարմին գո-

յություն չունի: Հ-ն տեղեկացվել է, որ խախտումների մասին տեղեկատվությունը հավաքագրվում է առանձին ղեկավարների կողմից, որոնք պատասխանատու են էթիկայի կանոնների վերահսկման համար:

Կոռուպցիայի դեպքերի արձանագրություն

- 107. Ներկայիս օրենսդրությունը չի պարունակում որևէ կետ, որը պահանջում է արձանագրել հանրային պաշտոնյայի մոտ նկատված վատ վարքագծի /կասկածվող կոռուպցիայի/ պարտականությունների և/կամ օրենսգրքի, էթիկայի նորմերի խախտման մասին կասկածները: ՔԾՕ-ն անդրադառնում է այն դեպքերին, երբ քաղժառանգողները տրվում է հանձնարարություն, որը չի համապատասխանում Սահմանադրությանը կամ օրենքներին, կամ որը տվյալ անձնավորության իրավասությունից դուրս է (25-րդ հոդված): Ինչևէ, բոլոր հանրային ծառայողներն ունեն քաղաքացիական պարտավորություն հայտնել մի շարք ծանր և խիստ ծանր հանցագործությունների մասին՝ ներառելով կաշառակերությունը, համաձայն ՔՕ-ի 334 և 335-րդ հոդվածների: Այն հանրային ծառայողներին, ովքեր հայտնում են հանրային կառավարման օղակներում կաշառակերության դեպքերի մասին, ոչ մի հատուկ պաշտպանություն չի տրամադրվում:

Կարգապահական գործողություններ

- 108. Յուրաքանչյուր գործակալությունում ներքին հետաքննությունն իրականացվում է օրինական պահանջների արձանագրված անօրինական ոտնահարման հիմքերի վրա: Հիմնվելով ներքին հետաքննության արդյունքների վրա՝ կարգապահության հարցերով զբաղվող կոմիտեն դիմում է տվյալ մարմնի ղեկավարին հարկ եղած դեպքում սահմանելու կարգապահական պատիժ: ՔԾՕ-ն (32-րդ հոդված) քաղժառանգողների համար հետևյալ պատիժներն է սահմանում՝ նախնական զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, աշխատավարձի կրճատում, Քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ՝ պաշտոնանկություն: Քաղժառանգողները լիազորված են բողոքարկել այսպիսի պատիժները՝ ընդհուպ մինչև դատարան:
- 109. Քաղաքացիական ծառայության խորհուրդը մշտապես գործող անկախ հանձնաժողով է, որը լիազորված է իրականացնել ծառայողական հետաքննությունը հետևյալ դեպքերում.
 - 1. երբ քաղժառանգողը ներկայացնում է պատշաճ գրավոր դիմում՝

Ոչ պաշտոնական բաղձնամուտություն

Ոչ պաշտոնական բաղձնամուտություն

ծնակերպելով իր անհամաձայնությունը իրեն վերագրվող պատժամիջոցի նկատմամբ և խնդրանքով վերանայել այս պատժամիջոցը;

2. Երբ այնպիսի պատժամիջոցները, ինչպիսիք են «խիստ նկատողությունը» և/կամ «աշխատավարձի կրճատում» 1 տարվա ընթացքում շարունակաբար կիրառվում են քաղժառայողի հանդեպ;
3. Կարգապահական պատժամիջոցներ իրականացնող պաշտոնյան խորհրդին ներկայացնում է դիմում՝ հաստատել պաշտոնաթողության կարգապահական միջոցը (37-րդ հոդված):

Ծառայողական հետաքննությունից հետո Քաղաքացիական ծառայության խորհուրդն ընդունում է որոշում, որը պարտադիր է քաղժառայողի և նրա հետ առնչվող վարչական մարմինների համար: Նմանատիպ ծառայողական հետաքննություններ են անցկացվում հարկային ծառայողների համար հարկային Ծառայության օրենքի սահմաններում, Մաքսային աշխատակազմի համար Մաքսային օրենքի սահմաններում և ոստիկանության աշխատակիցների համար Ոստիկանության ծառայության սահմաններում:

110. Այն դեպքերում, երբ հետաքննությունը բացահայտում է, որ հանրային ծառայողի կողմից կատարված քայլը խախտում է ընդունված կարգը և ի հայտ է բերում լուրջ իրավախախտում, հետաքննությանը զբաղվող պաշտոնյան պետք է հավաքված փաստերը ներկայացնի դատախազություն հետագա քրեական հետաքննության համար՝ համաձայն քրեական դատավարության օրենսգրքի դրույթների:

բ. Վերլուծություն

111. Ըստ 3-ի, 2001թ. ընդունված Քաղաքացիական ծառայության մասին օրենքը ժամանակակից օրենք է, որը պարունակում է քաղժառայության, դրա կազմակերպման և կառուցվածքի, գործառնության, ինչպես նաև քաղժառայողների իրավական կարգավիճակի կարգավորման հիմնական դրույթները: Այս սահմանափակումները (օրինակ՝ այլ վճարովի աշխատանք չկատարել և այլն; տես՝ 98-րդ կետը) կիրառելի են բոլոր քաղժառայողների նկատմամբ՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից: Ներկայումս գոյություն չունի որևէ ընդհանուր մեխանիզմ այս սահմանափակումները կանոնավարգելու կամ դրանց հավանություն տալու համար, երբ դիտարկվում են պաշտոնները կաշառակերության համար առավել հարմար նախապայմաններ ունենալու

տեսանկյունից, ինչպես նաև չկա շահերի բախման համընդհանուր ստանդարտ, որը կիրառելի է քաղժառայողների գործողությունների համար նրանց արտաքին շահերի և գործողությունների վերաբերյալ: Ի հավելումն վերը նշվածի՝ Քաղաքացիական ծառայության մասին օրենքը չի կարող գործածվել մեծ թվով անհատների նկատմամբ⁴¹, ովքեր զբաղեցնում են կարևոր պաշտոններ պետական կառավարման համակարգում: ործավարության նոր համակարգը կարող է տրամադրել արդար, բայց նպատակաուղղված ճկունություն այս սահմանափակումների կիրառության մեջ, ինչպես նաև տրամադրել կոնֆլիկտի չափանիշ, որը ունի պաշտոնական որոշումների ուղղվածություն: Հետագայում օգտակար կլինի ներկայացնել (և ծավալել) ռոտացիայի սկզբունքը այնպիսի բնագավառներում, որոնք ունեն հակվածություն դեպի կաշառակերություն: Ուստի, 3-ն խորհուրդ է տալիս տրամադրել ուղեցույցեր բոլոր հանրային ծառայողներին այն դեպքերի համար, երբ նրանք կբախվեն այնպիսի իրադրության հետ, երբ անձնական/ֆինանսական շահերը կամ գործողությունները կարող են առաջ բերել կոնֆլիկտային և կողմնապահության խնդիրներ՝ կապված հանրային ծառայողների պարտականությունների և պատասխանատվության իրականացման հետ: Այն նաև առաջարկում է ավելի մեծացնել ռոտացիայի սկզբունքի գործածության շրջանակները հանրային կառավարման այնպիսի բնագավառների համար, որոնք առավել ենթակա են կաշառակերության վտանգին:

112. Հայաստանի հանրապետության մի շարք պետական պաշտոնյաներից պահանջվում է ներկայացնել սեփականության և եկամտի մասին հայտարարագիր: Այս պահանջը հիմնված է Հայաստանի Հանրապետությունում բարձրաստիճան պաշտոնյաների ակտիվների և եկամտի հայտարարագրման մասին օրենքի վրա: Հանրային կառավարման շրջանակներում այս պարտականությունը, որը սահմանված է Քաղաքացիական ծառայության մասին օրենքի 23-րդ հոդվածում, քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականություններից մեկն է: Այցի ժամանակ քաղժառայողների մոտավորապես 35%-ը պարտավորված էր ներկայացնել սեփականության և եկամտի մասին հայտարարագիր: Ինչևէ 3-ն տեղեկացվեց, որ հետագա երկու տարիների ընթացքում սպասվում է, որ սեփականության և եկամտի մասին հայտարարագիր կպահանջվի ներկայացնել բոլոր քաղժառայողներից: Հայտարարագրի պահանջները չբավարարելու դեպ

⁴¹ Տես տուգանքին առնչվող 81-րդ կետը:

քում սահմանված են պատժամիջոցներ: Դ-ն տեղեկացվեց, որ հայտարարագիր չլրացնելը բավարար պատճառ է քաղձառայողին աշխատանքից հեռացնելու համար: Նաև տեղեկացվեց, որ ներկայացված տեղեկատվության ճշմարտացիությունը վերահսկվում է ոչ թե Քաղաքացիական ծառայության խորհրդի կամ հանրային կառավարման այլ մարմինների կողմից, այլ Հարկային ծառայության համապատասխան աշխատակիցների կողմից: Այնուամենայնիվ հարկային տեսչության աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում Դ-ն տեղեկացվեց, որ հարկային մարմիններն ի վիճակի չեն վերստուգել սեփականության մասին հայտարարագրերը և որ հատկապես գոյություն չունեն համապատասխան մեթոդներ դա իրականացնելու համար: Այս իրավիճակում և, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը փորձում է սահմանել այս պահանջները հնարավորինս բոլոր քաղձառայողների համար, Դ-ն այն կարծիքն է արտահայտում, որ ներկայիս համակարգը չի բավարարում ակնկալվող պահանջներին և կարող է արժեզրկել շահերի բախումը կարգավորելու փորձերը: Հետևաբար, Դ-ն առաջարկում է ներմուծել սեփականության և եկամտի հայտարարագիրը վավերացնելու արդյունավետ համակարգ՝ նկատի ունենալով այն պաշտոնյաներին, ուն աշխատանքային պարտականությունների վրա կարող է անդրադառնալ շահերի բախումը:

113. Ինչպես մատնանշվել է սույն զեկույցի նկարագրական մասում, նվերներին առնչվող հիմնական օրենքն ընդգրկված է Քաղաքացիական ծառայության մասին օրենքի 24-րդ հոդվածում, որն ասում է, թե քաղաքացիական ծառայողներն իրավունք չունեն «ստանալ նվերներ, որոշակի գումարներ կամ ծառայություններ իրենց ծառայողական պարտականությունների դիմաց՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի»⁴²: Հիմնական

բացատրությունը սահմանված է «1993թ-ի փետրվարի 17-ի Պետությանը մատուցած ծառայությունների համար ստացած նվերների հանձնման մասին կառավարության թիվ 48 որոշման մեջ», որն ասում է, թե ծառայության կամ պաշտոնի հիման վրա պետական պաշտոնյաների ստացած նվերները պետք է հանձնվեն պետությանը, եթե նման նվերների արժեքը գերազանցում է պաշտոնյայի ամսական աշխատավարձի հնգապատիկ գումարին: Ուստի Դ-ն համարում է, որ այս նվազագույն արժեքը չա-

փազանց բարձր է, և խորհուրդ է տալիս իջեցնել ցանկացած նվերի գինը, որը քաղաքացիական ծառայողները, աշխատողները կամ այլ պաշտոնյաներ կարող են ընդունել, մինչև այնպիսի մակարդակի, որն առիթ չի տա մտահոգվելու կաշառակերության կամ անհատի առավելության այդ ձևերի մասին, և որպեսզի ներմուծվի պարտադիր պահանջ զեկուցել ցանկացած արժեք ունեցող նվերների մասին:

114. Քաղաքացիական ծառայողի պարտականությունը՝ հետևել Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հավանության արժանացած էթիկայի կանոններին, ուղղակիորեն հիմնվում է Քաղաքացիական ծառայության օրենքի վրա: Այս կանոնների կոնկրետ բովանդակությունը, ներառյալ գործնականում եղած վերահսկողությունը, բավականին բարենպաստ է: Դ-ին տեղեկացրել են այն ուշադրության մասին, որ տրվում է թե՛ էթիկայի կանոնների զննհատման, և թե՛ գործնական կիրառման վրա, որ գոյություն ունի հանրային կառավարման ներսում: Դ-ն համարում է, որ այս հարցը կարևոր է բոլոր քաղաքացիների տեսանկյունից, որպեսզի ապահովվեն այնպիսի իրավիճակների թափանցիկ լուծումներ, որոնք ընկնում են «մոխրագույն գոտու շրջանակներում» (այսինքն՝ վարքագիծ, որը ոչ թե սահմանները դուրս է, այլ ընդհանրապես, անցանկալի է): Դ-ն ողջունում է Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագիծը՝ ապագայում պատրաստել էթիկայի/վարքագծի օրենսգիրք հանրային կառավարման համար, որը հիմնված կլինի Քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների վրա, որն ընդունվել է 2002 թվականին և գործնականում ձեռք բերված փորձի վրա: Դ-ն համարում է, որ հանրային կառավարման շահերից է բխում մոտ ապագայում այս կանոնների բարելավումը, որպեսզի լավագույնս օգտագործվի միջազգային փորձը և վաղուց հաստատված չափանիշները և ապահովվի հասարակության իրազեկության բարձրանացնելու նակարդակը՝ կապված այս հարցերի հետ: Հետևաբար, Դ-ն խորհուրդ է տալիս մեծ առաջնայություն տալ հանրային կառավարման համար էթիկայի կոդեքսի նախատեսված պատրաստմանը և երաշխավորել, որ բոլոր պետական պաշտոնյաները ստանան համապատասխան ուսուցում, իսկ կողմնակիցները մատչելի լինի հասարակությանը:

115. Պետական պաշտոնյաները (ինչպես նաև Հայաստանի բոլոր քաղաքացիները) պարտավոր են տեղյակ պահել «ժանր և խիստ ծանր հանցագործությունների մասին» (Քրեական օրենսգրքի 334-335-րդ հոդվածներ): Այնուամենայնիվ, այս ընդ-

⁴² Սա տեղում այց կատարելու ընթացքում հաստատվել է այն քաղաքացիական ծառայության հաստատությունների ներկայացուցիչների կողմից, ուն հետ հանդիպել է Դ-ն, ովքեր ասել են, թե «նվերների ընդունումը խստորեն արգելվում է օրենքով, և գոյություն ունեցող բացառությունները նույնպես խիստ կանոնակարգված են»:

հանուր պարտականությունը չի լուծում տեղեկության խնդիրը՝ հատկապես կապված հանրային կառավարման շրջանակներում կոռուպցիայի կամ որևէ անթույլատրելի վարքագծի հետ. պետական պաշտոնյաները պարտավոր չեն տեղյակ պահել հակաիրավական վարքագծի (ինչպես, օրինակ, կասկածվող կոռուպցիայի), պարտականությունների խախտման կամ էթիկայի կանոնների խախտման մասին, որ ի հայտ են եկել նրանց պարտականությունները կատարելիս: Այս կարևոր հարցը չի ընդգրկված Քաղաքացիական ծառայության մասին օրենքում, ինչը գործ ունի միայն այնպիսի իրավիճակների հետ, որոնք առաջանում են այնպիսի հանձնարարության հետևանքով, որը հակասում է օրենքին կամ Սահմանադրությանը, կամ գերազանցում է այն տվողի կամ հանձնարարությունը ստացողի լիազորությունները՝ որպես քաղաքացիական ծառայող (25-րդ հոդված): Հետևաբար այս պարտականության շրջանակը չափազանց սահմանափակ է: Թափանցելիությունը հանրային կառավարման մեջ պահանջում է պետական պաշտոնյաների ավելի լայն պարտավորություններ ու պարտականություններ՝ մասնավորապես կապված այլ տեսակի անթույլատրելի վարքագծի մասին տեղյակ պահելու հետ, որը կատարվել է բազմաթիվ իրավիճակներում, հատկապես «Ժամը ու հատկապես ծանր հանցագործությունների» դեպքերում: Հետևաբար, Հ-ն խորհուրդ է տալիս սահմանել հստակ կանոններ/ուղեցույցներ և պետական պաշտոնյաների ուսուցում, որպեսզի տեղեկացնեն կոռուպցիայի կամ դրանից բխող կասկածելի դեպքերի մասին, որոնց նրանք հանդիպում են իրենց պարտականությունները կատարելիս և, որպեսզի հիմնվի այն պետական պաշտոնյաների պատշաճ պաշտպանությունը, ովքեր բարեխղճորեն տեղյակ են պահում կոռուպցիայի դեպքերի մասին:

116. Հ-ն տեղյակ է, որ օրենսդրության շատ հատվածներ, որոնք գործ ունեն հանրային կառավարման հետ, ներմուծվել են Հայաստանում վերջին տարիների ընթացքում: Հետևաբար այն գիտակցում էր, որ նոր օրենսդրության գործնական փորձը դեռևս սահմանափակ է: Հ-ն, հետևաբար, կարևորում է այն ամբողջ տեղեկության հավաքումը և ուսումնասիրումը, որը կապված է այս համակարգի ներսում գործառույթների իրականացման հետ: Հ-ն այն կարծիքին է, որ անհրաժեշտ է հավաքել և ուսումնասիրել (կենտրոնական մակարդակում) հանրային կառավարման գործառնությանը վերաբերող բոլոր ներկայացված բողոքները, կարգապահական զանցանքները, էթիկայի կանոնների խախտման մասին զեկույցները և այլն, որպեսզի գնահատվի նոր օրենսդրության կիրառման գործընթացը: Մի-

այն ընդգրկում տվյալները հնարավորություն կտան իրականացնել ողջ համակարգի արդյունավետ վերլուծությունը ավելի օբյեկտիվ և բժախնդիր ձևով՝ ի հայտ բերելով թերությունները, ճանաչելով պրոբլեմները և սահմանելով, թե հանրային կառավարման մակարդակում և կոնկրետ որ բնագավառում դրանք գոյություն ունեն: Հետևաբար, Հ-ն խորհուրդ է տալիս կանոնավորապես հավաքել և գնահատել կենտրոնական մակարդակում, հանրային կառավարման շրջանակներում էթիկայի կանոնների խախտման մասին բողոքներին վերաբերող տեղեկությունը, ինչպես նաև կարգապահական տույժերի մասին տեղեկությունը, որպեսզի սահմանվեն հանրային կառավարման ոլորտներում եղած կոնկրետ թերությունները և, հիմնվելով այս գնահատման վրա, միջոցներ ձեռնարկվեն անելու համար անհրաժեշտ փոփոխություններ բարելավման նպատակով:

VI. Իրավաբանական անձինք և կոռուպցիա
ա. Իրավիճակի նկարագրություն

117. Քաղաքացիական օրենսդրության 50-րդ հոդվածը տալիս է իրավաբանական անձի հետևյալ սահմանումը. «Իրավաբանական անձը իր առանձին գույք ունեցող կազմակերպությունն է, որը պատասխանատու է այդ գույքի համար, և որը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և ոչ-գույքային իրավունքներ, կատարել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող»: Իրավաբանական անձ կարող են հանդիսանալ թե՛ շահույթ ստացող (այսինքն՝ առևտրային կազմակերպությունները), և թե՛ շահույթ չհետապնդող և իրենց անդամների միջև օգուտը չբաժանող կազմակերպությունները (այսինքն՝ ոչ-առևտրային կազմակերպությունները) (Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդված):

118. Քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածին համապատասխան՝ առևտրային կազմակերպություններ են այն գործարար ձեռնարկություններն ու ընկերությունները են, որոնց կանոնադրային (կամ ներդրումային) կապիտալը բաժանվում է հիմնադիրների (կամ մասնակիցների) բաժնեմասերի: Անենակարևոր ձեռնարկատիրությունների և ընկերությունների տեսակների սահմանումները հետևյալն են.

-
- Լիակատար ընկերություն. ընկերություն, որտեղ մասկիցներ (լիակատար ընկերներ), կանոնադրուէյանը համապատասխան ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրա-

Ոչ պաշտոնական բաղձնարարություն

Գրախոսություններ

կան գործունեությամբ և իրենց պատկանող գույքով պատասխանատվություն են կրում նրա պարտականությունների համար (Քաղաքացիական օրենսգրքի 77-րդ հոդված):

- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն. մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերություն է, որի կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով մասնաբաժինների, որի մասնակիցները (սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերներ) պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը; և
- Կոոպերատիվներ. քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայլավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարմաբ նպատակով ստեղծված կամավոր միավորում է (Քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդված):

Հիմնադրում

119. Իրավաբանական անձ հիմնադրելու համար պահանջները կապված են իրավաբանական միավորի ձևից: Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի համաձայն՝ բաժնետիրական ընկերության օրենսդրական կապիտալը պետք է լինի առնվազն 1.000.000 դրամ (մոտ 1.500 եվրո) բաց բաժնետիրական ձեռնարկության համար և 100.000 դրամ փակի համար: Որպես կանոն, բաժնետերերի թիվը չի կարող գերազանցել 49-ը: Սահմանափակ պատասխանատվությամբ ձեռնարկությունների կանոնադրական կապիտալը դրա գրանցման պահին չի կարող պակաս լինել, քան 50.000 դրամը (Սահմանափակ պատասխանատվությամբ ձեռնարկությունների մասին օրենքի 28-րդ հոդված):

120. Կիրառվող օրենսդրությունը չի ընդգրկում սահմանափակումներ՝ կապված իրավաբանական անձ հիմնադրողի ազգության կամ քաղաքացիության հետ: Իրավաբանական անձինք կարող են հիմնադրվել ֆիզիկական անձանց կողմից՝ ներառյալ օտար երկրների քաղաքացիների, ինչպես նաև իրավաբանական անձանց կողմից՝ ներառյալ ոչ առևտրային իրավաբանական անձանց: Ավելին, անկախ իրավաբանական անձանց ազգությունից, որոնք կարող են Հայաստանում հիմնել առևտրային ձեռնարկություններ, որոնք օժտված են Հայաստանի քաղաքացիների հետ հավասար իրավական կարողություններով՝ ուժի մեջ

պահելով ներքին օրենսդրության սահմանած ընտրակարգերը (Քաղաքացիական օրենսդրության 1263-րդ հոդված), բացի օրենքով սահմանված դեպքերի:

Գրանցման և թափանցիկության միջոցառումներ

121. Իրավաբանական անձանց գրանցումն իրականացվում է Արդարադատության նախարարությանը կից Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի միջոցով: Իրավաբանական անձի գրանցման համար (բացի բանկերից, որոնց զարնցումը Կենտրոնական բանկի լիազորությունն է), հիմնադիրները պետք է Պետական գրանցման մարմնի տեղական վարչություն ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ իրավաբանական անձի հիմնադրող(ներ)ի կողմից լիազորած անձի դիմում, հիմնադիրներ(ներ)ի ժողովի (կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը, կանոնադրության առնվազն երկու օրինակ և գրանցման համար գանձվող հարկի մասին կտրոն: Եթե որևէ հիմնադիր (անդամ) օտար պետության իրավաբանական անձ է, ապա ի լրումն վերը նշված փաստաթղթերի, այն պետք է նաև ներկայացնի այդ պետության առևտրային գրանցման քաղվածքը կամ այլ համարժեք փաստաթուղթ, որը հաստատում է օտարերկրյա ներդրողի և նրա կարգավիճակը, որոնք թարգմանված են հայերեն և սահմանված ձևով վավերացված են: Արտոնագրված գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձիք պարտավոր են նաև նախապես ձեռք բերել թույլատվություն լիազորված պետական մարմնից: Պետական գրանցման համար առավելագույն ժամկետը այս բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո հինգ օրն է: Լիազորված մարմինների այն պաշտոնյաները, որոնք թերացել են որևէ անհատ ձեռներեցի կամ ձեռնարկության գրանցման հարցում, օրենսդրությամբ սահմանված ժամկետում և/կամ ուլքեր մերժել են գրանցումը առանց օրինական հիմնավորման՝ ենթական են վարչական պատասխանատվության (Վարչական իրավախախտումների կանոնագրքի 107-րդ հոդված), մինչդեռ գրանցումից չարամիտ խուսափելը կամ ակնհայտորեն անհիմն մերժումը հանգեցնում է քրեական պատասխանատվության՝ համաձայն Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի:

122. Այլ իրավաբանական անձանց միանալու կամ այլ իրավաբանական անձի անդամ դառնալու իրավաբանական անձանց իրավունքները չեն սահմանափակվում գործող օրենսդրությամբ: Քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է «դուստր ձեռնարկություն» և «կախյալ ձեռնարկություն» հասկացություններ:

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետ

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վարչապետ

րը և հիմնում է մեկ իրավաբանական անձի կողմից մեկ ուրիշի գործունեությանը մասնակցելու պայմանները:

123. Օրենսդրությունը ոչ մի սահմանափակում չի դնում բանկային հաշիվներ բացելու իրավաբանական անձանց իրավունքների վրա:

Իրավաբանական անձանց ներսում գործառույթներ իրականացնելու սահմանափակումներ

124. Քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետը որպես պատժամիջոց նախատեսում է «արգելք զբաղեցնել որոշակի պաշտոններ» կամ զբաղվել որոշակի մասնագիտություններով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում և կազմակերպություններում (թե՛ մասնավոր, և թե՛ պետական): Եթե պատժամիջոցը սահմանվել է որպես հիմնական պատիժ, ապա անձը կարող է զրկվել համապատասխան իրավունքից 2-ից մինչև 7 տարի ժամկետով կանխամտածված իրավախախտման համար, և 1-ից մինչև 5 տարի ժամկետով՝ անփութության հետևանքով իրավախախտման համար: Եթե պատժամիջոցը սահմանվում է որպես լրացուցիչ պատիժ, ապա զրկվելու ժամանակահատվածը կարող է տևել 1-ից մինչև 3 տարի:

Իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող օրենսդրություն

125. Իրավաբանական անձինք ենթակա են քաղաքացիական պատասխանատվության: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի «Իրավաբանական անձը կարող է լուծարվել՝ (...) 3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (կամ լիցենզիայի) կամ օրենքովարգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ կամ այլ իրավական ակտերի բազմակի կոպիտ խախտումների, կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում»: Եթե որևէ իրավաբանական անձ ներգրավվել է ինչ-որ քրեական գործի մեջ, ապա իրավախախտման համար քրեական պատասխանատվության ենթակա են միայն այն պաշտոնյաներն ու աշխատակիցները, որոնք որևէ առնչություն ունեն իրավախախտման հետ (կազմակերպիչը, անմիջական հանցագործը և հանցակիցը):

Պատժամիջոցներ և այլ միջոցառումներ

126. Բացի վերին կետում նշված լուծարման դեպքից, հայկական

օրենսդրության մեջ ոչ մի այլ պատժամիջոց չի սահմանվում կոռուպցիայի գործերի մեջ ներգրավված իրավաբանական անձանց նկատմամբ:

Հարկերի նվազեցում (կրճատում)

127. Համաձայն Շահութահարկի մասին օրենքի 10-րդ հոդվածի, իրավաբանական անձի շահութահարկը հաշվելու համար ընդհանուր եկամուտից հանվում են եկամտի ավելացմանն առնչվող ծախսերը, որոնք պետք է հիմանվորված լինեն (հաշիվ-ապրանքագներ կամ այլ հաշվապահական փաստաթղթեր): GRECO-ի հարցաթերթիկներին տրված իրենց պատասխաններում հայկական իշխանությունները պնդում են, թե քանի որ կաշառքի գնով և կոռուպցիայի հետ կապված այլ ծախսերը չեն կարող հիմանվորվել որևէ փաստաթղթով և պետք չեն եկամտի ավելացման համար, այսպիսի ծախսերից հարկի գանձումը չի ներառված օրենքի մեջ:

Հարկային մարմիններ

128. Չնայած կոռուպցիայի կամ փողերի լվացման դեպքերի բացահայտումը հարկային մարմինների խնդիրներից մեկը չէ, նրանք ընդգրկված են նման հանցագործությունների կանխման և/կամ բացահայտման մեջ Հարկային օրենսդրության համաձայն՝ վերահսկման և բացահայտման իրենց գործառույթները իրականացնելիս: Սահմանված ժամկետում հարկերի մասին հաշվետվություն չներկայացնելու դեպքում սահմանվում է տուգանք, որի չափը կախված է խախտման հետևանքներից: Հարկային օրենսգրքի 24-րդ հոդվածն, օրինակ, ասում է, որ երբ հարկերի մասին հաշվետվությունը ներկայացվում է երկու ամսից ավելի ուշացումով, ապա յուրաքանչյուր ավել 15 օրվա ժամանակահատվածի համար սահմանված տուգանքը կազմում է չվճարված հարկի ընդհանուր գումարի 5 %, որը չպետք է գերազանցի հարկի ընդհանուր գումարը: Վերը նշված խախտումները, երբ արվում են հարկերից խուսափելու նպատակով, կարող են հանգեցնել ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության, ինչպես նախատեսված է Քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածում:

Հաշվապահական կանոններ

129. Ֆինանսական հաշվառման օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն բոլոր հաշվապահական փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկությունը էլեկտրոնային ձևով (ինչպես, օրինակ, նախնական հաշվապահական փաստաթղթեր, ֆինանսա-

կան հաշվետվություններ, հաշվապահական քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը, հաշվապահական համակարգչային տարբերակը) իրավաբանական անձը պետք է պահի համաձայն սահմանված կարգի ու ժամանակի և ամեն դեպքում 5 տարուց ոչ պակաս: Հաշվապահական փաստաթղթերը պահելու պատասխանատվությունն ընկնում է իրավաբանական անձի ղեկավարության վրա:

130. Անփույթ հաշվապահությունը կարող է ենթարկվել թե՛ վարչական, և թե՛ քրեական պատասխանատվության: Համաձայն վարչական խախտումների մասին օրենսգրքի՝ ֆինանսահաշվային տեղեկության և փաստաթղթերի պահպանման թերացումը կարող է պատժվել տուգանքով: Նույն օրենսգրքի սահմանում է, որ ֆինանսահաշվային գրառումներում եղած խախտումները կամ սահմանված ժամկետում հայտարարագրեր չներկայացնելը հարուցում է տուգանք, որի չափը սահմանվում է օրենքով: Կեղծ ձեռնարկատիրական գործունեության համար («Առևտրային ձեռնարկության հիմնադրում՝ առանց ձեռնարկատիրական կամ բանկային գուրծունեություն իրականացնելու մտադրության, որի նպատակն է ստանալ վարկեր, խուսափել հարկերից, ձեռք բերել այլ գույքային օգուտներ կամ թաքցնել արգելված գործունեությունը») և «Կեղծ փաստաթղթեր ներկայացման համար՝ առանց ապրանք կամ ծառայություններ ապահովելու մտադրություն ունենալու, ծախսերի կամ եկամուտի վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելու և ներկայացնելու համար, ինչը մեծ վնաս է պատճառել (...):» (Քրեական օրենսգրքի 189-րդ հոդված): Հաշվապահական գրառումների ոչնչացումը կամ կեղծումը ենթակա է պատժամիջոցների, եթե կատարվել է հարկերից խուսափելու նպատակով:

Աուդիտորների և այլ մասնագետների դերը

131. Քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածը պարտադրում է քաղաքացիներին տեղյակ պահել իրավապահ մարմիններին «հաստատ հայտնի ծանր և խիստ ծանր հանցագործությունների մասին»⁴³: Նման հանցագործությունների մասին տեղյակ չպահելը հանգեցնում է քրեական պատասխանատվության՝ համաձայն Քրեական օրենսգրքի 334-րդ և 335-րդ հոդվածների: Ինչևէ, եթե հարցը վերաբերում է հաշվապահներին, աուդիտորներին և այլ խորհրդատու մասնագետներին, ապա ո՛չ Հաշվապահական

հաշվառման մասին օրենքը, ո՛չ էլ Աուդիտի մասին օրենքը չեն պարունակում նրանց համար սահմանված հստակ պարտականություն իրավապահական մարմիններին տեղեկացնել իրավախախտումների կասկածների մասին:

132. Վկայագրված աուդիտորները տալիս են խորհուրդներ այն խախտումները շտկելու համար, որոնք բացահայտվել են հաշվապահական փաստաթղթերը և ֆինանսական հաշվետվությունները վերստուգելիս: Խորհուրդներն ուղղվում են շահագրգիռ կազմակերպության ղեկավարությանը: Աուդիտի մասին օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» դրույթը մասնավորապես սահմանում է աուդիտների ժամանակ բացահայտված թերություններն ու խախտումները վերացնելու ղեկավարության պատասխանատվությունը:
133. Եթե հարցը վերաբերում է էթիկայի նորմերին, ապա որոշ մասնագիտությունների համար ընդունել են վարքագծի/էթիկայի օրենսգրքեր՝ ներառյալ Իրավաբանների էթիկայի օրենսգրքը, Հայկական փաստաբանների միջազգային միության մասնագիտական վարքագծի օրենսգրքը, Փաստաբանների միության մասնագիտական վարքագծի օրենսգրքը և Աուդիտորների վարքագծի կանոնները:

բ. Վերլուծություն

134. Հայաստանում գլխավոր կառույցը, որն առնչվում է իրավաբանական անձանց հետ /որը նաև սահմանում ու հաստատում է իրավաբանական անձանց տարբեր տեսակները/ նշանակում է Քաղաքացիական օրենսգրքի լուխ 5-ում: Ոյություն ունի նաև գրանցման համակարգ՝ համաձայն որի բոլոր իրավաբանական անձիք /բացառությամբ կոոպերատիվների/ պետք է գրանցվեն գրանցամատյանում, որը վարվում է Պետական գրանցման գրասենյակի կողմից: Առևտրային կազմակերպությունների գրանցումը կատարվում է Պետական գրանցման գրասենյակի համապատասխան շրջանային բաժանմունքներում, մինչդեռ ոչ-առևտրային կազմակերպություն-հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, ոչ-առևտրային կազմակերպությունների միությունների գրանցումը կատարում է միայն ընդհանուր երևանյան կենտրոնական գրասենյակը: Առևտրային կազմակերպությունների, այսինքն համատեղ բաժնետիրական կազմակերպությունների, սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպությունների և այլ կազմակերպությունների գրանցումն իրավական պարտավորություն է: Ընդհանրապես տեղեկատվությունը հասանելի է հասարակությանը՝ բայց ոչ ին-

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

⁴³ «Ծանր և խիստ ծանր» համարվող հանցագործությունների ցուցակը սահմանվում է Քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում:

տերնետի միջոցով: Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են Խ-ին այն մասին, որ Արդարադատության նախարարությունում սկսվել է համակարգչային տեխնոլոգիաներ տեղադրելու գործընթաց, որի ժամանակ համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն հեշտացնելու համար հասարակության կողմից իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը, բայց չէր նշվել ժամանակակարգը:

135. Պետական գրանցման գրասենյակը չի ստուգում իրավաբանական անձի /օրինակ՝ ընկերության/ կողմից տրամադրված տեղեկատվության ճշմարտացիությունը և լիազորված է միայն կատարելու պաշտոնական /փաստաթղթային/ հսկողություն: Խ-ն հաշվի է առնում, որ իրավաբանական անձանց գրանցման ընթացիկ համակարգը չի նախատեսում գրանցող մարմնին տալ որևէ հնարավորություն՝ մերժելու ընկերության գրանցումն այն դեպքերում, երբ, օրինակ՝ ընկերությունում կառավարող պաշտոններ զբաղեցնող անձիք մեղադրվում են քրեական հանցագործություններում՝ ներառյալ կոռուպցիան և/կամ մասնագիտական որակազրկումը: Հետևաբար՝ Խ-ն առաջարկում է երաշխավորել, որ ընկերություններ հիմնադրող ֆիզիկական թե՛ իրավաբանական անձիք ստուգվեն և ենթարկվեն վերահսկողության հավանական քրեական հաշվառումների կամ մասնագիտական որակազրկումների հետ կապված:

136. Իրավաբանական անձանց քաղաքացիական և վարչական պարտավորությունները սահմանված են Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածում: Քաղաքացիական օրենսգրքը չի ապահովում քրեական պատասխանատվություն իրավաբանական անձանց կողմից կատարված հանցանքների համար: Համաձայն Հայաստանի քրեական համակարգի՝ միայն ֆիզիկական անձիք կարող են քրեական մեղադրանքով հանցագործ ճանաչվել և հետևաբար, լինել քրեորեն պատասխանատու կաշառք տալու, կաշառակերության և կաշառքի հարցերով միջնորդելու մեջ: Տեղում այցի ժամանակ Հայաստանի իշխանությունները տեղեկացրին Խ-ին, որ մտադրություն չունեն պատրաստելու օրենսդրություն, որը կներկայացներ քրեական ընդհանուր պատասխանատվությունները: Խ-ն այն կարծիքին է, որ գոյություն ունեցող օրենսդրությունը, որն առնչվում է իրավաբանական անձանց պատասխանատվությունների հետ, չի ապահովում Կոռուպցիայի մասին Քաղաքացիական օրենքի կոնվենցիայի պահանջների կիրառումը կոռուպցիայի մեջ ներգրավված իրավաբանական անձանց նկատմամբ ընդհանուր պատասխանատվությունների և սանկցիաների վերաբերյալ: Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածում ներառված դրույթները, որոնք

առնչվում են որևէ ընկերության լուծարմանը, թվում է գլխավորապես վերաբերում են առևտրային օրենսդրության ոտնահարմանը: Հետևաբար՝ Խ-ն, համաձայն Կոռուպցիայի մասին քրեական օրենքի, առաջարկում է հիմնել իրավաբանական անձանց պատասխանատվություն կաշառակերության և փողերի լվացման մեղադրանքների դեպքում և ապահովել սանկցիաներ, որոնք արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ լինեն:

137. Հարկային օրենսդրությունը որոշակիորեն չի արգելում վճարումների հեշտացման, կաշառքների և այլ ծախսերի դեղուկ-տիվությունը, որոնք կապված են կոռուպցիայի հետ: Չնայած Հայաստանի իշխանությունները վիճում են, որ կոռուպցիոն օրինագրանցությունների գաղտնի բնույթի պատճառով (փաստաթղթերով չհիմնավորված) ընկերության համախառն եկամուտից այսպիսի ծախսեր չեն կարող պահվել, Խ-ն կարծում է, որ գործող հարկային օրենսդրությունը չի արգելում եկամտից հարկի հանումը, որը կարող է լինել կոռուպցիայի միջավայրում կնքված պայմանագրերին առնչվող գործունեության արդյունք: Խ-ն նաև նշում է, որ հարկային իշխանությունների համար չկան անկախ և ընթացակարգային հարկային օրենքներով սահմանված իրավական պարտականություններ, որպեսզի հնարավոր լինի տեղեկավել կասկածելի ֆինանսական գործունեության և հաշվապահական գրառումների մասին, որոնք կարող են թաքցնել կոռուպցիոն զանցանքներն իրավապահ իրավասու մարմիններից: Յուրաքանչյուր քաղաքացու գլխավոր պարտականությունն է տեղեկացնել ոստիկանությանը կամ դատախազությանը լուրջ հանցանքների մասին (Քրեական օրենսգրքի 335-րդ հոդված): Պարզվում է, որ դա էլ բավարար հիմք չէ հարկային ծառայողների կողմից զեկույցների համար: Խ-ն լիովին հավատում է, որ հարկային իշխանությունների դերը, ի նկատի ունենալով հակակոռուպցիոն օպերատիվ միջոցառումները, կարող է մեծանալ: Խ-ն, մասնավորապես, նշեց համապատասխան վարժանքների կամ նորմատիվների պակասը, որոնք նպաստում են հարկային ծառայությունների աշխատողների փոխգործողությունների և իրավապահ համապատասխան իշխանությունների միջև համագործակցության զարգացմանը կոռուպցիայի բացահայտմանն ուղղված իրենց հետաքննությունների ժամանակ: Հետևաբար, Խ-ն առաջարկում է հիմնել նորմատիվներ և հարկային իշխանությունների մասին ապահովել վերապատրաստումներով, որոնք ուղղված կլինեն կոռուպցիոն հանցանքների բացահայտմանն ու համապատասխան իրավապահ գործակալություններին տրվել նրանց զեկույցներին:

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

138. Խ-ի կարծիքով առկա օրենսդրությունն ապահովում է արդյունավետ պատասխաններ հաշվապահական պարտականությունների խախտումներից, օրինակ՝ համապատասխան սանկցիաների միջոցով հարկերից խուսափելու դեմ Քրեական օրենսգրքի 189-րդ հոդված, հարկերի և եկամուտների հայտարարագրի ներկայացման ձախողման դեմ Քրեական օրենսգրքի 205-րդ հոդված և հաշվապահական կեղծ գրանցումների դեմ, որոնք կարող են հանգեցնել հարկերի և սոցիալական ապահովագրման վճարումների նվազեցմանը (Վարչական խախտումների մասին օրենսգրքի 169.11-րդ հոդված): Հաշվառման մասին օրենքը և Աուդիտի մասին օրենքը չեն սահմանում հատուկ պարտավորություն աուդիտորների և հաշվապահների համար՝ իրավապահ մարմիններին զեկուցելու կասկածելի հանցանքների մասին: Նման պարտավորություն գոյություն չունի նաև Աուդիտորների վարքի մասին օրենքում, որն ընդունվեց վերջերս՝ տեղում կատարված այցի ժամանակ: Աուդիտորների և հաշվապահների միության գործադիր մարմնի հետ հանդիպման ժամանակ Խ-ն տեղեկացավ, որ աուդիտորը կարող է կանգնել կարգապահական և քրեական պատասխանատվության առջև, եթե նա դիտարկում է վավերացում և կեղծ հաշվեկշռի ցուցակը կամ պաշտոնապես պահանջվող այլ փաստաթղթեր: Այս առումով Խ-ն նաև իմացավ, որ տեղի են ունեցել աուդիտորների նկատմամբ կարգապահական սանկցիաների կիրառման որոշ դեպքեր: Աուդիտորներն արտահայտեցին տեսակետ, որ երբեմն մասնագիտական գաղտնիություն պահպանելու պարտավորությունը, որը շատ կարևոր է մեր աշխատանքում՝ կարող է հակասել հանցանքի կասկածներինմասին զեկուցելու զլխավոր կանոնին: Խ-ն ընդունում է, որ անկախ աուդիտի և հաշվապահության հիմնումը շատ կարևոր հատկանիշ է անցումային պետությունում շուկայական սկզբունքներ կիրառելու համար: Բայց այն նաև ցանկացավ նշել, որ աուդիտորների, հաշվապահների և նրանց ասոցիացիաների կողմից տրամադրված տեղեկատվությունը կարող է մեծապես հեշտացնել փաստեր հավաքելու գործընթացը, և այս առումով նպաստել կոռուպցիայի արդյունավետ հայտնաբերմանը: Խ-ն ողջունում է փողերի վճարման դեմ ուղղված միջոցառումների վերաբերյալ աուդիտորների և հաշվապահների վերապատրաստման դասընթացները, որոնք սկսվեցին հենց տեղում կատարված այցի ժամանակ: Այնուամենայնիվ, այն նաև ցանկանում է լուսաբանել կոռուպցիոն հանցանքները հետախուզելու և զեկուցելու ուղղությամբ հիշատակված մասնագիտությունների համար վերապատրաստման դասընթացների կարևորությունը: Այս նպատակով Խ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները խրախուսեն աուդիտորների ներկայացուցչական

մարմիններին, որպեսզի նրանք հրապարակեն հրամանագրեր և կազմակերպեն կոռուպցիայի հետախուզմանը և զեկուցմանը առնչվող վերապատրաստման դասընթացներ:

Հ Ե Տ Ե Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

139. Հայաստանում կաշառակերությունը համարվում է ամենամեծ խնդիրներից մեկը, որն ազդում է պետական ծառայությունների շատ բաժինների վրա: Ամենից հաճախ նշվող ոլորտներն են դատական ոլորտը, ոստիկանությունը, մաքսային ծառայությունը, հարկային տեսչությունը, կրթությունը, առողջապահությունը, արտոնագրերի և սեփականաշնորհման ոլորտը: Չնայած այն փաստին, որ մի շարք հակակոռուպցիոն միջոցառումներ են ձեռնարկվել, և դեռ պետք է ձեռնարկվեն, համակարգը տառապում է տարբեր թրուքություններից և՛ օրենսդիր դաշտում, և՛ գոյություն ունեցող հակակոռուպցիոն միջոցառումների օրենսդրության կիրառման մեջ, և՛ արդարադատության և՛ օրինապահ համակարգի կազմակերպման առումով: Դեռ ավելին. այն դժվարությունները, որոնք գոյություն ունեն փաստերի հավաքման գործում, ինչպես նաև օրինազանցներին կաշառակերությունից ստացած շահույթից զրկելու գործում, ինչը հանգեցնում է զգալի արդյունքների համարյա լրիվ բացակայության, և անհրաժեշտություն է առաջանում նշանակալից ջանքեր գործադրել հակակոռուպցիոն դաշտում: Այս առումով խնդրո առարկա ոլորտները ներառում են բանկային գաղտնիությունը, հատուկ հետաքննչական միջոցները, իրավապահ գործակալությունների անդամների վերապատրաստումը, վկայի պաշտպանությունը, գույքային հայտարարագիրը և փողերի վճարման դեմ ռեժիմը: Ոչ միայն պետական պաշտոն զբաղեցնող անձանց համար, այլ նաև դատավորների, կենտրոնական ընտրական հանձնաժողովների անդամների և նույնիսկ նախագահական թեկնածուների և ավագանու (տեղական խորհուրդ) թեկնածուների համար դատական կարգով հետապնդումից անձեռնմխելիությունը նույնպես քննարկման առարկա է:

140. Քանի որ խոսքը գնում է պետական կառավարման մասին, կարիք կա շտապ կիրառել ճշգրիտ միջոցառումներ, որոնք կառնչվեն այն իրավիճակներին, որտեղ անձնական ֆինանսական շահերը կարող են առաջ բերել կոնֆլիկտային խնդիրներ կամ կառնչվեն, մասնավորապես, պետական պաշտոնյաների պարտականություններին և պատասխանատվություններին: Ի հավելումն, պետք է ձեռնամուխ լինել այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպես օրինակ սեփականության, եկամտի և ստացած

նվերների հայտարարագրերի հավաստագրման համակարգն է, այն պետական պաշտոնյաների առնչությամբ, ում ծառայովական պարտականությունները կարող են տուժել շահերի բխումից, ներառյալ պետական կառավարման շրջանակներում կարևոր պաշտոններ զբաղեցնող անձիք: Կարևոր է նաև, որ պետական պաշտոնյաները տեղեկացված լինեն, և ամենից առաջ, քաջատեղյակ լինեն, թե ինչպես և երբ կարելի է զեկուցել ատյաններին իրենց աշխատանքում հանդիպող կաշառակերության դեպքերի կամ այն պետական պաշտոնյաների համապատասխան պաշտպանությունը, ովքեր բարեխղճորեն զեկուցել են համապատասխան ատյաններին կոռուպցիայի մասին (մատնիչներ): Հայաստանի իրավական համակարգը իրավաբանական անձանց պատասխանատվության չի ենթարկում կաշառակերության և կոռուպցիայի համար: Ուստի անհրաժեշտություն կա իրավաբանական անձանց կորպորատիվ պատասխանատվության ենթարկելու կաշառակերության և փողերի լվացման հանցանքների համար և ապահովել արդյունավետ, համաչափ և տարհանողիչ սանկցիաներ՝ Կաշառակերության մասին քրեական օրենսգրքի համաձայն:

141. Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ GRECO-ն Հայաստանին է ուղղում հետևյալ հանձնարարականները, որ.

- I. Հայաստանի իշխանություններն իրականացնեն անհրաժեշտ ուսումնասիրություն, որով ձեռք կբերեն պարզ ներընթացում կոռուպցիայի մասշտաբների և դրա տարբեր առանձնահատկությունների մասին, որպեսզի հակակոռուպցիոն նախաձեռնությունների և պլանների նկատմամբ ավելի արդյունավետ միջոցներ իրականացվեն (պարբերություն 12),
- II. Հակակոռուպցիոն քաղաքականության գործունեության մեջ ներքաշված Հայաստանի բոլոր իշխանություններն ընդհանուր հիմունքներով տեղեկացնեն հանրությանը, քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին ձեռնարկված միջոցառումների և ձեռք բերված արդյունքների մասին: Այն նաև պահանջում է, որ հասարակությունը տեղեկացված լինի կաշառակերության կասկածների դեպքում զեկուցման միջոցների մասին (պարբերություն 13),
- III. Դատական համակարգի հետ առնչվող կանոնները վերանայվեն, որպեսզի դատավորական կորպորացիայի համար ապահովվի լրիվ անկախություն գործադիր իշխանության առաջ (պարբերություն 39),

- IV. ստեղծվի ոստիկանական ծառայողների, դատախազների և դատավորների կանոնավոր վերապատրաստման մոդել՝ կոռուպցիայի և փողերի լվացման խնդիրների հետ կապված (պարբերություն 41),
- V. Հայաստանի իշխանությունները ռացիոնալիզացիայի ենթարկեն հակակոռուպցիոն հետաքննչական մարմինների գործունեությունը՝ հստակ սահմանելով նրանց պարտականությունները, ամենից առաջ ոստիկանության և դատախազության միջև ապահովվեն ավելի արդյունավետ համագործակցություն կոռուպցիայի հետաքննման նախնական փուլում (պարբերություն 42),
- VI. փոխվի բանկային գաղտնիության մասին օրենսդրությունը, որպեսզի հնարավորություն տրվի իրավապահ իշխանություններին ձեռք բերելու պատշաճ տեղեկատվություն հաշվեհամար ունեցողների և բանկային հաշիվների գործարքների մասին՝ նախքան պաշտոնական մեղադրանք ներկայացնելը (պարբերություն 43),
- VII. փոփոխվի Բանկային գաղտնիության մասին օրենքը, ինչը թույլ չի տա բանկերին իրենց հաճախորդներին տեղեկացնել դատական կարգով նրանց մասին տեղեկատվության պահանջների մասին (պարբերություն 44),
- VIII. ընդունվեն օրենսդրական միջոցներ և այլ միջոցառումներ հիմնելու համար հետաքննչական հատուկ միջոցների համակարգ և իրավասու գործակալություններին ապահովելու համար պատժաճ միջոցներով և դասընթացներով, որպեսզի ստիպեն համակարգին գործնական ու արդյունավետ աշխատել (պարբերություն 45),
- IX. ընդունեն օրենսդրական միջոցներ, որոնք կապահովելն, որ վկաների պաշտպանության համապատասխան ծրագիրը դառնա գործուն (պարբերություն 46),
- X. քննարկեն այն անհատների կատեգորիաները կրճատելու հարցը, ովքեր օգտվում են դատական կարգով հետապնդումից անձեռնաձևի իրականացումից և վերացնեն, մասնավորապես, պառլամենտական թեկնածուների, շրջանային և տեղական ընտրական հանձնաժողովի անդամների, շրջանային և տեղական ընտրական հանձնաժողովների անդամների, նախագահական թեկնածուների և տեղական խորհուրդների թեկնածուների անձեռնաձևի իրականացումը (պարբերություն 56),
- XI. վերանայեն դատախազներին և դատավորներին տրամադրված անձեռնաձևի իրականացումը հանելու կարգը՝ նվազեցնելով

Ոչ պաշտոնական բաղձնամուտ

Ոչ պաշտոնական բաղձնամուտ

- որոշում կայացնող գերակա անհատների մասնակցությունը (այսինքն՝ Հանրապետության Նախագահի, լիազոր դատախազի) (պարբերություն 57),
- XII. իրավական դրույթներ ներկայացվեն, որոնք թույլ կտան 1) սնանկ պարտապանի գույքի բռնագրավումը կոռուպցիայի հանցանքի համարժեք արժեքով, 2) երրորդ կողմի տրամադրության տակ գտնվող սնանկ պարտապանի գույքի բռնագրավումը (պարբերություն 77),
- XIII. հեշտացնել (և արագացնել) ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի ուսումնասիրությունը թույլատրող համակարգը (պարբերություն 78),
- XIV. երաշխավորեն, որ փողերի լվացման դեմ համակարգը հնարավորինս շուտ դառնա գործուն, և Ֆինանսական վերահսկողության կենտրոնի անձնակազմին արագ ապահովեն վերապատրաստմամբ՝ կապված այն բանի հետ, թե ինչպես կիրառել կանոնները և որոշումները ամենաարդյունավետ ձևով՝ ներառյալ այն անձիք, ովքեր պարտավոր են զեկուցելու կասկածելի գործարքների մասին (պարբերություն 79),
- XV. հրապարակեն նորմեր պետական պաշտոնյաների բոլոր կատեգորիաների կողմից գործածվելու համար, երբ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, երբ անձնական ֆինանսական շահերը կամ գործունեությունը կարող են խնդիրներ առաջացնել պետական պաշտոնյաների մոտ՝ կապված իրենց պարտականությունների և պատասխանատվությունների կատարման հետ: Սա նաև պահանջում է նկատի առնել հերթագայության ավելի լայն կիրառումը պետական կառավարման հատվածում՝ մասնավորապես այն հատվածներում, որտեղ կա կոռուպցիայի մեծ ռիսկ (պարբերություն 111),
- XVI. ներկայացնեն սեփականության և սնանկ պարտապանի գույքի մասին հայտարարագրերի հավաստման արդյունավետ համակարգ այն բոլոր պետական պաշտոնյաների նկատմամբ, ում ծառայողական պարտավորությունները կարող են վտանգվել շահերի բախման հետևանքով (պարբերություն 112),
- XVII. իջեցնեն քաղծառայողների, աշխատողների կամ այլ պաշտոնյաների կողմից ընդունվելիք հնարավոր նվերների արժեքը մինչև այն մակարդակը, որը չի բարձրացնի շահագրգռվածությունը կաշառակերության կամ անպատեհ այլ առավելության առնչությամբ, և որ սահմանվի ցանկացած արժողության մեջ նվերի մասին պարտադիր հաշվետվություն ներկայաց-

- նելու կարգ (պարբերություն 113),
- XVIII. մեծ առաջնահերթություն տան պետական կառավարման համար էթիկայի կանոնադրության պլանավորված պատրաստմանը և երաշխավորեն, որ բոլոր պետական պաշտոնյաները հնարավորություն ունենան ստանալու պատշաճ ուսուցում, և որ օրենսդրությունը հասանելի լինի հանրությանը (պարբերություն 114),
- XIX. ներկայացնեն հստակ կանոններ/նորմեր և պետական պաշտոնյաների ուսուցում համապատասխան աստիճաններին զեկուցելու համար կոռուպցիայի կամ դրանց մասին կասկածների վերաբերյալ, որոնց նրանք կարող են հանդիպել իրենց աշխատանքի ժամանակ, և սահմանել պատշաճ պաշտպանություն այն պետական պաշտոնյաների համար, ովքեր բարեխղճորեն զեկուցել են կոռուպցիայի մասին (մատնիչներ) (պարբերություն 115),
- XX. համափարփակորեն հավաքեն և գնահատեն պետական կառավարման շրջանակներում տեղի ունեցած էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ բողոքները, ինչպես նաև բողոքները կանոնակարգային գործընթացների վերաբերյալ, որպեսզի հաստատեն թերությունները պետական կառավարման կոնկրետ ոլորտներում և, հիմք ընդունելով այս գնահատումը, միջոցներ ձեռնարկեն անցկացնելու բարելավումներ (պարբերություն 116),
- XXI. երաշխավորվի, որ ընկերություններ հիմնադրած թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձիք ստուգվեն և ենթարկվեն վերահսկողության հավանական քրեական հաշվառումների կամ մասնագիտական որակազրկման առնչությամբ (պարբերություն 135),
- XXII. սահմանեն կաշառակերության և փողերի լվացման հանցանքների համար իրավաբանական անձանց պատասխանատվություն, սահմանեն պատժամիջոցներ, որոնք արդյունավետ են, համապատասխան և տարիանոցիչ՝ համաձայն Կոռուպցիայի մասին քրեական օրենքի (պարբերություն 136),
- XXIII. սահմանեն նորմեր և ապահովեն հատուկ դասընթացներ հարկային իշխանությունների համար կոռուպցիայի հանցանքի բացահայտման և իրավասու գործակալություններին նրանց զեկույցների վերաբերյալ (պարբերություն 137),
- XXIV. Հայաստանի իշխանությունները խրախուսեն աուդիտորների

ներկայացուցչական մարմիններին՝ արձակելու դիրեկտիվներ և կազմակերպելու կոռուպցիայի հայտնաբերման և զեկուցման մասին դասընթացներ (պարբերություն 138),

142. Եվ վերջում, համաձայն Ընթացակարգային կանոնների 30.2-րդ կանոնի, GRECO-ն մինչև 2007 թվականի սեպտեմբերի 30-ը հրավիրում է Հայաստանի իշխանություններին՝ ներկայացնելու վերոհիշյալ պահանջների իրականացումը:

ԳՐԵԿՈՒ-Ի ՓՈՐՁԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

*Երևան, Ապրիլի 10, 2006
Ձեկուցող - Կարլո Կլերոնոնտե*

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ինձ համար մեծ պատիվ է գտնվել այստեղ՝ Երևանում, և դիմել ձեզ եվ ընդհանուր հարցերի կողմից և որպես ԲԵԿՈՒ-ի քարտուղարության անդամ:

Այսօր իմ՝ այստեղ գտնվելու համար երկու կարևոր պատճառ կա: Առաջին հերթին՝ ավելի քան յոթ տարվա ընթացքում ես գործ եմ ունեցել կոռուպցիայի հետ առնչվող խնդիրներին և իրականացրել եմ հակակոռուպցիոն քաղաքականության և միջոցների մի շարք գնահատումներ Եվրոպայի տարբեր երկրներում: Երկրորդ պատճառը կապված է հատկապես այն փաստի հետ, որ այստեղ՝ Երևանում, մենք քննարկում ենք կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում: Ես ԲԵԿՈՒ-ի քարտուղարության անդամ եմ և առնչվել եմ Հայաստանի գնահատումների հետ սկսած այն պահից, երբ վերջինս դարձավ ԲԵԿՈՒ-ի անդամ 2004 թվականին, մինչև՝ մեկ ամիս առաջ կայացած ԲԵԿՈՒ-ի կողմից Հայաստանի գնահատման զեկույցի ընդունումը: Ես առնչություն կունենամ նաև հետագա ??գործընթացներին, որոնք, ինչպես ես կբացատրեմ քիչ անց, նպատակ ունեն ապահովելու, որ Հայաստանը իրականացնի գնահատման զեկույցում իրեն ուղղված հանձնարարականները:

Մինչ իմ ելույթի գլխավոր թեմային անցնելը, որն է ԲԵԿՈՒ-ի՝ Հայաստանի գնահատման արդյունքը, կարծում եմ հարկ է ներկայացնել մի կարճ ակնարկ կոռուպցիայի ասպարեզում Եվրոպայի Խորհրդի ձեռնարկած գործունեության շուրջ, և սույն թեմայի հետ կապված, հակիրճ կերպով ներկայացնել GRECO-ի աշխատանքը:

Կոռուպցիայի դեմ պայքարում Եվրոպայի Խորհրդի կատարած աշխատանքը սկսվեց 1994 թ., երբ Եվրոպայի Արդարադատության Նախարարները կոռուպցիան համարեցին ժողովրդավարությանը, օրենքին և մարդու իրավունքներին լուրջ սպառնալիք: 1996 թվականի նոյեմբերին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն ընդունեց Կոռուպցիայի դեմ որոշումներին ծրագիր: Հետագայում Եվրոպայի Խորհուրդը որոշ փաստաթղթեր ընդունեց կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ասպարեզում:

Առաջին փաստաթուղթը 1997 թվականին ընդունված Կոռուպցիայի դեմ Քսան Առաջնային Սկզբունքներն են: Դրանք նպատակ ունենում են աջակցություն ցուցաբերել երկրի ներքին օրենսդրության զարգացման և իրագործման գործին: Սկզբունքներին հաջորդեցին 1999 թվականին ընդունված Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական օրենսգրքի մասին կոնվենցիան և Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական օրենսգրքի մասին կոնվենցիան, իսկ մեկ տարի անց ընդունվեց պետական պաշտոնյաների վարքագծի կանոնադրի ստեղծման մասին

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա

առաջարկը: Բացի այդ, 2003 թվականին Նախարարների կոմիտեն ընդունեց Քաղաքական կուսակցությունների և ընտրաբաշխման ֆինանսավորման ասպարեզում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ընդհանուր օրենսդրության ստեղծման առաջարկը:

Արդարացի կլինի ասել, որ կարծում եմ, որ նշված միջոցները իրենցից ներկայացնում են միջազգային չափանիշներին համապատասխանող բավականին ամբողջական համակարգ, որը պայքարում է կոռուպցիայի բազմակողմանի խնդրի դեմ բազմաառաջնային կերպով և այս երևույթը հարթելու միակ ուղին է հանդիսանում:

Բացի այս կարևոր կայուն ձեռքբերումներից կարևոր էր նաև համարվում ստեղծել մի մեխանիզմ, որը կղեկավարեր ընդունված չափանիշների իրագործումը: Այդ նպատակով 1999 թվականին հիմնադրվեց ԲԵԿՈՒ-ն՝ Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբը, որպես Եվրոպայի Խորհրդի 17 անդամ երկրների ընդլայնված մասնակի պայմանագիր:

Իր հիմնադրումից ի վեր ԲԵԿՈՒ-ն դարձել է կարևոր և բարձր գնահատվող մոնիտորինգային կառույց: ԲԵԿՈՒ-ի աշխատանքային մեթոդները, որոնք հիմնված են երկկողմանի գնահատման և հավասար պահանջների վրա, համարվում են օրինակելի, և որպես ԲԵԿՈՒ-ի հաջողակ գործունեության ապացույց, վերջինիս անդամ հանդիսացող երկրների քանակը ավելի քան կրկնապատկվել է սկսած 1999 թվականից: Այսօր ԲԵԿՈՒ-ն, որը բաց է ոչ միայն Եվրոպական պետությունների համար, ունի 41 անդամ երկրներ՝ ներառյալ ԱՄՆ-ը:

ԳՐԵԿՈՒ-ի մեխանիզմը երաշխավորում է անդամների իրավունքների և պարտականությունների հավասարության սկզբունքի խիստ վերահսկումը: Բոլոր անդամները, առանց սահմանափակումների, մասնակցում և իրենց ներկայացնում են եկկողմանի գնահատման գործընթացին: ԳՐԵԿՈՒ-ն առաջարկները, հետևաբար, բոլորի կողմից համարվում են բարձր կառուցողականության աստիճան ունեցող:

Մինչ օրս ԳՐԵԿՈՒ-ն ձեռնարկել է երկու տարբեր գնահատման փուլեր, որոնք առնչվում են վերը նշված՝ Կոռուպցիայի դեմ պայքարի քսան առաջնային սկզբունքների հատուկ նախապատրաստական աշխատանքների հետ (և նաև՝ Քրեական օրենսգրքի մասին կոնվենցիայի վերաբերող դրույթների հետ): Գնահատման առաջին փուլն ավարտվեց 2002 թվականի դեկտեմբերի 31-ին: Երկրորդ փուլը սկսվել է 2003 թվականի հունվարի 1-ին և ծրագրվում է ավարտվել մինչև 2006-ի վերջը:

Հիմա ես կանցնեմ իմ զեկույցի գլխավոր թեմային. ԲԵԿՈՒ-ի՝ Հա-

Ոչ պաշտոնական բարձրագույն մակարդակի վրա



յաստանի գնահատման զեկույցը: Հայաստանը միացավ ՌԵԿՈՒՄ-ին 2004 թվականի հունվարի 20-ին՝ ԳՐԵԿՈՒ-ի՝ նահատման առաջին փուլի ավարտից հետո: Այդ պատճառով՝ Հայաստանը ներգրավվել էր ընդհանուր գնահատման ընթացքին, որը ներառում էր նահատման առաջին և երկրորդ փուլերի թեմաները: Հետևաբար՝ գնահատումն անցկացվել էր հետևյալ դրույթների շուրջ.

- կոռուպցիայի կանխալզերման մեջ և հակակոռուպցիոն պայքարում ներգրավված մարմինների անկախությունը, մասնագիտացումը և միջոցները,
- քրեական հետապնդումից անձեռնմխելիության աստիճանը և բնագավառները,
- կոռուպցիայից ստացված եկամուտների բացահայտումը, առանձնացումը և բռնագրավումը,
- իշխատությունների դերը,
- կոռուպցիայի խնդիրների հետ կապված գործողությունների արդյունավետությունը և թափանցիկությունը,
- օրինապահ մարմինների՝ կոռուպցիան քողարկող մարմին հանդիսանալու կանխարգելումը,
- կոռուպցիային դեմ ուղղված հարկային և ֆինանսական օրենսդրությունը, և
- կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության և փողի վլացման միջև կապերը:

Այժմ ես կանցնեմ զեկույցի տարբեր մասերի քննման՝ ավելի հանգամանորեն կանգ առնելով Հայաստանին ուղղված առաջարկներին:

Չեկույցի Առաջին լուխը քննում է Հայաստանի ընդհանուր հակակոռուպցիոն քաղաքականությունը: Կապված այս խնդրի հետ նշված են կառավարության նախաձեռնություններն անցյալ երեք տարիների ընթացքում. Հակակոռուպցիոն ռազմավարության և Իրագործման գործողությունների ծրագրի ընդունումը 2003 թվականի նոյեմբերին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ստեղծումը, որը գլխավոր դեր է խաղում ռազմավարությունն իրագործելու և Մոնիտորինգի հանձնաժողովի հաստատման գործում, որը նախագահում է ՊՐՄ. Եսայանը՝ նախորդ զեկույցողը:

Միևնույն ժամանակ՝ («Ակնարկ՝ Հայաստանում հակակոռուպցիոն

քաղաքականության մասին») ասվում է.

«Դեպի շուկայական տնտեսություն անցման փուլում Հայաստանը դեմ է առել մի շարք լուրջ տնտեսական և սոցիալական խնդիրների՝ ներառյալ խոշոր «ստվերային» տնտեսական բնագավառները, հարկերից խուսափման բարձր աստիճանը և ապօրինի փոխադրումները: Հայաստանում, և՛ պետական պաշտոնյաները, և՛ քաղաքացիական հասարակությունը համարում են կոռուպցիան կարևորագույն խնդիր, որն ազդում է պետական ծառայության բազմաթիվ բնագավառների վրա: Դատավորները, ոստիկանները, մաքսատուրքային ծառայությունը, հարկային տեսչությունը, կրթությունը, առողջապահությունը, լիցենզավորման և սեփականաշնորհման ծառայությունները հիմնականում նշվում են որպես ամենավատ իրավիճակում գտնող բնագավառներ: Երկրում կոռուպցիայի աստիճանի մասին իրազեկությունը բարձր է: Այս ընդհանուր դժվարին իրավիճակին հակառակ չկա և ոչ մի պաշտոնական ուսումնասիրություն, որը ճշգրտորեն կպատկերեր երկրում կոռուպցիայի մակարդակը, դրա արտահայտման ձևերը, ազդեցությունների ոլորտը կամ պատճառները»:

Դրան է հաջորդում Հայաստանի իշխանություններին ուղղված առաջին առաջարկությունը, որտեղ ՌԵԿՈՒՄ-ն, ես մեջբերում եմ.

առաջարկում է իրագործել անհրաժեշտ հետազոտություններ կոռուպցիայի մակարդակի և դրա արտահայտման զանազան ձևերի մասին? ավելի հստակ պատկերացում կազմելու համար, որպեսզի հակակոռուպցիոն նախաձեռնությունները և ծրագրերը կազմվեն ավելի արդյունավետ կերպով:

Նույն զլխում՝ երկրորդ առաջարկությունը խորհուրդ է տալիս, որ հակակոռուպցիոն քաղաքականության/գործունեության մեջ ներգրավված բոլոր հայ իշխանավորները պարբերաբար տեղակացնեն իշխանություններին, քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին նախաձեռնված միջոցների և ձեռքբերումների մասին:

Վերը նշված առաջարկն ուղղվել է Հայաստանին, որովհետև, չնայած այն փաստին, որ կոռուպցիայի դեմ պայքարը Հայկական իշխանությունների համար առաջնահերթ խնդիր է, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, որոնց հանդիպեցինք Երևան այցելելու ընթացքում, տեղեկացրեցին ՌԵԿՈՒՄ-ի նահատման թիմին և ինձ, որ քաղաքացիները բավարար կերպով տեղեկացված չեն կոռուպցիան կանխարգելելու կառավարության վարած քաղաքականության կամ նախաձեռնված (կամ ծրագրված) հակակոռուպցիոն միջոցների մասին: Հետևաբար, ՌԵԿՈՒՄ-ն գտավ, որ արդյունավետ կլինի, եթե հակա-



կոռուպցիոն քաղաքականության մեջ ուղղակիորեն ներգրավված հայկական մարմինները պարբերաբար տեղեկացնեն իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը նախաձեռնված հակակոռուպցիոն միջոցների և ձեռք բերված աղյուսների մասին:

Ձեկույցի երկրորդ գլխում, որն առնչվում է «կոռուպցիայի կանխագերման գործում և հակակոռուպցիոն պայքարում ներգրավված մարմինների անկախության, մասնագիտացման և ձեռնարկած միջոցների մակարդակին», վեց առաջարկություններ են ուղղվել Հայաստանին: Առաջինը կապված է դատավորների անկախության հետ, և դրա նպատակն է երաշխավորել, որ կոռուպցիայի հետ կապված դատական գործերի նախաքննության, դատական գործընթացի և վճռի կայացման ընթացքում չլինի անհարիր քաղաքական ազդեցություն: Առաջարկության մեջ նշվում է, որ ՌԵԿՈ-ն խորհուրդ է տալիս վերանայել դատաիրավական համակարգի կազմավորման հետ կապված օրենքները, որպեսզի լիարժեք անկախություն հաստատվի դատական և գործադիր իշխանություններ միջև:

Այս գլխի երկրորդ առաջարկությունը վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարում օրինապահ մարմինների մասնագիտացման և դրա հետ կապված վարապատրաստման խնդրի հետ: Առաջարկը հորդորում է հայկական իշխանություններին մշակել կոռուպցիայի և փողի լվացման դեմ ուղղված համակարգված ?վերապատրաստման մոդել ուստիկանապետերի, դադախագների և դատավորների համար: Նախատման այցի ընթացքում և՛ դատախազները, և՛ դատավորները ընդգծեցին կոռուպցիայի և փողի լվացման դեմ ուղղված ?վերապատրաստումների ոչ լիարժեքության խնդիրը:

Մեկ այլ մտահոգող խնդիր են հայկական օրինապահ մարմինների կատարվող հետախուզական միջոցները և օպերատիվ գործողությունները: Եվ այս խնդրի հետ կապված ՌԵԿՈ-ն մատնանշում է «որոշ լուրջ խոչընդոտների գոյությունն ապացույցների հավաքման և կոռուպցիայի գործերով կասկածյալների պաշտոնական գործում: Կապված վերջը նշված երկու խնդիրների հետ պրոբլեմային բնագավառները ներառում են բանկային գաղտնիության օրենսդրությունը, հատուկ հետաքննչական միջոցները, վկաների պաշտպանությունը և փողի լվացման դեմ ուղղված համակարգը»:

Այս խնդրի առնչությամբ զեկույցը ներառում է առաջարկություն, որը վերաբերում է «քննիչների և դատախազների միջև ավելի արդյունավետ համագործակցության» երաշխավորմանը՝ հատկապես հետաքննության առաջին փուլի ընթացքում, և երկու այլ առաջարկություններ, որոնք խորհուրդ են տալիս հայկական իշխանություններին

ներին առաջինը՝ ներմուծել օրենսդիր և այլ միջոցներ հատուկ հետաքննչական մեթոդների արդյունավետ համակարգ ստեղծելու համար և ապահովել իրավասու մարմիններին համապատասխան միջոցներով ու վերապատրաստումներով, որպեսզի այս համակարգը գործնականում ավելի արդյունավետ աշխատի, և երկրորդը՝ ընդունել օրենսդիր միջոցներ վկաների պաշտպանության համապատասխան ծրագրերը գործնականում կիրառելի դարձնելու համար:

Ձեկույցի երրորդ գլուխը քննում է քրեական անձեռնմխելիության տարածվածությունն ու շրջանակները, և այստեղ ՌԵԿՈ-ն անհանգստացած էր անձեռնմխելիությունների ավելի քան լայն շրջանակով: Հայաստանում անձանց տաս կատեգորիա օգտվում է անձեռնմխելիություններից: Այս կատեգորիաները ներառում են ոչ միայն պետական պաշտոնյաների արդարացված այնպիսի շրջանակն, ինչպիսիք են հանրապետության նախագահը, օմբուսմենը, պառլամենտի անդամները: Պառլամենտի անդամակցության թեկնածուները, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, ռեզիդնալ և տեղական ընտրական հանձնաժողովների անդամները և նույնիսկ թաղապետների ու ավագանիների խորհուրդների անդամակցության թեքնածուները նույնպես կարող են, ըստ ընտրական օրենսգրքի, օգտվել քրեական անձեռնմխելիությունից:

ԳՐԵԿՈ-ն այն կարծիքին է, որ վերջը նշված անձանց կատեգորիաների անձեռնմխելիություններն իրենցից ներկայացնում են արտոնություն և կապ չունեն տվյալ պետական պաշտոնյաների դիրքի և գործունեության հետ: Հետևաբար ՌԵԿՈ-ն խորհուրդ է տալիս հայկական իշխանություններին ձեռնարկել քրեական անձեռնմխելիությունից օգտվող անձանց կատեգորիաների կրճատում և պառլամենտի անդամակցության թեկնածուների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների, ռեզիդնալ ու տեղական ընտրական հանձնաժողովների անդամների և թաղապետների ու ավագանիների խորհուրդների անդամակցության թեկնածուների անձեռնմխելիության վերացում:

Ձեկույցի Չորրորդ գլխում, որն առնչվում է այնպիսի մի տեխնիկական խնդրի հետ, ինչպիսին է կոռուպցիայից ստացված եկամուտների բացահայտումը, տարանջատումն ու բռնագրավումը, ՌԵԿՈ-ն ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ «շատ լուրջ բացթողումներ կան Հայաստանի օրենսդրական համակարգում, որոնք կարող է խոչընդոտել բռնագրման գործնական կիրառումը, երբ հանցագործ կերպով ստացված եկամուտները թաքցվում են երրորդ կողմի միջավայրում: Ավելի կոնկրետ՝ մեր այցի ընթացքում հետաքննչական/դատախազական ոլորտներում աշխատող իրավասուների հետ հանդիպումների ժամանակ վերջիններս ի վիճակի չեին անվանել



իրավական այն նորմերը, որոնք կիրառվում են երրորդ կողմի անցած ապօրինի եկամուտների բռնագրման համար»: Այս պատճառով, ԳՐԵԿՈ-ն խորհուրդ է տալիս, որ մշակվեն իրավական նորմեր, որոնք թույլ կտան արդյունավետ բռնագրավել երրորդ կողմի անցած ապօրինի միջոցները:

Նույն գլխում նաև քննվում է փողի լվացման դեմ ուղղված օրենսդրությունը, և այս կապակցությամբ, հայկական իշխանություններին կոչ է արվում երաշխավորել, որ փողի լվացման դեմ ուղղված նոր համակարգը կգործադրվի հնարավորինս շուտ և Ֆինանսական նոնիտորինգային կենտրոնի աշխատակազմի հետ կարճ ժամանակահատվածում կանցկացվի վերապատրաստում՝ նոր օրենքների և կանոնների հնարավորինս արդյունավետ գործադրման թեմայով՝ ներառելով կասկածելի գործարքների մասին զեկուցել պարտավոր մարմինների մասին տեղեկություններ:

Չեկույցի Հինգերորդ գլխում, ԳՐԵԿՈ-ն գնահատում է Հայաստանի կողմից ձեռնարկած միջոցները՝ կապված պետական մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հետ: ԳՐԵԿՈ-ի վերլուծությունը՝ որպես հիմք է ընդունում այն դրույթը, ըստ որի պետական մարմիններում էթիկայի նորմերի խորացումը և քաղաքացիներին բարձր մակարդակի ծառայությունների մատակարարումը կոռուպցիայի դեմ արդյունավետ գործողությունների անբաժանելի մասն են կազմում: Հարկ է ևս մեկ անգամ մատնանշել այս նպատակները և ապահովել դրանց իրագործումը, հատկապես՝ պետական ծառայությունների միջավայրի փոփոխության և արդյունավետության ու կատարողականության նկատմամբ շարունակ աճող պահանջների ներկայիս համատեքստում:

ԳՐԵԿՈ-ի գնահատման չափանիշներից մեկն ուղղված է հավաստելու, որ բոլոր պետական գործիչները, և ոչ միայն քաղաքացիական ծառայության մասին օրենքի առարկա հանդիսացող աշխատողները (?քաղծառայողները), կոռուպցիայի և իրավասությունների կամ պաշտոնական դիրքի այլ շահագործումների կանխմանը, բացահայտմանը և պատժմանն ուղղված գործողություններին ենթակա են: Այս համատեքստում, ԳՐԵԿՈ-ն խորհուրդ է տալիս Հայաստանին. սահմանել կանոնակարգեր հասարակական գործիչների բոլոր կատեգորիաների շրջանակներում կիրառելու համար, այնպիսի դեպքերի հետ առնչվելիս, երբ անձնական/ ֆինանսական հետաքրքրությունները կամ գործունեությունները կարող են տեղիք տալ կոմֆլիկտային իրավիճակներին կամ հասարակական գործիչների պարտականությունների և պատասխանատվությունների կողմնապահ իրագործմանը:

Կապված այս առաջարկության հետ, զեկույցը ընդունում է, որ Քաղաքացիական ծառայության մասին օրենքը սահմանում է որոշակի սահմանափակումներ քաղծառայողների համար (օր.՝ չկատարել այլ վճարովի աշխատանք, անձնապես ներգրավված չլինել ձեռնարկատիրական գործունեության մեջ, չիրագործել, որպես պետությունը ներկայացնող անձ, սեփականության հետ կապված գործարքներ մոտ բարեկամների հետ): Չնայած սրան, զեկույցը նաև ընդգծում է այն փաստը, որ այս կանոնները չեն գործում մեծ քանակությամբ անձանց համար, որոնք պետական ադմինիստրացիաներում կարևոր պաշտոններ են զբաղեցնում, և չկա ընդհանուր մի մեխանիզմ, որը թույլ կտար կանոնակարգել կամ ի կատար ածելու վերը նշված սահմանափակումները՝ կոռուպցիոն նպատակներով պաշտոնի չարաշահումը կանխելու նպատակով, ոչ էլ մշակված է ընդհանուր չափանիշ շահերի բաշխումները կարգավորելու համար՝ կապված քաղծառայողների պաշտոնական գործունեության և արտաքնյա հետաքրքրությունների ու գործունեության հետ:

Պետական իշխանությունների և կոռուպցիայի հետ կապված գլխում ներառված երկրորդ առաջարկությունը մատնանշում է անիրա-ժեշտություն սեփականության և եկամուտների հայտարարագրերը ստուգելու համար ներմուծել արդյունավետ համակարգ բոլոր այն հասարակական գործիչների համար, ում ծառայողական պարտականությունները կարող են ազդեցության ենթարկվել շահերի կոմֆլիկտների կողմից: Երևան կատարած մեր գնահատողական այցի ժամանակ մենք տեղեկացվեցինք, որ քաղծառայողների 35%-ը պարտավոր են ներկայացնել սեփականության և եկամուտների մասին հայտարարագիր, և որ վերջինս ներկայացնելուց հրաժարվելը գործից հեռացման պատճառ կարող է հանդիսանալ: Հայտարարագրերի ճշմարտությունը ստուգվում է ոչ թե Քաղաքացիական ծառայության խորհրդի կամ պետական ադմինիստրացիայի որևէ այլ մարմնի կողմից, այլ՝ հարկային մարմինների կողմից: Այնուամենայնիվ, հարկային ծառայության ներկայացուցիչների հետ մեր հանդիպման ժամանակ, մենք տեղեկացանք, որ հարկային տեսչության մարմինները անկարող են ստուգել սեփականության և եկամուտների հայտարարագրերը, մասնավորապես այն պատճառով, որ նրանք չեն տիրապետում համապատասխան մեթոդների:

Պետական իշխանություններին վերաբերող զեկույցի այս մասը եզրափակելով՝ կցանկանայի մեջբերել Հայաստանին ուղղված մնացած երեք առաջարկությունները. դրանցից մեկը կապված է նվերների հետ, որն առաջարկում է իջեցնել բոլոր նվերների արժեքները, որոնք կարող են ընդունվել քաղծառայողների կողմից, այն աստի-

ճան, որ հստակորեն չառաջացնեն կաշառակերության կամ անօրինի եկամտի այլ ձևի մասին կասկած, երկրորդը՝ առաջարկում է մեծ առաջնություն տալ պետական իշխանությունների համար էթիկայի կանոնակարգի ծրագրված նախապատրաստմանը և երաշխավորել, որ բոլոր պետական գործիչները անցնեն համապատասխան վերապատրաստումներ և որ կանոնակարգը հասարակությանը հասանելի լինի; և երրորդը՝ առաջարկում է ներմուծել հստակ օրենքներ/կանոններ և վերապատրաստումներ պետական գործիչների համար, որպեսզի վերջիններս հայտնեն կոռուպցիայի դեպքերի կամ դրա հետ կապված իրենց կասկածների մասին, որոնց հետ բախվում են իրենց պարտականությունների կատարման ընթացքում, և սահմանել համապատասխան պաշտպանություն այն պետական գործիչների համար, որոնք բարեխղճորեն հայտնում են նման դեպքերի մասին:

Ուսումնասիրելով Վերջին գլուխն առնչվում է օրինապահ մարմիններին և կոռուպցիային, և այս առիթով կուզենայի մեջբերել Հայաստանին ուղղված գլխավոր առաջարկությունը, որն է՝ երաշխավորել օրինապահ մարմինների՝ կաշառքներից և փողի լվացումից զերծ մնալու ապահովումը և ներմուծել արդյունավետ, համաձայնական և վճռական սանկցիաներ:

* * * * *

Սա Հայաստանի գնահատման զեկույցում պարունակվող հիմնական առաջարկությունների մասին մի կարճ զեկույց էր: Ինչ վերաբերում է հետագա հետևողական գործընթացին, կուզենայի այստեղ ընդգծել, որ Հայաստանի համար պարտավորություն է հանդիսանում գնահատման զեկույցում ներկայացված առաջարկությունները հաշվի առնել և դրանք ամբողջապես իրագործել ՌԵԿՈՒ-ի կողմից սահմանված ժամանակահատվածում, այսինքն՝ զեկույցի ընդունումից 18 ամսվա ընթացքում: Այս ժամանակահատվածի ընթացքում Հայաստանը ՌԵԿՈՒ-ին պետք է ներկայացնի իրադրության մասին զեկույց՝ նշելով առաջարկություններն իրագործելու համար նախատեսված միջոցները: Իրադրության զեկույցում ներկայացված տեղեկությունների հիման վրա կնախապատրաստվի համապատասխանության մասին զեկույց, որը կմատնանշի, թե ինչ չափով է Հայաստանն իրագործել գնահատման զեկույցի առաջարկությունները: Համապատասխանության մասին զեկույցը կքննվի և կընդունվի ՌԵԿՈՒ-ի կողմից:

Եթե համապատասխանության մասին զեկույցը եզրակացնի, որ առաջարկությունների իրագործումը ընդհանուր առմամբ անբավարար է, ՌԵԿՈՒ-ն կարող է կիրառել իր Ընթացակարգի թիվ 32-րդ օրենքը, որը սահմանում է այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն գնա-

հատման զեկույցում ներառված առաջարկություններին ընթացք չտվող անդամների նկատմամբ: Այդ քայլերը կոչված են նպաստելու անդամի մոտ՝ ԳՐԵԿՈՒ-ի առաջարկությունների իրագործումը բավարար աստիճանի հասցնելուն:

Շնորհակալություն Ձեր ուշադրության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական խոսքեր.....
2. Բանաձև (98) 7` Կոռուպցիայի դեպ պայքարող երկրների խմբի (ԳՐԵԿՈ) ստեղծման մասնակի և ընդլայնված պայմանագրի սահմանման մասին: (Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին 102րդ նստաշրջանի ընթացքում)
3. Բանաձև (99) 5` Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբի (ԳՐԵԿՈ) հիմնադրման մասին (ընդունված 1999 թվականի մայիսի 1-ին).....
4. Բանաձև (99) 5-ի Լրացում` ԳՐԵԿՈ- ի Կանոնադրությունը ...
5. ԳՐԵԿՈ (2005) 6E, Ընթացակազմի նորմեր
6. Նախարարների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված R (2003) 4-րդ հանձնարարականը` քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման հարցում ընդունված հակակոռուպցիոն համընդհանուր կանոնների վերաբերյալ..... n
7. Նախագահների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված պաշտոնյաների վարքագծի նորմերի ձեռնարկի վերաբերյալ Հանձնարարական No R (2000) 10... n
8. Բանաձև (97) 24, Քսան հիմնական սկզբունքները կոռուպցիայի դեմ պայքարում....n
9. ԳՐԵԿՈ, Հայաստանի զեկույցը
10. Կարլո Կլերոմոնտե, ԳՐԵԿՈի Փորձը և Հնարավորությունները Կոռուպցիայի Դեմ Պայքարում

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

Ծրագրի ղեկավար`	Մանվել Ղու մ ա շ յ ա ն
Խորհրդատուներ`	Նանե Ավագյան, Սարգիս Հարությունյան, Նելլի Ղուկասյան, Նարինե Սոլոմոնյան, Իվետա Մանուկյան, Սարինե Առաքելյան
Ծրագրի համակարգող` Խմբագիր`	Մարիաննա Գուրգենյան Ռուբեն Նահատակյան
Թարգմանիչներ`	Մադլենա Եղիկյան, Վահագն Ղու մ ա շ յ ա ն, Նունե Մելքոնյան
Համակարգչային ծնավավորումը` Կազմի ձևավորումը`	Շողիկ Գալստյան Շողիկ Գալստյան
Project Manager	Manvel Ghumashyan
Consultations by	Nane Avagyan, Sargis Harutyunyan, Nelli Ghukasyan, Narine Solomonyan, Iveta Manukyan, Marine Araqelyan
Project Coordinator	Marianna Gurgyan
Editor	Ruben Nahatakyan
Translators	Madlena Yeghikyan, Vahagn Ghumashyan, Nune Melkonyan
Layout	Shogik Galstyan
Design	Shogik Galstyan

Ոչ պաշտոնական բաղադրամասեր

**GRECO - Ի ՓՈՐՁԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐՈՒՄ**

**(ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ 2006թ.-Ի ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ԱՆՑԿԱՑՐԱԾ ՄԻՋԱԶԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

GRECO'S EXPERIENCE AND CAPABILITIES IN COMBATING CORRUPTION

**(THE COLLECTION OF THE BASIC DOCUMENTS AND MATERIALS ON
INTERNATIONAL SEMINAR HELD IN YEREVAN ON APRIL 10-th, 2006)**

